


Loth

Hon. Reichard Waldenroth Dr. Med. Dr. Jur. Dr. Theol.

In 1893
H. Waldenroth Dr. Med. Dr. Jur. Dr. Theol.

In 1893
H. Waldenroth Dr. Med. Dr. Jur. Dr. Theol.

19. März 1893
H. Waldenroth




ՊՕՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԷ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ Գ. ՊՕՂԱՐԵԱՆԻ
ԱՅՆԹԱԳ - ՀԱԼԷԳ - ՊԵՏՐՈՍԻԹ
ԴԱՍ Թ. ԹԻԻ 10



Փարիզ. — Տպագր. Արմ. ի Տպար. Վալտերի ի Փող. Պոնաբարր 44.
Paris. — Typographie Arménienne de Walder, rue Bonaparte, 44.





ՊՕՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԷ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ՊԷՌՆԱՐՏԷՆ ՏԸ ՍԷՆ-ՓԻԷՐ

ԹԱՐԳՄԱՆԱՅ

Գ. Ա. ՆԱՐ ՊԷՅ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐԻՉ

ԻՏՊԱՐԱՆԻ ՄՕՌԻՍ ԵՒ ՈՐԳԻ

1881

105
105





ԱՌ ՊԵՐՃԱՊԱՏԻԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԷՅ Պ. ՏԱՏԵԱՆՅ

ԵՒ ԱՌ ՆՈՐԻՆ ԶՈՒԳԱԿԻՅ

ՍՈՒԼԴԱՆ ՏԻԿԻՆ ԵՐԱՄԵԱՆ

ՈՒՂԵՐԶ



'Զոր միանգամ փափկախօսն ի մատենագիրս Գաղղիացւոց գեղեցիկս վիպասանեաց գՊօղայ եւ ըզվիրգինեայ' Ամուքդ սիրակցորդք յանտիական հասակաց յանձինս ձեր ճշգրտեցիք : եւ եթէ ըստ կենցաղոյ տարագուն խտիրք կայցեն ի միջի, որպէս եւ կան իսկ, ընդ ճոխացեալսդ մարմնական գոյիւ եւ ընդ կարօտեալսն ամենայնիւ, սակայն երանիկք դուք եւ յաւետ քան զնոսա երջանիկք, զի որում նոքայն չհասին սրբասէր ամուսնութեանն պայմանի' դուք եւ այնու պսակաւորեալ պանծացայք, եւ քաղաքամայրս Գաղղիացւոց կանխեաց քան զձերդ եւ զմեր հայրենիս զձերոյ սիրոյն զգուել գորովանօք զնախընծայ խայրիս' զՄարիամիկդ նազելի :

Հնապա եւ որ ընտրեցիքդ ի բիւրազգի թանգարական վաճառուց փարիզացի ճոխութեանց զսա տանել խնամով պարգեւ մանկտուոյ հայաստան ժողովրդոց ի դարձիդ ձերում այդրեն յափունս Վոսփորի, ընկալարուք ընդ սմի ն զնուէր իմոյս առ ձեզ մեծարանաց եւ մտերմութեան, եւ յառաջ իսկ քան զազգակցացն մերոց զիմ զմաղթանս սրբտառուչս, զի պարգեւք բնութեան, եւ մանաւանդ աստուածայնոցն անկապուտ շնորհաց, յաւելցեն զեղուլ յաւերժաբար ի գլուխս ձեր եւ Ազգատոհմիդ համօրեն :

ԹԱՐԳՄԱՆԻԶՆ

Ի Փարիզ, ի 6 Սեպտեմբերի 1856 :



ՅՍ.Ռ.Ա.ԶԱ.Բ.Ա.Ն ԹԱՐԳՄԱՆԶԻՆ



Համբաւատենցս այս վիպա-
սանուրիւն Պեռնարտենտը Սեն-
Փիերի Գաղղիացւոյ, մի ի սա-
կաւուց անտի չքնաղ յօրինուա-
ծոց է, որ արժանի վկայեալքն
են փոխաբերելոյ յամենայն ի
լեզուս, եւ հանուրց մարդկան առաջի առնել ի վերժանու-
թիւն. իբր զի ճշգրտատիպս իմն եւ յոյժ հրաշապես զմարդ-
կայնոյ սրտին նկարագրէ զգաղտնիս, եւ զգգացմունսն
կրթէ, զբարսն ամոքէ, զմիտսն վառեալ բորբոքէ ի բա-
րւոյն հետազօտութիւն, զյօժարութիւնսն դրդէ յանմեղու-

թիւն, եւ զքնութեան քաղցրութիւնս սիրով առաքինութեան առնու : Նա եւ այնքան է սրտառուջ պարզութիւն ասացուածոցն հանդերձ խորախորհուրդ իմաստասիրութեամբ, մինչեւ իրաւամբք մտաբերեցին ասել ոմանք եթե անզուգական իմն է գրուածս յազգի անդ իւրում :

Ի Քաղղիա զառաջինն ի տիպ արձանացաւ յամի 1788, այն իսկ է միով ամառ յառաջ քան զսկիզբն յեղափոխութեանն մեծի . եւ սակայն ազդեցութիւն մեծ գործեաց ի վերայ խոովայոյզ եւ բազմավրդով սրտից Քաղղիացոց ժամանակին . եւ զայս ինչ յիրաւի է գեղեցկագոյն ի գովասանութիւնս մատենիս համարել : Իսկ իբրեւ յեղափոխութիւնն այն դադարեալ ցածեաւ, յեղաւ եւ մատենիկս ի բարբառս ամենայն . եւ թէ որքան սատար եղեւ յամոքել եւ ի բարեքել զբոյս բարուց քաղաքակիրթ ազգաց՝ ոչ է հնար յայտ առնել սակաւուք :

Այլ եւ քաղաքակրթութիւն զիւրան ունի թերութիւնս . եւ ազգք արեւելից հանդերձ գովելի եռանդեամբն իւրեանց ի քաղաքակիրթն զարգացումն վերոտնելոյ՝ զթերութիւնսն զայնոսիկ ցաւագինս նշմարեալ տեսանեն, եւ հնարս իմն հնարին հայրայրել՝ զի անձնապահ ի վնասուցն լինիցին : Եւ ո՞վ ոք այսմ անգիտանայցէ զի բազմապատիկ հնարք են առ այս ի միջի, եւ մեն մի ի նոցանէ մեծապէս ազդողականք . օրինակ իմն բարձր ի գլուխ ճոխանան ի կարգի այնց հնարից աստուածայինքն եւ անարատ իմաստք քրիստոսական կրօնիցս եւ ուղիղ բարոյականի . եւ յետ այնոցիկ ողջամիտ իմաստասիրութիւն, անստերիւր տրամաբանութիւն, բազմադարեանն փորձ կենցաղա-

կանացս իրաց, գգուշաւորն դաստիարակութիւն այլովքն հանդերձ. սակայն որ կամիցի ոք սիրելի հասարակաց զգեղեցիկ գեղեցիկ հնարսդ ընծայեցուցանել, կամ զի այսպես ասացից, առնուլ իջուցանել զդոսին ի մտաց մարդոյ ի սիրտ անդր նորա, աստուածայնոցն շնորհաց է գործ ի գերբնականսն, եւ ի բնականս այնոցիկ ի մատենից՝ որ քաջայարմարքն իցեն սիրելի գործելոյ զճշմարտութիւն եւ զառաքինութիւն : Եւ անա զերկրորդս զայս բարեմասնութիւն լի եւ պատարուն ստանցեալ ունի հրաշապատումն վիպասանութիւն Պօղայ եւ Վիրգիլեայ . վասն որոյ եւ յանձանձիր ընթերցումն ձգե զամենեսին, եւ զսիրտսն ճմլեալ՝ քաղցրահոսանս քամե արտասուս յականողեաց նոցին :

Ջճաշակ մատենիս առեալ է փոքր ի շատե եւ Ազգն մեր ի թարգմանութենէն բարեյիշատակ Մանուկ Պէյի Աստուածատրեան : Արժան իսկ էր զշիրմաւ պատանւոյն դրոշմել եւ զայս դրուատիս . Ա.Ռ.ԱՋ.Ի.Ն. ՀԱՅ Թ.Ա.Ր.Գ.Մ.Ա.Ն.Ի.Զ ՊԹՂ.ԱՅ ԵՒ Վ.Ի.Ր.Գ.Ի.Ն.Ե.ԱՅ. եւ մեք մտադիւր սիրով ծածկեալ քաղեմք ընդ բազմահոյլ ծաղկամբքն սփռելովք զնովաւ զսակաւարիւ թերութիւնսն, որ աղքատութեան աշխարհիկ բարբառոյս են մանաւանդ գրելիք քան թէ թարգմանչին անհմտութեան : Սմին իրի կամ եղեւ մեզ ի գրոցս անուանեալ բարբառ հանել ի լոյս զթարգմանութիւն նորին, բայց այնպիսեաւ յստակ եւ դիւրահաս բանիւ, որ ոչ ինչ զոգցես ընդհատ իցե ի գաղղիական պարզութենէն Պեռնարտենի : Եւ թեպէտ գիտել գիտեմք զի այսպիսեաց երկասիրութեանց առաւելագոյն գտանին ընթերցողք յորժամ

աշխարհիկն խօսիւք ընծայիցին մերագնեայց, մանաւանդ որոց ի Տաճկաստանի բնակեալ իցեն Հայոց, սակայն մեր իղձք են՝ հասարակաց Ազգիս ընձեռել զմատեանս ի վայելումն. մանաւանդ զի որք զաշխարհիկն նախամեծար առնիցեն՝ առձեռնապատրաստ ունին աւանիկ զոր ի վերայսր յիշատակեցաք զքարգմանութիւն Մանուկ Պէյի :



ՆԱԽ ԵՐԳԱՆ



Յերկասիրու-
րեանս յայսմիկ փո-
րու խորհուրդս մեծա-
մեծս երկնեցի, և ջան ի

գործ արկի նկարագրել ի սմին երկիր և բուսակս այլազանս
յերոպականացն: Շատ իսկ հանգուցին քերթողքն մեր գտար-
փառոս իւրեանց ի դարափունս առուակաց, ի մարգս և ի
մարմանդս և ընդ հովանեաւ ուինի ծառոց . իսկ ինձ կամ
եղև նստուցանել զնոսին ի ծովափունս և ի ստորոտս
ապառաժից, ընդ հովանեաւ քոբենեաց, աղամարգէնեաց
և ծաղկավարս կիտրոնեաց: Եւ երբ էին մեզ Թեոկրիտք
և Վիրգիլք որ զայնմ աշխարհե տային տեղեկութիւն, ոչ ինչ

ընդհատ ի մերոցս ունեաք արդեօք նկարագիրս գեղանիս եւ
զայնմանէ : Գիտեմ զի ուղեւորք քաջահանճարք պատմեալ իսկ
են բանիւք սխրալեօք զվեպս յոգունց ի կղզեաց Հարաւայնոյ
ծովուն . այլ բազում այն է զի բնակացն կենցաղ , եւ մանաւանդ
Երոպացոցն ի նոսա գաղթելոց սովորութիւնք խանգարեն եւ
եղծանեն զաշխարհին գեղեցկութիւն : Եւ ես իղձ եղէ կցորդել
ընդ բնութեանն գեղոյ որ ընդ մեջ արեւադարձիցն երկոցուն՝
զբարոյականն գեղ ժողովրդեան փոքու : Միանգամայն գուն
գործեցի յերեւան ածել ոչ սակաւ ճշմարտութիւնս մեծամեծս .
ընդ որս եւ զայս , զի բարեբաստիկ է մարդ յորժամ ըստ բնու-
թեան օրինաց եւ ըստ առաքինութեան վարիցէ կենցաղ : Սա-
կայն ոչ կարօտացայ զվիպասանութիւն հանճարել եւ կեղծել
առ ի նկարու հանելոյ գերդաստանս բարեբաստիկս : Ստուգու-
թեամբ ասեմ , զի գորս յօժարեցիս ի գրի հարկանելի՝ ոչ անեակր
ինչ են , եւ վեպք նոցա յերիցագոյն դեպս իրացն ճշմարիտք ,
որպէս հաւատարիմ արարին ինձ յոյովք ի բնակչաց Կղզւոյն
Գաղղիոյ : Հանգամանս ինչ եւեք դուզնաբեայս յաւելի ի նոսա ,
որ զի անճնականք իմն էին ինձ՝ ոչ ինչ ընդհատ են եւ նորին ի
ճշմարտութենէ : Ոչ բազում ինչ ամբ են զի ստուերագիր ինչ
յօրինեալ այսպիսեոյ հովութեան , աղաչեցի զպարկեշտա-
գեղ որ տիկին որ ի ժողովս մեծամեծաց յաճախէր , եւ արս զգօ-
նամիտս որ ի բացեալ ի նոցունց վարէին կեանս , ունկնդիր
լինել իմում վիպասանութեանս ընթերցուածոյ , զի գիտացից էրէ
զոր ազդումն ազդիցէ սա յընթերցանելիսն այլազանս . եւ խրախ
եղէ յորժամ առ հասարակ յարտասուս ցնդեալ տեսի զնոսին :
Զայս եւեք դատաստան մարբացայ ի միտ առնուլ զերկասիրու-
թենես , եւ սմին միայնում ըղձակերտ էի :

Այլ բազում այն է զի փանաքի հանճարոյ գուզընբաց գտանի
թերութիւն ոչ փոքր . սմին իրի եւ այս յաջողուած արկ ի սիրտ

Իմ գունայնամիտն տենց մակագրելոյ գիմս երկ *Նկարագիր
բնութեան* : Ի դեպ իսկ յուշ եղէ.
Ինձ եք բանի անձանօք է առ.
յինէն բնութիւն աշխարհին յորում
ծնեայն էմ, եւ քե յաշխարհսն գորոց
հանգոյն ուղեւորի եւեր տեսի զար-
դիւնս՝ բանի արգասաբեր է բնու-
թիւն, բանի զանազանեայ եւ սի-
րուն, հոյակապ է խորհրդաւոր,
եւ ես ճրբան բափուր էմ ի հանճարոյ, յախործից էւ ի ճոխա-
բանութենէ որ կարեւորքն են ի ճանաչել եւ ի նկարագրել զայն
բնութիւն . եւ անդէն յանձն իմ գումարեայ զգաստացայ : Յա-
ղագս այսորիկ էւ գխունս զայս գրուած ի վերջ իմոցն յարեցի
Հետազօտութեանց բնութեան, գոր այնքանեաւ բարեսէր մտօր
ընկալան վերձանողք . որպէս զի այս յորջորջումն յուշ արա-
բեայ նոցա գիմս ապիկարութիւն, յորդորեսցէ զնոսին եւ ի սոյն
սակս ներողամիտ առ իս լինել :



ՊՕՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԷ

ԳԼՈՒԽ ԱՌՄԱԶԻՆ

Զարեհէլեան կողիւք լերինն որ ամբառնայ ի թիկանց Փոր-
լուի քաղաքի ի Կղզւոջ Գաղղիոյ, և տեսանել ի խոպանացեալ
տեղւոջ ուրեք աւերակս խղից երկուց ի մեջ կոյս հովտին՝ որ
շուրջանակի ապառաժիւք մեծամեծօք պարփակեալ, ի հիւսիսոյ
կողմանէն եւեք զմուտսն ունի : Ընդ ահեակն կոյս ամբարտա-
կեալ կայ լեառն որ կոչի Սար Գիւտի, ուստի նշմարին նաւք որ
ի նաւահանգիստ անդր կայցեն. եւ առ ստորոտով լերինն այ-
նորիկ և նիստ Փոր-լուի քաղաքին. իսկ ընդ աջակողմն ճանա-
պարհ և, որ հանէ ի քաղաքէ անտի ի թաղն Կիտրոնեաց¹, լետ
այնորիկ եկեղեցին համանուն կայ արձանացեալ ի լայնա-
տարր դաշտի հանդերձ ձեմէլեօք՝ զորով պատեն դայարագեղ
շամբուտք հնդիկ եղեգանց. եւ հուսկ ի վերջէ անտառ և ձգեալ
տարածեալ ցապառուածս կղզւոյն :

Ի ծովեզերին նշմարի ի հանդիպոյ ծովածոցն Շիրմի, խուն մի
լաջակողմն կոյս՝ հրուանդանն Տարաբախտիկ, անտի եւ անդր
ծովն լայնաափիւռ, յորում գերեսօք ջուրցն կղզեակք կան ցա-
ծունք անբնակք. եւ մի ի նոցանէ և ձայնեայն Անկիւն Դիտակի,
որ զծովածուփ դղեկի բերէ զնմանութիւն :

Ի մուտս հովտին այնորիկ, յորում բանան գառաջեաւ տե-
սարանքն բազմադիմիք, արձագանգք լերինն անդրէն կրկնեալ
հնչեցուցանէն անդադար զհողմոց մունջիւն՝ յորոց սօսափին ան-
տառքն մերձակայք, եւ գայեացն ճողփիւն՝ որ ընդ խուրս բախեալ
եւ անդրէն յինքեանս խորտակին ի բացէ : Բայց առ դուրս խղի-
ցըն այնոցիկ շշունջ իսկ ոչ եւս լինի լսելի, եւ չիք այլ ինչ շուր-
ջանակի տեսանել՝ բայց քարածայռս պարսպամեւ սեպացեալ,
յորոց ի ստորոտսն եւ ի խոխոմս եւ ի կատարսն իսկ որ յամպս
ծրարին՝ բուփք բուսանին անտառախիտք : Թօնուտք անձրեաց
ի գագարանց նոցին յուգեայք՝ բազում այն է զի երգունէն զկողսն



յերանգս ծիածանի կանաչագեղ եւ քիսատիպ, եւ աղբերակու-
նքս առ ոտամբն բխեցուցանէն՝ յորոց գետահետի առուակն Լա-
տանէնեաց² : Անդ խոր լոռքիւն պատէ գամենայն, եւ ամե-
նայն ինչ յանդորրու կայ, եւ օդք եւ ջուրք եւ լոյս : Հագիւ կրկնին
անդանօր արձագանգք հնչեցեայք ի շրշիւն արմաւենեաց, որք
ուղղաբերձս անէն ի բարձրադիտակ սարահարթսն, եւ հողմա-
վար տատանին յարածուփք : Լոյս տուրնջեան քաղցրածաւայ
պայծառանայ ի խորս անդ հովտին ուր զնասարակ աւուրք եւ եր-
ձառագայքէ արեգակն . այլ զպսակաւ հովտին անդէն ընդ արե-

ւածայրս հարկանին նշոյք, եւ գագաթունք յերանցն ի վեր քան
զնսեմաստուեր կողս նոցին բարձրացեալ՝ ոսկեգոյնք քուին եւ
ծիրանեփայլք ընդ կապուտակն երկնից :

Սիրելի եր ինձ ցանկորդել ի տեղիսն, քանզի լայնածաւալ ըն-
ծայեր ինձ անդ տեսարան, միանգամայն եւ միայնութիւն ամայի :
Ի միում աւուրց մինչդեռ նստեալ առ ոտիւք խղիցն, եւ գաւե-
րակս նոցին նկատեալ մտախոհ լինելի, եւ ահա այր ոմն անցաներ
ընդ այն, եւ զգեցեալ եր ըստ վաղնշուց բնակչացն տարագու-
բաճկոնակ փոքր եւ տաբատ պճղնաւոր : Բոկոտն ընթանայր



նա՛ յեց ի ցուպ եբենեալ : Հերք նորա համակ սպիտակացեալք
էին, եւ տեսիլ դիմացն ազնուական եւ անկեղծիկ : Ողջոյն
եսու նմա մեծարանօք . ողջունեաց զիս եւ նա, եւ վայրիկ մի
յառեալ յիս, ապա մատուցեալ նստաւ հանգչել զբլրակա՛ ուր
եսն բազմեալ կայի : Քաջայերեալ յընդելական գնացից առնն,
խօսելկալայ ընդ նմա եւ ասեմ . « Հայրիկ, գիտիցես ասել ցիս
ն՛յր արդեօք էին խուղքդ այդոքիկ երկու » : Նա ետ պատաս-
խանի եւ ասե . « Որդեակ իմ, ի դերբուկսդ յայդոսիկ եւ ի
խոպան երկրիդ բնակելին յառաջ քան զամս քսան ազգատոհմք
երկու ի դոսին երանաւետեալք : Վեպք իրաց նոցա աղիտոյսքմք
են . այլ ի կղզւոջս յայսմիկ զՀնդկաց ճանապարհա՛ . ո՛ր այն

Երոպացի է որ գորովիցի ընդ բաղդ աննշանից ոմանց : Ու այն որ իցէ որ յանձն առնուցու, անդէն վարել կէանս քեպետ է, երջանկաւետս, բայց աղքատ յընչից է մոռացեալ ի մարդկանէ : Զարանց աւագաց է գրագաւորաց է, եր յօժարին մարդիկ ուսանել զպատմութիւն, որ ոչ ումէր է պիտանացու » : Կրկնեալ անդրէն ասեմ . « Հայրիկ, տեսիլ դիմաց քոց է բանք բերանոյդ յայտ իմն այնպէս առնեն էրէ այր էս դու քաջահմուտ իրաց կենցաղոյս : Ադէ պատմեա ինձ, էրէ իցէ քո պարապ, զինչ գնախնի բնակչաց անապատիս գիտիցես . քանզի է որ կարի իսկ զառաձեալ որ իցէ ի մտահանութիւնս աշխարհի, սիրէ ապաքէն լսել զբարօրութենէ գոր պատրաստենն բնութիւն է առաքինութիւն » : Յայնժամ ծերունին վայրիկ մի գձեռնն ի ճակատ կայեալ, որպէս որ զի խնդրիցէ յուշ ամել ճշգրտիւ գամենայն, պատմեաց ինձ է ասէ .

Յամին 1726 ոմն էրիտասարդ նորմանտացի՝ Տը-Լա-Թուր անուն, բազում անգամ հայցեալ պաշտօն ինչ արքունի սպասահարկութեան ի Գաղղիա է նպաստս յագգատոհմէն՝ իբրէն ջե-



հաս իւրումն ցանկութեան, եղ ի մտի գալ ի կողմ այսր ի խնդիր բաղդի, առեալ ի միասին է գամուսին իւր գմանկամարդ՝ գոր յոյժ սիրէր է սիրիւք ի նմանէ : Եւ էր նա դուստր միոյ ի վաղէմի

Եւ յընչաւեա տոհմից իւրոյ գաւառին . բայց ի գաղտնիս եւ անօժիտ լեալ էր Լաթուրի կնութեան . քանզի ծնողք նորին հակառակեալ էին այնմ հարսանեաց , իբր զի ոչ քաջատոհմիկ որ էր պատանին : Երող Լաթուր զկինն իւր ի Փոր-Լուի քաղաքի կղզւոյս , եւ ինքն նաւեաց ի Մատակասքար՝ գնել անդ գերիս թխամորթս եւ դառնալ փութանակի կազմել իւր աստէն տեղի բնակութեան : Էջ նա ի Մատակասքար ի սկիզբն վնասակար օղոցն շնչելոյ , այս ինքն է ի մեջ կոյս ամսեանն հոկտեմբերի , եւ լետ սակաւ միոյ մեռաւ անդէն՝ ըմբռնեալ ի ժանտ ջերմանէ որ գամիսս վեց ճարակի ի կղզւոջն . որոյ վասն եւ ցանգ անհնարին լիցի ազգաց Եւրոպայ հաստատել անդ զբնակութիւն : Զոր ինչ միանգամ ընդ իւր տարեալ էր սպաս հանդերձից՝ ցիր եւ ցան եղէն ի մահու նորա , որպէս յաճախ պատահէ այս որոց յերկիր օտար վճարիցին ի կենաց : Կին նորա մնաց այրիացեալ եւ յղի ի կղզւոջ աստ Գաղղիոյ , ուր ոչ որ էր նմա ձեռնկալու եւ ապաւեն , եւ չէր ինչ նորա յաշխարհի՝ բայց աղախին մի հնդիկ : Յետ առն իւրոյ վախճանելոյ զոր միայն սիրէր , ոչ կամելով գտանել շնորհս առ ումեք՝ յաւել թշուառութեամբն ի զօրութիւն . եղ ի մտի մշակել ընդ գերւոյ իւրում ածու ինչ փոքրիկ առ ի պաճարանս կենաց :

Ի կղզւոջ աստ որ անմարդի էր գոզցես եւ անտերունչ , ոչ ընտրեաց նա վայրս արգաւանդս եւ դիպողս ի շահավաճառ , այլ ի խնդիր կաժանի իրիք լերանց եւ գաղտնաժածուկ ինչ ապաստանի՝ ուր կարող իցէ միայնիկ բնականալ եւ անժանօթ ի մարդկանէ , ել ի քաղաքէն եւ դիմեաց ի բարաժայուս յայտոսիկ իբրեւ ի բոյն ինչ թռչնոյ : Եւ ընդաբոյս իմն է այս բնաւից վշտամբեր էից , դիմել անկանել յամայի եւ յանմարդաբնակ վայրս , իբրու այն թէ վեմբ եւ բարանձաւք պատուարք իցեն ընդդէմ աղետից կանգնեալք , կամ թէ համագոյիցն անդորրութիւն զջարադէտ յոյզս խռովութեանց հոգւոյ նոցա զօրիցէ խաղաղել : Բայց վերնախնամն Տեսչութիւն որ ի թիկունս մեզ հասանէ յորժամ կարենորացն եւեր լինիցիմք ի խնդիր , պատրաստեր տիկնոջն Լաթուրի պարգեւ՝ զոր ոչ մեծութիւն եւ ոչ բարձր աւագութեան գիտեն ընձեռել , ունել նմա զոր բոյրաբիւ սիրունի :

Ի տեղւոջս յայսմիկ բնակեր յամբ հետե կին ոմն ժրագլուխ , բարեբարոյ եւ դիւրագորով՝ Մարգարիտ անուն : Ան էր նա բնիկ ի Պրըքայն նահանգի Գաղղիոյ ի գեղջուկ տոհմե , սիրելի յոյժ իւրոցն . որք եւ բարեբաստիկ առնեին զնա երե չեր նորա ճախողակի վստահութեամբ հաւատասցեալ ի սեր ազատագնի ուրումն ի դրացեաց իւրոց : Սա խոստացաւ առնուլ զնա իւր ի կնութիւն , եւ յետ կրիցն յագենալոյ ի բաց զնաց ի նմանե , չառեալ յանձն եւ ոչ դարման ինչ կարգել որդեկին՝ զոր կնոջն յղացեալ էր ի նմանե : Յայնժամ Մարգարիտ եղ ի մտի մեկնել ի սպառ յերկրե ծննդեան իւրոյ , երբալ ծածկել զվրիպանս իւր ի գաւառս գաղղականաց , հետի յաշխարհեկն յորում կորուսեալ էր զանունն բարի , զմիակ օժիտ ջրաւորի եւ պարկեշտասեր օրիորդի : Ան հնդիկ ոմն ձերուհի , զոր զնեալն էր ընդ սակաւ ինչ արծարոյ ի փոխ սուելոյ , մշակեր ընդ նմա ածու մի փոքրիկ ի կողմանս յայտոսիկ :



Տիկինն Լարուր եկեալ այսր հանդերձ հնդիկ նաժշտան եզիտ զՄարգարիտ ընդ դիեցիկ որդեկին . եւ բերկրեցաւ յանձն իւր , զի հանդիպեր կնոջ որ նմանավիշտ իւր րուեցաւ , եւ հա-

կիրճ բանիւք սխառմեաց նմա զանցս իւր , եւ զարդի պետս
կարօտութեանն : Ի գուք խանդադատեցաւ Մարգարիտ ընդ
վեպս տիկնոջն Լարուրի . եւ վատանութեան նորա ցանկացեալ
առտակ քան քե մեծարանացն , խոստովան եղեւ նմա զմեղա-
պարտն իւր սխալանս , առանց բազուցանելոյ ինչ ի նմանէ ,
եւ յաւելեալ ի բանս իւր առե . « Ապարէն եւ արժանի խնկ եմ
ջարտբաստիկ լինելոյ . բայց դու , տիկին , դու զգաստասեր եւ
հեք . . . » Եւ հրաւիրեաց զնա արտասուելով ի խղիկն իւր եւ
ի սեր բարեկամութեան : Տիկինն Լարուր գորովեցաւ ընդ բա-
րեգուք հիւրասիրութիւն նորա , եւ զիրկս արկեալ զնովառ առե .
« Այսպէս ուրեմն վախճան առնել կամի Տէր վշտացն իմոց , զի
այդպիսի ազդե գուք ի սիրտ քո ի վերայ օտարիս անձանօրի՝ որ-
պիսի չիք իմ երբեք ընկալեալ յազգականացն իմոց : »



Ճանաչելի եւ զՄարգարիտ . եւ րեպէտ միով եւ կէս փարսա-
խառ հեռի ի տեղւոջեա ե բնակութիւն իմ յանտատի անդ որ
յեռկոյս կայ Երկայնանիստ լերինն , սակայն որպէս դրացի հա-
մարէի նմա : Ի քաղաքս Եւրոպայ փողոց մի եւ որմ լոկ՝ խտրոց
ընդ մեջ անկեալ , խափան լինին ընտանեաց միոյ ազգատոհմի
առ ի ջտեսանելոյ զմիմեանս սարազայց ամօր . այլ առ նորնի

գաղթական սովորութիւն է ընդ դրացիս համարել զմիմեանս յորժամ անտառք էս յերինք էսէք անջրպետեն զնոսա յիրերաց : Մանաւանդ զի զայնու ժամանակաւ նուազ էսս էր վաճառաշահութիւն կողոյս ընդ Հնդկաց աշխարհին . որով էս դրացին էսէք յինել բաւական էր ի բարեկամութիւն , էս հիւրասիրութիւն ի պարտուց համարի էր էս ցանկալի իսկ : Իբրեւ յուայ էս էրէ հիւր ոմն էկեալ հասեալ էր առ դրակիցն իմ , յայց էլի առնա , զի բերեաւ պիտանի իմիք յինիցիմ միում էս կամ միւսումն : Ես տեսի զտիկինն Լարուր բարետեսի , ազնուակերպ էս բախժադեմ . էս մերձ էին առուրք ծնանելոյ նորա : Ասացի էս ցտիկնայսն ցերկոսին էրէ առօգտի որդւոցն ձերոց էս մանաւանդ առ ի կարճել զվտանգ բնակակցելոյ ի տեղւոջոյ այլոյ ուրուք էկաւորի՝ ի դեպ է բաժանել ի ձեզ զհովիտոյ զայդ որ ունի արտավարս իբր քսան : Նորա յիս ինքն յանձն արարին զբաժանումն զայն , էս էս յարաբաժին արարեալ յերկուս հասի մասունս զոգցես հաւասարաջափս : Ի միում բովանդակեր վերին մասն շրջապատիս , ի միւնապատ ժայռեղ՝ ուստի բղխէ աղբերակն առուակին Լատանենեաց , մինչէս ցտեպացեալ պատառուած յերինդ զոր նշմարես , որում էս Մահարձան անուն կոչեն , քանզի բերէ իսկ զնմանութիւն մահարձանաց պարսպի : Խորամեջ էրկրին այնորիկ այնպէս ապառաժուտ է էս վախուտ՝ զի հագիւր բէ գնալ որ ի նմա . սակայն ունի էս ծառս մեծամեծս , էս բազմութիւն յոյժ աղբերաց էս առուակաց : Իսկ ի միւսում բաժնին ամփոփեցի էս զստորին մասնն որ տարածեալ ձգի ընդ էրկայնութիւն գետակին Լատանենեաց մինչէս ի գալ ի դաշտաբերան այսր յորում կամքս , էս աստի ահա սկսանի գետակն հոսել ընդ մեջ էրկուցս բլրակաց էս գնալ քափի ի ծով : Է անդ էս մարգագետին էս էրկիր տափարակ որպէս տեսանես , այլ ոչ ինչ յաւագոյն քան զմիւսն է . քանզի յանձրեարաց առուրս ճախճախուտ գործի , էս յերաշտութեան կարծրացեալ պնդի իբրեւ զկապար , որպէս զի ի կամել ուրուք փոս հատանել ի նմա՝ տապարաւ հարկ է գերկիրն պատառել : Ես իբրեւ այսպէս յերկուս զգետինն բաժանեցի , յորդոր եղէ տիկնայցն էրկոցուն վիճակս ի վերայ արկանել : Բաժինն վերին վիճակեցաւ Լարուր տիկնոջ , էս ստո-

րինն Մարգարտի. եւ երկաբանչիւր եւս հաճր եւ հառանք գտան ընդ անցնիւրն վիճակ. բայց աղերս արկին ինձ մի՛ գատանել ի միմեանց զբնակարանս նոցա, « Որպէս զի մարբասցուք, ասեն, ցանգ զմիմեանս տեսանել, եւ զբուցակիցս եւ օգնականս իրերաց լինել : » Սակայն հարկ էր ունել նոցա եւ առանձինն ինչ օրարան : Տնակն Մարգարտի ի միջակի անդ հովտին կայր, յէզր սահմանաց իւրոյ վիճակին : Հուպ նմին յերկիր բաժնին Լարուր տիկնոջ միւս այլ կառուցի տնակ, այնպէս զի ամուրքն սիրունիք եւ դրացիք իրերաց գտան, եւ միանգամայն յըստացուածս անցնիւր ընտանեոյ բնականային : Ես ինքնին ձողիս եւ խաշար հատի ի յեռնե, եւ ի ծովափանցն առեալ բերի սաղարքս լատանենեաց ի շինուած հիւղիցդ երկոցուն, որ անդուռն կանարդ եւ անյարկ որպէս անա տեսանեաղ : Եղնկ զիս. շատ իսկ են ինձ եւ նշխարքդ առ յիշատակե : Փամանակն որ արագ արագ կործանե զդաստակերտս արքունական պետութեանց՝ պատկառե իմն յանապատս յայտոսիկ յարձանաց բարեկամութեան, զի յաւերժացուսցե զվիշտս սրտիս մինչեւ ցվախճան կենաց իմոց :

Այն ինչ երկրորդի հիւղոյն աւարտեր կառուցումն, եւ անա տիկինն Լարուր ծնաներ դուստր մի : Իմ իսկ ընկալեալ էր ի սրբոյ առագանեն զորդին Մարգարտի, եւ Պօղ զնա անուանեալ : Աղերսեաց Լարուր տիկին զի եւ իւրում դատերն եւ անուանեցից զանուն ընդ սիրունեոյն իւրում Մարգարտի. եւ նա յորջորջեաց զերախայն Վիրգինե, ասե. « Առաքինագարդ եղիցի սա եւ բարեբաստիկ. զի ես յայնժամ զաղետից առի զփորձ յորժամ յառաքինութենեն խոտորեցայ : »

Իբրեւ անցին առուրք ծնանելոյ Լարուր տիկնոջն եւ կազդուրեցաւ, բնակարանքս դուզնաբեայք տակաւ բարգաւաճեցին իմովքս խնամօք, եւ մանաւանդ անդույ վաստակօք ստրկացն երկուց : Ստրուկն Մարգարտի Գոմինիկոս անուն՝ Եօլոմ էր յազգե (բնիկ Ափրիկեցի), յայիս խոնարհեալ, այլ դեռ եւս յազդոջ եւ յուժի, այր հմուտ արուեստին, եւ ողջամիտ ի բնե. եւ վաստակեր անխտիր ի մշակութիւն երկոցունցն եւս բնակութեանց՝ ուր եւ գտաներ երկիր արգաւանդանող, եւ արկաներ

սերմանիս ճահողագոյնս երկրին : Ի տեղիսն որ ոչ յոյժ քա-
ջաբէրք էին՝ սերմաներ կորեակ եւ եգիպտահատ. ի պարարտսն
արկաներ ցորեան , ի ճախինս բրինձ , եւ առջնքեր ժայռից սե-
խենիս , դղմենիս եւ վարնգենիս , որ սիրեն սողոսկել պատել
զնորօք : Յոստին տեղիսն տնկեր գետնախնձոր քաղցրահամ
յոյժ , եւ բամբակենիս ի բարձրաւանդակս . յերկիր կարծրապինդ



էղեգնաշարար , գբյրակօք խանութենիս , թեպէտ եւ մանրա-
հատս՝ այլ ազնիւս յոյժ : Առ սփամբք գետոյն եւ շուրջ զտնա-
կօքն աղամաթգենիս տնկեր , որ ընդ ամն ողջոյն ողկուզանէ
պտղաբերեալ , եւ գործեն ախորժ հովանի . եւս եւ տունկս սա-
կաւս ծխախոտոյ մշակեր ի սփոփումն վշտաց անձին եւ ի
դիւր սրտի տիկնայցն իւրոց բարեսիրաց :

Երբայր եւ ի յեառն հարկանել փայտ յայրումն , եւ ու-
ղիս ի կարուածս անդ հորդեր՝ հատանելով ի տեղիս տեղիս
գրարաժայռան : Եւ գայս ամենայն վաստակս վաստակեր նա
հանձարով եւ ժրուքեամբ , քանզի սիրով առնէր զոր ինչ առ-
ներն : Հաւատարիմ յոյժ էր նա Մարգարտի , ոչ ինչ նուազ եւ
Լարուրի , զորոյ եւ զնաժիշտն խափշիկ առեալ էր ի կնուքեան
յառուր ծննդեանն Վիրգինեայ , եւ խանդակար էր ի սեր նորա :
Անուն կնոջն Մարիամ էր , բնիկ ի Մատակասրար կղզոյ , ուս-

տի է. ձեռնարուեստս ինչ ուսեայ գիտեր, առաւել հմուտ գոյով հիւսելոյ սակառփս է. փսիարս յանտառաբոյսն սիգոյ : Աջողակ էր ի գործ , մարբասեր , հաւատարիմ յոյժ : Ի նա յանձն էր հոգ պատրաստելոյ զճաշ , բուժանելոյ զհաւս , է. երբէք երբէք ի վաճառ տանելոյ ի Փոր-Լուի գիտն ինչ յաւելուածս ի պիտոյից տանցն երկոցուն : Ընդ սոսին գրեւջիր է. զայժիսն երկու որ առջնքեր տղայոցն առնուին դարման , է. շուն մի զամփռ. որ պահպանութիւն առնէր վայրացն ի գիշերի , է. ի միտ առցես զբովանդակութիւն հասից է. ընտանեաց գերդաստանացն երկոցուն փոքրկանց :

Իսկ տիկնայքն երկոքին զօրն ցերեկ պարսպէին ի մանել բամբակ , է. այն բռնական էր ի հայրայրել զկարեւոր պետս նոցա է. զընտանեացն . սակայն է. ի կենցաղական դիւրութեանց լոկ է. բափուր էին այնչափ զի բոկոտն շրջէին առ տնին . է. յառարս կիւրակէից էւեր կօշիկս ազանէին կանխել ի լուր սրբոյ պատարագին յեկեղեցի անդր Կիտրոնեաց ' զոր տեսանեսդ ահա ի բացէ : Քեպետե. մօտագոյն էս է բաղարն բան զեկեղեցին , այլ նորա դուն ուրէք անդր գնային , զի մի ամօք է. արհամարհանս կրեսցեն. բանգի կապոյտս խոշոր պենկալացիս հանգոյն գերեաց զգենուին : Ե. սակայն իցէն ինչ բնակարծիք մեծարանաց մարդկան առ ընտանեկան բարեբաստութեամբ : Սմին իրի է. տիկնայքն երկոքին էրէ սակաւիկ մի վշտանային էս արտաբոյ , այլ առաւելագոյն բերկրանօք դարձ ի տուն առնէին : Մարիամ է. Գոմինիկոս այն ինչ նշմարեայ զնոսա ի բարձրաւանդակէ աստի զի գային ընդ ուղին Կիտրոնեաց , ընթանային մինչէ. ի ստորոտ լերինդ ' ձեռն կարկանէլ նոցա ի վերելս . է. նորա յաջս իսկ գերեացն նկատէին ակներե. զխնդութիւն նոցին ընդ դարձ իւրեանց : Անդէն առ տնին գտանէին նորա զմարբութիւն է. զազատութիւն է. արդիւնս պատրաստեայս ի սեպհական վաստակոց իւրեանց , է. ծառայս տիրասերս է. հաւատարիմս : Իսկ է. ինքեանք համակարիք է. նմանավիշտք էլով , է. բաղցրածայն անուամբքս ' սիրունի , նժդէհակից է. բոյր հարազատ զմիմեանս յորջորջէին , միակամբ համախնդիրք է. սեղանակիցք : Ամենայն ինչ հասարակաց էր

առ. նոսա . Ե. Երե երբէք վաղեմի ինչ կայծակն հրոյ բոցակի-
զագոյն քան զբարեկամութեանն ի սիրտս նոցա ի վեր երեւեր ,



սակայն հառատր ամբիծք ընդ զգաստասեր բարուցն աջակ-
ցեալ՝ ամբառ.նային զնոսա յայլ իմն կեանս , զօրէն բոցոյ՝ որ ի
ջգտանէլն ճարակ յերկրի՝ ի վեր ընդ երկինս սլանալ :

Բնութեանն պարտք երանաւետ Եւս զկենսակցութիւն նոցա գոր-
ծեին . Եւ մտերմութեանն չափ առաւելոյր ի նոսա ի տես որդե-
կացն , որ Եւ երկոքին Եւս արգասիք էին տարաբաղդիկ սիրոյ :
Քաղցր էր նոցա ի նմին յոգարանի զորդեակսն յուանալ , Եւ
ի նմին որրանի ի նինչ հանգուցանել : Բագում այն էր զի Եւ խառն
զմանկունս իրերաց դիեցուցանեին . Եւ տիկինն Լարուր ասեր
ցՄարգարիտ . « Սիրեցեալդ իմ , բող որդեակք կրկին երկա-
բանջիւրոցս եղիցին , Եւ որդեկացս երկաբանջիւր մարք կրկին : »
Չոր օրինակ ընծիւղք երկու յերկուս ամպահարեալ ծառս ոս-
տաբանցս համասեռս մնացեալք՝ պտուղս քաղցրագոյնս ընծայ-
են , երե քեցեալ երկաբանջիւր ի մայրենի բնոյն ի միւսն պա-

տու.աստեացին, նոյնպէս է. տղայքն երկոքին, որբացեալք յագ-
գակցաց, այնպիսեօք գողտրական գորովանօք լնուին, զի քան
գուստեր է. զղստեր, քան գեղբօր է. քան զքեռ. քաղցրագոյն.
ագղեր ի նոսա սեր ի փոխանակել անդ զմիմեանս ի դիեցումն ի
գիրկս մարցն ծնելասիրաց: Մինչդեռ. տակաւին ի խանձարու.րս
կային տղայքն, մարք նոցա գնարսանեաց նոցին զրոյց ի մեջ
առ.նուին. է. բարեբաստիկ ամուսնու.րեան անդստին տեսու-
րեամբ զվիշտս իւրեանց սփոփեալ՝ բազում այն էր զի ի վերջե
յարտասուս յուծանեին. քանզի մին ջարեացն հասելոց յիւր վերայ
պատճառս գայն համարեր, զի հարսանեկան օրինաց ոչ էկաց
պատկառ., է. միւսն՝ զի ընդ լծով նորին էմուտ. մին զի գեր ի
վերոյ քան զիւրն պայման կենաց ամբարձառ., է. միւսն զի խո-
նարհագոյն քան գայն էջ. սակայն է. մխիթարեին յուսով, քե
էկեսցէ օր յորում որդեակքն իւրեանց հեռ.ի յեւրոպականացն
դժնդակ մտահաճու.րեանց՝ վայելեսցեն ի սեր է. ի հաւասարու-
րին բարեբաստիկ:



Եւ. արդարեւ. անդստին իսկ յայնմ հասակե անգուգական իմն
էր տղայոցն այնոցիկ ընդ միմեանս աղապատանք: Եթէ էրբէք զյալ
հարկաներ Պօղ, զՎ.իրգինե ցուցանեին նմա, է. անդէն գուար-
բացեալ հանդարտեր: Եւ. էթէ յանկարծ վշտանայր ինչ Վ.իրգի-
նե, ի Պօղայ ճշելոյն զգային գայն ծնողքն. սակայն նագելին
այն դատրիկ իսկոյն զվիշտն ծածկեր, զի մի վշտակից անձին

իւրոյ լիցի Պօղ: Քանիցս անգամ էս գայիւս այսր, մինչդէռ հագիւ գօրէին տղայքն ոտն յոտանէ փոխել, տեսանէի զնոսա ձեռն ի ձեռն խառնեալ էս քեւ ի քեւ տուեալ հոշանիս ըստ սովորութեան երկրին, յար էս նման որպէս երկուորեկացն նկարագրի կենդակ: Այլ էս ոչ գիշեր ինքնին գատաներ զնոսա ի միմեանց. քանզի յաճախ ի նմին որբանի ընկողմանեալ, այտ գայտիւ հարեալ, լանջս ի լանջս կցեալ, էս զդաստակսն զպարանոցս իրերաց արկեալ՝ ի գիրկս միմեանց նիրն առեալ ննջէին:

Իբրեւ այն ինչ լեզուք նոցա ի խօսս պարզէին, նախկին ի նոցանէ լսելի լինէր բարբառ՝ եղբայր էս քոյր զմիմեանս յորջորջելոյ. քանզի մանկութիւն քեպետ էս ճարտար է ի հնարս գողտրագոյն գգուանաց, այլ անուանս քան գտսին քաղցրագոյնըս չգիտէ հնարել: Իսկ դաստիարակութիւն ի վերայ եկեալ յաւել էս էսս ի նոսա գսիրելութիւն, ի ձեռնտու օժանդակութիւն պիտոյից միմեանց վարելով զնոյն: Վիրգիւնեալ ոչ յետ բագում ժամանակի յանձն եղէ հոգ ունել տանն էս միտ դնել մարութեան, էս զճաշն անպաճոյճ պաշտել. էս այնմ ամենայնի յանձանձանաց զհետ գային համբոյրք եղբօրն էս դրուատիք:



Իսկ ինքն Պօղ ժիր ի վաստակս անդադարս՝ մերք պեղեր ի պարտիզին ընդ Դոմինիկեալ, էս մերք փայտատ փոքրիկ ի ձեռս

առեայ՝ ի մայրիս ընդ նմա գնայր . եւ թէ երբեք ի դեգերանսն խորում գտաներ ծաղիկ գեղեցիկ, կամ միրգ անուշակ, կամ բոյն բոջնեկի, բեպետ եւ ի ծայրս ուրեք բարձունս ծառոց պատահեին՝ վերելակեր եւ առնոյր եւ բարձեայ բերեր մատուցանել բեռն խորում :

Ի հանդիպել ուրեք միումն ի նոցանէ, ոչ գոյր երկբայել գի եւ միւսն ոչ ի բացէ կայ ի տեղւոջէն: Յաւուր միում մինչդեռ իջանէի ի լեռնէ աստի, տեսի զՎիրգիսնէ գի ի ծագաց պարտիզին ի տուն ընթանայր՝ զպատմութեանն յետկուսէ գգլխովն ամեայ իբրեւ ի ծածկոյր յերեսաց անձրեացն տարափոյ: Միայնիկ գնա համարեցայ ի բացուստ. այլ իբրեւ մատեայ օգնել նմին յընթացս, տեսի գի ունէր նա զՊօղայ ձեռանէն, ընդ նովին ձորձով ծածկեայ երկոցուն, եւ երկոցուն եւս ժպտելով ընդ պատսպարան հովանեկին՝ գոր խրեանց իսկ եր ձարտարեայ:



Այն գլուխք հրաշագեղոր հողմուռոյց պատմութեանն պարածածկեայր, զՎեստովայ որդեակսն ինձ յուշ արարին զ՝ ի նմին խեցւոջ պատսպարեայս ³ :

Ամենայն փոյր նոցա այն էր, հաճել զիրեարս, եւ օգնական լինել միմեանց: Բայց երկոքին իսկ անուամուսնր էին, որպէս եւրոպացիքն առ հասարակ յԱմերիկա ծնեայր, անգետք ամենեին դպրութեան եւ ընթերցման: Չէր ինչ նոցա փոյր գիտելոյ

զանցս վաղնջուցն ժամանակաց եւ զվայրաց հեռաւորաց . հե-
տաքննութեան նոցին սահմանք ջանցանէին անդր քան զայս
յեանն . կարծէին թէ անդ իսկ էր ծայր եւ աւարտ աշխարհի՝ ու-
րանօր եւ կղզեակն իւրեանց աւարտէր . եւ ուր ինքեանք ոչ
էին՝ անդ եւ ոչ մի ինչ սիրայորդոր համարէին թէ գուցէ : Ի
կարողին առ միմեանս եւ առ մարս իւրեանց սիրելութիւն պա-
րապէին ցանգ միտք նոցա : Սնուտի գիտութիւնք ոչ քամէցին
էրբէք արտասուս յաջաց նոցա, եւ ոչ խրատք տխրականք տաղտ-
կացուցին զնոսա : Չգողանայոյն օրինաց անգետք էին նորա ,
քանզի հասարակաց էր ամենայն առ նոսա . եւ ոչ՝ թէ չէ օրէն
շուայտել, զի անպաճոյճն կերակուր առ ձեռն պատրաստ կայր
նոցա . եւ ոչ՝ թէ չէ արժան խօսել սուտ, զի ոչ էր ինչ առ նոսա




ճշմարտութիւն կարօտ քանգուգանաց : Ոչ էր ուրուք անա-
ցուցեալ զնոսա էրբէք սպառնալէօք աստուածասաստ պա-
տուհասից առ որդիս ապաշնորհս, քանզի նոցա ծնողաւերն գո-
րով ծնունդ էր գորովոյ մարցն որդեսիրաց : Չայն ինչ իրս եւ-
էք ուսեալ էր նոցա յաստուածպաշտութեան կարգաց՝ որ
սիրելի զկրօնս ընծայեն . եւ էրէ ջերկարէին յեկեղեցւոջ զա-
ղօքս, սակայն ամենայն ուրէք, առ տնին եւ յանդի եւ ի մայրիս,
զձեռն ամբիծս եւ զսիրտսն յցեալս ծնողագուր սիրով յերկինս
ի վեր ամբառնային :

Ջայս գոյն օրինակի անցանէր գուարբաժաղիկն նոցա մանկութիւն իբրէս գայգ գեղածիժաղ՝ նշույագարդ տուրնջեան անտառը, Եւ տակաւ սկսանէին վաստակակիցս մարցն լինել ի յանձանձանս առտնին իրաց : Ընդ ազդել հաւախօսին գայգոյն



105
2018

զգալուստ՝ յառնէր Վիրգիկն, գնայր գջրոյ յաղբերակն մօտակայ, Եւ դարձ ի տուն արարեալ՝ գնախաճաշն հանդերձեր: Իսկ իբրէս արեգակն ոսկեճաճանջ զգագաթունս բլրոցս շուրջանակի գեղերփներ, կանխէր Մարգարիտ ընդ իւրունն որդեկի առ Լարուր տիկին. յայնժամ ամենէրին միաբան յաղօթս կացեալ նախ, Եւ ապա թէ ի նախաճաշ մատչէին. բազում այն էր զի առ դրանն արկանէին բազմական ի դայարուոջ ընդ հովանեաւ աղամարգէնեաց՝ որ Եւ համաղամս կազմիկս զհիւրեղ պտուղսն ընձեռէին նոցա, Եւ ծածկոյթս սեղանոյ զաղարթս իւրեանց երկայնաճեւս Եւ փայլունս: Այնպիսեաւ ստածիջ Եւ աննիազ կերակրով արագ արագ աճումն առնուին պարմանիքն երկուրեան, Եւ քաղցրահամբոյր դաստիարակութեամբ փայլէր ի դէմս նոցա ոգւոցն ամբժութիւն Եւ հրճուանք: Ջերկոտասանամենիւք ուրեմն էր Վիրգիկն, Եւ կերպարան բոյոր անձինն սակաւինջ ընդհատ ի զարգուն տիոց. զիսակբ վարսիցն խարտիշագէղը զգլխովն հովանացեալք . ծաւի ականողիք Եւ շրթունք կարմրա-



յառք յառոյգ դեման փայլեին ակնահաճոյ շողշողեալ, ժպիտս միանգամայն ընդ բարբառել նորա ծաղկեցուցանելով . իսկ ի լուեւրն, հայեցուածք աջաց նորա՝ յերկինս կոյս ի բնէ իմն պարզեայք՝ յայտ առնեին գղիւրազգած գորովանս եւ զընդաբոյսն քախժութիւն : Իսկ Պօղ ի ծաղկի պատանեկութեան զառն ի չափ հասելոյ բերեր զնկարագիր : Բարձրադիտակ էր նա քան զՎիրգիլնէ , քիսատիպ եւ արծռունգն . աչքն սեւաթոյրք խրոխտապանծք արդէօք երեւեին՝ երէ ոչ արտեւանունքն երկայնատեգր շուրջանակի ճառագայթածէ փողփողեալ՝ յաւելուին ի նոսա ամորախառն ինչ քաղցրութիւն : Թեպէտ եւ յար ի շարժման կայր , սակայն ընդ տեսանել զբոյրն հանդարտեր նստեր առ նմա լուիկ . եւ յաճախ ի ճաշելն իսկ եւ ոչ մի ինչ զբոյց ընդ միմեանս առնեին . որպէս զի ի լուութեան անդ նոցա , ի տեսիլ վայելչութեան դրիցլ եւ բոկանի ոտիցն գեղոյ բուեր տեսողաց նկատել կիցս իմն վաղեմի անդրեաց քանդակեալս ի կիճ սպիտակ՝ գՆիոբայ որդեկացն բերելով զպատկեր՝ : Իսկ հայեցուածովքն՝ որ հանդիպել իրերաց խնդրեին , եւ փոխադարձ քաղցրածպիտ զըւարբութեամբն բուեին որդիք լուսոյ զուարբունք երանաւետք , բնաւորեայք սիրել զմիմեանս , որոց չէն ինչ պէտք խորհրդոց առ ի յայտնել զսրտիցն զգածմունս , եւ ոչ բանից՝ առ սիրոյն յանդիմանութիւն :

Բայց Լարուրի տիկնոջ ըստ զարգանալ օր ըստ օրէ դստերն իւրոյ ի գեղ եւ ի հասակ՝ յաճախէր ընդ որդեգորով սիրոյն եւ անձկութիւն սրտի . եւ ասէր նա ցիս երբէք երբէք . « Երէ զամ մի մեռանել ինձ հասանիցէ , զի գործեսցէ Վիրգիլնէ ի կարօտութեան : »

Էր նորա ի Գաղղիա մօրաբոյր տոհմիկ , ընչաւետ , անցեալ զաւուրբք եւ բարեպաշտօն . սա ի հարսնանալ նորա Պ . Լարուրի՝ զլացեալ էր նմա զամենայն օգնականութիւն այնպիսեա . իմն տմարդութեամբ , զի եւ նորա հաստատութեամբ եղեալ էր ի մտի ի յետնումն եւս կարօտութեան չխնդրել ինչ ի նմանէ : Բայց իբրեւ մայրացաւն՝ ոչ եւս զանգիտեր յամօթոյ անլսելի լինելոյ : Զեկոյց մօրաբեռ իւրում զյանկարծաղեպ վախճան առնն , զճնունդ դստերն եւ զտառապանս զոր կրէր հեռի ի հայրենեաց

անոր անօգնական՝ հոգովք որդեկին ծանրաբեռնեալ . այլ ջընկայաւ ինչ ի նմանե պատասխանի : Նա զի էւ խրոխտն էր բնութեամբ , էւ սակայն յանձն էառ խոնարհել էւ նշառակ կալ կշտամբանաց մօրաբեռն , որոյ ջեր էրբէք ներեալ նմա զլինելն




առն ապատոհմի , բեպետ էւ առաքինւոյ : Եւ թղթեր առ նա յամենայն ի դեպս առ ի գուր խանդադատանաց շարժել զնա ի վերայ դատերն . բայց սահեալ անցանեին ամբ յոյովք , էւ ջընդուներ ի նմանե ցոյց ինչ յիշատակի :

Ուր ուրեմն յամին 1758 , յետ էրից ամաց ժամանելոյ ԼաՊուրտոնե քաղաքապետի ի կղզի անդր , գիտաց զի էր առ նմա բուրք ի մօրաբեռնն առ ինքն զրեալ : Փութացաւ անդէն ի Փորլուի , ոչ ինչ հոգացեալ յայնժամ զհանդերձիցն զճնութենե . զի մայրենին խնդութիւն գեր ի վերոյ ամբառնայր զնա քան զմարդկան ակնածութիւն : Եւ ընկայաւ ի Լա - Պուրտոնեայ զգիրն յորում մօրաբոյրն իւր քաջ իսկ արժանի դատեր զնա դժնդակ բաղդին՝ փոխանակ զի ամուսնացաւ ընդ բաղդախնդիր էւ խառնագնաց առն . էւ յաւելեալ ի բանսն ասեր . « Ախտամոյն կիրք զհետ իւրեանց առեալ ձգեն զպատուհաս . վաղամեռիկն լինել առն քո՝ պատիժ արդար է հասեալ քեզ յԱստուծոյ . գործ մի բարի արարեր դու ի կղզիսդ յայդոսիկ պանդխտելով , էւ ոչ ի Քաղղիա դնել նախատինս քումդ ազգատոհմի . այն զի էւ էրկիրդ յոր բնակես քաջաբեղուն է , էւ այդր ամենայն որ յաւելու ի ճոխութիւն , բայց ի դատարկապորտ մարդկանե : » Եւ յետ այսպէս զնա եպերելոյ , յանձնգովութիւն զգիրն յանգուցաներ

Եւ ասէր. « Ես զի գերծ կացից յարգասեաց ամուսնութեան՝ որ գրեաքէ ցանգ իսկ աղետալիք էն, չկալայ երբէք յանձին զնալ ումէր ի հարսնութիւն : » Զայս նա այսպէս գրէր. բայց իրացն ստուգութիւն այս ինչ է, զի փառասէր գոյով ի բնէ՝ ազնուականի առն էր ի խնդիր. քեպէտ էւ ինքն ընչաւետ էր յոյժ, քեպէտ էւ յարբունիս ոչ այլ ինչ խնդրի՝ բայց ընչից փարբամութիւն, սակայն չգտաւ որ ուրէք այր որ յօժարէր առնուլ ի կնութիւն զայնպիսին՝ օրիորդ անգեղեայ էւ խստասիրտ :

Իսկ ի ստորեւս նամակին յաւելոյր, զի յետ քաջ կշռելոյ զամենայն՝ յանձն առնեմ գրեզ բագում աղերսանօք ի խնամս Լա-



Պուրտոնեայ : Եւ արդարեւ յանձնեայ իսկ էր զնա, բայց ըստ արդի յաճախ սովորութեան՝ որ բազմավտանգ էւս քան զոխերիմն թշնամի յանձնելումն գործէ զխնամարկուն. քանզի առանբասիր առնելոյ յաջս քաղաքապետին զիւրն խստութիւն ընդ դատեր քեռն իւրոյ, էւ իբր ողորմելով յաղետս նորա՝ չարախօսեայ էր զնմանէ : Որով էւ Լա-Պուրտոնէ ձախտղակի իմն կարծեօք զգածեայ՝ կարի անսիրելաբար ընկալաւ զԼարուր տի-

կին, զնա գոր է. անձանօրի ումք չէր մարք տեսանել անկարեկիր աջօր է. առանց մեծարանաց : Հակիրճ է. սոնք տուեալ պատասխանի առ. պատմեալսն ի տիկնոջէ անտի զանձնէն է. զղատերէ, ասէ . « Տեսից... տեսցուք... յորժամ ժամ առից... յոյովք են ջուառք յաշխարհի... չէր պարտ դժկամակել զմօրարոյր քո պատուական... քո է մեղն... » այլովքն հանդերձ :

Դարձաւ Լարուր տիկին ի տուն իւր սրտաբէկ է. վշտայից, է. իբրէս բազմեցաւ՝ արկ զսեղանով զքուղթ մօրաբեռն, է. ասէ ցսիրուհին իւր . « Ահաւաղիկ արգասիք համբերութեան ամաց մետասանից : » Ե. քանզի ինքն միայն էր ի տանն զբազետ, բուռն էհար անդրէն զքարտիսէ անտի, է. ընթերցաւ զայն ի լուր ընտանեացն : Ե. իբրէս կատարեաց զընթերցումն, ասէ ցնա Մարգարիտ զայրագին . « Բնաւ է. զի պիտոյ իցեն մեզ ազգականք քո : Միքէ էլիք էք՞նդ զմեզ Տեր . ո՞չ ապաքէն նա միայն է հայր մեր . է. միքէ ո՞չ բարեբաստիկք էաք նովաւ մինչէս ցայսօր, է. արդ դու հիմ տագնապիցիս . քաջայերեաց, մի վհատիր : » Ե. տեսեալ զնա զի լայր, անկաւ զպարանոցաւն է. համբուրեաց զնա է. ասէ . « Սիրուհիդ իմ, իմս Լարուր : » Բայց է. իւրն սիրտ հարաւ ի փղձուկ է. էկաց մնաց անբարբառ : Յայն ողորմ տեսիլ յարտասուս լուծաւ է. Վիրգիներ. մերք զմօրն է. մերք զՄարգարտին ի բերան տարեալ զձեռան համբուրեր է. առ. սրտիւն ողջագուրեր . իսկ Պօղ բարկացայտ աջօր է. զքուռնսն սեղմ ունելով, զոտս ի գետին տրոփեր, է. ոչ գիտեր քէ զով կշտամբիցէ : Ի լուր աղմկին անդր ի ներքս ընթացան Դոմինիկոս է. Մարիամ, է. ոչ էսս այլ ինչ էր լսել ի տնակին բայց զճիջս ցաւագինս . « Ո՞հ տիկին... բարեգութիւն... նհ մայրիկ... մի լար : » Ի սիրայիր զգուանաց անտի ուշաբերեալ տիկնոջն, ընդգրկեաց զՊօղ է. զՎիրգիներ, է. ի սփոփանաց սրտին ասէ . « Որդեակք իմ, դուք իմոցս ցաւոց պատճառք, դուք է. սփոփանք իմ է. խնդութիւն : Ա՛հ, որդեակք սիրունք . բացուստ ի բաց հասանէն ինձ աղետքս այսօրիկ, իսկ զինէ. ոչ այլ ինչ գտանեմ բայց բարեբաստութիւն : » Զի Պօղ է. Վիրգիներ քեպետ է. հաւաստեաւ ոչ կարէին ի վերայ կսլ բանիցն զօրութեան, այլ զի հանդարտեալ զնա տեսանէին՝ զուարբագինս

փարէին զնովա : Եւ այնպէս անդրէն ի խնդամտութիւն դարձան առ հասարակ, որպէս ամպրոպայոյզք ի գեղածիծաղն յեղանակի վաղ ընդ փոյթ անցեալ :

Բայց բարեբոյսն բարբ մանկանցն երկոցուն աճէր օր ըստ օրէ : Յաւուր միում կիւրակէի ընդ արեւածայրսն մինչդէռ, մարբ նոցա յեկեղեցւոջ կիտրունեացն ի յուր կային նախամատոյց պատարագի, եկն ի տուն նոցա կին ոմն խափշիկ յեռնաբնակ ի ներքոյ աղամաթգենեացն որ շուրջ էին զբնակարանաւ նոցա : Եւ եր կինն ցամաքեալ կճղացեալ մեռելատիպ կերպարանօք, եւ սփածեալ զմիջովն զբգլեակ պատառատուն : Անկաւ առ ոտս Վիրգիլեալ, մինչ նա դէռ զնախաճաշ իւրոցն հանդերձէր, եւ ասէ . « Մանկիկ օրիորդ, զքա յիս ի գերեակս փախստական .



յամսոյ հետե սովայրուկ եւ կիսամահ ի մեջ յերանցս բափ առեալ շրջիմ, յաճախ եւս հալածական վարիմ յորսորդաց եւ ի բարակաց նոցին : Փախստեալ հասեալ գամ յերեսաց տեառն իմոյ որ մի է յընչաւետ բնակչաց Սեաւ Գետոյ, նա ինքն եարկ զիս յայս պայման ջարադէտ : » Եւ զայս ասացեալ ցուցանէր նմա զերաշխեպս մարմնոյն խորացեալս ի խոշտանգանաց գանից : Եւ յաւել ասել . « Կամէի իսկ գետամոյն զանձն իմ կորուսանել .

բայց իբրեւ գիտացի զի դուք աստէն ունիք բնակութիւն , ասացի ի միտս իմ . « Իցէն արդեօք եւ ի գաւառիս յայսմիկ սպիտակք բարեգութքք . ապա չեւ եւս արժան է ինձ մեռանել : » Ի գութ խանդադատեցաւ Վիրգիլնէ , եւ ասէ . « Քաջայերեաց՝ եղկելի դու , հնապա կեր գայս . » եւ եղ առաջի նորա զնախաճաշն պատրաստեալ ընտանեաց իւրոց : Սպառեաց հնդիկն լափլիզեալ անդէն զկերակուրն . եւ իբրեւ յագեցաւ , ասէ Վիրգիլնէ . « Աղքատիկդ հեք , ես ինքն եկից եւ հաշտ արարից գտեր քո , իցէ քէ ի տեսիլ աղետիցդ գրացի ի քեզ . հնապա տար զիս առ նա : » եւ ասէ խափշիկն . « Հրեշտակդ Աստուծոյ , եկից զկնի քո յոր վայր եւ երբիցես : » Կոչեաց Վիրգիլնէ զեղբայրն իւր եւ աղաջեաց ընդ իւր գնալ : եւ խափշիկն առաջնորդէր նոցա ընդ անձուկս անտառախիտս եւ ընդ ափափայս բարձրաբերձ լերանց



ընդ որս ջարակոշկոճ ճգամբք ի վեր մագլէին , եւ ընդ լայնածաւալ հեղեղատս ընդ որս հետի անցանէին , մինչեւ ուր ուրեմն զհասարակ առուրք ժամանեցին ի ստորոտ յեռնակի միոյ ի դարափն Սեաւ Գետոյ : Էր անդանօր տուն մի ամրաշէն , եւ ծառատունկ մեծ , եւ բազմութիւն յոյժ գերեաց յազգի ազգի վաստակս պարապեալ : Ճեմ առեալ զգնայր ի մեջ նոցա տանուտերն ծխափող ի բերանի եւ եղեգն յաջում . այր բարձրահասակ ,

վտիտ մարմնով, քիստիպ կերպարանօք էս խորակն, էս յօնքն սեաք յիրեարս կցեին : Կայեալ Վիրգիլեայ գճեռանէն Պօղայ մատեաւ առ այրն ահ ընդ ահ, էս աղաչէր գնա ի սէր Աստուծոյ ներել աղախնոյն իւրօւմ, որ ի բացէ կայր ի քիկանց նոցա : Նա գառաջիկն ոչ ինչ էրեսս արար մանկանցն էրկոցուն՝ հայեցեալ յաղբատին ձորձս նոցա . այլ իբրէս էտես զջքնաղ կերպարանս Վիրգիլեայ էս գիսարտեաշ գիսակս նորա ընդ կապուտակ բօղովն, էս յուսաւ զքաղցրաձայն բարբառ նորա, որ ընդ բովանդակ անձինն դողդոջէր ի հայցել անդ ի նմանէ գշնորհն, ի բաց էղ զծխափողն ի բերանոյն, էս զցուպ իւր ընդ էրկինս ցգեալ՝ էտ էրդուան սոսկայի էս ասէ . « Ներեալ դմա՝ ոչ ի սէր Աստուծոյ, այլ առ քոյ սիրոյդ : » Ես Վիրգիլեայ ակնարկի առ խափշիկն արարեալ զի յառաջ առ տերն իւր մատիցէ, ինքն փութացաւ խոյս էտ ի տեղւոջէն, էս Պօղ գնէտ նորա :

Ես դարձ արարեալ ի միասին ընդ գառ ի վերն ընդ որ իջեալ էին, նստան ի կատար լերինն ընդ ծառով ուրէք վաստակաբէկր էս ծարաւահոյժք . զի յայգուէ առուրն անկեայք յուղի՝ խրասախս աւելի քան զհինգ հատեալ էին անսուաղ : Ասէ Պօղ ցՎիրգիլե . « Քոյր իմ, վաղ իսկ հասարակեալ է օրս . քաղցեալ էս դու էս ծարաւի . էս ճարակ ինչ գտանել աստ չիք . էկ իջցուք վերատին, գնալ խնդրել մեզ կերակուր ի տեառնէ գերւոյն : » Պատասխանի էտ Վիրգիլե . « Ո՛հ, մի սիրելիդ իմ . այրն այն ահաբէկ արար զիս : Յուշ քեզ գոր ինչ մայրիկն մեր սովոր է ասել . Հաց անօրինին կոպճով լնու գբերան : » Կրկնեալ անդրէն Պօղայ ասէ . « Ես զի գործիցեմք, զի էս պտուղք ծառոցս անպիտանք են ի կերակուր . չիք էս ոչ մոշենի աստանօր էս ոչ բբուէնի առ ի բուժանել զծարաւ քո : » Վիրգիլե ասէ . « Տեր ողորմեսցի մեզ, այն որ տայ կերակուր ձագուց իսկ թռչնոց որ ճըճուէն առ նա : » Մինչդեռ բանքն ի բերան նորա էին, հարաւ յունկն նոցա խոխոջ աղբերական որ ոչ ինչ հեռի ի տեղւոջէն գահավիժէր : Ընթացան անդր, հարին զպատուք իւրեանց յականակիտ աղբերէն, էս քաղեալ կերան խոսն ինչ ջրկոտեմ գափամբ առուակին բուսեալ : Ես մինչդեռ այսր անդր աչս ածեալ հայեին գտանել բերեսս այլ ինչ կազդուրիչ քաղցոյ, նշմարեաց


Վիրգիլն է ի ծառս անտառին մատաղատունկ յագգէ արմաւե-
նեաց : Կաղամբաձէ գնդակն սաղարթապատ ի գագաթան տնկոյն,
քաղցր էր յոյժ ի կերակուր . եւ թեպէտ բուն նորա ոչ ինչ աւելի
քան գարունից ունէր թանձրութիւն, ամբառնայր վարսուն
ուտնաջափ . փայտ նորին խորճ իմն ի թելից բագմաց թուի
յողեայ, այլ կուրծն որ ի միջի՝ կարծրապինդ է յոյժ, սայրասուր
իսկ տապարաց անտեղիտայի . իսկ Պօղայ չէր անդ եւ ոչ նրան
մի փոքրիկ : Ուշ ի կուրծս անկեայ հոսր հարկանել գարմաւե-
նոյն, վարաներ դարձեայ՝ ջունելով հրահանս, եւ յապառաժուտ
կղզւոջ անդ չէր արդէօք գտանել կայծաբար : Բայց հարկ ի ճար-
տարութիւն դրդէ գայր . եւ բազումք ի պիտանեգոյն գիւտից
ի բշուառաց են հանձարեայ : Խորհեցաւ ըստ սեւոցն օրինակի



վառել հոսր : Առեայ ընդ ոտիւք ոստ մի ծառոյ գօսացելոյ, ծակ
ի նմա գործեաց ծայրիւ քարի, եւ ապա սայրիւ նորին տաշեայ
նրբեայ այլ իմն ոստ չոր, մխեաց գայն ի ծակ միւսոյն որ ընդ
ոտիւքն էր, եւ շրջշրջեայ ուժգնակի ընդ ափ որպէս գաղօրեակ
չորոյարի, ետես եւ անա ծուխ ընդ ծակն էլաներ եւ կայծակունք
անտի հատանեին : Յայնժամ քաղեայ խոտ չոր եւ խոխուս եւ
կրկուտ, արար հոսր առ արմին արմաւենոյն, եւ իսկոյն կոր-
ծան անկաներ ծառն մեծաւ ճարձատմամբ : Նովին հրով կե-

դէւեաց եւ գպտուդն կաղամբաձէ ի փշայից սաղարթապատ ի կարծր պատէնիցն : Զկէս նորին կերան անէփ , եւ գմիւս կէսն էփեայ ընդ մոխրով , եւ երկոքին եւս քաղցրաճաշակ ի քիմս նոցա բուէին : Եւ ուրախութեամբ զանպաճոյճ կերակրիկն ճաշակեցին յիշատակաւ առաւօտին բարեգործութեանն . սակայն խնդութիւն նոցա աղմկեր յաժէլ գմտաւ գմարցն տագնապ ընդ անտես յինէլ իւրեանց յերկար ի տանէ . եւ Վիրգիլնէ ստեպ զկասկածն զայն յեղլէդեր : Սակայն Պօղ կազդութեայ կերակրովն սրտապնդեր զնա եւ ասէր . « Փոյք ընդ փոյք հասեայ արդ սփոփեցութիւն զձնօղս մեր : »

Եւ յարուցեայ ի ճաշոյն վարանէին , ջուներով զոք ուղեցոյց առաջնորդել նոցա ի տուն : Պօղ որ անխոռովն էր յամեհայնի , ասէ ցՎիրգիլնէ . « Տուն մեր յարեւակողմն կոյս ի միջօրեայ անկանի . հարկ է մեզ ապա անցանել , որպէս յառաւօտուս ,



ընդ լեառն երէքսարեան որ հանդեպ մեր կայ : Օն արի , գնասցութիւն , քոյր իմ : » Եւ անուն լերինն էր Եռաստին , զի սարք նորա երէքին գտեանց բերէին զձէս : Հապա իջին ընդ հիւսիսակողմեան ձորամեջ Սեաւ Գետոյն , եւ ճանապարհ արարեայ ժամ մի հասին յափն յայնաժառայ գետոյ որ խափանէր զանցս նոցա : Անտառախիտն այն կողմն մեծ կղզւոյն անձանօք է ցարդ , մինչէ յոյովից ի գետոց անտի եւ ի լերանց որ ի նմա՛ դեռ եւս սպակասեն անուանք : Գետն յոր հասին՝ յորձնէռանդն խաղայ

ընդ ժայռս խոխոջանօր . յորոց զանգիտեալ Վիրգիլեայ ոչ իշխեր միջամուխ լինել անցանել ընդ հունն : Յայնժամ Պօղայ ըստանձնեալ զնա , անց բեռամբն ընդ յպիրժ ապառաժս գետոյն աներկիւղ ի յորձանաց անտի , եւ ասէր ցՎիրգիլե . « Մի ինչ երկնչիցիս . հզօր եմ , ես՝ մինչ դու ընդ իս կաս . եթէ տանու-



տեառնն չէր շնորհեալ քեզ զներումն գերւոյն , մենամարտի ընդ նմա : » Վիրգիլե ասէ . « Եւ իբր հնար էր քեզ ընդ անօրէն հսկային գալ ի վեզ . ապա ուրեմն ի վտանգ մեծ արկի գրեզ : Քանի դժուարին է բարերարել . իսկ չար ինչ գործել դիւրին յոյժ : »

Եւ իբրեւ էլ Պօղ ի ցամար , դեռ եւս քերբն հանդերձ ըստ անձին յառաջ վարէր զճանապարհն՝ յուսացեալ էլանել նովաւ ընդ յեառնն Եռաստին , որ կհտով փարսախաւ կայր ի բացեալ . այլ

վաղ պարտասեայ անկեայ յուժոյ, հարկեցաւ դնել զնա ի վայր
եւ հանգչել առ նովա : Ասէ ցնա Վիրգիլն . « Օրս տարածամե ,
եղբայր իմ . դու դեռ եւս յուժի կաս , իսկ ես վաստակաբէկ . բող
զիս աստեն , եւ դու միայնակ դարձ ի տուն արարեայ հանգո
զսիրտ ծնողացն մերոց : » Եւ ասէ Պօղ . « Ո՞նք սնն յինեն . ոչ բողից
գրեզ : Եթէ գիշեր ի վերայ հասցէ մեզ յանտառի աստ , լուցից
նուր , հարից արմաւենի , գկաղամբն ջամբեցից քեզ , եւ սաղար-
քիւքն յօրինեցից քեզ տաղաւար : » Բայց իբրեւ ոգի էառ . սա-
կաւիկ մի Վիրգիլն , խլեացի հինաւուրցբնոյ ծառոյն որ խոնար-
հեր անկաներ զգետեզերբն՝ տերեւս երկայնամիզս գաղտակրի,
եւ ճարտարեայ նորօք տրեխաւորեաց զոտս իւր արբնաներ-
կեայս ի քարանց ճանապարհին . քանզի առ հապճեայ փութոյն
ի բարերարել՝ մոռացեայ էր ազանել կօշիկ յոտս իւր : Եւ իբրեւ
սփոփեցան գարշապարքն տերեւոցն հովութեամբ , եհատ գաւա-
զան ի հնդիկ եղեգանէ եւ անկաւ յուղի՝ միով ձեռամբ յեղբայրն
յեցեայ , եւ միւսովն ի ցուպն եղեգնեայ :

Այսպէս հանդարտաբայլ ճանապարհ ընդ մայրիս սունեին .
այլ ծառք բարձրաբէրձք եւ սաղարքախիտք վաղ իսկ կալան
յաջաց նոցա զյէառն եռաստեանց , յոր դէմ եղեայ գնային . եւ
արեգակն ի մուտս խոնարհեր : Իբրեւ պահ մի էանց ի վերայ ,
խոտորեցան յանգգայս յարահետ ճանապարհեն , եւ յանել ինչ
անկան բաւիղ ծառոց , բաղեղանց եւ ապառաժից : Պօղ ասաց
ցՎիրգիլն նստել առ տեղեաւն , եւ ինքն այլ յայլմէ եղեայ այսր
անդր ընթանայր՝ էլի աղագս գտանել ի բփռուտ մացառաց անտի .
այլ գրաջան եղեւ ամենեւին : Ել ի կատար ծառոյ միոյ բարձու
զի գէթ զեռաստինն տեսանիցէ զյէառն . սակայն ոչ այլ ինչ
էտես շուրջանակի բայց զգագաքաւնս ծառոց որ ոսկեփայլ ճա-
ճանչէին ի ճառագայթից արփուոյն վերջնոց : Տակաւ ստուերք
լերանցն երկայնեայ ծածկէին զանտառս հովտաց . հանդարտեր
հողմն որպէս դեպ լինի յարեւուն մտանել . լուսփաւն խորին
պատեր գվայրսն անմարդիս , եւ եղջերուաց էւեր լսելի լիներ
անդանօր կռիւնչ՝ որ դիմեայ գնային յամայնոջն ի խնդիր կա-
ղաղուց : Յուսացաւ Պօղ թէ գուցէ ումէր յորսորդացն լինիցի
լսելի , եւ ճայն բարձեայ գոչեր ուժգին աղաղակաւ . « Եկնայր ,

Եկանք, յօգն հասէք Վիրգիներայ : » Եւ արձագանգաց Եւեր անտառին անդրէն կրկնեայ Եւ Երեքկնեայ՝ Ետուն նմա պատասխանի . « Վիրգիներ... Վիրգիներ : »

Յայնժամ Էջ Պօղի ի ծառոյ անտի վաստակաբէկ Եւ տրտմագին, Եւ խորհեր ի միտս իւր թէ որպիսի ինչ արդէօք հնարս հայրհայրիցէ Երեկօրէլոյ ի տեղւոջն . այլ ոչ էր անդ աղբիւր, Եւ ոչ արմաւենի, Եւ ոչ խոխիք Եւ փայտ ջոր առ ի գհուր լուցանելոյ : Եւ տեսեայ ակներէն զի ոչ Եւս է իմիր ձեռնհաս, սկսաւ լայ : Ասէ ցնա Վիրգիներ . « Մի լար, սիրեցեալդ . ապա թէ ոչ, մեռանիմ ես ի ցաւոցս . ես իսկ եմ պատճառք վշտացի քոց Եւ տագնապի մարցն մերոց : Չէ օրէն առնել ինչ, Եւ ոչ բարիս ինչ գործել անհրաման ի ծնողաց : Ո՛հ, զի անմտացայ յոյժ : » Եւ յարտասուս հարաւ : Ապա ասէ ցՊօղ . « Եկ յաղօթս կացցուք առ Աստուած, Եղբայր, Եւ ողորմեսցի մեզ : » Այն ինչ զաղօթսն աւարտէին, Եւ ահա ձայն հաջելոյ շանց հարաւ ի լսելիս նոցա : Ասէ Պօղ . « Հաջիւն է այդ բարակի . յորտորդացն որ յորս Եղջերուաց հեծանէ յերեկոյիս : » Եւ ի յաճախել հաջմանցն ասէ Վիրգիներ . « Ինձ թուի թէ Հաւատարիմն է, շուն բնակուրեան մերոյ . զի ճանաչեմ ես զձայն նորա . միթէ մ՛օտ իցեմք հասանել, Եւ կամ առ ստորտով մերոյ յերինն գտանիցիմք : » Եւ նոյն հետայն դիմեաց Եկն Հաւատարիմն Եւ փարեր զոտիւք նոցին, հաջեր, մունչեր, կունչեր Եւ բծինս տայր նոցա : Եւ մինչդեռ տակաւին հիացեայ իմն կային, Եւ ահա տեսին զԴոմինիկոս զի փութանակի գայր առ նոսա : Եւ ի հասանել սեւոյն որ արտասուէր առ խնդին՝ լուծան Եւ ինքեանք յարտասուս, Եւ կացին մնացին անբարբառք : Մինչէն ապա անձին զգաստ Եղէ Դոմինիկոս Եւ ասէ . « Ո՛տեարք իմ նորատիք, զիւնրդ տագնապեցան մարքն ձեր . նր գարմանք կայան զնոսա յորժամ դարձ ի պատարագէն արարեայ չգտար զձեզ առ տնին . Մարիամ որ յանկեան ուրէք տանն վաստակեր, ոչ զիտեր թէ ուր մեկնեայ զնացեայ իցէք : Բագում անգամ շուրջ Եկեայ ընթացայ զբնակարանաւն մերով, անգիտացեայ բնաւ Երէ ընդ նր արժան իցէ Ելանել ձեզ ի խնդիր . ուր ուրեմն առեայ զհնոտիսն ձեր մատուցի Հաւատարմին ի հոտոտումն, Եւ անասնիկդ իբրու իմացեայ զմիտս իմ՝ անդէն յուղի անկաւ՝ հե-

տախտոյց ձեզ լինելով, եւ զձեռն յար ի տատանման կայեալ՝
առաջնորդեաց ինձ մինչ ի Սեան Գետ : Անդ գիտացի ի տանու-
տեռնե բնակարանին զի ածեալ է ձեր առնա զաղախին նորա
զխափշիկ, որում եւ շնորհ արարեալ նորա երեսացն ձերոց՝
ներեալ է նմին : Այլ որպիսի շնորհ : Եցոյց ինձ զեղկելին ոտնա-
կապօք պնդեալ ի կոճեղս, եւ երեքժանի անուր երկաթի ի
պարանոցին ունելով : Իսկ Հաւատարմին խիլ արկեալ անդա-
դար ած ծգեաց զիս մինչեւ ցարաւանդակ Սեան Գետոյ, եւ անդ
զկայ առեալ հաջեր ուժգին բարբառով. եւ եր ի տեղուոջն աղ-
բերակն մի, եւ արմաւենի տապալեալ, եւ առնմին հուր յու-
ցեալ որ ծխեր տակաւին : Անտի ապա առեալ ած զիս մինչեւ
ցայսր ի ստորոտս Եռաստին լերինդ. իսկ աստի մինչեւ ցտուն
չորից խրասախաց ճանապարհ է : Հապա կերայր եւ զօրացա-
րուր : » Եւ անդէն մատոյց նոցա բարբար մի, եւ միրգս եւ հաղա-
դակ լի ըմպելեաւ որ կազմեալ էր ի ջրոյ եւ ի գինւոյ, ի հուզից
լեմոնի, ի շաքարէ եւ ի հնդիկ ընկզոյ զոր մարցն նոցա պատ-
րաստեալ էր ի կազդուրումն եւ ի զովացումն : Յոգւոց էհան
Վիրգինե յիշատակաւ հեր աղախնոյն եւ մտայոյց տառապա-
նաց մարցն . եւ ասէր բազում անգամ . « Բնբէ, որպէս զի դը-
ծուարին էբարերարելու ումեր ի մարդկանէ : » Մինչդեռ Պօղ եւ
նա ճաշակեալ կազդուրեին, հուր էլոյց Դոմինիկոս . եւ գտեալ
յապառաժս անդ ազգ փայտի ծամածուռ, որ դալար էս էլով՝
բոց մեծ արձակէ, ջան պայծառ յարդարեաց, բանգի եւ գիշեր
ուրեմն էր : Այլ իբրեւ ծամ ջուրոյն էհաս ի վերայ, անկաւ ի վա-
րանս տարակուսի, զի Պօղ եւ Վիրգինե ոչ էսս զօրեին ընթանալ,
բանգի այտուցեալ էին ոտք նոցա եւ կարմրացեալք : Հարկ էր
հեռագոյն ուրեր էրբայ ի խնդիր օգնականութեան, կամ քէ ան-
դէն ի տեղուոջն երեկօքս առնել ընդ նոսա . ասէ ցնոսա . « Ո՞ր
իցէն աւուրբն յորս գերկոսին զձեզ միանգամայն ի գիրկս իմ
բարձեալ տանէի . բայց արդ դուք մեծացարուր, եւ էս ձերա-
ցայ : » Եւ մինչդեռ յայն վարանս տարակուսի տազնապէր,
ահա ամբոխ լեռնաբնակ հնդկաց որ ոչ ի բացեալ էին բան զքայ-
լըս բսան, եւ պարագլուխ նոցին մատուցեալ առ Պօղ եւ առ
Վիրգինե ասէ . « Ազնիւ պատանեակրդ սպիտակք, մի ինչ

զանգիտիցէք . տեսար մէք զձեզ յառաւօտուս զի անցեալ զնացէք
ընդ կնոջ ումեմն հնդկի Սեա . Գետացւոյ , հայցել զներումն ի
դժնդակ տեսունեն : Ահա ի տրիտուր փոխարինի շնորհին զոր
արարէք՝ շայակեալ տարցուք զձեզ մինչեւ ի տուն բնակութեան
ձերոյ : » Զայս ասացեալ ակնարկեաց առ հնդկիսն , եւ չորր
ոմանք կորովիք զահաւորակ կազմեալ փութապէս յոստոց ծա-



ռոց եւ ի բաղեղանց՝ նստուցին ի նմա զՊօղ եւ զՎիրգիներ , եւ
բարձին յուսս իւրեանց , եւ Գոմինիկոս շահ ի ձեռին յառաջըն-
բաց լինէր . այնպէս անկան յուղի հրճուողական ձայնիւ հընդ
կացն պարու , որք օրհնաբանէին զնոսա : Գորովեցաւ Վիրգիներ ,
եւ ասէ ցՊօղ . « Տեսանէս , ո՛ սիրելի , զի ոչ բողու Տէր անվարձ
զգործս բարիս : »

Գիշերն հասարակէր , եւ հասին նորա ի ստորուտ լերին իւ-
րեանց որոյ յուսանշոյլ վառէին կատարք : Այն ինչ էլանէին ընդ
զառ ի վերն , եւ ահա ձայնք բարբառոյ զոչէին առ նոսա .
« Դո՛ւք իցէք , որդեակք իմ : » եւ կրկնեցին նորա հնդկօքն հան-
դերձ . « Այն , այն , մէք իսկ էմք : » եւ անդէն տեսին զմարս իւ-
րեանց եւ զՄարիամ զի շահս ի ձեռին ընդ առաջ գային նոցա :

Եւ ասէ Լաբուր տիկին . « Ո՛վ հեք մանկտի , ուստի գայր . յնր աղետս տարակուսի արկեք դուք զմեզ : » Ասէ Վիրգիներ . « Ի Սեա . Գետոյ գամբ՝ խնդրեալ ներումն յանցանաց խափշիկ աղախնոյ ուրումն փախստականի , որում գնախաճաշն մեր տուեալ էի առ առօտուս , զի սովայլուկ էր եղկելին . եւ ահա հնդիկքս անտառաբնակք բարձեալ բերին զմեզ : » Անդէն գիրկս արկեալ փարեցաւ Լաբուր տիկին զդատերբն , եւ յօղել իսկ բարբառոջ կարեր . եւ ի բանալ երեսաց Վիրգիներայ յարտասուսաց անտի մօրն , ասէ ցնա . « Մոռացումն առնես ինձ , մայրիկ , վշտացն զորս կրեցի : » Եւ Մարգարիտ էւս խնդամտեալ փարեր զպարանոցաւն Պօղայ էւ ասեր . « Եւ դու , որդեակ իմ , գործ մի բարի գործեցեր : » Իսկ իբրէս հասին ի տնակս իւրեանց որդւովքն հանդերձ , արկին կերակուր հնդիկ որերոյն , եւ նորա դարձան անդրէն յանտառս իւրեանց՝ մաղթելով նոցա զամենայն բարեբաստութիւն :





ԳԼՈՒԽ Բ .

Օր ըստ օրե յաւելոյր գեր-
դաստանացն այնոցիկ խաղա-
դաւետն երջանկութիւն . հեռի
էին ի նոցանէ չարատանջ կիրք
նախանձու եւ փառասիրութեան ,
եւ ոչ ըղձակերտք էին համբաւոյ ու-
նայնութեան գոր նենգութիւն ընձեռե ,
եւ ի բաց կորգէ զբապարտութիւն . շատ
գրեին անձամբ անձանց կայ եւ վկայ եւ դա-
տաւոր : Ի կղզւոջ անդ , որպէս եւ յամենայն եւրոպա-
կան գաղութս , հետաքննութիւն մեծ է չարամիտ վիպաց
արկածից եւ պատահարաց . իսկ սոցա հանդեսքն առաքինու-
թեան եւ անուանքն անգամ յանձանօքս էին : Միայն յորժամ
յանցաւորացն որ ընդ ճանապարհն կիտրոնեաց հարցումն ինչ
առնէր ումէք ի դաշտաբնակաց անտի էք « Ո՞յր բնակու-
թիւն իցէ ի վեր անդր ի տնակսդ յայդոսիկ . » պատասխանի
առնէր այրն առանց զնոսա ճանաչելոյ . « Արք բարելաւք են : »
Այսպէս եւ մանիշակ ընդ դժնեկօք պատասպարեալ՝ բացուստ ի
բաց բուրե գիտտ անուշից , թեպէտ եւ անտես իցէ ի մարդկանէ :

Տարագիր էր ի գրուցաց նոցա չարախօսութիւն , որ ընդ պատ-
րուակաւ արդարութեան՝ յատելութիւն եւ կամ ի կեղծաւորու-
թիւն զառաժանէ հարկաւ գսիրտ . բանգի եւ չէ մարք չատել
ումէք զմարդիկ՝ յորժամ առ չարս ունիցի զնոսա , եւ ոչ կեն-
ցաղէլ ընդ չարս՝ յորժամ չառագաստիցէ որ զատելութիւն ընդ
բողով բարեսիրութեան : Այսպէս անա բռնուն առնէ մեզ չարա-
խօսութիւն խոռով կայ ընդ այլս կամ ընդ մերում իսկ անձին :
Եւ թեպէտ չղատէին նորա ուրոյն ուրոյն զմարդիկ , սակայն

յաճախ բանս ի մեջ առնուին զհնարից բարիս ամենեցուն առնելոյ անխտիր. Եւ որ ինքնին ջէին առ այն ձեռնհաս, այլ մշտափափաք վառեալ տենչիւ բարեգործելոյ՝ դիւրապատրաստք էին օժանդակել ամենեցուն : Եւ յամայութեան անդ բնակելով՝ ոչ միայն մարդատեացք ջէին, այլ Եւս բան գեւս յաւելուին ի մարդասիրութիւն : Վեպք անցից պարսաւելիք յաճախեալք ի բաղարածողով ընկերութեան մարդկան՝ հեռի էին ի գրուցատրութեանց նոցա, սակայն բնութեանն հրաշայիք յար ի հրճուանս Եւ ի հիացման ունեին զնոսա. Եւ սխրանային ընդ վերնախնամ տեսչութեանն գորութիւն որ ընդ իւրեանց ձեռամբն սփռեալ էր յապալեր ապառաժսն յայնոսիկ զառատութիւն, զգեղ Եւ զամբիժ զսակաւապետ Եւ զմշտափքիքն բերկրանս :

Պօղ յերկոտասանամեայ հասակին հուժկու Եւ ուշիմ բան զհնգետասանամեայ Եւրոպացիսն գոյով, գեղազարդեալ էր զայն ամենայն գոր ինչ հնդիկն Դոմինիկոս մշակեր Եւէք : Ելաներ ընդ նմա յանտառս մօտակայս՝ խլել տունկս մատաղս կիտրոնի Եւ նարնջի, Եւ զմոշենին որ բոյորշի ունի կատար կանաչագեղ, Եւ արմաւենիս որոց պտուղքն լի էն շաքարախառն հուգիւ Եւ զժաղկանց նարնջի տան զբուրումն անուշից, Եւ տնկեր զնոսին շուրջանակի զբնակարանան : Սերմանեալ էր Եւ սերմանս ծառոց՝ որ յերկրորդումն տարւոջ ծաղկեն կամ պտղաբերեն, զօրինակ ակաթիքն անուանեալ ծառք, որ շուրջ վայրաբերեալ տարածանեն հանգոյն սառնատեսակ գնդակացն ջահից էրկայնաձիգ փունջս ողկուգածեւս ձիւնաբոյր ծաղկանց. ծիրանածաղիկն պարսկական՝ որ էրկնաբերձ ձգմամբ ի վեր պարզէ զաղօտափայլն իւր ցցունս. սէխածառ՝ որ անոստ բնովն սիւնաձեւ ամբառնայ, Եւ լի էւ ակաղձուն է կանաչագոյն սէխիւք, Եւ զգագարամբն խոյակ ունի յայնասաղարք՝ զօրեն բզենոյ :

Տնկեալ էր անդանօր Եւ զսերմն պատամենեաց, մանկենեաց, ակնակատուոյ, կուսաւենուոյ, հացածառի, ճագենուոյ Եւ վարդաձամբեաց⁵ : Յոյովք ի ծառոց անտի անդստին իսկ ընձեռեին ի վայելս դեռահասակ տանն իւրեանց զհովանի Եւ զմիրգ, Եւ ձեռք նորին էրկասերք յանարգասաւոր իսկ վայրս ցանկապա-

տին սփռեալ էին զբարեբերութիւն : Ազգք ազգք հայուեից էւ զանազան տատասկաբոյսք դեղնափայլ էւ կարմրորակ ծաղկօքն ամբառնային ի սարաւանդս նեւաթոյր պարեխից, էւ բուէին ձգտել հասանել ի ջափ բարձրութեան երկայնածիգ պատասկացն որ կապուտակ էւ ծիրանի ծաղկամբք այսր էւ անդր ձգեալ տարածանէին ընդ զառ ի վերս յերինն :

Այնպէս տողեալ կարգեալ էր նորա զբոյսսն զայնոսիկ՝ զի հեշտեաւ էր զուարճանալ միով ակնարկմամբ ի տեսիլ գեղոյ նոցին : Ի հովտածէ պարտիզի անդ տնկեալ էր զկարճաբերձ դալարիս էւ ըստ նոցանէ զբուփս, ապա զժառս ցածունս, էւ ապա զբարձրաբերձսն որ շուրջանակի զցանկապատիւն բոյորէին . այնպէս զի լայնածաւալն այն տեղի գնմանութիւն բերէր շուրջ տեսարանի դալարեաց, մրգաց էւ ծաղկանց, բանջարս էւս ունելով էւ մարմանդս էւ արտորայս բրնձոյ էւ ցորենոյ :

Սակայն որ տնկագործեայն էր այնպէս զբոյսսն զայնոսիկ ըստ իւրումն արուեստի, ոչ ինչ ստերիւրեալ էր էւ ի բնութեանն օրինաց . այլ մանաւանդ նովիմբ առաջնորդեալ՝ զայնոսիկ որոց ցնդականք էին սերմանիք՝ ի բարձրաւանդակ տեղիս գետեղեաց, էւ որոց հատքն ջրածուփք էին, ի խաղս էւ յեղտիւրս : Այսպէս բոյսք իւրաքանչիւր անէին ըստ պատշաճի անցնիւր դրից, էւ դիրք ամենայն յիւրաքանչիւր բուսոց առնուին զբնականն իւրեանց զարդ գեղեցկութեան : Զուրք ուղիսինահոսք ի գագաբանց պարեխիցն իջեայք՝ էր ուրեք զի աղբերակս ի խորս անդ հովտին յօրինէին, էւ էր զի լայնատարր իմն հայելիս, որք էւ շուրջ պատեայք ի դալարեաց՝ առաջի առնէին ցոյացիկ գեղով զժառսն ծաղկափքիքս, էւ զպարեխս ժայռաւորս, էւ գերկնիցն կապուտակ :

Թեպէտ էւ անհարք էր վայրն էւ առապարին, սակայն էւ այնպէս մարթեր զյուլովս ի տնկոցն նկատել էւ ձեռամբ շօշափել . էւ առ ի զարդարն ասելոյ, մէք էւս սատար նմին լինեար խորհրդով էւ ձեռնտուութեամբ : Հորդեալ էր նորա էւ շաւիղ մի որ գհովտիւն պատ առնոյր, էւ առաջք նորին բազմապատիկք երբեալ յանգէին առ հասարակ ի մի կենդրոն բոյորակին : Զխարտաբորտսն էւ զգծուարուտս անգամ յօգուտ ի կիր ար-

կեայ, ճեմելիս դիւրագնացս կազմեայ էր ի նոսին, եւ զժառանգն տանիս ընդ վայրենիսն ճահաւորեայ : Ի շեղջաշեղջ բազմութենէ այտի բաւալգոր վիմացդ որ խռկեայ խճողեայ կանարդ յանցող յայդոսիկ, որպէս եւ ի յոյով կողմանս կղզւոյս, յօրինեայ էր նա ի տեղիս տեղիս բրգունս բրգունս, եւ ի շարս քարանցն խառնեայ ընդ հողոյ եւ արմատս վարդենեաց եւ դրախտածաղկանց ⁶ եւ այլոց թփոց որ զքարածայունս սիրեն : Բրգունքն այն տխրատեսիլք եւ խոշորամէք վաղ ընդ փոյթ պճնեցան կանաչագեղք եւ ծաղկագուարճք : Լերանցամէջք տնկագարդեայք հինաւորց եւ կորաքամակ ծառովք՝ գետնա-



փորս կազմէին կամարայարկս անբափանցս ի ջերմութենէ, եւ անդր ի հով մտանէին զցերեկ : Կածան նրբուղի տարեայ հաներ ի պուրակ ուրեք ծառոց վայրենեաց, յորոց ի միջակին ջովացեայ ուռճանայր յապահովի՝ ծառ ընդասունս պտղայից : Աստ տեսանել էր անդաստան յի տոհմականօք, անդ ածուս բանջարաց եւ ծառատունկս մրգաբերս : Ընդ այլ ուղի ծառագարդ գտունս էր նշմարել, եւ ընդ այն՝ զկատարս լերանց անմատոյցս : Ընդ սաղարթախիտ անտառակաւ ընդ այդուիկ տատամարեաց ⁷ ընդ պատատունկս շաղապատելոց՝ չէր հնար ականել

ինչ ի լուսապայծառ իսկ արեւու . եւ ի ծագ սարաւանդին որ ի կողաց լերինդ կարկառի՝ երեւին ամենայն բարաժայոք ցանկապատիս՝ հանդերձ բացածիզն ջուրքք ծովու, յորում նշմարեր երբեմն նաւ եկաւոր յԵրուսալայ, եւ կամ անդրեւն դարձաւոր : Եւ ահա ի վերայ վիմիս այսորիկ մեծի ժողովեալ նստեին ընդ երեկս գերդաստանքն երկոքին, եւ ըմբոշխնեին անբարբառ զօրոց զովութիւն, զժաղկանց բոյրս անուշից՝ զաղբերաց խոխոջանս, եւ զգեղատեսիլ համբոյրս գնացական լուսոյն եւ ստուերաց :

Քանի բաղցրալուրք էին անուանքն որովք յորջորջեաց նա զբազմագոռարձ օրարանս բաւղականեւ պարտիզիդ : Սարաւանդն այն գորմէ ի վեր անդր ձառեցի, ուստի եւ բացուստ ի բաց զգայուստ իմ զականեին, անուանեալ կոչեր ԳԻԻՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ : Պօղ եւ Վիրգիլնէ ի խաղս իւրեանց տնկեալ էին անդանօր զհնդիկ եղեգն, եւ ի ծագս եղեգանն սաւառնեին վարշամակ սպիտակ յայտարար իմոյ ժամանելոյն՝ յորժամ նշմարեին նորա զիս . որպէս եւ սովորութիւն է դրօշ ի մերձակայ լերինդ ամբառնայ ի տես ծովաչու նաւուց : Խորհուրդ ի միտս իմ անկաւ դրոշմել ի բնի անդ եղեգանն արձանագիր : Քանզի եւ յամենայն ուղեւորութիւնս իմ ըղձայի լեալ է ինձ տեսանել անդրիս եւ արձանս յիշատակաց բնութեան, այլ ըղձայի եւս է վերձանել արձանագիրս որ ձարտարահիւսք իցեն . յայնժամ բուի ինձ երէ ձայն որդւոյ մարդոյ էլանիցէ ի վիմէ անտի ընդ մեջ դարուց անցանելով բազմաց, եւ ասիցէ առ անցորդն յանապատին . « Չես դու միայնակ ի տեղւոջդ . եւ այլք եւս ի մարդկանէ յայսմ վայրի սրտառուչք եղեն, խորհուրդս խորհեցան եւ վիշտս հանգոյն քեզ կրեցին : » Եւ երէ այն արձանագիր վաղնջուց ազգի ուրուք անձիտելոյ իցէ նշխար, ձգտեալ տարածանէ զոգիս մեր յանհուն ասպարեզս անսահման ժամանակաց, եւ յուշ առնէ մեզ զմերս անմահութիւն, խելամուտս զմեզ առնելով երէ զիւրդ իմաստ լոկ յերկարակեաց լինիցի քան զպետութիւն հզօր վաղակործան :

Սմին իրի դրոշմեցի եւ զգճուճ կայմիւ դրօշուն Պօղայ եւ Վիրգիլեայ զառաջիկայ տողսդ Որատեայ .

Ջձեզ Հեղինեայ հարազատք
Աստեղց ամուլք լուսասփիռ.
Եւ հայրն հողմոց ուղղեսցեն
Լոկ շընջելով ըզգեփիռ.:



Եւ գայս տող Վիրգիլեայ
բանդակեցի ի կեղեւ տատա-
մարւոյն յորոյ ընդ հովանեաւն բազմեր
Էրբէք Պօղ ի զնին կայով ի բացուստ այեկոծ
ծովուն .

Երանի եւ որ միայն ծանեաւ զբերափս արտորեից :

Եւ գայս զբարաւորաւ դրան սենեկի Լաբուրի տիկնոջն , որ
ժողովետող էր նոցա .

Աստ հանգիստ աներկեաւն , եւ կեանք անգետ խարկանաց :

Սակայն Վիրգիլնէ ինչ ոչ հաճեր ընդ լատինաբանութիւնս
իմ . եւ ասեր էրէ գոր առ ոտս հողմացուցին իւրոյ եղի բան , եր-
կարածիզ է յոյժ եւ կարի խորիմաց . լաւ եւս էր , ասէ , որպէս
ինձ բուի , բէ գրէիր ՅԱՆԳ ՅՈՒՋԵԱԼ , ԲԱՅՅ ԱՆՎԿԱՆԳ . Որում
պատասխանի տուեայ ասեմ . « Այդ առած առարիւնութեան յաւետ
ի ճահ գայ » : Եւ նա շառագնեցաւ ընդ բանն իմ :

Երջանիկքն այն բնակիչք վայրացս զդիւրագգաւծն իւրեանց
ոգիս ձգեայ տարածանէին գամենայնիւ որ շուրջ կայր զնորօք ,
եւ աննշանից իսկ իրաց անուանս եղեայ էին գորովականս յոյժ :
Ի մարմանդի ուրէք՝ շրջաբոյոր ինչ տեղի նարնջենէօք , աղա-
մաղգենէօք եւ վարդաճամբէօք զարդարեայ , ուր եւ Վիրգիլնէ եւ
Պօղ էրբէայ էրբէք էրբէք պարէին , յորջորջեայ կոչեր ՄԻԱԲԱՆՈՒ .

ԹԻՒՆ : Ծառն հինաւորց յորոյ ընդ հովանեան Լաթուր Է Մարգարիտ պատմեալ էին իրերաց զաղեստ իւրեանց , ձայներ ՋՆՁԵԱԼ ԱՐՏԱՍՈՒՔ : ԲՐԻՏԱՆԻԱ Է ՆՈՐՄԱՆՏԻԱ անուանեին զա-
ծուան յորս սերմանեալ էին ցորեան , Էլակ Է ոյոռն : Ըղձացեալ
Գոմինիկեայ Է Մարիամու ըստ տիրուհեացն իւրեանց օրինակի
անմոռաց ունել զտեղիս ծննդեան իւրեանց յԱփրիկէ , Անկոյա
Է Փուլփուենք կոչեցին վայրս Երկուս որ բուսուցանեին նոցա
զխոտն յորմէ կողովս հիւսէին , Է հնդիկ դղմենիս զոր իւրեանց
ձեռօքն տնկեալ էին : Այսպէս տարաշխարհիկքն այնորիկ բերօք
բնագաւառացն տածեին ի սիրտս զքաղցր յիշատակս աշխարհին
իւրեանց , Է ամորեին զաղեստ պանդխտութեանն յօտարոտի Եր-
կրի : Բնքէ , զիւրդ քաղցր էր ինձ տեսանել զեղապատշաճ յոր-
ջորջմամբք բիւրաւորօք անուանեալ զժայռս համակործան տե-
ղւոյդ այդորիկ , որ հանգոյն դաշտացն Ելլադայ՝ դերբուկս ա-
ւերակաց Էէք ունի արդ , Է անուանս սրտառուջս : Բայց քան
զամենայն ցանկայիս տեղւոյս սխրատեսիլ էր անուանեալն ՀԱՆ-
ԳԻՍՏ ՎԻՐԳԻՆԵԱՅ : Յոտս սարաւանդակին որ ԳԻՒՏ ԲԱՐԵԿԱ-
ՄՈՒԹԵԱՆ կոչեր , Է փապար՝ ուստի աղբերացեալ վտակ փոք-
րիկ անդէն առ Էտեղ յօրինէ ջրակոյտ ինչ տեղի ի մարգագետնի
ուրեր : Ի ծնանել Մարգարտի գՊօղ , Էտու Էս նմա յընծայ քո-
քոյ մի հնդիկ զոր այլոց տուեալ էր ինձ : Տնկեաց Մարգարիտ
զմիրզն զայն յեզր ջրակուտին , որպէս զի ծառն որ անտի բու-
սանիցի՝ յայտարար կացցէ ժամանակին յորում զորդեակն
ծնաւ : Ջայն տեսեալ տիկինն Լաթուր , տնկեաց Է նա ի տե-
ղւոջն նովին մտօք այլ քոքոյ՝ յործամ ի լոյս ած զՎիրգիներ : Ի
կրկին մրգաց անտի բուսան քոքենիք Երկուս , որ Է բովանդակ
զդիւանագիրս տոհմիցն Երկոցուան առնեին առաջի . միոյն ա-
նուն՝ Պօղայ կոչեր ծառ , Է միւսումն ծառ Վիրգիներայ . Է Եր-
կորին Էս միանգամայն աճեցին ըստ աճել դեռածաղիկ տե-
րանցն , խուն ինչ անհաւասար բարձրութեամբ . այլ յետ ա-
մաց Երկոտասանից անցին զանցին քան զխղիցն բարձրութիւն .
կողերք նոցին խիղբս արկեալ պատէին զիրերօք , Է վայրա-
կախ սաւառնեին զդեռաբուսիկ ողկոյզս պտղոցն զաւագանա-
աղբերն : Ջծառն զայնոսիկ Էէք տնկեալ , իսկ զժերպ սա-

բաւանդակին ըստ բնութեանն զարդու բողեայ էին անփոփոխ :
Զքիսատեսիլ էւ զխոնաւուտ կողիւքն աստեղածէւ նշողէին կա-
նաչագեղ էւ սեւաբոյր ձարխոտք լայնատերեւք, էւ ի շնչել
սղոխաց ճօճէին ծածանէին փունջք գաղտակրի՝ կախեայք գօրէն
ծիրանածաւայ կանաչագգեաց ժապաւինաց : Ոչ ինչ հեռի ի
տեղւոջէն աճէին կուսածաղիկք ⁸, որ գնմանութիւն բերէն
կարմրերանգ շահորբամի, էւ դարապղպեղք որոց պատեանքն
արիւնէրանգք քաջափայլ էւս էն քան զբուստ : Ի հոտ անուշից
բուրէր ի բացուստ սրտատերեւն ապրասամ էւ մէխակահոտն
ուահան : Ի բարձուէ անտի քարայրին վայրաբերեայ տատանէին



պատատուկք նմանեայք գեղածուփ պաստառաց, էւ զկողիւք
պարէխացն մեծատարած սրահակս դայարագեղս յօրինէին :
Թռչունք ծովայինք՝ խաղաղաւետ վայրացն ըղձակերտք,
այսր գային առնուլ երեկօթս : Ընդ արեւուն ի մուտս խո-
նարհել՝ քռիչս առեայ զծովափամբքն գայր ձկնաքաղն էւ
ծովարտոյտ, էւ ընդ օղոցն բարձրութիւն ցին արջնաբոյր բարձ-
րաքռիչ, էւ սպիտակաթոյրն քռչունք արեւադարձի որք հան-
գոյն աստեղն տուրնջեան ի բաց մեկնէին յամայի մկանանց
ձնդկայնոյն Ովկիանոսի : Սիրէր Վիրգիլնէ դադարել առ աղբե-
րասս որ պճնեայ էր հոյակապ էւ միանգամայն վայրէնի ան-

պանոյն պերճութեամբ . եր երբեմն զի անդր տարեայ լուսանայր զկտառիս տանն ընդ հովանեաւ քոքենեացն երկոցուն , եւ եր երբեմն զի անդր յարօտ ածեր զայծիսն իւր . եւ մինչդեռ ինքն ի կաթանէ նոցին պանիր կազմեր պատրաստեր , ախորժ հաճութեամբ նկատեր թէ ճրպէս ճարակէին նորա զճարխոտսն որ զսեպացեայ կողիւք ժայռին վակժոյժ օղամիզ՝ զմիով ուրեր ի սեպիցն իբրեւ ի պատուանդանի զարեացսն հաստատեայ : Տեսեայ Պօղայ զի սիրելի Վիրգիլեայ են վայրքն , տարաւ անդր անտառաց բոյնս ազգի ազգի թռչնոց , որոց զհետ գնացեայ



հարցն եւ մարց՝ հաստատեցին զբնակութիւն իւրեանց ի նորումն յայնմ գաղթականի : Երբէք երբէք բաշխեր նոցա Վիրգիլե հաստս բրնձոյ , եզիպտացորենոյ եւ կորեկի : Ընդ երեւել նոր ջսարեակք ի սոխճս եւ ի մրմունջս հատեայր , բենգայր՝ քաղցրանուազք , եւ ծիրանաւորքն ¹⁰ անուանեայ թռչունք՝ որոց հրանշոյլ փետուրք են , ի դուրս ի մացառացն ելանէին . պապկայր կանաչագեղք իբրեւ զմրուխտ՝ ի մերձակայիցն իջանէին յատանենեաց , դիմեայ դօղէին կաթաւք ընդ դայարեօք , եւ ամենէքին առ հասարակ գօրէն իմն հառուց վառեկաց խոռուն

խաղային գային մինչեւ առ ոտս նորին . եւ նա ընդ Պօղայ հրճուեր ի տեսիլ խաղուց նոցին եւ ախորժակաց եւ սիրակարկաց տարփանաց :

Ո՛վ սիրուն մանկտի , այսպէս յանմեղուքեան անցուցանելիք դուք զաւուրս արշայուսոյ կենացն ձերոց՝ ի բարերարութիւն զանձինս մարգելով : Քանիցս անգամ ի տեղուոջս յայսմիկ մարքն ձեր գրկախառն զորդեկօքդ փարեալ գոհանային զՏեառնէ , զի մխիթարութիւն մեծ պատրաստեր նա ձեօք ձերութեան իւրեանց , եւ զիերջանկաւստ եւ բարեգուշակ էր մուտն ձեր ի կենցաղս : Քանիցս անգամ ընդ հովանեաւ ժայռիցս այսոցիկ ճաշակից եղէ ձեզ եւ ես ընդ նոսին՝ շինականին ձերում անցեալ բազմական սեղանոյ , յորմէ հեռի էր սպանդ ամենայն կենդանեաց : Դաշխուրանք կաթնաբուռիսք , ձուք դեռածինք , բրնձախառն կարկանդակք ի տերեւս աղամարգէնոյ շարեայք , տառաղանք ակաղձեայք գետնախնձորով , մանգաւ¹¹ , նարնջիւ , նռամբ , աղամարգիւ , արմաւով , անանասիւ , պարենք ձեր էին առողջագոյնք՝ գեղատեսիլք եւ ախորժահամբ քան զամենայն համադամս :

Հանգոյն խրախճանաց նոցա եւ զրոյցքն եւս քաղցուեր էին եւ անմեղանջականք : Բագում այն էր զի Պօղ բանս ի մեջ առնոյր զվաստակոց աւուրն կամ զվաղորդայնին : Յանգ մտախորհ լինէր յընտանեացն դիւրութիւն բարեկենդանութեան . իբր զի յայս նիշ վնայրի ոջ հեշտաբայլ էին ուղիք , յայնմ անձահք ի բազմել . այս ինչ սարփինայ մատաղատունկ ոջ շատ առնէր հովանի , յայն ինչ տեղուոջ լաւ եւս հանգիցէ Վիրգիներ :

Յանձրեալաց աւուրս ամենեքեան միահամուռ տեարք եւ ծառայք ի տնակին ժողովեալ՝ փսիաքս ի սիգոյ եւ կողովս ի հնդիկ եղեգանէ հիւսէին : Գեղեցկադիրս եւ բարեկարգս էր տեսանել զորմովն տրմութս , տապարս եւ բահս , եւ առ կահիւքն մշակութեան՝ զառ ի նոցանէ յառաջ բերեալ արդիւնս , պարկս բրնձոյ , որայս ցորենոյ եւ ողկոյցս աղամարգոյ . եւ առատութեան լծորդ էր անդ հանապազ վայելչագեղն ճարտարութիւն : Իսկ Վիրգիներ խրատեալ ի Մարգարտէ եւ ի մօրեն՝ օշարակս կազմեր եւ ըմպելիս զովարարս ի հուգից եղեգնաշաքարի , ի լեմոնից եւ ի կիտրոնէ :

Ի հասանել երեկոյին՝ ընթրեին ի լոյս կանթեղի . եւ ապա տիկնայրն Լաթուր եւ Մարգարիտ պատմեին զարկածս ուղեւորաց մուրեւոց գիշերի յաւազակուտ անտառս Եւրոպայ , եւ կամ զխորտակումն նաւուց բախելոց ի մրրկէ յապառածս ուրեր անբնակ կղզեաց : Ի լուր վիպացն վառեալ բորբոքեին դիւրագորով սիրտք որդեկացն , եւ ասէին . « Իցիւ թէ յաջողեր մեզ Աստուած երբէք ձեռն ասպնջականութեան կարկառել այնպիսեացն ջուռառականաց : » Եւ ապա ուր ուրեմն գերդաս-




տանքն երկոքին անջատեալք ի միմեանց՝ ի հանգիստ քնոյ երթային , վաղուեան տեսութեան իրերաց անձկակարօտք :

Էր երբէք զի ի շառաջս անձրեաց մտանեին նոքա ի բուն, որ ուղիսօրեն զյարկս խղիցն ձեծեին . եւ էր զի ի մունջիւն հողմոց շնչելոյ , որ առեալ ածեին նոցա զբացական կոհակացն գոռումն եւ գճողփիւն, որք գծովափամբն կոծեալ խորտակեին : Փառս առ Աստուած ի վեր առարեին սակս անբոյքն պահպանութեան անձանց , եւ հեռաւոր վտանգացն յիշատակաւ եւս քան զեւս յարգեին զաներկեանն իւրեանց զապահովութիւն :

Ընդ ժամանակս ժամանակս ընթեռնոյր Լաթուր տիկին ի

յութ ամենեցուն զպատմութիւնս ինչ սրտառուչ անցից յաստուածաշունչ տառիցն է. ի նոր կտակարանէ : Դուն ուրէք ճարտարամտէին նոքա զսրբագիր մատենէն . քանզի է աստուածաբանականն նոցա գիտութիւն՝ ի զգածմունս սրտիցն էր, հանգոյն հմտութեանն զոր զբնութեան իրաց ունէին , է վարուցն ուղղութիւն ի գործս է. ի գնացս նոցա փայլեր՝ ըստ Աւետարանին պատուիրանաց : Ոչ էին նոցա առուրք սահմանեայք ի զքօսանս կամ ի տրտմութիւն . քանզի է ամենայն օր տօն էր նոցա, է որ ինչ շուրջ զնոքօք համօրէն՝ տաճար Աստուծոյ , յորում նկատեայ հիանային ընդ իմաստութիւն նորին անսահման , է ընդ ամենակայն զօրութիւն է մարդասիրութիւն անհուն . է սովին աներկմիտ վստահութեամբ ի գերաբունն իշխանութիւն Աստուծոյ՝ մխիթարէին ընդ անցեայսն , արիանային յառաջիկայս , է յի յուսով բարեաց մնային հանդերձելոցն պատահման : Այսպէս ահա տիկնայքն այնոքիկ բռնագբօսեայք յաղետիցն՝ ի բնութիւն անոր գանձինս պատսպարել , աճեցուցին յինքեանրս է յորդեակս իւրեանց զագղմունսն զայնոսիկ զորս ընձեռեք բնութիւն է պահպանէ յերեսաց աղետից :

Այլ զոր օրինակ դեպ յինի երբէք է ի կարի իսկ բարեխրատ ոգիս ժողովել զիգանայ ամպոց է վրդովել զնոսին , ի տրտմել յանկարծ ուրուք ի նոցանէ՝ ամենեքին զնովաւ շուրջ բոյորեայ է փարատէին ի նմանէ զխորհուրդսն դառնութեան , ոչ այնչափ խելամտութեամբք իմաստուն բանից՝ քան թէ քաղցրութեամբ զգայուն իմաստից սրտի : Ամենայն ոք գանձին իւրոյ զբոյս բարուցն հանգանակեր յայնժամ . Մարգարիտ զուարբրամտութիւն եռանդուն . տիկինն Լաթուր աստուածաբանութիւն սրտառուչ . Վիրգինէ զգուանս սիրայիրս , Պօղ անպատրուակ է անկեղծ համարձակութիւն . է Մարիամ է Դոմինիկոս անգամ յօգնութիւն տրտմեցելոյն փութային . ամենեքեան էս ընդ վիշտս նորին վշտանային , է ընդ արտասուսն արտասուէին : Ըստ այսմ օրինակի է բոյսք բեկանուտք մանեայ պատին գիրէրօք , է այնպէս զդէմ ունին ամպրոպաց :



Ի գեղեցկախառն ա-
ռուրս տարւոյն գնային նո-
րա ըստ ամենայն կիրակեից
առաջիկայ լինել սրբոյ պա-
տարագին յեկեղեցւոջ Կի-
տրոնեացն, զորոյ զաշտա-
րակն զանգակաց տեսանես
ահա ի դաշտի անդ : Անոր
գնային դեսպակաւ եւ արք ըն-
ջաւետք. որ եւ բազում անգամ
ցանկացան զայ ի ծանօթու-
թիւն բարեկամութեան ազգա-
տոհմիցն այնոցիկ ան-
անջատից, եւ հրաւիրե-

ցին գնասա ի գբօսանս եւ ի խրախունս. սորա բազում վայել-
չութեամբ եւ մեծարանօր հրաժարեցին ի հրաւիրանաց անտի,
բանգի եւ հաւանեալ իսկ էին ի միտս իւրեանց էրէ արք
աւագր յայն սակս եւէթ ի խնդիր լինին անաւագաց, զի կամա-

կատարս անձանց յաճախեցեն . եւ թէ ջէ հնար կամակատար այնպիսեացն լինել առանց շնթելոյ ախտից նոցին եւ կամ յօժարութեանցն բարեաց կամ ջարաց : Գարձեալ եւ ի ջքաւոր բնակչացն տեսութենէ թանգուգեալ խոսափեին . թանգի եւ նորա նախանձաբէկք , ջարախօսք եւ անոպայք սովոր են լինել : Սմին իրի եւ գառաջինն կիսոցն երկչոտք ոմանք թուեցան , եւ այլոց սեգք եւ ամբարհաւաճք . սակայն զգուշաւորն այն կենցաղ վարուց նոցա ոչ ինչ թափուր էր ի քաղցրահամբոյր եւ ի մարդասէր գնացից , մանաւանդ առ աղբատուն , որով եւ լինեանս ձգեցին տակաւ գակնածութիւն ձոխից եւ զմեծարանս կարօտելոց :

Բագուն՝ այն էր զի զկնի պատարագին գային առ նոսա յոյովք ի խնդիր գործոց ինչ բարեաց : Էր զի ի վշտատեսից որ եկեալ հայցէր ի նոցանէ խրատս բարեաց , եւ էր զի մանուկ որ աղաջաւոր մատուցեալ վասն մօրն իւրոյ ախտացելոյ՝ խնդրէր գալ տեսանել զնա յայն ինչ վայրի ոչ ինչ կարի ի բացեալ ի տեղւոջեն : Յանգ ընդ իւրեանս բարձեալ տանեին նոսխայս դեղոց օգտամատոյցս խօթութեանց յաճախելոց ի բնակս աշխարհին . եւ քաղցրութիւն եւս անջափ խառնեին ի դարմանսն , որով ցանկայի եւ պատուական յոյժ առնին դուզնաբեայքն անգամ սպասահարկութիւնք : Յաջողագոյնս փարատեին նորա զանձկութիւնս սրտի , որք անբերելիք սովոր են լինել ի միայնութեան եւ ի վշտակիր մարմնի : Տիկինն Լարուր այնպիսեաւ աներկմիտ վստահութեամբ բարբառէր զԱստուծոյ , զի հիւանդն որ լսէր նմա՝ համարէր իմն թէ ակներեւ իսկ տեսանիցէ առ իւր զԱստուած : Բագուն՝ անգամ արտասուաթոր աջօր դառնայր անտի Վիրգինէ ի տուն , այլ սիրտ նորա լի էր ցնծութեամբ , զի պատէն ինչ գտեալ լինէր բարերարելոյ . զի եւ նա ինքն էր որ յառաջագոյն պատրաստէր գդեղս դարմանոյ հիւանդացն , եւ մատուցեալ պաշտէր նոցա զայնս անպատումն գեղով վայելչութեան եւ քաղցրութեան : Եւ յետ մարդասէր խնամոցն այնոցիկ , էր երբէք զի երկայնեալ զճանապարհ իւրեանց ընդ հովիտս երկայնանիստ լերինն՝ ի տուն իմ գային , ուրանօր ակնկալեալ մնայի նոցա ի ճաշ առ ափամբ առուակին որ զբնակարանան

իմով անցանկ: Ի դեպս այնպիսիս հայրայրքի անօթս ինչ վաղըն-
ջուց գինույ, զի յաւելցի մեզ գուարքամիտ խնդութիւն ի հընդ-
կայինսն մեր խրախուսն՝ քաղցրաճաշակ եւ կազդութիչ ար-
դեամբք Եւրոպայ : Էր եւս երբեք զի ժամադիրք իրերաց լինեաք
ի ծովեզերին ժողովել ի խառնութիւն անդ այլոց գետակաց՝ որ
ի կղզւոջ աստ վտակք եւեթ են մեծամեծք . եւ բարձեայ տա-
նեաք ընդ մեզ ի տանե պաշար բանջարոյ, գոր յաւելուար յա-
ռատաբուղիսն բերս ընձեռեայս մեզ ի ծովե . քանզի որսայ-
ար առ ծովափամբն բախնբակս ¹², պողիպողս, կարմրախայտս,
ծովախառնիճս ¹³, խեչափարս, խեցգետիս, էրիւնսս, ոստրես



եւ խեցեմորքս բազմագգիս: Վայրք որ անագնագոյն քան
գայլսն էին, բազում այն էր զի անդորրագոյն եւս պատրաս-
տեին մեզ գբօսանս : Էր զի նստեայք յապառածի ուրեք ընդ
հովանեաւ քաւիշենույ՝ տեսանեաք գլեռնաճեւ կոհակս այեաց,
զի ի խորոց անտի ծովուն վազեայ խորտակեին առ ոտս մեր
անեղագոջ շառաջմամբ . եւ Պօղ որ քաջավարժ էր ի լող
իբրեւ գմի ի լուղակաց, յառաջ մատուցեայ գնայր ընդդեմ կո-
հակացն . եւ ի գայ հասանել նոցին խոյս տուեայ ի ծովափն
կոյս փախչեր յերեսաց փրփրադեզ եւ սաստկագոջ մկանանց
որք հայածական իմն տանեին գնա քան զծովեզրն եւս անդրա-

գոյն . իսկ Վիրգիլնէ յայն տեսիլ ճիշ բարձեայ աղաղակեր Եւ
ասեր էրէ խաղբղ այդոքիկ ահաբէկ առնէն զիս :

Իբրէն ճաշոյն վախճան լինէր , Երգս արկեայ ի սլար անցա-
նէին պարմանիքն Երկոքին : Վիրգիլնէ զգեղջուկ կենցաղոյ գեղ-
գեղեր գերանաւետն անդորրութիւն , Եւ զնաւորդաց աղետս՝ որ
փոխանակ գերկիր մշակելոյ Եւ տոհմական ի նմանէ ընդունելոյ
յանդորրու , ընչաքաղց տենչիւ նաւարկէն ընդ տարրն մոլեգին :
Էր Եւս Երբէմն զի ըստ հնդկացն տարագու մնջակատակ լինէր
նա ընդ Պօղայ : Մնջկատակն նախնական իմն բարբառ Եւ մար-
դոյ , Եւ հանուրցն քաջածանօթ ազգաց . Եւ այնպէս ընդաբոյս Ե
Եւ նշանական՝ զի գամ մի տեսեայ Երոպացւոցն մանկանց զխա-
ղայ հնդիկ մանկտոնոյ՝ անդէն Եւ ուսանին : Յիշէր Վիրգիլնէ
զվեպսն զայնոսիկ որ առաւել քան զայլսն ի գորով ածեայ էին
զնա յընթեռնույ անդ մօրն յունկն իւր , Եւ զգլխաւորս յարկա-
ծիցն ճշգրտատիպ ածեր ի տեսիլ . Եւ մերթ ի շաչիւն ծնծղային
Դոմինիկեայ ի մարմանդ անդր գայր՝ սափոր ի գլուխ ունելով ,
Եւ ան ընդ ան մատչեր յաղբերակն մերձակայ առնույ ջուր :
Դոմինիկոս Եւ Մարիամ զխաշնարածսն Մաղիամու կերպա-
րանեայ՝ ի բաց զնա մերժէին . բայց Պօղ ի բիկունս օգնակա-
նութեան հասեայ նմա՝ հարկաներ զխաշնարածսն , Եւ լնոյր
զսափորն Եւ դներ զայն ի գլուխ նորին . միանգամայն Եւ բոյո-
րելով նմա պսակ ի կարմրերանգ ծաղկանց անբառամից՝ որ
զսպիտակաթոյր դիմացն զմոյն գեղապատշաճ Եւս փայլեցուցա-
նէին : Յայնժամ Եւ Ես ի խաղս նոցին միջամուխ լեայ՝ զկերպա-
րանս Հոագուելի առնէի առաջի , Եւ տայի Պօղայ զղուստրն
իմ զՍեփովրա ի կնութիւն :

Էր դարձեայ Երբէք զի գտարաբաղդին Հոուրայ բերեր զդէմս ,
որ այրիացեայ Եւ ընչաքափ յերկիրն իւր դարձ առնէր , Եւ անդ
Եւս ընդ օտարս համար էր սակս յերկարածիգ ժամանակ տար-
աշխարհիկն լինելոյն : Դոմինիկոս Եւ Մարիամ զարտահնճիցն
առնուին զդիմակս : Վիրգիլնէ կերպարաներ հասկաքաղ աստ
անդ ընդ հետս նոցին լինել , Եւ Պօղ զժանրութիւն մեծարոյ նա-
հապետի յանձին բերեայ հարցումն առ Վիրգիլնէ առնէր . որում
զղողանի հարեայ տայր նա պատասխանի : Եւ Պօղ անդէն ար-

գահատեալ՝ ասպնջականեր գանմեղն, եւ թշուառին լիներ պատսպարան. գառիգածն Վիրգիւնեայ լնոյր պաշարապինդ, եւ ածեալ յանդիման առնէր գնա մեզ որպէս ծերակուտի քաղաքին ասելով. Թեպէտ եւ ջբաւոր եւ, սակայն առնում զսա ինձ ի կին: Յայն տեսիլ յուշ ածեալ Լարուրի տիկնոջ էրէ նրպէս բողեալ



լքեալ նա ի ծնողաց, եւ այրիացեալ, եւ ինիւրասէր ասպնջակա-
նութեամբ ի Մարգարտէ ժողովեալ, եւ յուսայր այնուհետեւ
գերջանկաւետ ամուսնութիւն որդեկացն իւրեանց տեսանել,
զլայ հարկաներ, եւ խառն այն յիշատակք ջարեաց եւ բարեաց՝
յարտասուս ցաւոց եւ ցնծութեան եւ զմեզ յուժանէին :

Այնպէս իմն ճշգրտատիպ ի տեսիլ ածէին նորա զխաղուցն
կերպարանս, զի գրեալ է ի բուն իսկ ի դաշտս Ասորւոց եւ
ի Պաղեստին համարեալ գանձինս : Այլ եւ ոչ գարդուց եւ տե-
սարանաց ջբաւորութիւն էր մեզ ի տեղուոջն, ոչ դամբարաջան
յուսաւորութեան եւ ոչ նուագածուաց պարու : Հանդիսարան
տեսարանացն լինէր բազում անգամ տեղին այն յորում կիցք են
յոյով ճանապարհաց անտառին, եւ բերանք նոցին շուրջանակի
յօրինէին կամարս կամարս սաղարբախիտս : Մէք գետդ առեալ
դադարեալ ի միջավայրին՝ զօրն ցերեկ պատսպարեալք ի տօթոյ.

այլ իբրեւ ընդ ծիրս երկնից արեգակն ի վայր խոնարհեր, ճա-
ռագայքք լուսոյն բեկտեալ ի ծառոցն բնից՝ ի ստուերամած
խորս անդր անտառին ձգեալ տարածանէին գլուսափայլն իւ-
րեանց հոսանս երկայնամիզս : Էր երբեմն գի եւ սկաւառակն
արեգական ողջոյն երեւեր միահաղոյն ի սպառուածի ուրեր
ծառագարդ ուղւոյ, եւ լուսապայծառ գվայրն յարդարեր : Սա-
ղարքք ծառոցն լուսաւորեալք ի ստորե ի բրբմագոյն նշույիցն՝



շողշողէին երփն երփն ճաճանջիւք տպագիտնի եւ գմբխտոյ . եւ
բունքն մամռապատր եւ բխատիպք՝ ի վաղնջուց արձանս
պղնձիս բուէին փոխակերպեալք, եւ բուջունք որ վաղ իսկ
կանխեալ եւ դադարեալ լինէին ի լուռքեան ընդ նսեմաստուեր
տերեւովքն օրագայեալք, սխրանային իմն ընդ երկրորդն այն
լուսանորոգ արշալոյս, եւ ճայն բարձեալ առ հասարակ ողջու-
նէին բիւր կարկաջանօք գլուսաւորն տուրնջեան :

Բագունմ անգամ դեպ լինէր յարանալ մեզ ի գեղջկայինսն մեր
խրախճանութիւնս մինչեւ ցգիշերոյն հասանել ի վերայ . սակայն
օդոցն յստակութիւն եւ քաղցրախառն գովութիւն ներեր մեզ
ի բուն լինել ի տաղաւարի ուրեր ի խորս անդ մայրեացն՝ աներ-
կիւղ ամենեւին ի գողոց ի մօտաւորացն եւ ի հեռաւորաց միան-

գամայն : Իսկ ի վաղիւ. անդր ամենայն որ դարձ ի հիւղն արա-
րեալ՝ գտանէր զայն այնպէս որպէս է. բողեայն էր : Այնքան
էր բարեմտութիւն է. աննենգ հաւատարմութիւն յանշահավա-
ճառ. յայսմ կղզւոջ, զի յոյովից տանց ոչ աղխէին դրունք, է.
յոգունց յամերիկածին Եւրոպացւոց նորատեսիլ իմն գործի
բուէին փականք :

Բայց գոյին ի տարւոջն է. անուրբ յորս ոչ էսս էր ջափ ցնծու-
թեան է. հրճուանացն Պօղայ է. Վիրգինեայ, զմարցն ասեմ
տօնից տարեդարձս : Յերեկոյէ փոյթ ի մտի կայեալ բրեր հայս
Վիրգինէ, է. կարկանդակս այնու եփեալ առաքեր առ կարօ-
տեայս յագգատոհմիցն սպիտակաց ի կղզւոջս ծնելոց՝ որոց
երբէք ջեր կերեալ հաց եւրոպական, է. որք անօգնական



ի Հնդկացն մնայով՝ անտառաբնակ կենօք մանիոք կերակրէին,
է. առ ի ժոյժ կարեաց աղքատութեան՝ ոչ զգերեացն ունէին
զապշութիւն մտաց, է. ոչ զարիութիւն՝ զդաստիարակութեան
արգասիս : Քան զկարկանդակսն զայնոսիկ այլ ինչ ջմարթեր
Վիրգինէ հանել յընծայ ըստ ձեռին բաւականի տանն. սակայն
այնպիսի իմն բաղցրահամբոյր մատուցանէր զայն շնորհիւ, որ
պատուական է. ցանկալի յոյժ զնուէրն գործեր : Նա զի Պօղայ
գործ էր առնուլ է. տանել զպարգեւսն ի տունս տունս, է. որք
ընդունէինն՝ բան տային գալ անցուցանել զօր վաղուին առ
Լարուր տիկնոջ է. առ Մարգարտի : Յայնժամ էր տեսանել
մայր գոր ի մարց զի գայր հասանէր երկուք է. երիւք գճնակերպ
դատերօք՝ դայնկագունիւք է. վտտելովք, է. որ առ յոյժ երկ-

չոտութեան բարուցն ոչ իշխեին զաչս ի վեր ամբառնալ : Սակայն Վիրգիլնէ վաղ ընդ փոյր համարձակութիւն տայր նոցա . օշարակս բաշխէր նոցին զովարարս , եւ այնպիսի իմն ազնութիւն ի բաշխոյսն յաւելոյր ' որով ըստ նորա մտացն հաճոյագոյն եւս հարկ էր նոցին ընծայել . իբր զի զայս ինչ ըմպելի Մարգարիտն էր պատրաստեալ , զայն ինչ իւրն մայր , եւ զայս ինչ միրգս նորին ինքեան էղբօրն կրեալ էր ի բարձուէ ծառոյն : Բռնն առնէր Պօղայ զի պարս տացէ նոցա բոյորել , եւ մինչչեւ տեսեալ զնոսա հաճս եւ բերկրայիցս ' ոչ մեկնէր ի նոցանէ . բանզի կամեր զի խնդութեան իւրոյ տանն կցորդս լիցին եւ նորա : Ասէր իսկ էրէ Առ ի զանձին էրջանկութիւն յարդարելոյ հարկ ի վերայ կայ այլոցն էրջանկութեան խնամ ունել : Եւ իբրէ ժամ լինէր դարձի նոցին առ իւրեանցսն , ստիպէր զնոսա բառնալ եւ տանել զոր ինչ միանգամ ախորժելին էր անձանց , եւ զնորութիւն կամ զանսովորն լինել իրացն պատճառեալ ' ստիպէր զնոսա ի պարգեացն ընդունելութիւն : Երէ պատառաստունս յոյժ զգրգիս նոցին տեսանէր , հրաման իմօրէն առեալ ' ընտրէր ինչ ինչ յիւրոց անտի ձորձոց եւ տայր Պօղայ տանել եւ դնել ի ծածուկ առ սեամս տնակաց նոցին : Ահա ըստ այսմ օրինակի հանգոյն աստուածախնամն տեսչութեան առնէր նա զբարիս , զբարերար ձեռնն բազուցանելով , եւ զբարիսն եւեթ յերեւան բերելով :

Եւրոպացւոցդ ազգաց անդատին ի տղայութենէ լի են խորհուրդք մտաց կանխակալ սովորութեամբք այնպիսեօք որ հակառակին էրջանկաւետն կենաց , եւ ջմարքիք լինել խելամուտ էրէ բնառ ունիցի բնութիւն ընձեռել ումէր այսբան հանձար յուսաւոր , այսգոյն եւ բերկրանս : Յանձուկ շրջանի ուրեմն մարդկայնոց իրաց պարագրեալ ոգւոցդ ձերոց , արագ արագ հասանեն ի սահմանաժայրս վայելիցն իւրեանց . բայց բնութիւն եւ սիրտ աղբիւրք անսպառք են : Պօղայ եւ Վիրգիլնեալ ոչ ժամացոյցք էին , ոչ տոմարք , ոչ ժամանակի մատեանք , ոչ պատմութիւնք եւ ոչ գրեան իմաստասիրութեան . այլ կենաց նոցին պարբերութիւնք ' բնութեանն շրջանօք ջափէին : Տուրնչեանայնոցն ժամուց ի ստուերաց ծառոց ծանօքք լինէին , եւ քառահոյով

յեղանակաց տարւոյ ի ժամանակաց անտի յորս ծաղկէինն Եւ պտղաբերք լինէին, Եւ գամացն գնացելոց զհամար ի քուոյ հնձոցն Եւ կրոց իմանային : Այն խորհուրդք նկարակերպք Եւ քաղցունք վայելչագեղս իմն Եւ շնորհայիցս յարդարէին զգրոյցս նոցա : « Ճաշոյ ժամ Եւ, ասէր Վիրգիլն առ ընտանիսն, քանզի անա աղամարգոցն ստուերք առ ոտս նոցին ամփոփեցան . » Եւ դարձեալ . « Տարածամի օրս, զի մոշենիք կծկեն անա զտերեւսն : » Ի հարցանել բարեկամաց Եւ դրացեաց էրէ « Ե՞րբ էկեսցես տեսանել զմեզ, » ասէր Վիրգիլն . « Յեղեգնաշարքացն ժամանակի : » Եւ երիտասարդութիւն անդրէն կրկնէին . « Քաղցրագոյն Եւս Եւ ցանկագոյն մեզ եղիցի գայուստդ : » Երէ որ հարցաբաներ զնա քե քանի իցեն ամբ հասակի նորին Եւ Պօղայ, ասէր . « Հասակակից է եղբայրն իմ քորէնւոյն ¹⁴ մեծի որ առ աղբերն կայ, Եւ Ես փոքրկանն : Յորմէ հետէ կեամ Ես յաշխարհի, երկուտասանիցս պտղաբերեցին մանկենիք ¹⁵, Եւ քսանէջորիցս ծաղկեցին նարնջենիք : » Թուեր իմն այնպէս էրէ աւուրք կենդանութեան նոցա հիւսեալք էին ընդ ծառոցն կենդանութեան՝ հանգոյն կենաց Փառնայց ¹⁶ Եւ մայրեացն շահապետաց : Պատմականաց ինչ դարուց հմտութիւն անժանօք էր ի նոցանէ, բայց ի մարցն Եւէր անցիցն կենաց պատմութենէ . ժամանակագրութիւն այլ ոչ էր նոցա քան զժառատնկոցն իւրեանց ժամանակս, Եւ ոչ իմաստասիրութիւն այլ՝ քան զբարերարել ամենեցուն Եւ միաբանել յամենայնի զկամս անձանց ընդ կամացն Աստուծոյ :

Եւ բնաւ զինչ պետք պատանեկացն էին ընչաւետս Եւ բանիբունս լինելոյ ըստ մերումս սարասի : Պետք նոցին Եւ անգիտութիւն յաւելուած Եւս գործէին երանաւետ կենաց նոցա : Չանցաներ բնաւ օր յորում ջմասնաւորէին իրերաց խելամտութիւն ինչ Եւ հմտութիւն . այն, հմտութիւնս ինչ . Եւ էրէ յանկարծ ի հըմտութիւնսն յայնուսիկ Եւ մոյրութիւն ինչ խառնիցի, ապաբէն առն արդարոյ Եւ ողջամտի չիք ինչ ուստէր կասկած երկիւղի : Չայս օրինակ աւասիկ աճեալ զարգանային երկոքին այն զաւակք բնութեան սիրասունք : Ճակատք նոցա ոչ խորշումեցան էրբէր ի հոգոց տրամութեան, Եւ արիւն նոցա ոչ ապականեցաւ յան-

ժուժկայ շուայտութենէ, եւ սիրտը նոցա ոչ ստերիւրեցան երբէր
յախտիցն ջարաց. սէր, անմեղութիւն եւ աստուածաշատութիւն
օր քան զօր յաւելութիւն զանձառահրաշն շնորհս ոգոց նոցա
ի դէմս նոցին ջքնադագեղս, եւ ի գնացսն եւ ի շարժմունս ամե-
նայն : Յաշայտորջս անդ կենացն՝ զուարթածաղիկք էին իբրեւ
զառաւօտ. այսպէս երբէմն եւ նախածնողքն մեր երեւեցան
յեղեմական դրախտին յորժամ այն ինչ էլեայք ի ձեռանէ Արար-
չին տեսին զմիմեանս, մատեան առ իրեարս, եւ խօսակից եղեն
միմեանց եղբայրաբար եւ քեռօրեն սիրով. քանզի եր իսկ Վիր-
գինէ քաղցրահամբոյր եւ պարկեշտասէր եւ բարեմիտ հանգոյն
Եւայի, եւ Պօղ զԱղամայ բերէր զմանութիւն՝ ընդ առնաձեւ
հասակին զմանկականն ունելով պարզմտութիւն :

Բագուն անգամ դարձ ի վաստակոցն արարեայ եւ Պօղայ, եւ
միայն ընդ միայնունն կացեայ — որպէս եւ բիւրիցս պատմեայ է
ինձ — ասէր ցնա. « Յորժամ խոնջ իցեմ, ի տեսիլ կերպարանացդ
հանգչիմ ես : Յորժամ ի բարձուէ անտի լերինդ նշմարեմ զքեզ
ի խորս հովտիդ, կոկոն վարդի երեւիս դու ինձ ի մրգաբերն
ծառաստանի : Յորժամ ձեմ առեայ զնաս դու ի տուն մարցն
մերոց, ոչ այնպէս գեղեցկայանջ եւ ոչ այնքան քեքեւընթաց է
կարաս որ առ ձագս իւր ձեպիցի : Թեպէտ եւ ոչ եւս զականի-
ցեմ զքեզ ի ծառոց միջի, սակայն ջէն ինձ պետք նշմարել զքեզ
առ ի գտանելոյ զքեզ. իմն ինչ առ ի քեն՝ անձառ. առ յինէն՝
կայ եւ մնայ ինձ յօղս ընդ որ դուն սրանաս, եւ ի դայարեոջ
յոր դուն բազմեայ կաս : Առ քեզ մերձեցեայ, այլ յայլմէ լինիմ :
Ոչ այնպէս հրաշագեղ է կապուտակն երկնից որպէս քոյդ ակա-
նողիք, եւ ոչ այնքան քաղցրանուազ պենկայիցն¹⁶ դայլայլիկք
որքան քո ձայնիդ անոյշ գեղգեղանք : Երէ ծագիւ մատինս եւեր
ի քեզ հպիցիմ, սարսուռ բերկրապատար ընդ մարմինս իմ ըն-
թանայ : Յնչ քեզ օրն այն յորում անցար մեր ընդ խիճսն բոյո-
րաձեւս գետոյն Եռաստեանց. զիւրդ ժամանեայ առ գետա-
փամբն վաստակաբէկ էի. այլ իբրեւ ըստ անձին բարձի ես զքեզ,
քեւս քեքեւս օղասլաց բոջնոյ բուեր քե ունիցիմ : Ադէ ասա,
որով դու հմայիւք դիւրեցեր արդեօք զիս : Միքե հանձարովդ.
սակայն մարցն մերոց առաւելագոյն է հանձար քան զիմ եւ զքո :

Միքէ գգուանօրդ . այլ յաճախագոյն քան զքեզ համբուրեն նորա զիս : Թուի ինձ էթէ բարութիւն սրտի քո է որ դիւրեալ է զանձն իմ : Չմոռացայց ես էրբէք զօրն յորում բոկոտն ընթացիւք դեմ եղեալ գնացեր դու մինչեւ ցՍեան . Գետ խնդրել զքողութիւն գերւոյն փախստականի տառապելոյ : Ա՛ն ընկալ, սիրեցեալդ իմ , զժողկափթիթս զայս ոստղ կիտրոնի զոր ի մայրիսն հատի , եւ առ մահճաւդ դիցես ի գիշերի : Աղէ կեր զխորիսիս զայս մեղու . վասն քո կրեցի զսա ի բարձուէ վիմին մեծի : Բայց նախ եկ հանգիր ի գիրկս իմ , եւ ոգի առից ես ի վաստակոց : »

Եւ Վիրգիլնէ պատասխանի տուեալ ասէր ցնա . « Ո՛վ իմս եղբայր . ոչ այնչափ խրախ առնեն զանձն իմ նշոյք արփենւոյն որ այգուն այգուն զբարձամբք պարէխացդ հարկանին՝ որպէս քոյինդ տեսութիւն : Սիրելով սիրեմ ես զիմ մայրիկ , սիրեմ յոյժ եւ զքոյդ . այլ մինչ նորա որդեակ զքեզ ձայնիցեն , առաւել եւս սիրեմ զնոսա : Յորժամ զքեզ գգուիցեն , խրախ եւս լինիմ ես քան թէ յորժամ զինեւ խանդաղատիցին : Հարցանես ցիս թէ առ .



ինչ սիրիցեմ զքեզ . ապաքեն ամենայն համաստունք սիրեն զիրեար : Հայեաց ի քուջունս մեր . ի նմին բունկան սնեալք՝ սիրեն զմիմեանս հանգոյն մեզ , եւ ցանգ ընդ միմեանս կան իբրեւ զմեզ : Լուր ճրպէս ծառ . ի ծառէ ձայնատու լինելով՝ դարձուածս առնեն բանից . սոյնպէս եւ ես , մինչ ի բարձուէ անտի լերինն տրճագանգք յունկն իմ հնչեն նուագաց սրնգիդ , անդրեն կրկնեմ զբարբառն ի խորոջ աստ հովտիս : Եւ աւելի եւս սիրելի եղեր դու ինձ յօրէ յորմէ կամեցարն մարտ եղեալ ոգորել վասն իմ

ընդ տեսան գերույն : Յայնմ հետե բազում անգամ ասացի ես
ցանձն իմ . Բնքե, զի բարեսիրտ է եղբայրն իմ . եթե նա չէր,
ես ահաբեկ կորնչէի : Զօր հանապազ աղօթեմ ես առ Աստուած
վասն մօր իմոյ, վասն քոյոյդ, վասն քո, եւ վասն հիբացն մերոց
սպասաւորաց . այլ յորժամ գրոյդ անուն առնուցում ի բերան
քոսի ինձ զի յաւելու ոգոյս իմոյ եռանդն : Քանի սրտատուջ
պաղատանօք հայցեմ ի Տեսունե զի մի հասցեն քեզ չարիք : Առ
իմէ այնպես ի հեռաստան եւ ի բարձրաբերձ վայրս դիմիցես
բերել ինձ միրգ եւ ծաղկունս . ո՛չ աւանիկ ի լիութիւն բաւա-
կանի ունիմք զամենայն ի դրախտիս : Տես գիւրդ խոնջ ես եւ
պարտաւեալ, եւ ընդ քիրտն բարաւեալ : » Եւ սպիտակաքոյր
վարշամակաւն փոքու սրբէր զճակատ նորին եւ գայտսն, եւ համ-
բոյր բազում տայր նմա :



Սակայն ոչ սակաւ ժամանակ էր յորմէ հետե յանձանօք ինչ
երաշխեպս տագնապէր Վիրգիլնէ . աչք իւր կապուտակք շուր-
ջանակի բխանային . գունատէին երեսքն, մեղկեալ բույանայր
մարմինն ողջոյն . ոչ էս էր գուարբերես զնա տեսանել, եւ ոչ
բաղցրաժպիտ ի շրբունսն : էր զի յանկարծ գուարբանայր
առանց ուրախութեան, եւ տխրէր առանց տրտմութեան :

Խուսափեր ի խաղուցն իւրոց անմեղաց , յընդէյական վաստա-
կոցն եւ ի կենաց կցորդութենէ ընտանեացն սիրայնոց : Թափ
առեալ շրջէր վայրավատին յանմարդի վայրս օթեանին , գհան-
գիստ խնդրէր , եւ ոչ ուրէք գտանէր : Էր երբէք զի զՊօղ տե-
սեալ՝ թինդս առեալ դիմէր ի նա . եւ այն ինչ մերձեցեալ՝ զմբաղ
յանկարծադեպ անկանէր զնովաւ . այտքն դայնկագոյնք շա-
ռագնէին ի բոսոր , եւ աչքն ջիշխէին յաչս նորին դաղարել :
Ասէր ցնա Պօղ . « Պարէխքս դայարանան , եւ բռչունք մեր երգս
առնուն յորժամ զքեզն տեսանիցեն . ամենայն ինչ բերկրայից է
շուրջ զքեւ , դու միայն կաս տխրագգած : » Եւ գիրկս ամեալ
զնովաւ գուն գործէր փոփոգել զնա . բայց նա ի բաց զգլուխն
դարձուցանէր , եւ սոսկմամբ իմն առ մայրն խուսափէր : Ի գգուա-



նաց եղբօրն խռովէր յանձն իւր օրիորդն հեզ . եւ Պօղ անգի-
տանայր ամենեւին թէ զինչ այն նորատեսիլ զնացք եւ հաճոյք
էին որ երեւէին ի նմա : Այլ բազում այն է զի ոչ միայնակ հա-
սանեն մարդուս չարիք :

Ամառն տօրագին ընդ ժամանակս ժամանակս սաստկացեալ
տոչորէ զգաւառս որ ընդ մեջ կան արեւադարձիցն երկոցուն ,

Եւ յաղարտ վարէ գամենայն . խորշակ այնպիսի հարաւ յայն-
ժամ եւ ի կողմս յայս : Ի վերջ կոյս ամսեանն դեկտեմբերի յոր-
ժամ արեգակն յայծեղջիւրն մտեալ կշիռ անկանի գԳաղղիոյ
Կողեաւս, եւ հրակիգեալ տապացոցանէ գաւ ընդ Եօրնեակս
Երիս, հողմ հարաւոյ որ գամն ողջոյն շնչէ ի կողմոջս՝ դաղա-
րեաց . մրրիկք փոշւոյ Երկայնաձիգք ամբառնային յանցս ճա-
նապարհաց, եւ յօղս կային վերամբարձ : Յամենայն կողմանց
խորխուլեալ պատառոտեր Երկիր, բոցակեզ լինեին յղալարիք,



սղոխք ջերմաջերմք ի կողից լերանցն ամպեին, եւ յոյովք յա-
ռուակացն ցամաքեալք լինեին : Ոչ եւս գայր ամպ ի ծովէ .
բայց միայն Եր տեսանէլ զցերեկ շիկակարմիր ինչ շոգի գի վե-
րացեալ դիզացեալ ընդ Երեսս մարգացն, ի մուտս արեւուն
Երեւեին հանգոյն բոցոյ հրդեհի մեծի : Այլ եւ ոչ գիշեր ինքնին
գովութիւն ինչ մատուցանէր տապագին օդոցն . եւ գունդն
յուսնի համակ շառագոյն ամբառնայր ընդ մառախլապատն
ծիր Երկնից ահագին իմն ցուցանելով մեծութիւն : Հօտք խաշանց
եւ անդեոց յեմակս բլրեկացն զգետնեալք եւ զպարանոցսն ընդ
Երկինս պարգելով զօդ ձձեին, եւ տրտմագին բառաջմամբ գն-
վիտս հնչեցուցանեին . անդեորդն ինքնին յորսայս մածնոյր ընդ
Երկիր գի գովասցի փոքր ինչ : Սակայն ամենայն ուրեր հրա-

տոջոր էր գետին, եւ յօդս անդ մղձկուտս ոչ այլ ինչ լինէր լսելի
բայց միջատացն բզզանք, որք խնդրէին զպատուք ծարաւոյն
հարկանել արեամբ մարդկան եւ կենդանեաց :

Ի միում ուրէք ի տօբակեզ գիշերաց անտի բիւրապատիկ եւս
յաւելաւ ի Վիրգիլէն ախտին տագնապ : Մերք յառներ, մերք
բազմեր, եւ մերք անդրէն ընկողմաներ, եւ որպէս եւ զխարդ
կայր՝ ջգտանէր նա գրուն եւ ոչ զհանգիստ : Յարուցեալ գնայ
ի լոյս լուսնակի՝ յաղբիւր անդր իւր. տեսանէ զի եւ յերաշտի
առուրսն բոխէր ջուր յականէն, եւ արծարափայլ առուակօք
հատանէր անցանէր ընդ թխատիպ կողս ապառաժին. եւ յաւա-
զան անդր լինի ջրասոյզ : Կագդուրին զառաջինն ի հովութենէ



անտի զգայարանքն իւր, եւ բիւր յիշատակք ցանկալիք անկա-
նին ի սիրտ նորա : Յուշ լինի նմա զի մինչ մանուկն էր, մայրն
իւր եւ Մարգարիտ զբօսնուին իմն յոգացուցանելով զինքն եւ
զՊօղ յաւազանի անդ. եւ զի ապա նմին միայնում պահեալ
Պօղայ զյոգարանն, պեղեալ էր զյատակն եւ առազալից արա-
րեալ, եւ զեգերբքն սերմանեալ դալարիս խնկաւետս : Զականէ
նա ի ջուրս անդ զհոլանի բազկօքն եւ զլանջիւք զստուերս ար-
մաւենեացն երկոցուն տնկելոց ի ծննդեան եղբօրն եւ իւր, որ

զգիտովն իւրով ընդ իրեարս խիղբ արկեալ պատատէին զկանա-
ջագեղն իւրեանց կողերս եւ զմիրզան դեռաբուսիկս : Զմտաւ
ածէ զՊօղայն բարեկամութիւն քան զբոյրս անուշից քաղցրա-
գոյն, քան զաղբերացն հոսանս ականակիտ, եւ քան զյօշակապ
արմաւենիսն կորովի. եւ յոգւոց հանէ : Զմտաւ ածէ զգիշերն
գայն եւ զամայութիւն, եւ տապ հրաբորբոք փաղաղէ զանձն
նորա : Անդէն ի բաց էլանէր զարհուրագին յանդոհական ստուե-



րաց անտի եւ ի ջուրցն որ քան զայրեցածին արեգակունս կի-
զիջք գտանէին, եւ դիմեալ առ մայրն իւր ընթանալ ի խնդիր
ապաստանի յերեսաց անձին իւրոյ : Բագուն՝ անգամ պատմել
նմին զվիշտս իւր կամեցեալ, զձեռս նորա յիւրսն ամփոփեալ եւ
պնդեր. բագուն՝ անգամ կամեցաւ յօղել զանունն Պօղայ, սա-
կայն անդէն սրտաճմլիկ լեալ՝ լեզուն ի քիմսն կցեցաւ. եւ խո-
նարհեալ եղեալ զգլուխ իւր ի մայրենին ծոց՝ քանայր եւէք զնա
արտասուօք :

Քաջ իսկ խելամուտ էր Լաբուր տիկին դստերն աղետի. բայց
ոչ իշխեր ինքնին բանս ի մեջ արկանել. եւ ասէր ցնա. « Որ-
դեակ իմ, յԱստուած լեր ապաստան, որ միայն է պարգեա-
տուն քաջողջութեան եւ կենդանութեան : Խրատե՛ նա զքեզ

այսօր է. վարձահատոյց եղանի բեզ առ. վաղի. : Յուշ բեզ գի
էկեայ էմբ յայս աշխարհ առ. ի վարժս է.էք առ.արինու.բեան : »

Յայնմ ժամանակի առ. տարապայման ջերմութեան օդոցն
էին բարձրացան յերեսաց համատարածն ծովու. գոյորշիք
բազումք է. ծածկեցին գերեսս կղզւոյն իբրէ. գհամապարփակ
ինչ հովանի : Գագաթունք յերանց շուրջ պարուրեցին գգոյոր-
շիսն, է. էրբէք էրբէք աղօսանէ. շանքք էրկայնամիգք յամ-
պածրար պարէխից անտի հատեայ ոստջէին : Փոյք ընդ փոյք
որոտընդոստ կայծակունք ահագին շառաջմամբ գմայրիս է.
գղաշտս է. գհովիտս առ. հասարակ հնչեցուցին. է. բօնուտք
անձրեաց նմանեայք հեղեղասաստ սահանաց շուրց հոսեցին



յերկնից : Ուղիսք անձրեաց փրփրաղեգք թաւայգլոր խաղացին
առ. ի կողաց յերինդ . գոգ աւազանիդ համակ ծովացաւ. . լեռնա-
դաշտակն յորոյ վերայ խուղրդ կառուցեայ կան, կղզեակ իմն
գտաւ ջրապարփակ, է. բերան հովտիդ ամբարտակ ջրարգել
ընդ որ խառն ի խուռն արտաքս վագէին ընդ ահեղագոջ շուրցն
յորդութեան հող է. աւազ է. ծառք է. բարաժայոք :

Ամենէրին առ. հասարակ որ ի տանն էին գղողանի հարեայ
յաղօքս առ. Աստուած դիմէին ի տնակի անդ Լաթուրի տիկնոջ,

որոյ ճունչեալ ճարձատէին տանիք յերեսաց սաստկաշունչ հողմոցն բռնութեան : Այնքան յուսաբորբ էին փայլատակունքն ստեպ ստեպ հատեալք , զի թեպէտ էւ դրունքն էւ փեղկք պատուհանաց ամբափակք էին , սակայն էւ այնպէս ընդ ծերպս ագուցից ատաղձիցն ի ներքս հարկանէր յուսոյն պայծառութիւն էւ տեսանելի աջաց գործեր զամենայն : Անվեհերն Պօղ ընդ իւր առեալ գ'Ւոմինիկոս , էւ ոչ ինչ միտ եղեալ մրրկածուփ ամպրոպացն , երթայր էւ գայր ի մէն մի հիւղիցն . ուրէք պահանգակապ ինչ յորմն հաստատելով , էւ այլուր ցից վարսելով յամբութիւն . էւ անդէն ի ներքս մտեալ՝ մխիթար ընտանեացն լինէր յուսով գեղածիծաղ օղոց ընդ հուպ երեսելոյ : Եւ արդարեւ իսկ ընդ երէկս առուրն դադարեցին անձրեւածք . յարաշունչ հողմն արեւելեան հարաւոյ սկսաւ շնչել վերստին , ամպր մրրկածինք վարեցան արկան ընդ արեւմուտս հիւսիսոյ , էւ ընդ ծիրս երկնից երեւեցաւ արեգակն որ ի մուտս խոնարհեր :

Յառաջ քան զամենայն իդձ եղէ Վիրգիլն տեսանել թէ զինչ անցք անցեալ իցեն ընդ վայրն հանգստեան իւրոյ : Մատեաւ երկիւղագին առ նա Պօղ էւ զաջ իւր կարկառ նմա ի զօրավիզն ընթացից : Կայաւ Վիրգիլն գճեռանէն ժպտելով , էւ էլին երկորեան ի միասին ի խղէ անտի : Հովաշունչ էին օղբ էւ շառաջուկ : Ծուխ սպիտակարոյր էլանէր վերանայր բարդ ի բարդ զգագաթամբք լերինդ՝ ակօսածեւ երեսեալ ի փրփրոյ ջուրցն հոսանաց որ զիջեալ նուագէին տակաւ ընդ ամենայն կողմանս : Պարտեզն վեր ի վայր հարեալ էւ կործանեալ յերեսաց յաղբաջուրն հեղեղաց . յոյովք ի ծառոց պտղաբերաց արմատախիւրդնէին , էւ աւագակոյտ բազում ծածկեալ ունէր գեգերս մարգացն էւ խճողեալ գաւազանն Վիրգիլնեալ : Սակայն բորենիքն երկորին կանգուն կային էւ կանաչագարդք , թեպէտ էւ ոչ էս եր տեսանել զնոքօք սեզս դայարագեղս , ոչ սարփինայս , էւ ոչ բռնունս , բայց ի սակաւարիւ պենկայից որ ի ծայրս մերձակայ ապառաժիցն եղերական նուագօք ողբս առեալ կոծէին ընդ մատաղերամ ճագուցն կորուստ :

Յայն տեսիլ աղետաբեր ասէ Վիրգիլն ցՊօղ . « Թռչունս բերեալ էր քո ի տեղիդ , էւ անա սպան զնոսա մրրիկ : Պարտեզ

տնկեցեր, եւ անա վարեալ է յաղարտ : Ամենայն ինչ ի կորուստ
զնայ յերկրի, յերկինս եւեք անկորուստ կայ ամենայն : » Պա-
տասխանի տուեալ ասէ ցնա Պօղ. « Իցիւ թէ էր ինձ հնար
յերկնաւորացն ինչ ընձեռել քեզ. այլ էս ջբաւոր եմ յամենայնէ,
եւս եւ յերկրաւոր բարեաց : » Ասէ Վիրգիլն շառագնելով. « Է
իսկ քո պատկեր սրբոյն Պօղայ : » Եւ այն ինչ բանքն ի բերան
նորա էին, դիմեաց Պօղ ի տնակ մօր իւրոյ բերել զպատկերն.
Եւ էր մանրանկար ինչ փոքրիկ որ զՊօղ անապատական յան-
դիման առնէր : Եռանդագին սիրով սիրէր զայն Մարգարիտ,
եւ մինչչեւ առն էղեալ՝ զամս ձիգս զպարանոցէն կախեալ ու-
նէր. իսկ ապա իբրեւ մայրացաւն, հանեալ էւ կախեալ էր
զայն զպարանոցէ որդեկին : Այլ էւ մինչ յարգանդի զմանուկն



ունելով էւ բարձի թողի յամենեցուն գտանէր, յարածամ յերա-
նելի անապատականն այն պշուցեալ նկատելով՝ զնորա նմա-
նութիւնն էւ յորովայնին իւրոյ պտուղ տպաւորեալ իմն էր
տեսանել. նմին իրի իսկ էւ ի նորա անուն զորդեակն իւր յոր-
ջորջեալ, եւ բարեխօս նմին կարգեալ էր զտուրբն զայն զտա-
րագնաց տարագիր ի մարդկան բազմութենէ, որ էւ զնա ինքն
ստերիւրեալ էւ ապա ընկեցիկ արարեալ էին : Առ ընկալաւ
Վիրգիլն ի ձեռաց Պօղայ զկենդանագիրն զայն էւ ասէ ցնա

գորովանօք . « Եղբայր իմ , ցորչափ կեցցեմ ես , ոչ որ բարձցե
զսա յինեն , եւ ոչ մոռացայց էրբէր էրէ գմիակն քո ստացուած
յաշխարհի էտուր դու . ցիս : Զայն մտերմական նշանակ , եւ
զայն անակնկալ դարձ նախնոյ ընտանութեանն տեսեալ Պօղայ՝
կամեր համբուրել ընդ նմա . բայց նա ի բաց սրացաւ ի նմանե
իբրեւ գրոջուն ինչ արագասլաց , եւ Պօղ այլ յայլմէ Էդեալ՝
արձանացաւ ի տեղւոջն , ոչ գօրելով բնաւ ի վերայ կալ տարօրի-
նակ գնացիցն Վիրգիւնեալ :



ԳԼՈՒԽ Գ.

Սակայն ասեր Մարգարիտ առ Լարուր տիկին. « Զի է զի ջամուսնացուցանեմք մեր գորդեակս մեր : Ապարեն կոկոզար կարողին են նորա զիրերաց. բեպետ է. որդին իմ ջե. էս խելամուտ այնմ իցե, այլ ի բարբառել առ նա բնութեան՝ ի գուր արդեօք հսկեսցուք մեր այնուհետեւ, քանզի ահագին է վտանգն : » Ասեց նա Լարուր տիկին. « Մանկահասակք են տակաւին է յոյժ ջքաւորք : Քանի տրտմութիւն եղիցի մեզ երե ծնցի Վիրգինե որդիս ջարաբաստս, գորս գուցե է խնամել ջլինիցի ձեռնհաս : Հնդիկդ քո Գոմինիկոս յայեւոյքս է, է Մարիամ հիւանդագին. է էս ինքնին, սիրեցեալդ, այս հնգետասան ամբ են զի տակաւ ծնգեալ անաւագիմ : Ի տապագին գաւառս արագ արագ ձերանայ մարդ, է արագագոյն էս՝ յորժամ ի հոգս հաշեալ ծիրիցի : Յոյս մեր բովանդակ ի Պօղ է. քող կացցուք մնացուք կազդութելոյ հասակին է հաստատելոյ բուսոյ բարուցն, որպէս զի իւրովքն վաստակօք ձերատածել զմեզ մարբասցի : Զարդիս, որպէս է դու իսկ գիտես, գաւորն պարեն հագիւ պաճարեմք : Բայց երե առ սակաւ մի ժամանակ յղեսցուք ի Հնդիկս զՊօղ, շահեսցի արդեօք տուրեւանիկ փոփոխմամբ արժար բաւական առ ի գերիս ինչ գնելոյ. է ի դառնայ նորին այսրեն հարսնացուսցուք նմա զՎիրգինե. քանզի է հաւանեալ իսկ էմ զի ջիք այլ որ որ գղատրիկն իմ սիրասուն այնպէս երանաւետեսցե որպէս որդեակդ քո Պօղ :

Խօսեսցուք զայսմանե է առ մերն դրակից : » է հարցինցիս տիկնայքն խորհուրդ, է հաճեցայ է էս ընդ կարծիսն է ասեմ.

« Հնդկացն ծովք անդորրաւեալք են : Երէ ընտրեալ առնուցու որ զբարեշունչ ինչ յեղանակ օղոց , վեցից եւեք եօթնեկաց պէտք են աստի ի Հնդիկս անցանելոյ , եւ համաջափ ժամանակաւ հնար է այսրէն ջու դարձի առնել : Ի մերումս քաղի յօրինեսցուք մէք Պօղայ աղխամաղխս ինչ վաճառաց , քանզի եւ սիրելի իսկ է նա յոյժ դրացեաց իմոց : Բամբակ եւեք անգործ երէ տայցեմք նմա , որ ոչ ինչ իմիք է մեզ պիտանացու առ ի ջգոյե աղօրեաց ի փեճոկել եւ ի սրբել գայն , եւս եւ ոպնիագ՝ որ առ յոյժ առատութեանն յայրումն գնայ առ մեզ , եւ ազգս ազգս խիժի որ յուճպէտս կորնչին ի մայրիս , այս ամենայն շահաւետ վաճառք իցեն ի Հնդիկս , մինչ առ մեզ անշահր են ամենեւին : »

Ես ինքն յանձն իմ կալայ հայցել ի Պ . Լա - Պուրտոնեայ զուղեւորութեանն զհրաման , բայց նախ ցանկացայ գնա ինքն զՊօղ իրազեկ այսմ առնել : Այլ զարմանք անհնարինք կալան զիս իբրեւ ասաց ցիս պատանեակն այն իմաստութեամբ՝ որ քան զչափ հասակին գեր ի վերոյ յոյժ բուեցաւ ինձ . « Եւ իցէ ինձ հնար բողույ լքանել զազգատոհմն իմ եւ ի խնդիր էլանել մտացածին ճոխութեան : Ո՞ր այն շահավաճառ իցէ յաշխարհի մեծ քան զանդաստանացն մշակութիւն , որ է զի յիսուն եւ է զի հարիւր եւս առ մի պտղաբերեն : Երէ մեզ կամք իցեն ի տութեառս պարապել , բող զաւելորդս մեր աստի ի քաղաք անդր իջուցեալ վաճառեմք , եւ ընդէր ի Հնդիկս գնացից տարադեմ : Ասեն ցիս մարքն մեր զի ալեւորեալ եւ անաւագ է Դոմինիկոս . այլ ես ո՞չ ապարեն կազդութիւմ օր քան զօր եւ յաւելում ի գօրութիւն : Եւ զինչ երէ ճախողակի ինչ արկած պատահիցէ նոցա ի ժամանակի պանդխտութեան իմոյ , եւ մանաւանդ Վիրգիլեայ որ արդեն իսկ խօք է : Ո՞ն ոչ , ոչ մեկնեցայց ես ի նոցանէ երբէր : »

Ընդ այս նորին պատասխանի տագնապեցայ ես մեծապէս . քանզի եւ ոչ բարուցեալ էր յինէն Լարուր տիկին զդատերն իրս , եւ բէ կամի ամս ինչ շահեալ եւ յաւելույ ի տիս քերահասակմանկանցն անշատելով գնոսին ի միմեանց : Այլ զայսցանէ անհնար էր ինձ եւ կարծիս անգամ արկանել ի միտս Պօղայ :

Մինչդեռ յայսմ մտաց խորհրդի էար , նաւ հասեալ ի Գաղղիոյ՝ նամակաբեր լինէր առ Լարուր տիկին ի մօրաբեռէն

իւրմէ : Երկինդ մահու՛ որ միայն գիտէ ի գորով ածել զմարդ խստասիրտ , պաշարեալ էր զնա . քանզի այն ինչ ապաքինեալ էր ի մահաբէր ինչ ախտէ որ ի ծիրութիւն հատաներ զնա , եւ ի ծանրութենէ ամաց հասակին անբուժելի գտաներ : Պատուեր առ քեռորդեակն իւր տայր նա ի բողբին դարձ առնել ի Քաղղիա . եւ էքէ ջներիցէ քեզ , աւեր , անձինդ վատառողջութիւն մխել յերկարածից ուղեւորութիւն այնպիսի , յղեսջիր առ հոգՎիրգիներ , զոր քաջակիրք դաստիարակութեամբ սնուցեալ մութից եւ յարբունիս , եւ բովանդակ ընչից իմոց զդա ինքն կացուցից ժառանգորդ : Եւ յաւելոյր ասել զի էքէ կատարիցէք զպատուերս իմ զայսոսիկ , տեսանելով տեսջիք զդարձ իմոյ առ ձեզ զքասիրութեանս :



Եւ իբրեւ ընթերցաւ քուղթն այն յունկն ազգատոհմին , անդէն առ ժամայն ի սուգ անհնարին համակեցան առ հասարակ ամենեքեան . Դոմինիկոս եւ Մարիամ յարտասուս յուծան . Պօղ յապուշ իմն կրթեալ անշարժ կայր , եւ մերձ բուեր բրդել ի բարկութիւն , եւ Վիրգիներ ի մայրն ակնկառոյց՝ ոչ իշխեր յօղել ինչ բան : Ասէ Մարգարիտ առ Լարութ տիկին . « Արդ իցէ հնար քեզ բողուլ զմեզ եւ զնալ ի բաց : » Իսկ նա ասէ . « Ոչ , սիրեցեալդ իմ . ոչ , որդեակք իմ . ոչ մեկնեցայց ես ի ձեռն : Ընդ ձեզ կեցի ես , ընդ ձեզ կամիմ եւ մեռանել : Չերդ սեր եւ բարեկամութիւն է որ ծանոյց ինձ քեզ զինչ էրանութիւնն իցէ : Իմումս հիւանդագին կենաց աղետքն իմ եւեր առաջինք եւ պատճառք : Ազգակցացն իմոց խստասրտութիւն եւ մահ ամուսնոյն իմոյ

սիրեցելոյ հարին զիս կարեվեր . սակայն յետ այնորիկ առաւել-
յագունից հանդիպեցայ եւ սիրովանաց եւ երանութեան ձեօք
հանդերձ ընդ աղբատին յարկօքս . երանութիւն որում երբեք
ոչ ունէի ակն ի հայրենիսն իմ յագգականացն իմոց մեծափար-
քամ ճոխութենէ : »

Ի յուր բանիցն այնոցիկ աչք ամենեցուն խնդութեան հոսեցին
արտասուս : Գիրկս արկեայ Պօղայ զԼարուր տիկնամբ ասե-
ցնա . « Եւ ոչ եւ բողից գբեզ , եւ ոչ երբայց ի Հնդիկս : Ամենե-
քեան մէք վաստակեցուք վասն բո , սիրուն մայրիկ , եւ ոչ իւր
կարօտացիս առ մեզ : » Սակայն առաւել քան զամենեսեան
զնոսա խնդամտեցաւ Վիրգիլնէ , եւ զմնացեայ ժամս աւուրն



ախորժ հաճութեամբ եւ գուարրերես անցուցաներ . եւ ամենե-
քին լցան խնդութեամբ ի տեսիլ հանդարտելոյն նորա :

Ի վաղիս անդր ընդ արեւագայն մինչջէն նախաճաշեայ՝ ըստ
սովորութեանն զառաւօտին զաղօքսն միաբանութեամբ արա-
րեայ , այն ինչ զամենն կցէին , եւ ահա ազդ արար Դոմինիկոսզի
հեծեայ որ այր ստրուկս երկու ունելով զկնի՝ ընդ բնակարանն
կոյս դիմեայ յառաջէ : Եւ եր այրն Պ . Տը-լա-Պուրտոնէ : Եմուտ

ի հիւղ անդր, եւ ետես զի բոլորեթեան բազմեալ կային զսեղանով : Ըստ սովորութեան աշխարհին պաշտեալ էր նոցա Վիրգինե սուրճ եւ բրինձ խարշեալ, ընդ նոսին եւ գետնախնձոր ջերմիկ եւ աղամարուզս դեռակիրս : Սպասք սեղանոյն հաղադակք եւեր էին՝ դդումք կիսահատք, եւ պատառք՝ տերեւք աղամարգէնոյ : Զարմացաւ կուսակալն զառաջինն ընդ աղբատութիւն օրեանին : Եւ ապա մատուցեալ առ Լարուր տիկին ասէ. « Բազում այն է զի գործք իմ հանրականք չներեն ինձ մասնականացն դնել միտ. սակայն քո իրաւունք բազում են ական ունելոյ առ յինէն խնամոց : » Եւ յաւելեալ ի բանս իւր ասէ. « է քո, տիկին, ի Փարիզ մօրաբոյր քաջատոհմիկ եւ ընչաւետ,



որ ընչիցն իւրոց զքեզ ընտրեալ ժառանգորդ, եւ մնայ քեզ : » Պատասխանի ետ Լարուր տիկին եւ ասէ ցկուսակալն. « Խարբեալն իմ առողջութիւն չտայ ինձ քոյ միջամուխ ի բազմօրեալ յինէլ ուղեւորութիւն : » Ասէ Լա-Պուրտոնէ. « Գոնեալ առ դուստրդ քո դեռաբողբոջ եւ նազելի չէ արժան քեզ անիրաւել եւ զրկել զնա ի մեծէ ժառանգութենէն : Ծանիր զի մօրաբոյրն քո եւ զպետութիւնն ստեալ է ի ձեռս՝ զի մարբասցի առ իւր տանել զդա : Եւ գրովս եւս պատուեր տուեալ է ինձ վարել իշխանութեամբ իմով՝ էրէ հարկ իրացն այնպես պահանջեացէ. այլ զի իմ հոգ ի մտի կայեալ է զիշխանութիւնս իմ ոչ յայլ ինչ պետս առնուլ ի կիր, բայց յերանաւետել զգաղբականս տեղւոյս, կամիմ զի դու ինքնին յօժարեացիս ի նուիրումն զոհիդ առ ամս

սակաս . զի յայնմ իսկ հաստատեալ կայ դատերն քո բարեբաստութիւն եւ քոյդ բարեկենդանութիւն : Առ ինչ ի կողմս կողմանցս այսոցիկ պանդխտիցի որ . ո՞չ ապաքէն զի ի փարթամութիւն յաւելուցու : Իսկ արդ ո՞չ լաւ իցէ երբայ գտանել զայն ի հայրենի աշխարհին : »

Եւ զայս ասացեալ եղ ի վերայ սեղանոյն պարկ մի արծաթոյ զոր ոմն ի խափշիկ սպասեկաց իւրոց բարձեալ բերեր . « Զսոյն աւասիկ յէ մօրաքոյրն ձեր , ասէ , ի ծախս հանդերձանաց ջուոյ դատերն ձերոյ : » Եւ աւարտեաց զբանսն՝ յանդիմանեալ ողորով զլաթուր տիկին զի ոչ առ նա ինքն լեալ էր ապաստան ի կարօտութեան իւրում , քեպէտեւ գովել գովեր եւ զսրտին ազնուա-



խոն արիութիւն : Ետ պատասխանի անդէն Պօղ եւ ասէ ցկուսակայն . « Մայրն իմ էկն իսկ առ քեզ , տեր , եւ դու ջարտոր ընկալար զնա : » Եւ ասէ Լա-Պուրտոնէ առ Լաթուր տիկին . « Իցէ քո եւ այլ որդեակ : — Ոչ , տեր , որդի է դա բարեկամիդ իմոյ . սակայն դա եւ Վիրգինէ հասարակաց երկոցունցս են գաւակք , եւ զուգապէս սիրելիք : » Եւ ասէ կուսակայն առ Պօղ . « Պատանի դու , յորժամ զիրաց կենցաղոյս առցես զփորձ , յայնժամ խելամուտ լիցիս պաշտօնեալ մարդկանս աղետից , եւ ծանիցես երէ քանի՜ դիւրին է ի պատիրս զնոսա արկանել , եւ նրջափ շուտափոյրք են ի շնորհել արանց նենգածե-

տից գայն ինչ գոր անձանց վաստակաւորաց եւեր ի ճան էր պահել : »

Պ. Լա-Պուրտոնէ հրաւիրանաւ Լարուր տիկնոջ բազմեցաւ առընթեր նորին , եւ ճաշեաց ըստ գաղթածին երոպականացն օրինի , եւ արբ գտարձ հանդերձ բրնձով խարշելով ի ջուր : Հիացաւ այրն ընդ կազմիկն բարեկարգութիւն եւ ընդ մաքրութիւն տնակին , ընդ սիրայօղն միութիւն ազգատոհմիցն երկուց , եւ ընդ փոյթեռանդն սպասահարկութիւն հինաւորց արբանեկաց նոցին : Եւ ասէ . « Փայտակերտք են կանք տեղւոյս , սակայն գուարբերես կերպարանք փայլեն աստ եւ սիրտք ոսկեձոյլք : » Խրախացեալ Պօղայ ընդ կուսակալին անարգամեծար զնացս ,



ասէ ցնա . « Տանկալի է ինձ բարեկամութիւն խառնել ընդ բեզ , քանզի այր բարի էս դու : » Եւ հաճութիւն յոյժ եցոյց Լա-Պուրտոնէ ընդ կողգայնոյ պատանւոյն մտերմութիւն : Աջ կարկառեալ առ Պօղ համբուրեաց ընդ նմա , եւ հաւատարիմ արար զնա ընդ բարեկամութիւն իւր :

Իբրեւ յարեան ի սեղանոյ անտի , էառ մեկուսի Լա-Պուրտոնէ զԼարուր տիկին եւ ասէ ցնա . « Է աստ նաւ պատրաստական ի ջուրէ ի Գաղղլա . եւ էրէ գղուստրն քո յղեսցես , յանձն

արարից զնա ի խնամս տիկնոջ ուրումն որ ազգակից իմ է եւ ուղեւորի ի Քաղղիա . տես , ասէ , մի գուցէ անփոյր առնիցես զմեծափարքամ ճոխութեամբն սակս ամաց սակաւուց անձինդ դիւր գտանելոյ : » Եւ մինչ մեկներն յառել էւ ասէ . « Մօրաբոյրն քո ոչ յերկարակեաց լիցի այլ եւս քան զերկամեայ ժամանակ . զայս բարեկամք իսկ նորին ազդ արարեայ ծանուցին ինձ : Քաջ մտախոն լեր ի սոյն , զի ոչ էրէ զօր հանապազ գայ հասանէ բաղդ մարդոյ : Հարց խորհուրդ յամենեցուն , եւ ամենայն այր ողջամիտ լիմ եղիցի կարծիս : » Եւ նորա պատասխանի տուեայ ասէ . « Եւ քանզի ինձ այսուհետեւ չիք ի կենցաղումս բարեբաստութիւն այլ քան զղստերն իմոյ զերջանկութիւն , ի հաճոյս կամաց քոց առնեմ ապաստան զչու նորին ի Քաղղիա : »

Ոչ դժպատեն ինչ համարէր Լարուր զդեպն զայն առ անջատելոյ ի միմեանց առ սակաւ մի ժամանակ զՊօղ եւ զՎիրգիլնէ , այլում պահելով պատենի զերջանկութեան նոցին հեքեքանս : Եւ առեայ զդուստրն իւր մեկուսի ասէ ցնա . « Որդեակ իմ , ծառայքն մեր ձերացեայք են . Պօղ մանուկ է տակաւին , Մարգարիտ ի ձերանայ է , եւ ես ցանգ հիւանդագին . էրէ յանկարծ մեռանել ինձ հասանիցէ , քեզ զի արդէօք լինիցի միայնումդ եւ ջրաւորի յանմարդի անապատիս : Ապարեն կացցես մնացես անոր եւ անօգնական , եւ առ ի գկեանդ պաճարելոյ ստիպեսցիս յար ի հողագործութեան տարժանել իբրեւ զվարձկան որ գերի : Այս խորհուրդ ի ցաւս անհնարինս վարակէ զսիրտ իմ : » Ետ պատասխանի Վիրգիլնէ էւ ասէ . « Աստուած զմեզ յաշխատութիւն դատակնքեաց , եւ դու ինքն ուսուցեր ինձ վատակել զօրհանապազ եւ ցանգ զնա օրհնաբանել : Մինչեւ ցայսօր ոչ էրող նա զմեզ . եւ յայսմ հետէ եւս ոչ թողուցու զմեզ ի մեռաց . քանզի եւ հայրախնամ նորին տեսչութիւն առաւելապես իմն հսկէ ի վերայ հիբացելոց : Եւ զայս քո իսկ ասացեայ է ցիս , մայրիկ , բազում անգամ : Ոչ , քաւ լինեն ի բաց զնայ առ ի քեն : » Խանդաղատեայ Լարուր տիկնոջ ընդ բանսն ասէ . « Իմ ոչ այլ ինչ է կէտ նպատակի , բայց երանաւետ առնել զքեզ , եւ ուր ուրեմն ամուսնաւորել ընդ Պօղայ , որ ոչ է քո հարազատ : Յուշ լիցի քեզ արդ զի ի քո մեռս է բաղդ նորա : »

Օրիորդ որ տարփաւոր՝ զանխոյ յամենեցուն զիւրն կարիս համարի, Եւ զսրտին իւրոյ զքօղ զաջօքն իւրովք ածէ. այլ յորժամ ձեռն մտերիմ առեալ զպատրուակն զայն ի վեր պարզիցէ, յայնժամ տարփանաց նորին բարուն երաշխեալք իբրեւ ընդ խրամատս ամբարտակի վագեալ սուրան ի դուրս, Եւ զքօղածիզ զգուշութիւնս նորին Եւ զգաղտնածածուկն հնարիմացութիւնս փոխանակեն քաղցրախօսիկ գեղմունք սրտի հանդերձ աներկմիտ վստահութեամբ : Գորովեալ Վիրգիլեալ ընդ այն նոր հաւաստիս խանդաղատանաց մօր իւրոյ, մանրապատում արար նմա զճգունսն որոց Աստուած միայն էր հանդիսատես. Եւ ակն յայտնի տեսանեմ, ասէ, զհայրախնամ տեսչութեանն օժանդակութիւն ի ձեռն մօրդ իմոյ սիրելւոյ ինձ պարգեւեալ, որ հաճ Եւ հաւան գտանի ընդ իմս յօժարութիւն սրտի, Եւ առաջնորդէ ինձ քոյովդ խրատութիւն Ի բարին. Եւ արդ ի բեզ այսուհետեւ յեց կամ, ասէ, իբրեւ յամուր հաստատութեան, Եւ ամենայն ինչ յորդրագոյնս առնէ զիս կալ մնալ առ բեզ անմեկին՝ աներկիւղ յառաջիկայիցս Եւ ի հանդերձելոցն անվեհեր :

Տեսեալ տիկնոջն զի բանքն իւր մտերմաբար սասցեալք զհակառակն ակնկալեաց իւրոց ներգործեցին ի Վիրգիլե, ասէ ցնա. « Որդեակ իմ, քաւ յինէն բուռն բեզ առնել. ըստ անձինդ դիւրի մտախոհ լեր, բայց տեսչիր զի մի Պօղ զտարփանսդ զիտասցէ : Քանզի յորժամ ոգիք օրիորդի կապեացին ընդ ումեր, ոչ Եւս ինչ մնալ սիրելւոյն առ ի նմանէ հայցելի : »

Ընդ երեկս առուրն մինչդեռ մենացեալ կայր նա ընդ Վիրգիլեալ, Եկն Էմուտ առ նոսա այր ոմն անձնեալ զգեցեալ պատմունճան կապուտակ : Եւ էր երեցն քարոզիչ կղզւոյն Եւ հայր խոստովանութեան Լաթուրի տիկնոջ Եւ Վիրգիլեալ, Եւ գայր ի կուսակալին հրամանէ. Եւ մտեալ ի ներքս ասէ ցնոսա. « Որդեակք իմ, գոհութիւն Տեսուն, զի ահա փարթամացայք դուք : Յայսմ հետէ կամակատարք Եզիջիք ձերոցդ բարեսեր սրտից, Եւ ուրախ արասջիք զաղբատան : Ծանեալ զամենայն զոր ինչ սասց ձեզ Պ. Լա-Պուրտոնէ, Եւ զոր ինչ դուքն Էտուր պատասխանի : Դու, մայրիկ, հարկ է զի առ հիւանդագին կենացդ աստէն մնայցես. բայց բեզ չիք պատճառք, ազնիւ օրիորդ .

հնագանդէլ պարտ է վերնախնամն տեսչութեան, եւ ծնողացն մերոց ծերունեաց, եւս եւ յորժամ անիրաւ ինչ տայցեն հրաման : Նուէր ողջակիցի է գործդ . բայց հրաման Տեառն է : Նա ինքն գանձն իւր բոլորանուէր էդ ի վերայ մեր . պարտ է մեզ է ըստ նորա օրինակին դնել գանձինս մեր յօճան բարեաց ազգա-



տոհմին մերոյ : Քո ի Պաղդիա ուղեւորութիւնդ բարեբաստիկ էղիցի : Եւ արդեօք չկամիցիս երբայ անոր, սիրեցեալդ իմ որդեակ : »

Վիրգինե գակն ի խոնարհ արկեալ՝ էտ նմա դողդոջագին պա-

տասխանի. « Երե Տեառն հրաման իցե, ջլինիմ դիմադարձ :
Կամք Տեառն եղիցին օրհնեալ. » Եւ զգերարտօսըն հոսեր յա-
ջաց :

Եւ ելեալ գնաց Երեցն ազդել կուսակալին զառաքելութեան
իւրոյ գլաշողութիւն : Իսկ տիկինն Լարուր յղեալ առ իս զՌո-



մինիկոս աղաչեր Երբայ առ նա, զի ցանկայր խորհուրդ յինէն
հարցանել վասն Վիրգինեայ ջուռոյն : Ինձ ոչ բնաւ ի դեպ բուե-
ցաւ ուղեւորութիւն նորին . բանզի իմս անյեղլի կարծիք այն էն
Երե որ կամիցի որ բարեբաստիկ վարել կեանս՝ զշահս օգտից
բնութեան պարտի նախամեծար բաղդին առնել, եւ չե արժան
արտաքոյ անձանց խնդրել զոր ի ներքս ի մեզ մարքիցիմք գտա-
նել . եւ զայս իմ խորհուրդ առ ամենայն ինչ տեսանեմ քաջա-
դեպ : Բայց բնաւ զինչ կարող էին առնել խորհուրդք իմ ցա-
ծուքն ընդդէմ հրապուրից մեծափարքամն ճոխութեան, եւ
կամ անկեղծիկն իմ պատճառաբանութիւնք ընդդէմ մտա-
հաճութեանց աշխարհի եւ հրամանի իշխանութեանն որ նուի-
րական իմն էր յաջս Լարուրի տիկնոջ : Սմին իրի եւ նորայն
ընդ իս խորհրդակցութիւն առ պատշաճից իմն էր եւեր, եւ

յետ գիտատփանահօրն ընդունելոյ զպատուեր՝ ոչ էս տա-
տամսեր. էս Մարգարիտ ինքնին՝ որ անտես առնելով զշա-
հս օգտիցն որոց ակնկալելի էր իւրում որդեկին յընչաւետել
Վիրգիլեայ, էս ոգւով ջափ հակառակ ընդդէմ կրրեայ էր
ջուռոյն, ոչ էս ինչ այնուհետեւ խօսեցաւ ի ներհակացն :
Իսկ Պօղ որ անգետն էր էլից խորհրդոցն, զարմանայր
էւեր ընդ ծածկախօս գրոյցս Լարուրի տիկնոջ ընդ դստերն
իւրում, էս ի բախճութիւն անհնարին համակեր էս ասեր
ի միտս իւր. « Դաւ իմն նիւթեն ինձ դորա, քանզի անձնապահ
լինին առ յինեն : »

Մինչ այս էս մինչ այն՝ հուշակ ի կողմոջս հարկաներ էրէ բա-
րեբաղդուրեան ինչ այցելութիւն լեայ է ի լեռնակողմանս
յայտոսիկ, էս վաճառականք ազգի ազգի կարասւոյ ձեպէին
ամենուստ այսր հասանել : Ընդ աղքատին յարկօր ճիւղիցս
այսոցիկ պարգեայ սփռեին զոսկեճամուկ դիպակս Հնդկաց,
զնրբաբել բեհեզս Կուստուրի, զվարշամակս Փայխարարի էս
Մասուլիփարնամայ, զշղարշս Տարայ, զհամակս շերտաւորս,
ասղնեգործս էս բափանցիկս իբրէս գլոյս. սնդոնս ի Սուրարե
սպիտակափառս, կտաւիս ամենագանս սակաւագիւտս,
սպիտականիշս էս կանաչասաղարբս : Բացին պարզեցին շքեղ
կերպասս ձենաց մետարսեղենս, զառնաւուխտս ծակոտկենս,
պաստառս դամասկացիս ձիւնափայլս, դայարագեղս էս
ակնախըտիղ կարմրերփեանս, սնդոնս վարդագոյնս, կազս
ձեռնայիրս, փեքինս քնքուշս նմանեայ ասուեաց, նանքինս
ձիւնարոյրս էս դեղնափայլս, էս էս սփածանելիս ի Մատա-
գասկարէ :

Հրաման էտ Լարուր տիկին դստերն իւրում գնել առնուլ զոր
ինչ միանգամ հաճոյ անձինն գտանիցէ. էս ինքն գնոցն էւեր
էս վաճառացն յաւուրեան միտ դներ, զի մի ի բանգարացն պա-
տրեացի : էս Վիրգիլնէ ընտրեայ կալաւ զոր ինչ հաճոյն համա-
րեցաւ մօրն, էս Մարգարտի էս որդւոյ նորին. « Սա, ասեր,
կահուց գայ ի դեպ, էս դա ի պետս Մարիամու էս Դոմինիկեայ : »
էս անա արծարն որ ի պարկին էր՝ սպառեայ ծախեցաւ մինչչէս
հայրայրեայ էր գանձինն պետս կարեւորս. վասն որոյ էս հարկ

էղէ. այլոց հանել նմա ի բաժին յընծայիցն զորս առ մէն մի ի նոցանէ տուեալ էր :

Յայն տեսիլ պարգեւաց բաղդին ցաւագին սրտիւ կայր է. հայեր Պօղ, զի նոքին իսկ գութեին նմա զմօտայութեան ջուր Վիրգինեայ. է. յետ առուրց ինչ էկն առ իս է. ասէ անհնարին



տրտմութեամբ. « Քոյրն իմ ի ճանապարհ էլանէ, է. կազմ իսկ էն ուղեւորութեանն հանդերձանք. արի էկ առ մեզ, աղաչեմ, է. գուն գործեա բոյովդ ճարտարութեամբ շրջել զմիտս մօր նորա է. զիմոյն զի մի արձակեսցեն զնա : » Ե. զիջայ ի բախանձանս Պօղայ, քեպէտ է. ճարտար գիտեի զի ինչ ոչ ազդեսցեն բանք իմ :

Վիրգինէ որ գեղատեսիլն էրէ. էր ինձ մինչ արկաներն զանձամբ զկապուտակն կտաս. Պենկայայ, է. վարչամակ կարմրերանգ զգլխովն բոյորէր, ջրնաղագեղ յոյժ բուեցաւ յայնժամ

գարդարեայ եւ պանուճեայ ըստ օրինի տիկնայց աշխարհիս : Քանզի զգեցեայ էր բեհեզ ճիւնարոյր ' աստառ. ի ներքոյ սնդուս ունելով վարդագոյն : Անձն նորին բեքերնբաց եւ բարձրադիտակ ' քաջ քաջ ընդ բաճկոնակաւն գայր էլաներ ի տեսիլ. եւ խարտիշագեղ վարսիցն գիսակք հիւսեայք ի հիւսակս կրկին ' զկուսական գլուխն սքանչելապէս պճնեին : Աջք նորա կապուտակագեղք ' լի էին բախճութեամբ, եւ սիրտն ' ի խոռվայոյզ կրիցն տագնապէ այլեկոծեայ ' երանգ կենդանատիպ ի դէմսն



հարկաներ, եւ գեղձումն ի բարբառ. ճայնին յաւելեայ ' տխրագգած զխօսան յարդարեր : Պանուճանքն իւր անգամ վայելչայարդարք գոր յակամայս իմն արկեայ էր գանձամբ, եւս բան գեւս աղեկեզ գործէին զլքումն վիատութեան նորին. եւ ոչ որ էր որ տեսեայ զնա եւ կամ լուեայ զբարբառ. նորին եւ ջմորմորք ի սրտին : Նմին իրի եւ Պօղ յաւելոյր ի սրտմութիւն : Սրտաբեկեայ Մարգարտի ընդ ցաւս որդեկին, ասէ ցնա առանձինն. « Զի է բեզ, որդեակ, զաղփաղփուն յուսովք զանձն քո պարարել, եւ դառնագոյն եւս այնու գրո չբաւորութիւնդ գործել : Ժամ է արդ ի վեր բեզ հանելոյ զիմ եւ գրո կենաց զգաղտ-

նիս : Օրիորդն Լարուր արեանառու է ի մօրն կուսե ընչաւետի
ուրումն էւ ազնուագարմ ազգակցի . իսկ դու , որդի ես առն
շինականի , եւ որ չար եւս է՝ աղջկորդի ես դու գաւակ : »

Ի յուր աղջկորդին ձայնի յապուշ կրքեցաւ Պօղ , քանզի եւ եր-
բէք ոչ էր նորա յուեայ գայն . եհարց ցմայրն քե զինչ այն իցե , եւ
նա ասե ցնա . « Ոչ օրինաւորի հօր ես դու որդի . այլ մինչդեռ
տակաւին օրիորդն էի , տկարացայ եւ յանցեայ տարփանօր , եւ
մայրացայ քեզ : Յանցուածովս իմով այսու գրկեցար դու յագ-



գատահմեղ հայրենի , եւ ստրջանօրս ի մայրենւոյդ : Եղնակ քեզ ,
չիք քո ի կենցաղումս այլ ազգակից բայց յինէն . » եւ յարտա-
սուս հարաւ : Յայնժամ փարեցաւ Պօղ զնովաւ եւ ասե . « Ո՛վ
մայրիկ . ասացեր քե չիք իմ յաշխարհի այլ ազգակից բայց ի քեն .
ասպա ուրեմն առաւել եւս սիրեցից ես զքեզ : Բայց նով գաղտնա-
ծածուկ խորհրդոյն՝ զոր հաներ դու ինձ ի վեր : Ահա արդ խելա-
մուտ յինիմ էրե զի ե զի յերկամսեայ առուրց հետե ուծանայ
իմն առ յինէն օրիորդն Լարուր , եւ զարդիս հանդերձի չուել
զնայ աստի : Ո՛հ նհ , արհամարհեայ անգոսնե նա զիս ան-
շուշտ : »

Եհաս ընրբեացն ժամ եւ բազմեցան ի սեղան . այլ բազմակա-

նացն առ հասարակ յուզեալ գոյով ի պեսպես կրից, ամենայն որ սակաւակեր գտաւ եւ սակաւախօս : Վիրգիներ յառաջ իսկ քան զամենեսին էլ ի սեղանոյ անտի, եւ անցեալ նստաւ ի տեղ-ւոջ յորում կամքս : Անդէն զհետ նորա յարեաւ եւ Պօղ, եւ եկեալ նստաւ առ նմա. եւ առ սակաւ մի ժամանակ անխօս եւ անբարբառ կացին մնացին երկոքեան : Եւ եր գիշերն մի ի գեղեցիկ գիշերաց անտի արեւադարձիցն, գորոց եւ ճարտարագոյնքն ի նկարչաց չգօրեն հանել ճշդիւ ի նկար զգեղ սքանչելի : Կարակնածեւ նշողեր յուսին ի քօղ ամպոց, գորս նշույլքն նորին տակաւ փարատեալ ցնդէին ի բաց : Ծառայեր պարգէր յուսնակն



յանգգայս ընդ լերինս կղզեկին եւ ընդ պարեխս նոցին որ արժարափայլ իմն կանաչութեամբ շողէին : Հողմք առ հասարակ յուեալ կային անշշունչ. եւ ի խորս մայրեացն, ի խոխոմածիգս հովտաց, ի բարձունս ապառաժից. լսելի լինէին ճջիւնք եւ ճռռողիւնք քաղցրանուագ բռչնեկաց որ զմիմեանս զգուէին յանցնիւր բունկունս գուարբացեալք ի պայծառութիւն գիշերոյն, եւ յօղոցն հանդարտութիւն : Ամենայն ինչ ձայն աժեր, մինչեւ ցճափուն եւ ծղրիտ որ ընդ դայարեօք պատսպարին : Շողային ընդ երեսս երկնից աստեղք, եւ փողփողենէջք ի ծովու ցոյա-նային որ զմկանամբքն գեղածփեր գղողոզոտն նոցին տխարս :

Պշուցեալ հայեր Վիրգիներ ի լայնատարրն եւ ի նսեմաստուեր ծիրս երկնից, որ ձկնորսացն կարմրափայլ հրատիւք եւեր յա-փանց անտի կղզեկին քեցեալ անշատէին : Եւ նշմարեաց ի մուսս

հանգրուանին յոյս ճրագի էս ստուեր ընդ նմին . այն իսկ էր յապտեր նառուն որով հանդերձեր նա չու առնել յԵրոպա , էս կազմ էս պատրաստ ի պարգել գառագաստան ' խարխալս արկեայ կայր մնայր հողմոցն շնչելոյ : Յայն տեսիլ խոռվեցաւ անձն նորա , էս ի բաց գգլուխն դարձոյց զի մի տեսցէ Պօղ գարտասուս իւր :

Տիկինն Լարուր էս Մարգարիտ էս էս նստեայ կայաք ընդ աղամարգենեօրդ ի բացէ . էս ի յուրեան անդ զիշերոյն հարան յականջս իմ անաղօտ բարբառով գրոյցք երկոցունցն որ չանկան էրբէք յուշոյ մտաց իմոց :



Ասէ ցնա Պօղ . « Ազնիւ օրիորդ , ասի բան քե յետ էրից անուրց ուղւոյ եղիցիս . էս չերկնչիցիս դիմագրաւ լինել վտանգաց ծովուն... ծովուն յորմէ այնքան զահի հարեայ զահանդիս : » Ետ պատասխանի Վիրգիլնէ . « Հնազանդել պարտ է ինձ արեւնակցացն իմոց էս այնպէս կատարել զպարտս : » Պօղ ասէ .

« Մեկնիս գնաս դու ի մենջ վասն ազգականի ուրումն գորքո տեսեալ բնա ջիբ : — Եղևկ զիս, ասե Վիրգինե. գամենայն աւուրս կենաց իմոց աստեն ցանկայի կեալ. այլ ոչ կամեցաւ ընդ այն մայր իմ : Խոստովանութեան խնոյ հայր ասաց ցիս էրե Տեառն կամբ են գնալ ինձ ի բաց, եւ թէ փորձութիւն են կեանք մարդոյ ի վերայ էրկրի. . . Ո՛հ, եւ բանի դառնակսկի՞ծ փորձութիւն : »

Եւ յաւելեալ Պօղայ ի բանսն ասե. « Եւ զիւրդ. պատճառանք այնքան ի ջու գրեզ յորդորեցին, եւ ջգտան պատճառ. եւ ոչ մի առ ի խափանել զջուդ : Ո՛հ, են են եւ այլ պատճառք գորս դու ջհանես ինձ ի վեր : Յոյժ գօրաւոր են ձոխութեանն հրապոյրք : Հուսալ ընդ հուսալ ի նորում յայնմ աշխարհի գտցես գորքում ընծայեսցես գեղբայրն անուն՝ գոր ոչ եւս տաս դու ինձ. եւ ընտրեալ առցես գեղբայրն գայն ի միջոյ արանց արժանաւորաց բոյում անձինդ ազնուութեամբ գարմի եւ ընչաւետութեամբ՝ յորոց յոկ եմ եւ եւ բափուր : Սակայն ուր արդէօք զբարեբաստութիւն էրթեալ գտանիցես : Զինչ էրկիր իցե յոր էլանիցեսն եւ յարեսցիս ի նա բան յորում դուդ ծնար : Ո՛ւր գտանիցես ժողով մարդկան սիրելի բան գոր սիրեն գրեզ խանդակար : Զիւրդ կեցցես հեռի ի մօրդ գրգանաց յոր այնչափ սովորեալդ ես : Եւ զինչ անցք ընդ նա ինքն իսկ անցանիցեն որ արդեն անցեալ է գաւուրքք, յորժամ ոչ եւս տեսանիցե գրեզ առ ընթեր ի սեղանի, ի տան եւ ի գբօսանս յորս ի թեզն յենոյր նա : Զինչ եւ մայրն իմ արասցե որ ոչ ինչ ընդհատ ի նմանեն սիրե գրեզ կարողին : Եւ ես զինչ ասացից առ նոսա յորժամ յողբս գնոսա տեսից վասն բոյումդ էրթի : Ո՛ անկարեկիր սիրտ. գանձնես ինչ ոչ ասեմ. բայց զի լինիցի եւ ինձ յորժամ ոչ եւս տեսից գրեզ ընդ մեզ այգուն այգուն, եւ մինչ զիշեր ի վերայ հասեալ եւ զմեզ ժողովիցե ի մի. յորժամ գամոյս արմաւենեացն նկատեցից գտրնկեալս ի մերում ծննդեան, որ վկայք իսկ են մերումս բազմամեայ բարեկամութեան : Ո՛հ, եւ բանգի նսեն նորոյ բաղդի հրապուրեալ յորդորե գրեզ էլանել ի խնդիր այլոց աշխարհաց արտաբոյ այսր յորում ծնարդ, եւ այլոց ինչ բարեաց եւ ընչից բան գոր ձեռք իմ պաշտելին, բոյլ արա ինձ գեր նաւել ընդ թեզ

ի միասին : Ես քաջալերեցից զքեզ յորժամ մրրիկքն յուզիցին
ի նառն որ ահաբեկ առնեն զքեզ ի ցամաքի : Զգրուխ քո ի գիրկս
իմ հանգուցից, զսիրտ քոյին առ իմովս ջեռուցից. Եւ ի Գաղ-
ղիա ուր մեկնիս գնաս դու ի գիւտ ճոխութեան Եւ աւագութեան՝
սպաս քեզ հարից ստրկապես : Քոյովդ Եւեթ բարեբաստութեամբ
բարեբաստիկ էյով, յապարանսն յայնոսիկ յորս տեսից զքեզ
սպասաւորեալ փառօք՝ շատ իսկ տակաւին ընչաւետ գտայց
Եւ քաջատոհմիկ առ ի մատուցանելոյ քեզ զմեծն քան զամենայն
նուերս զոհի, զմեռանելն առ ոտս քո : »

Եւ հեկեկանք իւր հեղձամղձուկ գելին զբարբառ նորա, Եւ մեր
յուար անդէն զճայն Վիրգիւնեայ որ ասէր ցնա ընդհատ բանիւք
հեծեծագին. « Վասն քո է գնայս իմ... վասն քո որ զօր հանա-
պագ քամակաբեկ վաստակես ի դարմանել ազգատոհմս երկուս
ապիկարս : Յայն սակս Եւեթ կալայ Ես յանձին զփարբամանա-
յոյն պատեն, որպէս զի կարող եղեց բիրապատիկ առաւելու-
թեամբ փոխարինել քեզ զբարիսն զորս դու մեզ ընձեռեցեր :
Ո՞ր այն բարեբաստութիւն իցէ որ քումդ բարեկամութեան գտա-
նիցի գուգական : Եւ զինչ զձննդենեղ ասիցես : Ո՛հ, Երէ եր իսկ
հնար խառնել ինձ զոք յիմս եղբայրութիւն, միքէ ընտրեալ
առնուի արդեօք զայլ որ քան զքեզ : Ո՛ Պօղոս, Պօղոս. զար-
մանալի եղէ ինձ սեր քո քան զսեր եղբօր հարագատի : Քանի
դառն եր ինձ ի բացէ առնել զքեզ յանձնէ իմմէ : Կամեի զի դու
իներնին օգնէիր ինձ քեցել զիս յանձնես մինչէ ի ժամանակն
յորում օրհնեսցեն երկինք զզօղ միութեան մերոյ : Բայց արդ
ահա կամ մնամ, մեկնիմ, կեամ, մեռանիմ. արա ընդ իս որ
ինչ Եւ հաճոյ իցէ յաջս քո : Եղնկ ինձ, զիսրդ քափուր յառա-
քինութենէ գտանիմ Ես օրիորդ. քանզի տեսեալ բաւեցի հակա-
ռակել զգոռանացդ, Եւ ահա չգօրեմ տանել ցառոցդ քոց : »

Յայն քան փարեցաւ զնովա Պօղ, Եւ ընդգրկեալ զնա պնդա-
պես՝ գոչեաց ահեղ բարբառով. « Գնամ Ես ընդ նմա. չիք որ
անջատել զիս ի նմանէ կարասցէ : » Յայնժամ դիմեցաք մեր առ
հասարակ առ նա, Եւ ասէ ցնա Լարուր տիկին. « Որդեակ իմ,
Երէ դու իմենչ ի բաց գնայցես, Եւ զի եղիցի մեզ : »

Եւ Պօղայ զղողանի հարեալ կրկնեաց զբանսն. « Որդեակ իմ...

որդեակ իմ... Դու, մայրիկ, ասե, դու որ գեղբայր քեցես
ի քեռե : Երկոքեանս մեք զկարն քոյին դիեցար . երկոքին
ի գիրկս քո սնեայ՝ առ ի քեն ուսար զմիմեանս սիրել, եւ բի-
րիցս իրերաց զնոյն ասացար . եւ արդ դու զսա անջատեայ
զատանես յինեն . յԵրուսա զսա առարես, յերկիր խժական որ
զլացա քեզ ամուր ինչ ապաստանի, եւ առ անագորոյն ազգա-
կիցս որ ընկեցիկ զքեզ արարին : Եւ մի ասիցես ցիս եքե չկայ
ինչ քո եւ դորա, իբր զի եւ ոչ քոյր քո է դա : Դա ինքն ամենայն
ինչ է վասն իմ, եւ ճոխութիւն, եւ ազգ, եւ քաջատոհմութիւն
եւ ամենայն բարի . եւ բայց ի նմանե այլ ինչ ոչ ունիմ ի բա-
րեաց : Յարկ զնոյն կայար մեք, եւ որրան զնոյն . նոյն յիցի մեզ
եւ դամբան : Եքե դա զնացե, հարկ է ինձ զհետ դորա զնայ :
Այլ չբողոցու կուսակայն : Չբողոցո՞ւ եւ ամայ զանձն իմ
ի ծով : Ի յող պնդեցայց զկնի նորա : Ոչ է մարք ծովու առաւել
քան զցամար յինել ինձ մահառիք : Եւ զի չկարեմ կեայ աստեւ
առ դովա, բող մեռայց յանդիման դորա եւ ի ձենջ ի բացեայ :
Անողճրմ մայր, անագորոյն կին . համատարածն այն յորում
զդա վտանգես, իցէ քե մի եւս դարձուցե զդա առ քեզ . իցիւ
քե կոհակք նորին բարձեայ բերցեն քեզ զդիակն իմ, եւ բաւայեայ
զսա ընդ դորա մարմնոյն ընդ խիճս ծովափանցս՝ մորմոր յաւեր-
ժական մորմորեցուցե զքեզ ընդ կորուստ որդեկացդ երկո-
ցուն : »

Եւ մինչդեռ տակաւին խօսերն, գիրկս արկի եւ զնովա,
բանգի առ ցաւոցն յուսահատութեան ցնորեր ի մտաց : Հրա-
ցայտք էին աչքն, եւ ընդ դեմսն բոցաշունչս ոլոռն ոլոռն հոսէին
բրտունք . ծունկքն բաբախէին, եւ ի յանջսն տապագինս քինդս
արձակեր արագ արագ սիրտ նորա :

Ահաբեկեայ եւ Վիրգիլնե ասե ցնա . « Երդուեայ ի մանկու-
քեանն մերոյ զբօսանս, ո՞ն բարեկամ, երդուեայ յադեսս քո եւ
յիմս, եւ յամենայն ինչ որ անլոյծ գօղիւ գօրիցե պնդել զհեքքս
զերկոսին, եքե աստեւն մնացից՝ վասն քո կեցից, եւ եքե զնացից՝
դարձեայ առ քեզ եկից : Ադէ դուք ամենեքին յերուք ինձ վկայք,
դուք որ կարնաջամբ զիմս տղայութիւն սնուցեք, յորոց ի ձեռս
է կենդանութիւն իմ, եւ որ տեսանեքդ զարտասուս : Երդուեայ

յերկինս որ լսէ զբարբառ իմ, և ի ծովդ ընդ որ ջուէցից, և յօղս զոր ծծեմ և զոր չիք իմ երբէք ստախօսութեամբ աղտեղեալ : »

Զոր օրինակ յարեգականն տապոյ հալեալ քաւայի շառաշիղ սառին ի բարձանցն Ապենեանց, այնպէս ի մայն բարբառոյ սիրունայն զիջաւ գայրոյք սրտմտութեան պատանւոյն : Խրոխտապանձն նորա գութի խոնարհեալ կորացաւ, և ուղիք արտասուաց յաջացն վիժեին. և մայրն խառնեալ զգերարտօսրն



յարտասուսս որդեկին, զիրկ ընդ խառն կայր ընդ նմա և ոչ զօրէր բարբառել : Իսկ Լարուր տիկին այլ յայլմէ եղեալ ասեցիս. « Ոչ ևս ունիմ ժոյժ, սիրտ իմ գելու յիս : Չարաբախտն այն ուղեւորութիւն մի առցե կատարումն : Գրացիդ իմ մտերիմ, հնապա ի բաց տար զորդեակն իմ ընդ քեզ. այս աւուրք ուք են յորմէ հետե ոչ որ կափոյց աստ գաջս իւր ի բուն : »

Եւ ասեմ ևս ցՊօղ. « Քոյրն քո աստէն կացցե, ն բարեկամ վաղիս խօսեցոսք զայնմանէ առ կոնսակայն. բող ընտանիքդ առցեն զհանգիստ, և դու եկ այսօր երեկօրէլ ի տան իմում : Տարածամ է, և գիշերս հասարակեալ, և խաջն հարաւոյ կշիռ կայ ընդ ծիրս երկնից : »

Եւ եկն նա ընդ իս յուն և անբարբառ, և զցայգն ողջոյն

ի յոյզս ցնորից անցուցեալ՝ յարեաւ ընդ այգն՝ Եւ դարձաւ
ի տուն իւր :

Այլ զի Եւս պետք իցեն ի կարգ արկեալ պատմել թեզ զվեպս
անցիցն այնոցիկ : Մարդկայնոյս կենցաղոյ մի Եւեր կողմն
հաճոյ է ի գիտութիւն : Զօրեն աշխարհագունտ կարկառոյ
գորով պատ առեալ շրջիմք՝ արագարագն մեր քաւայումն ոջ
աւելի ինչ ունի քան զմիոյ առուր տեւականութիւն, Եւ չէ մարք
միումն ի մասանց առուրս այսորիկ տեսանել զյոյս առանց միւ-
սոյն խաւարամած լինելոյ :

Եւ ասեմ ցնա . « Պաղատիմ ի բեն, հայրիկ, բովանդակեա
գրել պատմութեանդ, որում այնքան սրտառուջ բանիւ սկիզբն
արարեր : Բարեբաստութեան նկարագիրք հեշտականք գտանին
մեզ, իսկ չարաբաստն դեպք հրահանգիչք են : Զինչ անցք ընդ
հիբացեալն անցին Պօղ, ադէ ասա : »



Դարձ ի տուն արարեալ Պօղայ՝ յառաջ քան զամենայն որ
Ետես զհնդիկն Մարիամ որ ի քարածայո ինչ վերելակեալ՝
ի գնին կայր խորանդունդ ծովուն : Եւ ճայն արկեալ բացուստ
ի բաց հարցաներ ցնա . « Ո՞ր իցե Վիրգիլն : » Դարձոյց Մա-
րիամ զգլուխ իւր առ տերն դեռահասակ Եւ յողբս յուժաւ :
Խելացնորեալ իմն Պօղայ դարձաւ յետս ընդ կրունկն, Եւ
ի նաւահանգիստն դիմեաց : Անդ գիտաց զի վաղ քաջ ընդ
առաւօտն նաւամուտ լեալ Վիրգիլեալ, Եւ փոյր ընդ փոյր
պարզեալ նաւուն զառագաստսն՝ Եւ սրացեալ ծածկեալ էր
յաջաց : Դարձաւ անդրեն ի բնակարանն, Եւ անց զնաց ընդ
այն առանց ինչ ումէք ասելոյ :

Շարք ապառաժիցդ այդոցիկ բարձրաանդակաց բեպետ եւ ուղղաբերձք իմն երեւին ի քիկանց մերոց ամբարձեայք, սակայն լեռնադաշտակքն կանաչագարդք աստիճանեայ իմն վերելք են սանդղամեք, ընդ որս է հասանել ընդ շաւիղս դժուարակոխս ի ստորոտ ծամածուռ եւ անմատոյցն ժայռից կոնածեից որ անուանեայ կոչին Բոյր : Առ ոտս պարէխին այնորիկ



տարածեայ ձգի սարաւանդակ ծառախիտ, այլ այնպես սեպ եւ բարձրաբերձ, զի զօղակառոյց իմն անտառի բերե զնմանութիւն, եւ շուրջ պատեայ կայ ի սոսկայի վախից խորածորոց : Յամպոց անտի զկատարաւ Բուրին ստեպ ստեպ պարուրին աղբերանան յարածամ առուակք բազմաքիւք, որք եւ յայնպիսի վիճս անդնդախորս հովտին բաւային ի քիկանց կուսե լերինդ,

գի անկման նոցին թնդմունք ջլինին անգամ ի բարձրաանդակ տեղուոջ աստ լսելի : Յայնմ վայրե նշմարեալ տեսանի մեծ կես մասն կղզուոյս հանդերձ դարաանդիւքն եւ կոհակօք, յորոց սակի են Փիքր-Պոք եւ Նոաստինք եւ անտառախիտ ձորամէջք նոցին . ապա եւ ծովն լայնածառայ, եւ կղզին Պուրպունի՝ որ քառասուն խրասախօք հեռի է ի տեղուոջն յարեւմտից կուսէ : Ի սարաանդէ անտի գակն պշուցեալ նկատեաց Պօղ զնան որ առեալ տաներ զՎիրգինէ . եւ եր տասներումքք եւ աւելի փարսախօք հեռի ի տեղուոջն իբրու նիշ սեւաթոյր ի համատարածին երեւեալ : Զմեծ կես առուրն անդէն եկաց ակնկառոյց . վաղ իսկ անհետացեալ եր նան յաջաց, եւ ինքն համարէր տակաին եւս տեսանել . եւ իբրեւ հետախաղաղ ծածկեցաւ ի սղոխս գոյոջեաց ոյորտից ծովուն, անց նստաւ յամայի վայրին՝ հողմակոծեալ ի հողմոց անտի որ երերածուփ տատանէն ցանգ անդանօր զարմաւենեացն եւ զտատամաքեաց գագաթունս : Աղօտաճայն շրշիւն նոցին եւ մունջիւն զհեռաւոր հնչմանց երգեհոնի բերեն զնմանութիւն, եւ ի խոր բախժութիւն համակեն գայր :

Անդ գտի եւս զՊօղ զի կայր զգլուխն յեց ի ժայուն ունելոյ, եւ զաջսն յերկիր յառեալ : Յելից անտի արեւուն ի խնդիր հետոց նորա շրջելի . եւ յոյժ աշխատ եղէ ի հաւան զնա ածել զի իջցէ եւ տեսցէ զընտանիսն իւր : Եւ առեալ տարայ զնա ի բնակարան անդր . ուր իբրեւ ետես զլաթուր տիկին, անդէն դառնահառաջ զանգատանօք տրտունջ կայաւ զնմանէ զի խաբեացն զնա : Ասէ ցմեզ Լաթուր . « Քանզի շնչէր հողմն աջողակ զերրորդ ժամաւ առաւօտուն . եւ զի կազմ էր նան ի ջու, եհաս առ մեզ կուսակայն հանդերձ սպայակոյտ բազմութեամբ, եւ քահանայն ընդ նոսա, առնույ տանել ի նաւ զՎիրգինէ դեսպակաւ . եւ ոչ ինչ երեսս արարեալ նոցա աղերսիցն իմոց եւ արտասուաց եւ ողբոց Մարգարտի՝ աղաղակէին ամենեքին առ հասարակ թէ « Յօգուտ ձեր իսկ ամենեցունդ է զոր առնեմքս . » եւ առեալ տարան զղատրիկն իմ որ նուաղեալ իմն եւ կիսահագագ էր : Եւ ասէ Պօղ . « Եթէ գոնեալ իմ տուեալ էր նմա զողջոյն հրածեղտիս, արդ անխռով մնայի : Ասէի արդեօք ցնա . « Ո՛վ Վիր-

գինե, երե ի ժամանակի անդ յորում կեցար ի միասին՝ էլ ինչ
բան ի բերանոյս որ ծանր բեզ բուեցաւ, մինչչեւ բողեայ զիս
ի սպառ,՝ սաս զի ներես դու ինձ : Ասեի արդեօք ցնա. եւ զի ոչ
ես ե ինձ տեսանել զբեզ, ողջամբ երթիջիր, սիրեցեալդ իմ Վիր-
գինե, երթիջիր ողջամբ : Կեաց ի բացեայ առ յինեն, այլ ի դիւրի
եւ ի բարեբաստութեան : » Եւ իբրեւ ետես զի մայրն իւր եւ
տիկինն Լարուր յարտասուս հարեայ լային, ասե ցնա. « Խըն-
դրեցեք արդ զայլ որ բան զիս որ զարտասուս ձեր սրբեսցե : »



Եւ ապա ի բաց զնաց ի նոցանե հեծեծագին հառաջանօք, եւ
բափ առեայ շրջեր ի բնակարանի անդ : Յաժեայ դեգերեր ընդ
ամենայն վայրսն որ սիրելիք բան զայսն էին Վիրգինեայ :
Ասեր առ այծիսն եւ առ ուլիկս Վիրգինեայ որ զկնի նորա
զնային պապաջելով. « Զի խնորեք յինեն. ոչ ես այլ տեսջիք
ընդ իս զնա որ յիւրում ափինն ջամբեր ձեզ կերակուր : » Զոգաւ
ի Հանգիստն Վիրգինեայ. եւ տեսեայ զբռնունսն որ ոյորսս
առեայ սաւառնեին զնովաւ, գոջեաց եւ ասե. « Ա՛յ հեք հա-
ւիկք, ոչ ես ընրասջիք դուք ընդ առաջ ձերումն զբասեր

կերակրողի : » Տեսեալ էս գՀառատարիմն որ աստ էս անդ հոտոտեալ ընթանայր առաջի իւր հետախոյզ, յոգոց էհան էս ասեցնա. « Ո՛հ եղուկ, ոչ գացես դու գնա յաւիտեան : » Ես ուր ուրեմն երբեալ բազմեցաւ յապառաժին ուր խօսեցեալ էր ընդ նմա յառաջնումն երեկոյի. էս ի տեսիլ ծովուն յորում տեսեալ էր գնետախաղաղ ծածկել նառուն որ տաներն գնա՛ էլաց հարուստ ինչ ժամանակ :

Սակայն մեր հետամուտ նմին լինեար անդույ գի մի գուցե չարադէտ ինչ արկած պատահեցէ նմա սո. ցառոցն սաստկու-



րեան : Մայրն էս Լարուր տիկին աղերսէին գնա սիրայորդոր բանիւք՝ մի յաւելույ ցառս ի ցառս իւրեանց անյուսուքեամբն իւրով. մինչէս ապա հնարեցաւ Լարուր տիկին հանդարտել գնա, բազում գորովայիբ յորջորջանօք՝ գրգելով գնա որ կարողքն էին արժարժանել ի նմա գոյս ակնկալութեան բարեաց : Որդեակ ձայներ գնա, էս որդեակ սիրուն, էս փեսայ, էս խօսնայր դատերն իւրոյ : Յորդորագոյնս արար գնա մտանել ի տուն էս խուն ինչ առնույ կերակուր : Բազմեցաւ նա ընդ մեզ ի սեղան մերձ ի տեղին ուրանօր տղայակիցն իւր նատեր երբեմն ի նաշել. էս որպէս քե տակաւին էսս անդէն ի տեղւոջն կայր՝ բարբառեր

առ. նա, եւ մատուցաներ նմին խորտիկս եւ համադամս ի ցանկայեաց նորա . բայց իբրեւ անձին զգաստ լեալ ուշաբերէր՝ զլալ հարկաներ : Յառուրսն որ զկնի՝ ժողովեալ հաւարեաց զամենայն ինչ որ առանձինն պիտոյից Վիրգիլեայ արբանեկեայ էին, մինչեւ զվերջին փունջս ծաղկանց զոր յանձին տարեալ էր, եւ զսկահակն ի բորոյե որով ջուր ըմպէր, եւ զնշխարսն զայնոսիկ զիւրոյ սիրունուն պատուականագոյն քան զամենայն զանձս աշխարհի համարելով՝ համբուրէր զնոսին եւ ի ծոցին ամփոփէր : Ոչ այնպէս անուշաբոյր է յամբար որպէս ինչ յոր սիրելուն հպեալ իցեն ձեռք : Ուր ուրեմն տեսեալ զի իւրն աղէկիզմունք յաւելուին զմորմոք սրտի մօրն եւ Լաթուրի տիկնոջ, եւ զի զտանն պէտս կարեւորս հարկ էր հայրայրել



մշտաջան վաստակօք, ձեռն ի գործ արկ ի դարման պարտիզին՝ զօրավիզն զԴոմինիկոս ունելով :

Յետ ոչ բազում ինչ աւուրց պատանին այն որ զօրէն ամերիկածին Եւրոպացւոց անփոյր էր ամենեւին ի գիտել թէ զինչ ինչ ի կենցաղունս անցանիցեն պատահարք, աղաչեաց զիս ուսուցանել իւր զընթերցումն եւ զգիր, զի կարող լինիցի թղթել առ Վիրգիլն : Ապա իղձ եղեւ եւ աշխարհագրութեան հմտանալ՝ զի գիտասցէ թէ զինչ էրկիր է յոր ջուեացն Վիրգիլն, եւ պատմական իրաց տեղեկանալ՝ զի ծանիցէ զկենցաղ մարդկանն յորս էրբայր նա վարել զկեանս : Այսպէս եւ մշակութեանն արուեստի լեալ էր քաջահմուտ, եւ զառապար զվայրսն ուսեալ էր յարդ եւ ի զարդ ածել՝ սիրոյն եւեթ իւրախութասանօք : Եւ չիք էրկբայել

զի յոյովագոյնքն ի գիտութեանց եւ յարուեստից արգասիք են բերկրանաց՝ որոց ակնկալութիւն խոստանայ հրաբորբորն այն անանդորր տարփանք, եւ առ ի չգոյէ նոցին ծնանի իմաստասիրութիւն որ խրատէ մխիթարել ի վերայ ամենայնի : Այսպէս անա բնութիւն զօղ պնդութեան էիցս համայնից զսէր կացուցեալ, արար զնա մերոցս ընկերահաշտ միաբանութեանց կենդանութիւն, եւ հմտութեանցն եւս մերոց եւ զուարճութեանց հանդերձող :

Ոչ յոյժ ախորժական բուեցաւ Պօղայ աշխարհագրութեանն ուսումն, որ փոխանակ զանցնիւր աշխարհաց կազմուածոյն տալոյ զնկարագիր, զքաղաքական նոցին տրոհմունս եւէք առնէ առաջի : Ինքն իսկ պատմութիւնն, մանաւանդ արդեացս ժամանակաց դեպք, ոչ ինչ ցանկալի գտան նմա. քանզի ոչ այլ ինչ տեսանէր ի նոսա, բայց ադէտս հասարակաց անհատս՝ զորոց ոչ առնոյր իմիտ զպատճառսն, պատերազմունս խօյականս եւ անպատճառս, դաւաճանութիւնս գաղտնորոգայքս, ազինս նկնախոհս եւ անագործար անողորմ : Քան զպատմութեան վերժանութիւն նախամեծար առնէր զվիպասանութեանցն, յորս առաւելագոյն իմն գտանէր բանս զգորովական իմաստից եւ զհրահանգաց սրտի, մերք եւ պայմանս կենցաղոյ՝ իւրումն նմանավիշտս : Սմին իրի եւ քան զամենայն մատեանս ախորժական էր նմա Տէյեմար սակս խիտ առ խիտ նկարագրի դաշտայնոյն կենաց եւ կրից որ ընդաբոյս են մարդկեղէնս բնութեան : Վերժանէր ի յուր մօրն եւ Լաթուրի տիկնոջ զհատուածս գրոցն որ անէի իմն գորովէինն զնա. յայնժամ եւ սրտառուչ յիշատակօր խանդաղատեալ՝ գելոյր բարբառ նորա ի կոկորդին, եւ արտասուք յաչացն հոսէին : Թուէր ճշգրտիւ գտանել ի Վիրգինէ զԱնտիոպեայ յմեծութիւնն եւ զիմաստութիւն՝ հանդերձ եւրարեալ ադէտիւքն եւ գորովով : Իսկ յորժամ զնորահնարն մերոցս ժամանակաց վիպասանութիւնս ընթերցաւ, վեր ի վայր հարեալ վրդովեցաւ անձն նորա յերեսաց խառնագնաց բարոյիցն եւ վաւաշոտ իմաստից որ ի նոսա. եւ յասել այլոցն ցնոսա զի ճշգրտատիպ նկարագիրք էին այնորիկ քաղաքաժողով ընկերութեանց եւրոպայ, երկեաւ՝ եւ թերեւս ոչ յանիրաւի՝

գի մի գուցէ է. Վիրգիլնէ գգածեալ նորիմբք է. գառածեալ մոռանայցէ գանձն իւր :

Քանզի տարի մի է. կես տարւոյ է. անէլի էս անց ի վերայ, է. Լարուր տիկին ջէ. էս ընկալաւ ինչ գրոյց ի հօրաբեռէն, է. ոչ ի դատերէ իւրմէ. գայս՝միայն լուեալ էր յօտարաց՝ զի անվտանգ ժամանեալ էր նորա ի Պաղդիա : Ուր ուրեմն էհաս է. նա մի որ ի Հնդիկս գնայր, է. եբէր առ. նա ծրար մի է. քուղք՝ նորին ինքեան Վիրգիլնեալ ձեռագիր : Թեպէտ է. խնամով քօղարկեալ էր ներողամիտ է. սիրուն որդեկին զվիշտս անձին իւրոյ, սակայն է. այնպէս խելամուտ եղէ. մայրն տառապանաց նորա. քանզի է. այնպէս իմն ճշգրտահան զկենցաղ նորին է. զբարս նկարագրէր քարտեզն այն, զի բան առ. բան կալայ գայն յուշի մտացս :



« Յոյժ սիրեցեալդ իմ է. անձկալի մայրիկ,

« Բագում ինքնագիր նամականի յղեցի էս առ. քեզ մինչէ.
« ցայսօր. է. զի ջընկալայ դարձուած պատասխանոյ, խիբամ
« քե գուցէ ջիցեն հասեալ ի ձեռս քո : Ակն ունիմ քե ոչ նոյն

« անցր եւ ընդ սա անցցեն, բանգի պէտ արարեալ ջանահնար
« եղէ ծանօթս տալ բեզ զանձնես, եւ գողջունեղ ձերմէ լսել
« ինչ :
« Յօրէ անջատմանս իմոյ առ ի ձեկնջ՝ արտօսը բագում հեղի
« ես, որ յառաջ ժամանակաւ ընդ օտարացն եւեթ աղետս ար-
« տասուեալ էի : Ի հասանել իմում այսը՝ իբրեւ եհարց ցիս
« հօրաբոյրն իմ էրէ զինչ ինչ ուսեալ զիտիցեմ, մեծաւ գար-
« մացմամբ յուսաւ յինէն պատասխանի զի անգէտ եմ ընթեր-
« ցանութեան եւ գրոյ : Եհարց ցիս ապա էրէ զինչ ուսեալ իցեմ
« յորմէ հետէ շնջեմս զօղ կենդանութեան. եւ ետուս պատաս-
« խանի էրէ ուսալ զառտնին իրս յանձանձել եւ կամակատար
« մօրն իմոյ լինել. ասաց ցիս էրէ գաղախնոյ դաստիարակու-
« քիւն տուեալ են ինձ : Ի վաղիս անդր եղ զիս յուսումն ի մեծի
« ուրէք աբբայարանի մերձ ի Փարիզ, յորում վարժապետը
« պէսպէս իրաց՝ բաց յայլոց մարգից՝ ուսուցանէն ինձ զպատ-
« մութիւն, զաշխարհագրութիւն, զքերականութիւն, զջափա-
« բանութիւնս եւ զհեծելութիւն. սակայն այնպէս դուզնարեալ
« է ուշիմութիւնս իմ յուսումն մակացութեանցդ, զի ոչ մեծ
« ինչ օգուտ գործեացեն վարժապետքս այսօրիկ : Գիտակ իսկ
« եմ ես, որպէս եւ սորա վկայեն, զի հեք եմ եւ տկարամիտ
« մանուկ. սակայն եւ այնպէս ոչ վերջանալ հօրաբոյրն իմ
« բարերարել առ իս : Ըստ իւրաքանչիւր յեղանակս տարւոյ
« պատմութեանս նորս ինձ հանդերձէ : Նաժիշտս էրկու կար-
« գեալ է յիմ սպասահարկութիւն, որ եւ նորա ճոխաբար զգե-
« ցեալ են իբրեւ գտիկնայս ոմանս : Եղ ինձ նա մեծարանաց
« անուն զկոմսուհիդ. այլ իբաց էրող զանունս ԱՅԹՈՒԲ որ
« որպէս բեզ նոյն եւ ինձ էր սիրելի յաղագս տառապանացն
« որոց տարեալ էր հայրն իմ ի հարսնացուցանել իւրում զքեզ՝
« ըստ բոյոցն առ իս զրուցաց : Փոխան բոյին ամուսնական
« անուանդ եղ ինձ զազգատոհմիդ քո զանուն, որ եւ այն սի-
« րելի է ինձ, զի օրիորդութեան քո անուն է : Յայսպիսում
« տեսեալ զանձն իմ պայմանի, աղերս արկի առ նա նպաստս
« ինչ առարել առ բեզ : Բայց զպատասխանին զիմարդ հանից
« բեզ ի վեր : Այլ բանգի պատուէր տուեալ է քո ինձ ցանգ

« գճշմարիտն ասել քեզ, յուր. պատասխանի էտ է. ասէ ցիս
« եթէ սակաւն ինչ ոչ օգտեցէ քեզ, է. յանշուքն կենցաղիդ
« գոր վարես շատն յաճախեցէ քեզ հոգս է. տատամսութիւն :
« Զառաջինն փոյթ յանձին կալայ գրոյց տայ քեզ գողջունէ
« իմմէ օտարոտի ձեռամբ՝ առ ի չգոյէ իմոյս : Բայց ի ժամանել
« իմում ոչ գոր ունելով աստէն ինձ մտերիմ, գտիւ է. զգիշեր
« ջան եղեայ վաստակեցի յուսումն ընթերցանութեան է. գրոյ.
« է. օժանդակութեամբ շնորհացն Տեառն ի սակաւ ժամանակի
« վարժ գտայ է. յերկոսին : Զառաջնոցն իմոց քղքոց գառա-



« քումն յանձն արարի ի խնամս տիկնայցն սպասեկաց իմոց .
« է. նորա, որպէս հաւանեայ էմ, յանձնեայ էն զնոսին հօրա-
« քեռն իմում : Իսկ յայս նուագ աղաչեցի զմի ոմն ի մտերմաց
« իմոց ուսումնակցաց հասուցանել գրուղթս առ քեզ. է. նովին
« երեսագրով գոր գտանես ի սմին՝ առաքեցես է. դու յանուն
« նորա զպատասխանիսդ : Քանզի հօրաբոյրն իմ արգել չքղթել
« բնաւ ընդ ումեր յարտաբնոցն, զի մի ասէ խափան լինիցին
« իրքն բարեաց մեծամեծաց գորս ի մտին եղեայ է առնել ինձ :
« Նա ինքն միայնակ կարող է գալ է. տեսանել զիս ի խաղխա-

« մեայ պատուհանեն վանդակի վանացս, որպէս է. ծերունի
« ուն ըարեկամ իւր, որ որպէս ինքն ասէ՝ ախորժ հաճութեամբ
« տեսանէ զիս : Այլ զի զարդարն ասացից, էս ոչ ինչ ունիմ
« ախորժ գնա տեսանելոյ, թեպէտ է. է. ոչ զայլ որ երբէք կա-
« միցիմ ախորժել :

« Ի ճոխութեան մեծի է. ի պերճութեան կեամ, է. դանգ մի
« ոչ ունիմ զոր ըստ կամս անձին ծախիցեմ. քանզի ասէն զի
« երէ գոյր առ իս արծաթ, վտանգ լինէր ջարաշուք ինչ պա-
« տահմանց դեպ լինելոյ : Պատմութեանք իմ գլխովին նաժշտաց



« իմոց էն ինչք քան թէ իմ, զի մինչչէ. իմ ի բաց եղեայ զնոսա՝
« վիճէն ընդ միմեանս թէ ո՞ր զնոսին առնուցու : Ի բազմագանձ
« փարթամութեան աստ ջբարորագոյն գտանիմ քան զոր առ.
« քեզն էի. քանզի ջնունիմ ինչ զոր տայցեմ ումէք : Իբրեւ տեսի
« զի մակացութիւնքս խորինք զորս ինձ ուսուցուանէ, ոչ դիւ-
« թին ինձ զդուզնաբեայն անգամ բարերարութիւն, յասեղն
« իմ եղէ ապաստան, զոր դուն իսկ ուսուցեր ինձ առնույ
« ի կիր, է. ընդ այն ուրախ եմ յոյժ : Եւ անա յղեմ առ. ձեզ
« զոյգս զոյգս գուրպայից ձեռագործաց իմոց վասն քո, է.

« վասն մօր Մարգարտի, գղակ մի վասն Դոմինիկեայ, Եւ զմի
« ի կարմրերանգ քաշկինակաց իմոց վասն Մարիամու : Յաւե-
« լում ի ծրարիս կորիզս մրգաց ի նախաճաշիցն իմոց, հան-
« դերձ ընդովք Եւ սերմամբք ազգի ազգի ծառոց զորս ինձեն
« ժողովեցի ի պարապոյ ժամս իմ ի դրախտի աստ վանացս :
« Ծրարեցի ի նմին Եւ սերմանս մանուշակի, մարգարտի,
« հրանկի, պուտ ծաղկան Եւ քոսախոտոյ զորս ի դաշտիցն
« հաւաքեցի : Ի մարգս Եւ ի մարմանդս աշխարհիս գտա-
« նին ծաղկունք որ գեղանիք Եւս Են քան զորս ի մերուսդ.
« այլ չիք որ երեսս առնիցե նոցա : Ոչ ինչ երկբայիսմ զի դու



« Եւ մայրն Մարգարտ առաւել խնդասջիք ընդ այս քսակ
« սերմանեաց քան ընդ պարկ մի արծաթոյ՝ որ անջատմանս
« մերում Եւ արտասուեացն իմոց Եղէ պատճառք : Խըն-
« դուքիւն մեծ Եղիցի ինձ երե քերկրեսջիք երբեմն ի տեսիլ
« խնձորենեացն բուսելոց առ ընթեր աղամարզիցն մերոց, Եւ
« յորժամ փիճիք զսաղարթսն փարեայ պատիցեն զքոքենետօրն
« մերովք : Յայնժամ Եւ զանձն քո ի Նորմանտիա համարեսցիս,
« զոր սիրեսն ոգւով չափ :

« Պատուէր ինձ տուեայ էիր իրագեկ առնել զքեզ խնդու-
« քեանցն իմոց Եւ տառապանաց : Խնդուքիւն ինչ ոչ Եւս ունիսմ

« Ի բացեայ առ ի բեն . իսկ գտառապանս իմ ամորեմ յուշ
« ամեայ զի դու ինքն յայս պայման կենաց եղիք զիս ըստ կամացն
« Աստուծոյ : Բայց քան զամենայն ինչ ընդ այն վիշտ է ինձ
« մեծապէս զի չիք որ աստանօր որ գրեն խօսիցի , եւ ոչ ընդ
« որում ես ինքն խօսիցիմ գրեն : Նաժիշտք իմ , մանաւանդ թէ
« հօրաբեռն իմոյ , քանզի առաւել նորա քան թէ իմ են սպա-
« սեակք , ասէն ցիս յորժամ բանս ի մեջ առնուցում զսիրելեաց
« անձին իմոյ . Յուշ լիցի քեզ զի Գաղղիացի ես դու , եւ պար-
« տիս զխժիցն աշխարհ ի մոռացօնս արկանել : Ո՛հ , լաւ է ինձ
« զանձն իմ գլխովին մոռանայ քան թէ զվայրն յորում ծնեայս
« եմ եւ յորում դուքդ կեցեք : Խժից աշխարհ այս իսկ է վասն
« իմ . քանզի միայնիկ կեամ աստանօր , եւ չիք որ որում մար-
« քիցիմ յայտ առնել զսերն որով սիրեմ եւ սիրեցից գրեզ մինչեւ
« ցման ,

« Սիրեցեայդ իմ եւ անձկայի մայրիկ ,

« Հնազանդ եւ կարողին դուստրս քո

ՎԻՐԳԻՆԷՆԷ ՏՐ ԼԱԹՈՒԻՐ : »

« Ի բարեւեր խնամս քո յանձն առնեմ զՄարիամ եւ զԴոմի-
« նիկոս որ այնչափ գրով զմանկութիւն իմ սնուցին . զգուեա
« յինէն կողմանէ զՀաւատարիմն որ ի մայրիսն եգիտ զիս : »



Զարմացաւ յոյժ Պօղ զի զանձնէն ինչ ոչ ասէր Վիրգինէ ,
նա՛ որ եւ գշուն իսկ տանն չէր թողեայ անյիշատակ . բայց ան-
գիտանայր նա զի որչափ եւ երկարածից իցէ թուղթ կնոջ մար-

դոյ, ի կատարածին եւեթ սովոր է նա յեռույ զպատուականագոյնն յիմաստից :

Ի յաւելուածի ուրեք նամակին աղաչէր Վիրգինէ գՊօղ առանձինն խնամ ունել երկուց ինչ սերմանց, այն իսկ էին մանուշակի եւ քոսախոտոյ . եւ տեղեակս առնէր զնա յատկութեանց ինչ տնկոցն, եւ թէ որք ի վայրաց ի դեպ գայցեն նոցա : « Մանիշակդ, ասէր, փրթէ ծաղիկ նկնատեսիլ մանիշակագոյն, եւ սիրէ մացառաղօղ թաքչել . այլ ի բուրագուարճ հոտոյն սաստկութենէ անդէն յերեւան գայ : » Եւ պատուիրէր սերմանել զայն զեգերբք աղբերն, առ ոտս իւրոյ քորենւոյն : Եւ յաւելեալ ի բանս իւր ասէր. « Քոսախոտն բանայ ծաղիկ գեղեցիկ ի կապուտակ բացագոյն, սպիտականիշ ունելով բիծս ի թուխ բաժակի, որպէս այն թէ ի սուգ իցէ համակեալ . նմին իրի եւ այրուոյ ծաղիկ յոմանց յորջորջի : Սիրէ զապառաժուտան եւ զհողմակոծ տեղիս : » Եւ աղաչէր զնա սերմանել զայն ի քարածայռին յորոյ վերայ ի վերջնումն նուագի խօսեցեալ էր ընդ նմա, եւ առ սեր իւր կոչել զանուն վիմին այնորիկ ՎԷՄ ՀՐԱԺԵՇՏԻ :

Եւ էր զսերմանսն զայնոսիկ ամփոփեալ ի քսակ հիւսկէն, որ թեպէտ անպաճոյճ՝ սակայն անգին թուեցաւ Պօղայ յորժամ ետես ի վերայ նորին ձեռակերպեալ զտառքս P եւ V, Պ եւ Վ (Պօղ եւ Վիրգինէ) զիրերօք փաթութեալս եւ յօրինեալս գիսակօք վարսիցն Վիրգինեայ, որպէս ծանեաւ ի գեղոյն :

Ի յուր թղթոյ դիւրագորով եւ առաքինի օրիորդին ազգատոհմն ողջոյն հարաւ յարտասուս : Ի դիմաց ամենեցուն մայրն արար պատասխանի՝ զի անդէն մնասցէ կամ դարձցի յետս որպէս զհարդ եւ հաճոյ իցէ անձին իւրում . հաւատա, ասէր, զի յօրէ յորմէ մեկնեցար դու ի մենջ՝ կորուսար մէք զմեծ մասն բարեբաստութեան մերոյ, եւ ես ինքն առաւել քան զամենեսեան կամ անմխիբար :

Գրեաց եւ Պօղ թուղբ երկայնաձիգ յորում խոստանայր արժանաւոր նմին յարդարել զպարտեզն, եւ խառն գործել անդաճօր զբուսակս Երոպայ եւ զԼիբիոյ, զոր օրինակ նորա զանունանս իւրեանց խառնամանեալ էր յիւրումն ձեռակերտի, եւ

քէ յդէ առ նա միրգս քաջահասս ի բորենեաց աղբերն . եւ ջլաւե-
լում ինչ՝ ասէր՝ ի սերմանց կղզեկիս , որպէս զի տեսոյ նոցին
տենջացեալ փութասցիս դառնալ այսրեն : Եւ աղերսէր ունկն
մատուցանել անձկայրեաց ըղձից ազգատոհմին , եւ մանաւանդ
իւրոցն , եւ ձեպել զդարձ իւր , քանզի ոչ էւս հնար է ինձ , ասէր ,
սփոփանս ինչ գտանել՝ մինչ ի բացեալ իցեմ առ ի քեն :



Փութոյ պնդութեամբ սերմանեաց Պօղ զսերմանսն եւրոպա-
կանս , եւ մանաւանդ զմանիշակին եւ զայրւոյ ծաղկի , որոց ոչ
սակաւ նմանութիւն էր ծաղկանցն ընդ բուսոյ բարուց եւ պայ-
մանին Վիրգիլեայ , որ եւ այնչափ խնամով ապսպարէր զնո-
սին . այլ քանզի ի ծովաջուռ ճանապարհին հովահարեալ եւ
ոսնեալ էին , կամ քէ արդէօր օրոցն Ափրիկեայ ոչ ի դէպ էկեալ ,
սակաւագոյնք էւէք ի նոցանէ ընձիւղս արձակեցին , եւ նորին էւս
ոչ էկին ի հասութեան :



ԳԼՈՒԽ ԿԵ.

Սակայն յաջադանք որ յառաջընթաց իսկ լինին բարեբաստութեան մարդկան՝ մանաւանդ ի գաղթականս Գաղղիացւոց, հռչակ իմն հարին ի կղզւոջ անդ՝ որ ոչ սակաւ տազնապէր զՊօղ : Արքնաւուն այնորիկ որ զնամակն բերեալ էր՝ ասէին Եթե հանդերձի Վիրգիլնէ առն լինել, եւ զանուն իսկ դրանկին տային որ հարսնացուցանելոց էր զնա. էին էւս որ ասէին թէ կատարեցան իսկ հարսանիքն, եւ մէք էւս ի հանդիսի անդ եաք : Արհամարհեաց Պօղ զառաջինն զգրոյցս բերեալս ի վաճառաշան նաւէ, որ բազում այն է զի ստայօղս ինչ կարկատեալ ծաւայէ յանցս իւր : Այլ քանզի յոյովք ի կղզեցեացն նենգաժեստ իմն գորովով արգահատեալ ի նա՝ էլեւելս զմիմեամբք առնէին կարեկից նմա լինել սակս իրացն դիպելոց, տակաւ հաւատարիմ բուեցան նմա բանքն : Նա զի եւ ի վիպասանութիւնս ինչ զորս ընթերցեալն էր՝ տեսանէր զի ի խաղս իմն համարեալ էր դաւաճանութիւն. եւ քանզի գիտակ էր զի ճշգրիտ նկարագիրք գոյին ի մատեանսն բարուց եւ քաղաքավարութեան Ներոպայ, խիթայր թէ գուցէ եւ դուստրն Լարուրի տիկնոջ զառաձեալ նորօք եւ մոռացօնս իւրոցն արասցէ խոստմանց. եւ ահա անդստին չարաբաստիկ առնէր զնա հմտութիւն : Իսկ իբրեւ եկին հասին էւ նաւք բազումք յՆերոպայ ընդ ամիսս վեց, եւ ոչ մի ի նոցանէ ոչ էբեր գրոյց զՎիրգիլնեալ, յաւելլ նա կասկածանս ի վերայ կասկածանաց :

Տարաբաղդն այն պատանեակ մատնեալ ի յոյզս տազնապի սրտին, ստեպ կանխէր առ իս, զի իմովս կենցաղականացն իրաց հմտութեամբ հաստատեսցի ի կասկածանսն կամ գերծանցի ի նոցանէ :



Որպէս կանխէցի ասացի քեզ, բնակեմ ես փարսախառ միով եւ կիսով հեռի ի տեղւոջես յափուսնս առուակի որ սողոսկեալ ընթանայ ընդ ստորոտս երկայնանիստ լերին : Անդ զկեանս իմ անցուցանեմ միայնակ, անկին, անորդի եւ անստրուկ :

Յետ բարեբաստութեան գտանելոյ կողակից զոք որ քաջայարմար մեզ իցէ, բարեբաստութիւն որ սակաւուց եւէք պահեալ է, ջիբ երկբայել զի քան զամենայն պայմանս կենաց նուազ ջարտէտ է միայնակն կեալ : Ամենայն ոք որ վշտացեալ իցէ ի մարդկանէ՝ զմիայնութիւն խնդրէ : Եւ այս եւս քաջայայտ ինչ է եւ զարմանալի, զի յազգս ամենայն որ տառապեալք են լերեսաց կարծեաց եւ կենցաղական կարգաց եւ կամ ի տեսչութեան բռնութենէ, յոյովս է տեսանել զասս զասս քաղաքացեաց որ ի միայնութիւն եւ յամուրի կեանս նուիրեցին զանձինս : Այսպիսիք ոմանք եղեն Եգիպտացիք ի խրքնանայ պետութեան իւրեանց, եւ Յոյնք առ կայսերութեամբ. ըստ նոցին օրինակի են եւ առ մեօք Հնդկիկք եւ ձենացիք եւ արդի Յոյնք, եւ Իտալացիք եւ բազումք ի բնակչացն արեւելից եւ հարաւոյ Եւրոպայ :

Քանզի միայնութիւն ի բաց քեցեալ գմարդ յաղետից ընկերական կենցաղավարութեան՝ ի բնատուրն բարեբաստութիւն ածե գնա . Անճն որ ի մարդածողով ընկերութիւնս պառակտեալս ի մատունս մատունս ըստ բազմադիմի կանխակալ կարծեաց վարիցե



կենցաղ, ի յոյզս վրդովից տարութերեալ ծփի անդու, Եւ ցանգ բաւալէ ի միտսն բիւրազգի խորհուրդս մրրկեալս Եւ աղմկարարս Եւ ներհականս իրերաց, որով արք փառամոյք Եւ եղկելիք գուն գործեն նկուսն գմիմեանս առնել : Իսկ ի միայնութեան ի բաց դնե գտարօրինակ պատրանսն ամբօխիջս, Եւ անդրեն զգաստ յինի անճին Եւ էիցս Եւ հաստջի նոցին : Այսպէս Եւ սկախատն ջուր հեղեղատի որ յաղարտ զգաշտավայրս վարեալ Եւ զարտուղի յընթացիցն էրբեալ մտանիցե յաւագան ինչ անձուկ, գառաջինն իւր գականակիտ պայծառութիւն առնու վերստին, Եւ բափանցիկ որպէս կանխաւն Եղեալ՝ իբրեւ ի հայելւոջ ուրեք ցոյացուցանե յինքեան զիւր իսկ ափունս, զկանաջագեղն դայարութիւն Երկրի Եւ գերկնիցն գոյս : Քիտե միայնութիւն Եւ գմարմնոյ յարմարեալ յարդարել գյօրինուածութիւն, որպէս Եւ զհոգւոյն : Քանզի Եւ ի միայնակեցացն դասս Ե գտանել արս որ Երկարակեաց բան գայլսն յինին, զոր օրինակ

են էս պրահմայրն Հնդկաց : Եւ զի յերկարեմ . այնպէս կարեւոր համարիմ էս զմիայնութիւն առ ի բարեբաստիկ վարելոյ աստէն կենցաղ, զի յանհնարիցն բուի ինձ յարատեալ ինչ ունել վայելս հեշտալեաց, էս կամ յանյողողող ինչ օրէնս զընթացսն հաստատել, երէ ոչ միայնութիւն իմն յարդարեսցի ներքին յորմէ դուն ուրեր արտաքս վագեսցեն մեր կարծիք, էս այլոցն ոչ մտցեն բնաւ ի ներքս : Սակայն էս ոչ գայն կամիմ ասել երէ առանձնակեաց գլխովին հարկ իցե լինել մարդունս . քանզի ընդ համօրէն ազգի մարդկան պնդեալ է նա պիտոյիցն զօղի . վասն որոյ պարտ իսկ է նմա յօգուտ մարդկան վաստակել, էս ի բարեգարդութիւն բոյորունս բնութեան : Այլ զոր օրինակ մեզ ամենեցուն տուեալ է Աստուած գործարանս ամենեւին իսկ պատշաճեալս տարերց մերաբնակ հողագնտոյս, ոտս ասեմ առ ի քայլելոյ յերկրի, բոքս առ օդոյ ծծումն, էս աջս առ ի լուսոյ տեսութիւն, էս մեզ չե օրէն զգգայարանացն պէտս յեղաշրջել, սոյնպէս էս ինքեան միայնում պահեաց կենսատուն զսիրտս մեր, զաւագագոյնն ի գործարանս կենդանութեան մերոյ :

Սմին իրի ահա էս էս զաւուրս իմ անցուցանեմ հեռի ի մարդկանե, որոց սպասաւորելն ցանկացայ, էս նորա զիս հայածեցին : Յաճեալ ընդ մեծ կէս մասն Եւրոպայ, էս ընդ մարզս ինչ Ամերիկեայ էս Ափրիկեայ, ի սակաւաբնակ կղզեոջս յայսմիկ զբնակութիւն իմ հաստատեցի՝ ընդ օդոցն քաղցրախառնութիւն էս ընդ ամայի վայրս սորին զմայլեալ : Խոնդ զոր կանգնեցի ի մայրեոջն առ ոտս ծառոյ միոյ, ագարակիկ զոր ձեռք իմ ախօսեալ մշակեն, էս առուակն որ առ դրամբ իմով հոսեալ ընթանայ, հերիք են ինձ առ ի պէտս էս ի գբօսանս : Ունիմ էս գրեան ինչ պիտանի որ խրատեն զիս ի յաւագոյնն առաքինութիւն, էս յաւելուն յիս գուարճութիւն ոչ սակաւ . քանզի նորին էս զաշխարհ զբողեալ լքեայն առ յինեն՝ իմունս երջանկաւեստ կենաց առնուն ի գործի, ի դէմս ինձ ածելով նկարագիրս ախտից որ զբնակիջս աշխարհի հերս էս ցականեալս գործեն . էս զջարաբաստութիւն նոցին ընդ իմունս ի կշիռ արկեալ բարեբաստութեան՝ բերկրեցուցանեն զանձն իմ : Իբրեւ զայր որ որ ի նաւաբեկութենէ զերծեալ էլեալ իցե ի կատար վիմի, այնպէս

ի գնին կամ եւ ի միայնութենէ աստի իմմէ ամայրոպայոյզ մրրկաց որ յուզին յաշխարհի . եւ ի յուր բացածից որոտընդոստ փոքորկին եւս քան զեւս յաւելու իմս անդորրութիւն : Յորմէ հետէ դադարեցին մարդիկ ի ցանկորդելոյ ի ճանապարհս իմ եւ



JATTIOT.

եւ ի նոցայն՝ ոչ եւս այլ ատեամ եւ զնոսա, այլ արգահատեմ ի նոսին : Եթէ յանկարծ զհիքացեալ որ տեսանիցեմ, գուն գործեմ ձեռնկայու լինել նմա իմովս խորհրդովք զօրէն անցաւորի որ առ եզերք հեղեղատի ձեռն կարկառիցէ ջրահեղձիկն եղկելեաց : Սակայն ձայնիս իմոյ ունկնդիր զանմեղութիւն եւեք գտի :

Ջուր տարապարտուց ձայն արկեալ կոչէ առ իւր բնութիւն զմարդիկ, քանզի այր իւրաքանչիւր պատկեր իւրաստեղծ ի միտսն կերպարանեալ զբնութենէ՝ զախտս անձին առանձինն արկանէ զնովաւ իբրեւ հանդերձ, եւ զամենայն աւուրս կենաց իւրոց զհետ ընթացեալ առ աջօր տեսլեանն զնայ քափառական, եւ ապա զերկնից տրտնջէ վասն ինքնութիւնն մոլորութեանն զոր յանձնեն ճարտարեաց : Յոգնարիւ ջուրառականս փորձ փորձեցի

Ես ածել դարձուցանել ի բնութեանն օրենս, եւ չգտի եւ ոչ գոր
որ չիցէ իւրովն աղետիւք զգլխեալ եւ զմբբեալ : Զառաջինն
ուշի ուշով ունկնդիր ինձ լինէին, յուսացեալք իմն զի նպաստ
Էդեց ես նոցա ի գիւտ փառաց կամ մեծութեան . այլ իբրեւ



տեսանէին զի զանց զայնպիսեօր առնել ուսուցանէի նոցա ,
Էդուկ ինձ կարդային զի ոչ գիտեալ կրթի բազմադէտն բարեբաս-
տութեան իւրեանց, եւ զմենաւոր կեանս իմ եպերէին . համա-
րէին էրէ ինքեանք միայն իցեն օգտամատուցք մարդկան, եւ
ջանահնար լինէին ընդ քարշ առեալ ձգել եւ զիս ի մրրկեայն
իւրեանց գրդանս : Բայց ես կենաց կցորդ ընդ ամենեսեան
գտեալ, բնաւ չլինիմ ումէք անձնատուք :

Բագունս այն է զի շատ իսկ է անձն իմ ի խրատ անձին իմունս :
Քանզի յայժմուս անդորրութեան հանդէս առնեմ ի միտս իմ յուզ-
մանց կենացն իմոց անցելոց գորս առ մեծամեծս ինչ գրէի, եւ
յորոց սակի են խնամակալութիւնք, փարթամութիւն, հոջակ
համբաւոյ, հեշտն ցանկութիւնք եւ կարծիք մտաց որ ամենայն
ուրէք ի վեր եկեալ ընդ իրեարս ոգորին : Զյոզնախոռուն բազ-
մութիւն մարդկանն գորս ի պայքար մտեալ տեսի ես մոլեգին
սակս ցնորից բանդագուշանացն այնոցիկ, եւ որ արդ ի չիք դար-
ձեալ են, նմանեցուցանեմ մկանանց իմոյն առուակի, որ փր-
փրացեալ եւ բախեալ ընդ խութս յատակին եւ անդարձ յորձանօր
աներեւոյթք լինին : Իսկ ես խաղաղաւետ եւ անդորր ոգւով

տուեալ գանձն իմ ի գետ ժամանակին՝ դիմեալ գնամ յանեզրն
ովկիան կենացն հանդերձելոց . եւ ի տեսիլ այժմոցս գեղայօրէն
սքանչելեաց բնութեան՝ առ բունն էլանեմ վերանամ ճարտա-
քապետ այսր ամենայնի, եւ ակն ունիմ յանտիսն յաւագունի
հանդիպել բաղդի :

Թեպէտ եւ չիք տեսանել յիմմէ անտառաբնակ մենարանէն
զտեսարանս գայտոսիկ յոգնաթիւս գորս նշմարեմք ի բարձրաւան-
դակ տեղւոջէ աստի, սակայն են եւ ի նմա տեսիլք ցանկալիք,
մանաւանդ վասն իմ, որ յաւ համարիմ յանձն իմ ամփոփել քան
թէ արտաքս վագեալ ծաւալել : Գետակն առ դրամք իմով գեռա-
ցեալ՝ ուղղաձիգ ընդ մայրիսն սահեալ անցանէ, յօրինելով յաջս
իմ ջրանցիկ ուղի երկայնաձիգ՝ հովանաւորեալ ի սաղարթոց
բազմահոյլ ծառոց . քանզի անդ ուռճացեալ ջովանան տատա-
մաթին եւ ոպնիագ, խնձորիքն աստ կոչեցեալք, եւ ձիթենիք եւ
դարիձենիք : Ի տեղիս տեղիս բարձրացեալ տեսանին արմաւե-
նիք ի մերկատարրն իւրեանց հարիւրոտնեան կոթողս՝ ախաւե-
ղագէս իմն ի կատարսն ագուցեալ ունելով գփունջս արմաւոյ,
եւ գեր ի վերոյ այլոցն թեւապարեն ծառոց՝ գնմանութիւն բերե-
լով անտառաց յայլոյ անտառի գագաթունսն տնկելոց :

Անդ է տեսանել եւ պատատուկս սաղարթագոռարձս որք խիղքս
ծառ ի ծառէ արկեալ՝ ուրէք կամարս յօրինեն ծաղկահիւսակս,
եւ այլուր սրահակս դալարագեղս երկայնաձիգս : Յուլվագոյնք
ի ծառոց անտի բուրմունս անուշունս արձակեն այնպիսիս զի
եւ ի հանդերձս մարդոյ ընդմտեալ տոգորին, եւ զկնի բագում
ժամոց արտաքս էլանելոյ նորա յանտառէն՝ ի բուրագոռարձ
հոտոյ անտի ի միտ առնուլ է զանցանել նորին ընդ անտառն :
Ի ծաղկափրիքն զարդարել նոցա յիւրեանց ժամանակին, ձիւ-
նապաճոյձք իմն թուին տեսողաց, եւ յէս ամարայնոյ բիւրագգի
թոջունք տարաշխարհիկք անհասանելի իմն ազդմամբ թուջս
առեալ գան յանձանօք աշխարհաց զյայնատարրն ծով հատեալ
անցեալ, ժողովել զհատս բուսակաց այսր կղզւոյ, եւ գարեւա-
կեզ թխատեսիլ ծառոցս կանաչութիւն՝ իւրեանցն երանգոց՝
յուսագեղ պայծառութեամբ փողփողեն : Ի սոցին սակի է
պապկայիցն զարմ բազմազան, եւ հաւփայիցն կապուտակաց՝

որ աստ հաւփայր յորջորջին հոյանտացիք : Կապիկր մայրեացս
բնակիչք սովորեայր՝ ի տխրատեսիլ կողերս ծառոց թինդս
տուեայ վագվագեն, յորոց գորշախառն կանաչութեամբ ստեռոյ
է. արջնաբոյր կերպարանօրն էւեր որոշին. կեսք իւրեանց



ձեռիւրն կախեայ զնոցանէ ճօճին ընդ օղս; էւ այլք ոստոց
յոստս ոստոստեն գրկընկայ զկորիւնսն տանելով : Հրացան
մահաբէր չիք բնաւ երկեղուկս արկեայ երբէք խաղաղաւետիցն
այնոցիկ որդւոց բնութեան :

Ոչ այլ ինչ է լսել անդանօր բայց կռիջս հրճութեանց, էւ դայ-
լայիկս անծանօթս հարաւաբնակ թռչնոց, զորս էւ կրկնեայ
անդրէն հնչեցուցանեն բացուստ ի բաց մայրեացս արձագանգք :
Գետակն որ պղպշակեայ ընթանայ ընդ խճասայն իւր յատակս
ընդ մէջ ծառոցն բարձանց, ուրէք ուրէք յականակիտ ջուրս
իւր ի տեսիլ ածե գրանձրախոռն դայարիս նոցին էւ զստո-
ւերս, որպէս էւ զխաղս զբօսանաց բարեբաստիկն բնակչաց
նոցա : Քայլս հազար ի բաց զնացեայ ի տեղւոջէն թաւայի գա-
հավեժ ընդ պարէխս աստիճանեայս էւ յանկանել անդ իւրում
տեսանի իբրէս վիժակ ինչ միապաղաղ էւ սառնորակ, որ ան-
դէն խորտակեայ փշրի փրփրադեզ : Բիւր ճողփիւնք էւ շա-

ուաջր խառն շառագէն ի յորձնեռանդն ջուրց անտի, որ ընդ անտառն վայրավատին ցրուեալք ի հողմոց՝ է զի խոյս տուեալ ի հեռաստան խուսափեն, եւ է զի միահամուռ ի մի վայր հաւարեալ՝ զանգիւնս իմն արձակեն հանգոյն զանգակաց կարողիկէի մեծի որ զյսէլիս ամենեցուն առ հասարակ խլացուցանիցեն : Դարձեալ եւ օդոցն յար ի փոփոխման լինելով ի ջուրցն յուզմանէ, զափունս առուակին հովասուն եւս գործեն ի տօթագին առուքս ամարայնոյն, զոր դուն ուրէք գտանել է ի կղզեոջ աստ, եւս եւ ի կատարս լերանց բարձանց :

Ոչ յոյժ հեռի ի տեղւոջէ անտի կայ վեմ մի սարաւանդ՝ այնչափ ինչ եւէք ի բացեալ ի բարավեժ ջուրցն հոսանաց, զի ոչ դունչեն ականջք ի խոխոջիցն դղընչիւն, եւ այնչափ մերձաւոր



զի մարթի վայելել ի տեսիլ նոցին եւ ի հովութիւն եւ ի կարկաշանս : Անդ ընդ հովանեաւ վիմին այնորիկ գնայար ի տօթաժամս առնույ կերակուր՝ տիկինն Լարուր, Մարգարիտ, Վիրգինէ, Պօղ եւ ես : Վիրգինէ բանզի գամենայն զգործս իւր եւս եւ զդուզնարեայսն ի բարերարել այլոց ուղղեալ յարդարէր, ոչ ուտէր եւ ոչ մի ինչ պտուղ ի բացի գորոյ զկորիզն ջտնկիցէ ի գետնի :

քանզի ասէր. « Ծառք աստի բուսցին եւ պտուղ արդեօք տացեն անցաւորին, կամ թէ բռնեկի միում : »

Կերեայ նորա ի միում յառուրց առ ոտս վիմին այնորիկ սեխարմաւ, տնկեաց անդէն զհունդս սերման նորին : Ետ ընդ էտ բուսան ծառացան անդ սեխարմաւենիք բազում, յորոց միջի էր եւ եզ մի անուանեայ, այս ինքն է որ բերէր զպտուղ, եւ ոչ ինչ ընդհատ էր բարձրութեամբ քան զբարձս Վիրգիլեայ մինչ մեկնեցան աստի. այլ քանզի արագ արագ ուռճանայ ծառն այն, յետ երկուց ամաց բարձրութիւն նորա էհաս ցոտնաչափս քսան, եւ վերնակողմն բնոյն պսակածէ բոյորեցաւ յոգնախոռոն բազմութեամբ քաջահաս պտղոյ : Դեպ էդէ Պօղայ գնայ ի տեղի անդր, եւ խնդաց յոյժ ուրախութիւն մեծ տեսեայ զի ծառ բարձրաբուն բուսեայ է ի փոքրիկ հատէ անտի տնկելոյ երբէմն առաջի իւր ի սիրունիւն . սակայն եւ ծանրաբախիժ զգաձաւ տրտմութեամբ նորովն այնուիկ վկայութեամբ երկարածիգ պանդխտու-



թեան նորա : Զորս հանապագ շուրջ գմեօքն տեսանեմք իրս, ջներեն մեզ հասու լինել արշաւասոյր ընթացից կենացս մերոց. զի եւ նորա ընդ մեզ ծերանան անզգայեաւ իմն ծերութեամբ. բայց երէ գամս ինչ հեռի ի նոցանէ գտեայ եւ անդրէն յեղակար-

ծուց տեսանիցեմք զնոսին, անդէն խելամուտ լինիմք արագութեանն որով գետահետեայ սահին անցանէն կենդանութեանս մերոյ առօրր :

Եւ որպէս ուղեւոր յետ բազմամեայ տարաշխարհիկ նժդեհութեան դարձ յերկիր իւր արարեայ զարմանայ զարմանս, զի փոխանակ իւրոցն հասակակցաց գտանէ անդանօր զորդիս նոցին հայրացեալս՝ զորս կարնկերս դիեցիկս բողեայն էր, այսպէս էւ Պօղ ի տեսիլ ստղաւետ սէխարմաւենւոյն ճիացեայ էւ խոռվեցաւ յանձն իւր : Մերք տապարահար զգետնէլ գտունկն կամեր զի մի էւս յուշ առնիցէ ինքեան զերկարժամանակեայ զջուն Վիրգիլեայ. էւ մերք արձան յիշատակի համարեայ զնա բարերարութեան Վիրգիլեայ՝ զբունն համբուրեր, էւ բանս սիրայիրս էւ ցաւագիւնս առ նա բարբառեր : Ո՛վ ծառ ցանկայի, որոյ ճէտն սերի տակաւին ի մայրիս մեր, էս իսկ ինքնին նկատեայ հայեի ի բեզ առաւելագոյն սիրով էւ մե-



ծարանօր բան ի Հոռովմայեցւոցն կամարս յաղթութեան : Իցէ թէ բնութիւնն որ օր ըստ օրէ բանդեայ կործանէ զփառամով արքայիցն դաստակերտս, բազմացուսցէ յանտառս մեր զճեռատունկս դեռածաղիկ էւ անմեղ օրիորդին :

Եւ անա անդ ուրեմն առ ոստ սեխարմաւենայն այնորիկ գտանէի եւ անվրեպ զՊօղ յորժամ ի սահմանս իմ եկանորէր : Ի միում առուրց գտի զնա անդանօր համակեալ ի տրտմութիւն ծանրաբախիծ, եւ յերկարագոյն նուագօր ընդ միմեանս անկար զբանիւք. որ էրէ չիցեն քեզ տաղտուկ ինքնուրոյն արտուղաւքիւնքս՝ ներելիք արդէօր հասակիս եւ վերջնոցս բարեկամութեանց, ի կարգ արկեալ պատմեցից քեզ : Ըստ տիպս ոճոյ զրուցատրութեան յառաջ զբանսն բերից, որպէս զի եւ բնատուր ուղղութեան մտաց պատանւոյն լիցիս խելամուտ, եւ հեշտեալ իմն ի վերայ կացցես քե ճյր ուրուք ի մենջ իցեն խօսք իւրաբանչիւք, ի նորա հարցուածոցն եւ յիմոց պատասխանեաց առնյով զայն ի միտ :

Ասէ նա ցիս.

« Տրտում է յոյժ անճն իմ : Այս երկու ամբ եւ ամիսք կրկին են զի մեկնեցաւ օրիորդն Լաթուր, եւ յուրից ամսոց եւ ի կիսոյ հետէ ոչ ունիմք զրոյց զողջունէ նորա : Նա ընչաւետ է եւ ես անինչ. մոռացաւ զիս : Կամ է ինձ ի Գաղղիա նաւարկել. անդ մտից ի սպաս ծառայութեան արքայի, շահեցայց արժաք բազում, եւ յորժամ ի բարձ ինչ հասից աւագութեան, հօրաբոյրն Լաթուր օրիորդին տացէ ինձ արդէօր ի կնութիւն զբոռնեակն իւր :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Ո՞չ ապարէն ասացէր ցիս, ճ բարեկամ, էրէ չես դու տոհմիկ որ :

ՊՕՂ.

« Զայդ մայրն իմ ասաց ցիս. զի ես եւ զայն չգիտեմ քե զինչ իցէ տոհմիկն լինել : Բնաւ ընդ միտս իմ անգամ չէ անցեալ էրբէք էրէ ես տոհմիկ քան զայլս իցեմ, կամ քե այլք քան զիս :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Անտոհմութիւնդ քո փակէ առաջի քո ի Գաղղիա զամենայն ճանապարհ հասանելոյ ի բարձ աւագութեան : Եւ ոչ այսչափ

միայն, այլ եւ ոչ մուտ իսկ գտցես յազատախումբ կանառս
ուրեր :

ՊՅԴ.

« Քո իսկ ցիս բազում անգամ ասացեալ է եթէ մի ի պատճառաց
մեծութեանն Պաղղիոյ եւ այս ինչ է, զի եւ տրուպն հպատակաց
կարող է թէկն ածել ամենայնի. եւ պատմեցեր էսս ինձ զհամ-
բաւատենց արանց բազմաց որ յանշուք է յաննշան պայ-
մանէ ի պատիւ վերաբերեալ՝ փառս յաճախեցին հայրենեաց :
Մի գարիութիւնս իմ արդէօք պատրել կամեիր բանիւդ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Քաւ յինէն, որդեակ, լքուցանել զքո արիութիւնդ երբէք :
Զվաղնչուցն ժամանակաց ճշմարիտ իսկ էին բանք իմ. այլ
զարդիս կերպարանափոխ եղես ամենայն. ամենայն ինչ կա-
շառով վճարի արդ ի Պաղղիա. ամենայն ինչ սակաւուց է եւ
ազգատոհմից տուեալ է ի բաժին ժառանգութեան, եւ կամ ի մասն
դասուց ինչ մարդկան : Արքայն զարեգական բերէ զնմանու-
թիւն, զորով յաժին աւագորեարն է դասք դասք պաշտօնեից
ըստ ամպոց ինչ օրինակի. յաննարից իմն է զոգցես եւ միոյ
միայնոյ ի նշույից անտի նորին կաթել ի վերայ քո : Էր երբեմն
զի տեսչութեանն իրք ոչ իբրեւ զայժմուս բազմամանուած էին.
յայնժամ անա երեւեցան երեւոյթք ինչ այնպիսիք : Յայնժամ
հանձար է վաստակք զարգացեալ բարգաւաճեցան ամենայն
ուրեր հանգոյն անարօք երկրի որ այն ինչ ախօսաբէկ յինելով
ուղղալիցս է բաջաբեղունս պտղաբերիցէ : Բայց գուն ուրեր է
գտանել արքայս վեհագինս որ կարող իցեն ճանաչել զմարդիկ
եւ ընտիր առնել նոցին. այլ յոյովք ի նոցանէ անձնատուրք են
ի սպառ ի խորհուրդս աւագանոյն է ի սաղրանս պեսպես
դասուց :

ՊՅԵ.

« Այլ թերեւս գտից զոր ի մեծամեծաց անտի որ պաշտպանել
ինձ յօժարեացի :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Որ կամիցի որ պաշտպանութիւն ի մեծամեծաց գտանել, պարտի պաշտօն հարկանել փառասիրութեան նոցին է. կամ բերկրանացն : Իսկ դու ոչ աջողեսցիս յայդմ էրբէք, անտոհմդ գոյով է. արդարակորով այր :

ՊՅԴ.

« Բայց արութիւնս քաջութեանց մեծամեծս արարից, հաւատարիմ յոյժ ի բանս իմ եղեց, անվրեպ ի կատարումն պարտուց պաշտամանս գտայց, է. նախանձաւոր է. անյողողող ի բարեկամութեանս, այնչափ զի արժանաւոր գանձն իմ կացուցից որդեգրելոյ միում ումէք ի նոցանէ. զոր օրինակ տեսի զայս պատահեալ ի նախնեացն պատմութիւնս զորս դուն էտուր ինձ ի վերժանութիւն :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Ո՛ր բարեկամ, առ Յոյնսն է. առ Հոռովմայեցիս, էս է. ի ժամանակս նուագելոյ պետութեանց նոցա, մեծարոյ էր յաջաւազանւոյն առաքինութիւն. իսկ առ մեզ արս յոյովս զիտեմ յամբոխէ անտի գերահռչակեալս յազգս ազգս ճարտարութեանց, է. չիք որ ի նոցանէ զոր յաւագացն որ տոհմից յորդեգիրս իւր առեալ իցէ : Երէ քագաւորքն մեր չէին, առաքինութիւն դատապարտ լինէր արդեօք յաւերժ ի Քաղղիա իբրէ գոեհկացն էւէք մասն բաժնի ժառանգութեան : Կանխեցի ասացի իսկ բեզ, էրէ է էրբէք զի շուք եղեալ պատուեն գառաքինութիւն յորժամ ակներէ. զնա տեսանիցեն. այլ զարդիս բարձր է. աւագութիւնք՝ նմա միայնոյ էրբեմն պահեալք՝ արժարով էւէք շնորհին :

ՊՅԵ.

« Երէ յաւագացն զոր չգտանիցեմ, ջան եղից ընդ միտ մտանել

դասու իրիք ընկերութեան մարդկան : Ջնորին զգեցայց զոգի եւ զկարծիս, եւ սիրելի զանձն իմ ընծայեցից նմա :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Ապա ուրեմն եւ դու իբրեւ զայլս ի մարդկանք գործեսցես . եւ դու եւս առ ոտն հարցես զմտաց քոց զխիղճ առ ի մեծութիւն հասանել :

ՊՕՂ.

« Ո՛ջ, քառ յինեմ . ճշմարտութեան եւեթ եղեց ես ցանգ ի խընդիր :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Թե այդպէս իցե, փոխանակ սիրելի զանձնդ առնելոյ, քերեւս ատելի իսկ եղիցիս : Նա զի ոչ մեծ ինչ փոյթ է դասուց ընկերութեանց գտակ լինել ճշմարտութեան : Յաջս մարդկան փառասիրաց ոչ ինչ խտիր է ընդ այս եւ ընդ այն կարծիս . շատ է զի ինքեանք յիշխանութեանն վայելիցեն :

ՊՕՂ.

« Եղևկ ինձ հիրացելումս . յամենայն կողմանց հերքիմ եւ մերժիմ : Ինձ դատակնիք լեալ է անցուցանել զառուրս կենաց յաննշան վաստակս հեռի ի Վիրգիլեայ . » եւ յոգևոց հանեալ հառաջեաց ի խորոց սրտեն :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Հնապա, Աստուած միայն եղիցի քո ապաւեն, եւ ընկերակցութիւն՝ մարդկայինս ազգ համօրեն . եւ մի՛ երբեք լիցի քեզ անջատել ի սոցանէ : Ազգատոհմ եւ ընկերութիւն, ժողովուրդք եւ քաղաւորք առ հասարակ վարակեալք են յանցնիւր կարծիս կանխակալս եւ յախտիցն կարիս . եւ բազում այն է զի հարկ է

ախտիք արբանեկել նոցին . իսկ Աստուած էւ մարդկայինս
ազգ զառաքինութիւն եւեք խնդրեն առ ի մենջ :

« Եւ զի է քեզ ցանկայ գեր ի վերոյ լինել այլոց ի մարդկանէ :
Ոչ ընդաբոյս ինչ է տենչդ այդ մարդոսմս էւ ոչ իրաւացի .
զի էքե ամենեքեան դովին կրիւք զգածէին , այր ընդ դրացոյ
իւրոսմ յար ի կռիւ կաքաւեր : Շատ լիցի քեզ լնույ զպարտս քո
ի պայմանին յորոսմ եղ զքեզ վերնախնամն տեսչութիւն . Երանի
անձինդ կարդասջիր զի տուաւ քեզ ունել ինքնութոյն խիղճ
գիտակցութեան , որով չկարօտիս հանգոյն աւագ որերոյ զան-
ձինդ բարեբաստութիւն զկրտսերացն էւ զնուաստից կախել
կարծեաց , էւ ըստ կրտսերացն օրինակի գետնաքարշ խոնարհել
առաջի մեծամեծաց առ ի զկեանս պանարելոյ : Յայնպիսոսմ
գտանիս դու երկրի էւ ի պայմանի յորս ոչ խաբկանաց պետք
են քեզ առ ի կեայ , ոչ փաղարուշ շողմանաց , էւ ոչ յանար-
գութիւն զանձնդ իջոնցանելոյ , որպէս առնեն յոգոնք ի նոցանէ
որք հետամուտ մեծութեան են յերոպա . չիք աստանօր առա-
քինութիւն էւ ոչ մի գոր պայման կենացդ չներիցե կատարել .
այլ մանաւանդ աներկեան համարձակութեամբ տուեայ է քեզ
բարեգորով լինել էւ ճշմարտախօս , անկեղծիկ էւ քաջուս ,
երկայնամիտ էւ ժուժկայ , զգաստասէր , ներողամիտ էւ բարե-
պարիշտ՝ առանց ինչ ծանակելոյ իմաստութեանդ որ դեռա-
փրիքն է տակաւին : Ազատութիւն էւ քաջողջութիւն , ուղղախոհ
մտաց խիղճ էւ բարեկամս տուեայ են քեզ երկինք . բազաւորք
անգամ յորոց ըղձանասդ շնորհս գտանել , լոկ էւ ունայն են
յայդրանոյ բարեբաստութենէ :

ՊՕԴ .

« Եղնակ զինեւ . Վիրգինէ չէ առ իս . էւ յորժամ զնա ոչ ունի-
ցիմ , չունիմ էւ ոչ ինչ . նովաւ էւ զամենայն ինչ ունիմ : Նա
միայն շատ է ինձ ի քաջատոհմութիւն , էւ ի փառս էւ ի մեծու-
թիւն : Բայց արդ քանզի մօրաբեռն նորա կամք են տայ զնա
առն ականաւորի , էւ ի ուսմամբ էւ վերժանութեամբ իմաստուն
լինի մարդ էւ համբաւատենչ , յուսումն էւ էս քեւակոխեցից :

Ստացայց գիտութիւն բազում, եւ նորօր սպաս հարից հայրե-
նեացն իմոց՝ առանց ինչ գեան ումեր հասուցանելոյ, եւ առանց
հպատակելոյ ումեր . արարից ինձ անուն մեծ, եւ փառացանձին
իմոյ եւ ինքն եւեր եղեց պատճառք եւ ժառանգորդ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Որդեակ, եւ քան զտոհմիկն լինել եւ քան զմեծափարթամ
ճոխութիւն՝ չքնադագիւտ է հանձար : Եւ քան զամենայն մե-
ծութիւնս արդարեւ իսկ գերապանձ է իմաստութիւն . քանզի
եւ անկապտելի է ամենեւին, եւ ամենայն ուրեր մեծարոյս զմեզ
գործէ յաջս հասարակաց : Սակայն եւ յոյժ բանկագնոյ է ստա-
նալ . քանզի բիւր ազգի ազգի տառապանաց պետք են, եւ դիւ-
րագգած բնութեան՝ որ չուսուականս զմեզ առնէ ի ներքոյ, եւ
արտաքոյ նշանակս հայածանաց ժամանակակցացն մերոց, առ
ի ձեռս բերելոյ զնոյն : Ի Գաղղիա այր օրինական չղնէ զսկն
փառաց զօրականին, եւ ոչ զօրականն փառաց նաւագին . այլ
ամենեքին առ հասարակ ընդ բոյղ անց եւ դարձ առնեն ձանա-
պարհ, զի եւ ամենեցուն ըղձալի է հանձարեղս երեւել : Սպաս
հարից, ասես, մարդկան . սակայն ծանիր զի մեծ էս օգուտ
գործէ մարդկան այր՝ որ որայ մի առաւել ի բոյս ածիցէ յեր-
կրէ, քան զայր որ մատեան մի յօրինեալ տայցէ ի ձեռս նոցա :


ՊԹՂ.

« Ո՛հ, նա որ զսեխարմաւենիս զայս տնկեաց՝ բիւրապատիկ
օգուտ գործեաց եւ բաղցրագոյն արար պարգեւ բնակչաց մայ-
րեացս քան թէ դարանս մատենից շնորհեր նոցին : » Եւ զոյգ
ընդ բանին զիրկս արկեալ զժառովն ողջուներ զայն կարոզին :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Հրաշային ի մատեանս՝ Աւետարանն սուրբ, որ զհաւասարու-
թիւն, զսէր, զմարդասիրութիւն եւ զմիաբանութիւն եւեր քա-

րոզէ, ընդ բազմադարեան ժամանակս պատրուակ մոլեգնութեան գտաւ Եւրոպացւոց : Քանի հարստահարութիւնք գործին դեռ, եւս յերկրի յանուն նորին հրապարակաւ եւ առտնին : Եւ զայս տեսեալ ո՞վ որ ձեռս յանձին հարեալ պարծիցի օգտամա-



տոյց մարդկան լինել գրենով : Յուշ բեզ անցքն որ անցին ընդ յոգունս յիմաստասիրաց անտի որ գիմաստութիւն բարոզեցին նոցա : Հոմերոս որ գեղայօրէն տաղաչափութեամբ պճնեալ զարդարեաց զայն, ի մոյր շրջեր մինչ կենդանին էր : Սոկրատ որ իւրովքն ատենաբանութեամբք եւ վարութ զաստիօսութիւնս սիրելիս առնէր նոցա գիմաստութենէ, իբրեւ իրաւամբ զատաստանի դեղակուր մանուամբ վճարեցաւ ի նոցանէ : Նորին աշակերտ վսեմախոնն Պղատոն ի գերութիւն մատնեցաւ հրամանաւ այնր իսկ իշխանի որ պաշտպանէրն նմա. եւ վաղ եւս քան զնոսին Պիւթագորաս, որ եւ յանբան անասունս անգամ գրասիրէր, կենդանւոյն ի Կրոտոնացւոցն այրեցաւ : Զի եւս յերկարեմ. նա եւ յոյովագոյնք ի հոյակապ որերոյն անուանց որ մինչեւ առ մեզ հասեալ ժամանեցին, այլակերպեալք են հենգնականօր ինչ առաստութեամբք գրուսոյ բարուց նոցին. եւ մարդկայինս ապաշնորհութիւն ախորժե իմն յայնպիսեաց անտի յորջորջանաց ճանաչել զնոսա. եւ էրէ ի խոանէ բազմութեան նոցա սակաւուց ոմանց անաղօտս եւ անարատս մինչեւ առ մեզ ժա-

մանեայ իցեն փառք, պատճառք այն իսկ են զի ի ժամանակակցացն կենաց կցորդութենէ ի բացեայ վարեայ են նորա կենցաղ, հանգոյն իմն անդրեացն այնոցիկ որ անվբարս պեղին ի դաշտաց Նլլաղայ եւ Իտալիոյ . եւ զի գետնասոյզ բաղեայ կային ընդ երկրաւ՝ յայն սակս եւեթ ի խժղժիցն գերծան մուլեզնութենէ :

« Տեսանես ապարեն, զի առ ի ձեռս բերելոյ զմրրկայոյզն փառս դպրութեան՝ բազում առաքինութեան պետք են, եւ կազմ եւ պատրաստ կալոյ ի բոլորապտուղ նուիրումն անձին : Բայց եւ համարիցիս եթէ արք մեծատունք որ ի Գաղղիա՝ ըղձակերտք իցեն այնմ փառաց : Ունչս առնեն նորա զմատենագիր մարդկան, որոց գիտութիւնք ոչ բարձս առագութեան պատրաստեն ի հայրենիսն, ոչ յանձանձանս իրաց աշխարհին, եւ ոչ մուտս յարբունիս : Ի մերումս յայսմ դարու, յորում անխտիր է ամենայն որ առ ամենայն ինչ, բայց միայն յընչիցն ճոխութենէ եւ ի հեշտութեանց, դուն ուրեք յուզին հայաձանք . եւ սակայն գիտութիւնք եւ առաքինութիւն ոչ ումեք առաջնորդեն ի համբաւ եւ ի մեծարանս, քանզի ամենայն ինչ ի ժամանակիս գինք են արծարոյ : Էր երբեմն զի վարձուց հատուցմունք ի պատրաստի կային գիտութեանց եւ առաքինի վարուց յայլ եւ այլ պաշտամունս եկեղեցւոյ, եւ ատենից դատաստանի եւ տեսչութեան աշխարհի . իսկ զարդիս ի մատենից եւեթ յօրինումն են դորին պիտանացու :

« Սակայն պտուղն այն անձանօք ի քմաց աշխարհի որերոյն՝ ցանգ իսկ արծանի իւրումն երկնային ծագման գտանի : Բանզի մատենիցն այնոցիկ եւեթ է գործ սեպհական՝ լուսապայծառ յարդարել զանշուրքն առաքինութիւն, մխիթար լինել վշտացելոց, լուսատու կայ ազգաց, եւ արքայից անգամ զճշմարտութիւն բարբառել : Եւ այս պաշտօն եւ իշխանութիւն առանց ընդ բանս ինչ ածելոյ վեհագոյն քան զամենայն պաշտամունս է որովք մեծարիցեն երկինք գայր մահկանացու ի վերայ երկրի : Եւ ո՞վ որ ոչ սփոփիցի ընդ անիրաւութիւն եւ կամ ընդ արհամարհանս ընչաւետ մարդկան՝ յորժամ զմտաւածիցէ զի իւրն երկասիրութիւն դարուց ի դարս եւ ազգէ յազգ

անցեալ գնացեալ՝ ամբարտակ արձանացի ընդդէմ մոլորութեան եւ բռնաւորաց . եւ յանշուք եւ յաննշան պայմանեն յորում եկեացն՝ ծագեսցեն փառք այնպիսի որ ստուերածս անցեն զփառօք արքայից բազմաց, որոց արձանքն յիշատակի ի խորս մոռացութեան թաղեսցին, թեպէտ եւ բիւրապատիկ ջան ի գործ առնիցեն կանգնողք նոցին սուտակասպասք եւ մարդէլոյզ գովաբանք :

ՊՅԴ.

« Ո՛հ, ինձ յայն սակս եւեթ ցանկալի են այն փառք զի զՎիրգինեաւ զեղուցում զայն, եւ տիեզերաց համօրեն զնա առնիցեմ սիրելի : Բայց ադէ դու որ այդբանեաց գիտակ ես իրաց, եկ ասա ցիս եթէ լիցի մեզ ամուսնաւորել ընդ միմեանս թէ ոչ : Ո՛ տայր ինձ գէթ յայն սակս իմաստուն լինել՝ զի գուշակ հանդերձելոցն լինիցիմ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Եւ ո՞ այն որ իցէ որ կեալ յօժարեսցի յետ միանգամ հանդերձելոցն իրագէկ լինելոյ : Ապաքեն մի միայն կանխածանօք պատահար ի հոգս բազումս արկանէ գմեզ . իսկ տեսիլ անվրեպ ինչ ադետից որ գալոցն իցեն ի վերայ, դեղեալ դառնացուցանէ անշուշտ զամենայն անուրս կենաց մինչեւ եկեալ հասանիցեն ադետքն : Այլ եւ ոչ յոր կանս արժան է մեզ կարի իմն լինել խորասոյզ եւ հմուտ . եւ երկինք որ զխոհականութիւն մեզ ետուն՝ զի պիտոյիցս մերոց յառաջատես լինիցիմք, ետուն մեզ եւ զպէտս մեր՝ որպէս զի ջափ եւ սահման մերումս դնիցեմք խոհականութեան :

ՊՅԵ.

« Ասացեր էրէ մարթի արժարով զնոց սուևույ յԵրոպա բարձս աւագութեան եւ պատիւս մեծարանաց : Գնացից ես ի Պենկալա եւ ճոխացայց, եւ անտի ի Փարիզ երթեալ հարսնացուցից ինձ զՎիրգինէ : Հնապա փութացայց ի նաւ մտանել :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Զինչ խօսիս . լքեալ բողոքոցնս զմայր նորա եւ գրոյղ :

ՊՅԴ.

« Դու ինքնին ետուր ինձ խորհուրդ ի Հնդիկս զնայոյ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Աստ էր յայնժամ Վիրգիլն : Բայց այժմ դու միայն ես ամուր
ապաստանի մօրն քում եւ մօր նորա :

ՊՅԴ.

« Այլ Վիրգիլն բարիս նոցա արասցէ ընդ ձեռն ընչաւետ ազ-
գակցին :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Սովոր են մեծատունք այնոցիկ եւեք առնել բարիս ' որք մե-
ծարանս դնիցեն նոցա յաշխարհի : Եւ նոցա արեանառուք քան
զլաթուր տիկինն եւս ողբոց արժանիք , որք եւ քափուր մնա-
ցեալք ի նպաստից մեծատանցն ' զազատութիւն իւրեանց փո-
խանակեն ընդ հացի , եւ երթեալք ի մենաստանս ուրեք արգե-
լական վարեն կենցաղ :

ՊՅԴ.

« Ո՛վ անհեթեթ պայմանաց երոպական աշխարհին : Ա՛հ , չիք
հնար , հարկ անհրաժեշտ է զի յետս այսրեն դարձցի Վիրգիլն :
Բնաւ զինչ պետք իցեն նմա ազգակից ունել մեծափարքամ : Ո՞չ
ապարեն երջանկագոյն էր նա ընդ յարկաւ հիւղիցս մերոց , եւ
չքնադագեղ ընդ կարմրերանգ վարչամական , կամ պսակահիւս
ժողկամբքն որովք զգլուխն զարդարեր : Դարձիր Վիրգիլն ,
դարձիր . թո՛ղ զպատրանս քո եւ զմեծութիւնս : Օ՛ն էկ վերստին

ի քարածայռս յայտոսիկ, ընդ հովանեաւ մայրեացս եւ քորե-
նեացն մերոց : Եղնակ զինեաւ, գուցե դու արդ ի տառապանս
իցես... » Եւ զոյգ ընդ բանիցն յարտասուս յուծանէր : « Մի
ինչ բագուցանէր յինեն, հայրիկ. եթէ ոչ ունիցիս ասել թէ
հարսնասցի ինձ Վիրգիներ, գէթ զայն ասա ցիս եթէ սիրիցէ նա
զիս տակաւին ի միջի անդ աւագախոսմբ որերոյն որ ընդ ար-
քայի յինին յսօսակից, եւ գնան տեսանել զՎիրգիներ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Քաջ գիտեմ ես, զի բարեկամ, զի սիրե նա զքեզ. եւ այսմ
բազմապատիկ են պատճառք, եւ մեծ քան զամենայն պատճառս՝
նորին է առաքինութիւն : » Յայս բան ի վեր վազեալ փարե-
ցաւ բերկրայից զպարանոցաւ իմով :

ՊՕԴ.

« Համարիցիս եւ դու նենգամիտս զկանանին Երոպայ՝ որ-
պէս ի դեմս ածեն կատակերգութիւնք եւ զբեանն զորս յընթեր-
ցումն ինձ ետուր :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Նենգամիտ է կանանին յաշխարհս յորս բռուներ են արք
նոցա. քանզի եւ ամենայն ուրեք բռնութիւն զնենգութիւն
ծնանի :

ՊՕԴ.

« Եւ յիբր իցե հնար բռուն յինել առ կանայս :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Այնու զի ամուսնաւորեն զնոսա առանց ինչ հարցանելոյ
զկամս նոցին. զօրիորդ դեռահասակ ընդ ծերունւոյ պսակեն,
եւ զկին դիւրագորով ընդ առն ցրտաբարոյի :

ՊՕԶ.

« Եւ հիմ չամուսնացուցանիցեն զորս քաջայարմարքն իցեն իրերաց. զերիտասարդ ընդ երիտասարդի, եւ զսիրելին ընդ սիրունոյ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Քանզի ի Քաղղիա՛յոյովք յերիտասարդաց քափուր են յընչից, եւ յաւագոյքս եւեր փարթամանան : Մինչ ի տիս պատանեկութեան իցեն՝ զառածանեն զկանայս դրացեացն իւրեանց. եւ յալեւոյք հասեալք՝ ջյանկուցանեն յինքեանս զամուսնացն սեր : Եւ որպէս ինքեանք զայս յերիտասարդութեան պատրեցին, եւ այլք զնոսին պատրեն ի ծերութեան : Եւ այս մի է ի փոխադարձ հատուցմանց տիեզերական արդարութեանն որ վարէ զաշխարհս, եւ ցանգ ի կշիռ զմիմեանս բերեն ծայրայեղ մոյորութիւնք : Այսպէս ահա ոչ սակաւք յերօպացոց ի կրկնակի անկարգութեանս ծնգին. եւ այնչափ առաւել աճեալ բազմանայ ապականութիւնս այս ի քաղաքաժողով ընկերութիւնս, որչափ յարս սակաւարիւս ամփոփեալ կուտին ճոխութիւնք : Պարտեզ իմն է պետութիւնն, յորում տունկր մատաղք չգօրեն ուռճանալ երէ գուցեն ծառք բարձրաբերձք հովանացեալ զնոքօք. սակայն եւ այս ինչ խտիր կայ ի միջի, զի ծառք բարձրուղեշք սակաւաորք մարքին վայելչագեղ զպարտեզն յարդարել. իսկ պետութեանն բարգաւաճութիւն՝ ի հպատակացն բազմութեան է եւ ի հաւասարութեան նոցին, եւ ոչ երէ ի սակաւարիւ ընչաւետան :

ՊՕԶ.

« Եւ բնաւ զինչ պետք իցեն փարթամութեան՝ զի յամուսնութիւն որ զայցէ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Որպէս զի ի շիութեան եւ յանգործութեան զաւուրս իւր անցուցանիցէ :

ՊՅԳ.

« Եւ առ իմէ ջվաստակել . ահա ես վաստակելով վաստակեմ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Քանզի յԵրուսա ձեռականն վաստակ յանպատուութիւն գրի մարդկան . վասն որոյ եւ մեքենական կոչի այն աշխատութիւն : Այլ եւ Երկրագործականն իսկ արուեստ արհամարհ քան զայլսն է , եւ քան զարդիւնարարն գեղջուկ արգոյ եւս է առ նոսա այր արուեստագիտ :

ՊՅԳ.

« Զինչ ասես . արուեստն այն տաժիչ մարդկան խոտան գրի յԵրուսա : Ոչ կարեմ ի վերայ կայ բանիցդ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Ո՛հ , չիք հնար մարդոյ որ ի բնութեան սնեայ իցի եւ աճեցեայ՝ հասու լինել ապականութեանց քաղաքաժողով ընկերութեան : Զբարեկարգութիւն առնուլ ի միտ՝ ոչ ինչ յանհնարիցն է , այլ անկարգութեան լինել խելամուտ ոչ բնաւ մարքի : Համեմատութիւն իմն եւ ջափ եւ պայման կայ գեղոյ , առաքինութեան եւ բարեբաստութեան . իսկ տգեղութեան եւ ախտից եւ թշուառութեանց ոչ բնաւ :

ՊՅԳ.

« Ապա ուրեմն երանելիք են մեծատունք , զի չիք ինչ որ խոջընդոտն լինիցի նոցա , եւ մարքեն լիապարգեւս առնել հանոյականօք զսիրելիսն իւրեանց :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Այնու իսկ զի անջան բերեն նորա ի ձեռս զբերկրականսն՝

բազում այն է զի յափրացեալ գտանին : Ո՞չ ապաքեն քեզեն
առեալ է քո զփորձ՝ զի հանգստեանն բերկրութիւն՝ աշխատու-
թեան է պտուղ, որպէս է. ճաշակելոյն հեշտութիւն՝ քաղցին
արգասիք, է. ըմպելոյն ախորժ՝ ծարաւոյ ծնունդ : Նոյնպէս
ահա է. գսիրելոյն է. գսիրելի լինելոյ հրճուանս՝ բազում նե-
ղութեամբ է. տառապանօք է ի մեռս բերել : Ընչից յաճախու-
թիւն զառաջս առեալ այսր ամենայնի պիտոյից, բառնայ
ի մեծատանց զամենայն զբերկրանս զայսոսիկ : Յղփութեան
նոցին զհետ զայ տաղտկութիւն, է. ընդ նմին ամբարհառա-
ճութիւն՝ արգասիք փարբամութեան, որ է. ի դուզնաբեից ինչ
քերութեանց ի խոր խոցի, բեպէտ է. չհրապութիցի այլ էսս
ի կարի իսկ մեծամեծացն հեշտութեանց : Բուրումն անուշու-
թեան բարաւոր վարդից սո. վայրկեան մի էւեր ժամանակի
հեշտացուցանէ զայր. այլ ցաւ միոյ միայնոյ ի խայթոցաց նոցին
հարուստ ինչ ժամանակս ազդի ի մարմնի անանց : Ի բերկրա-
նաց միջի ցաւ մի ի ցաւոց՝ մեծատանց փուշ է ի հոյս ծաղ-
կանց. զնորին հակառակն, չքաւոր մարդկան դոյզն ինչ բեր-
կրանք ի բազմութեան աղետից՝ ծաղիկ է ի մեջ փշոց, ընդ որ
զմայլեալ բերկրին : Ամենայն ազդումն ներհականան սովոր է
առաւելոյ ի սաստկութիւն. քանզի գուգակշիռ գործեալ է բնու-
թեան զամենայն : Եւ արդ աղէ սաս. զո՞ր պայման նախամե-
ծար առնիցես. զչունելն ինչ իմիք գոզցես ակն է. յամենայնէ
զանգիտել, երբ զչզանգիտելն ուստէք բնաւ, է. ակն ունել ամե-
նայնի : Առաջինն մեծատանց է պայման, է. երկրորդն չքաւո-
րաց : Սակայն է. երկրորդն ծայրայեղ խոտորմունք դժուար-
ըմբերք են մարդումս, քանզի բարեբաստութիւն նորա ի չա-
փոյսն էւեր է. յառաքինութեան հաստատեալ կայ :

ՊՕԴ.

« Եւ զինչ առաքինութիւնն իցէ :

ՄԵՐՈՒՆԻՆ.


« Որդեակ իմ, դու որ քոյով վաստակօքդ զծնողս քո ձերա-

տածես, ջկարօտիս ուսանել թէ զինչ իցէ առաքինութիւն :
Առաքինութիւն է բունն առնել անձին ի շահն օգտի այլոց առ
ի հաճոյ լինել Աստուծոյ միայնոյ :

ՊՅԶ.

« Բնքէ, հրբան առաքինի է Վիրգինէ : Առաքինութեամբ տեն-
ջացաւ նա ընչաւետ լինել զի յաճախեցէ ի բարեգործութիւն :
Առաքինութեամբ հեռացեալ մեկնեցաւ նա ի կղզւոյ աստի .
առաքինութիւն դարձեալ ածցէ զնա այսրէն : »

Խորհուրդ մօտայուստ դարձին Վիրգինեայ այնպէս վառեալ
բորբօրէր զուշ մտաց պատանւոյն, զի եւ համօրէն խեբբ իւր
եւ անձկութիւնք իբաց փարատէին : Վիրգինէ գրեաց ինչ ոչ,
ասէր, քանզի հուպ ընդ հուպ այսր եկեացէ ինքնին . ոչ բազում
ինչ ժամանակաց պէտք էն գալոյ յերօպայ՝ յորժամ հողմն
աջողակ շնչիցէ : Եւ համարէր զնաւսն որ գայս միջոց տարա-



ծութեան ջորէրհագար եւ հինգ հարիւր խրասախաց հատեալ
անցեալ էին յամիսս երիս : Իսկ նաւն որ բարձեալ բերիցէ զՎիր-
գինէ՝ ոչ ինչ սաւելի յամեցէ անշուշտ քան զամիսս երկուս .
քանզի քաջարուեստք էն արդ նաւակերտք, եւ նաւաստիք ժա-
մանակիս ճարտարք յոյժ : Ասէր եւ զհանդերձանսն եւ զյօրի-

նուածութիւնս որովք պատրաստէր ժողովել զնա, զնորակերտ օրարանն զոր կառուցանել կամեր, զբերկրանսն է. զյանկարծադեպ զարմանս զորս խորհեր ընձեռել նմա զօր ամենայն՝ ի հարսնութիւն իւր զնա ածեալ : Ի հարսնութիւն... Յայս խորհորդ՝ սխրացեալ յափշտակէին միտք նորա : Եւ դարձեալ առ իս ասեր. « Յայնժամ էւ դու, հայրիկ, առ ի զքօսանս քո էւեք ձեռն ի գործ արասցես. քանզի ընչաւետ էլով Վիրգիւնեայ, եղիցին մեզ հնդիկք բազում որք վատակեցեն փոխանակ քո : Ընդ մեզ կացցես մնացես դու անմէկին, էւ յար զքօսանաց էւ բերկրութեան դիցես միտ : » Եւ այլ յայլմէ լեալ առ խնդին, ընթանայր առ ընտանիսն՝ կցորդս առնել էւ զնոսա իւրոցն հրճուանաց :

Ի սուղ ինչ ժամանակի կասկածանք մեծամեծք զյուսից մեծամեծաց փոխանակեն զտեղի, էւ բուռն կիրք ի ներհականսն յեղմունս մդեալ արկանեն զոգի : Բազում այն էր զի ի վաղիւ անդր էլաներ էւ գայր առ իս բաղձեալ տրտմութեամբ, էւ ասեր. « Վիրգիւնէ չքոքէ առ իս : Երէ մէկնեալ էր յԵւրոպայ, ազդեր ինձ զչու դարձին : Ո՛հ ճհ, ստոյգ իսկ է համբաւն ընթացեալ զնմանէ, էւ մօրաքոյրն էտ զնա ի կնութիւն առն ումեմն աւագի : Ընչիցն սեր խարդաւանեաց էւ զնա ի կորուստ, որպէս էւ զյուովս ի մարդկանէ : Ի մատեանսն յայնոսիկ որ ճշգրիտս տան զնկարագիր կանանց, առաքիւնութիւն պատճառս էւեք մատակարարէ հիւսուածոյ վիպասանութեան : Երէ արդարէւ առաքինի էր Վիրգիւնէ, ոչ թողոյր լքաներ զմայրն իւր էւ զիս : Ահա գաւուրս իմ անցուցանեմ էս ի նա խորհելով, էւ նա զիս մոռանայ. էս տառապիմ, էւ նա յօրանայ : Ո՛հ, այս խեղութիւն զիս յանյուսութիւն կործանէ : Տաղտուկ է ինձ աշխատութիւն, էւ ժողով մարդկան ի ճանճրութիւն : Իցիւ թէ մարտ պատերազմի բանայր ի Հնդիկս. չուեալ էրբայի անդէն մեռանել : »

ԾԵՐՈՒՆԻՆ.

Եւ ասեմ զնա. « Որդեակ իմ, արիութիւն որ մահու առնէ զմեզ դիմագրաւ, վաղանցուկ արիութիւն է, էւ ի սնտի

դրուատեաց մարդկան եւեր արժարծեայ : Է՛ է արիութիւն
չքնաղ եւ կարեւոր, այն իսկ որ օր ըստ օրէ առնէ մեզ հան-
դութեյ առանց վկայից եւ դրուատեաց՝ ճախողակի արկածից
կենցաղոյս . գհամբերութիւն ասեմ : Սա ոչ ի կարծիս այրոց
յենու, եւ ոչ ի կրիցն մերոց հրապոյրս, այլ ի հաճոյս կամացն
Աստուծոյ : Համբերութիւն՝ արիութիւն է առաքինութեան :

ՊԹՂ.

« Ո՛հ, եղուկ զինեւ, գոչեաց Պօղ. քափուր եմ ես ուրեմն
յառաքինութենէ : Ամենայն ուստեր տագնապ է ինձ եւ յուսա-
հատութիւն : »

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Եւ կրկնեայ անդրէն ասեմ . Առաքինութիւն որ ցանգ անմեռ
իցէ եւ անասան եւ անփոփոխ, ոչ է տուեայ մարդումս ի
բաժին : Ի խոան անդ կրից որ վեր ի վայր յուզեն զմեզ՝ միտք
մեր ամբոխեայ մբագնին . բայց են են եւ դամբարք յորոց մար-
քիմք վերստին յուցանել զջահ նորին . եւ դամբարք՝ դպրու-
թիւնքն են :

« Դպրութիւնք, որդեակ իմ, օճանք են երկնատուրք : Ճանանչք
են իմաստութեանն որ գտիեգերս վարէ, եւ գոր աստուածայնով
իմն ազդմամբ ուսաւ մարդ հաստատել ի վերայ երկրի : Հանգոյն
իմն ճառագայթից արփենւոյն՝ յուսաւոր են նորին, զուարքա-
ցուցանեն եւ ջեռուցանեն . քանզի եւ հրատք են աստուա-
ծահրաշք, եւ զօրեն կրակի գբնութիւնս համօրեն ի սպաս մե-
րոց պիտոյիցս նուաճեն : Ի ձեռն դպրութեանց շուրջ զմեօք բո-
լորեմք գերս առ հասարակ, զվայրս եւ զմարդիկ եւ զժամա-
նակս, եւ նորօք ուսանիմք զկանոնս ուղղութեան մարդկայնոյ
կենցաղոյս : Նորին եւ զկիրս ցածուցանեն եւ զախտս սանձա-
կոծեն, զառաքինութիւնս արժարծանեն վսեմական օրինակօր
ընտիր ընտիր որերոյն՝ գորս ի գովութիւն առեայ հոջակեն,
եւ զնոցա տիպս կերպարանացն ցանգ պատուականս մեզ ըն-
ծայեայ ցուցանեն : Դստերք երկնից են դպրութիւնք՝ յերկիր

վայրիջեալք ի սփոփումն աղետից ազգի մարդկան : Մատենագիրք հոյակապք որ նոցա ազդեցութեամբն խօսեցան, ի կարի իսկ դժնդակ է. ի դժոխքմբեր ժամանակս քաղաքաժողովն ընկերութեան ծաղկեցին, ի խժոժութեան դարսն ասեմ է. յապականութեան : Դպրութիւնք են որ սփոփեալ մխիթարեցին զանքիւ մարդիկն՝ որ է. քան զքեզ ջարաբաստիկք էին, որդեակ . զՔսենոփոն զտարագրեալն ի հայրենի աշխարհէն՝ յետ անդրէն դարձոնցանելոյն Հելլենո տասն հազար . զԱփրիկեցին Սկիպիոն, զտաղտկացեալն ի Հռովմայեցոցն զքաղաքաւորութեանց . զԼուկուդոս ի դաւաճանութեանց նոցին . զԿատինա յապաշնորհութենէ արքունեաց : Հանձարեղքն յազգաց Հելլենք՝ միում միում ի Մուսայիցն խնամակալաց դպրութեան՝ զմի մասն իմացութեանս մերոյ սահմանեալ էին ի վարչութիւն . հարկ ուրեմն է է. մեզ ի նոսա առնել զկիրս մեր ապաստան, որպէս զի լծադիր է. սանձարկու նոցա լինիցին : Հարկ է է. նոցա այնպէս ուղղել է. վարել զհոգեկանսն մեր կարողութիւնս, զոր օրինակ է. ժամք լծեալ վարելն զԱրեգականն երիվարս :

« Հնապա ընթերցիր, որդեակ : Որ յառաջ քան զմեզ մատենագրեցին իմաստունք՝ ուղեւորք ոմանք են որ կարապետեցին մեզ ի շաւիղս ճախողակ բաղդին, է. ձեռն կարկառեալ հրաւեր մեզ կարդան ի ժողովս իւրեանց երթեալ խառնել մեզ, յորժամ ապախտ առնիցիմք յամենեցուն : Մատեան ընտիր՝ ընտիր է բարեկամ :

ՊՕԴ.

« Բնփէ, գոջեաց Պօղոջ ինչ պետք էին ինն ընթերցանութեան մինչ աստն էր Վիրգիլնէ : Ոչ քաջութս ինչ որ էր նա՛քան զիս . բայց յորժամ բարեկամ իւր զիս ձայնելով առ իս ակնարկեր, ջմարքեր ինն համակել ի տրտմութիւն :

ԾԵՐՈՒՆԻՆ.

Ե. ասելի ցնա՛ . « Արդարեւ ջիբ ինչ քաղցրախորժ քան զտարփածու որ սիրիցեն զմեզ . այլ է. գուարքութիւն իմն քերէ .

գտանի յանձին կնոջ մարդոյ որ մերժեալ փարատե գրախիժ
առն : Շնորհք երեսաց նորա հալածական տանին գտեալորմի
գմբադս տագնապիչ խորհրդոց , եւ ի դեմս կերպարանաց
նորա նկարեալ տեսանի գեղ սրտառուչ եւ աներկմիտ վստա-
նութիւն . իցէ ինչ խնդութիւն որ նորա խնդութեամբն ջառաւե-
լութեոյ , եւ կայցէ բնաւ ուրեք ճակատ խորշումեալ որ ոչ ի ժպիտ
նորին ձգտեալ պարզիցի : Ո՞ր այն սրտմտութիւն իցէ որ ար-
տասուաց նորին հանդարտիցէ : Վիրգիւնէ ի դարձին իւրում
առաւել եւս քան զբեզդ գտցի զարդարեալ իմաստասիրու-
թեամբ : Զարմասցի նա յոյժ ընդ պարտիզին քերահոգ անշքու-
թիւն , նա որ ի գեղապանոյնն նորին շքեղութիւն եւեք խոկայ,
քեպէտ եւ ի մօրաքեռեւն իւրմէ խութիցի , քեպէտ եւ առ ի մօրեւն
եւ ի քեւն ի բացեալ կայցէ : »

Խորհուրդ մօտայուտ դարձին Վիրգիւնեայ կազդուրեալ զա-
րիութիւն Պօղայ՝ ածեր ձգեր զնա ի վաստակսն իւր դաշտա-
կանս , եւ ի վիշտս անդ տառապանաց իւրոց բարեբաստիկ իմն
էր , այնպիսի եղեալ կէտ նպատակի վաստակոցն՝ որ ընձային
էր իւրումն ցանկութեան :



Գ Լ Ո Ւ Խ Ե .

Յառաջօտու միում ընդ այգս այգոյն (այն օր քսան է. չոր-
րորդ էր դեկտեմբերի 1744 ամին) վաղայարոյց լեալ Պօղայ'
Էտես դրօշ սպիտակափառ. ծածանեալ ի Գիւտի լերինն : Եւ էր
դրօշն այն նշանակ նաւու. յերեսան եկելոյ ի ծովուն : Ընթացաւ



Պօղ ի քաղաք անդր' գիտել էրէ բերիցէ նաւն այն գրոյց ինչ
գՎ.իրգինեալ. Եւ. Եկաց մնաց անդ մինչէ. ցղարն տեսչի հան-
գրուանին որ ի նաւ. անդր էրբեալ էր մակուկաւ. ըստ սովորու-
թեանն ի բննութիւն : Ուր ուրեմն ընդ էրեկս աւուրն դարն

անդրե՛ն արարեալ առնն՝ ազգ արար քաղաքապետին զի երե-
ւեալն այն նա. Սեն-Փերան էր, եօրն հարիւր տակառաջափուց
ուներյով մեծութիւն, եւ անուն նաւապետին Պ. Օպեն. չորիւր
խրասախօր հեռի է՝ ասէ՛ ի ծովափնէս, եւ երէ աջողակ շնչիցե
հողմն, քերէս վաղիւ գկնի միջօրեին մտցէ ի Փոր-Լուի. իսկ
ի ժամուն անհողմութիւն մեծ էր : Միանգամայն եւ գամենայն
քղբեանն զորս բերէր նաւն ի Գաղղիոյ՝ ետ տեսուչն քաղաքա-
պետին : Եւ առ Լարուր տիկին եւս գոյր բուղթ մի՝ ձեռագիր
Վիրգիլեայ : Ապշոպեաց գայն անդէն Պօղ, համբուրեաց ցնծա-
լից հրճուանօր, եւ եղեալ ի ծոցին դիմեաց ի բնակարան անդր :
Ի նշմարել իւրում ի բացուստ զընտանիսն՝ որ համախումբ



իւրումն դարձի ակն կալեալ մնային ի Հրածեշտի վիմին, յօղս
վերամբարձեալ զբարտեզն տատանէր՝ ոչ ինչ գօրելով յօղել
բարբառ. . Եւ նոյն հետայն ժողովեցան ամենեքին առ Լարուր
տիկին զիջութիցեն զբանս նամակին :

Ծանօթս տայր Վիրգիլե՛ մօրն զի բազում ինչ անցք չարեաց
անցեալ էին ընդ նա յերեսաց մօրաբեռն, որ ամուսնացուցանել
զնա կամեր բռնութեամբ, ապա եւ անժառանգել, եւ ապա յետս
դարձուցանել յայնպիսում ժամանակի՝ յորում չէր հնար նմա

ժաման լինել ի կողմին Գաղղիոյ, բայց ի մրրկայոյց յեղանակսն .
զամենայն ջան ի գործ արարի, ասէր, շրջել զնա ի մտացն՝ յուշ
ածելով նմին զպարտս իմ առ. մայրդ եւ. առ. սովորոյքս ան-
տիական հասակիս . այլ ի գուր. բանգի նա իբրեւ ընդ պանդոյր
որ օրիորդ, որոյ բիւրեալ իցեն միտք յընթերցմանէ վիպաց
այնպէս հայեր յիս . եւ արդ համօրէն ամենայն բարեբաստութիւն
իմ այս է, ասէր, զի տեսից վերստին եւ ողջագութեցից զագ-
գատոհմն իմ սիրելի . եւ երէ քոյլ տայր ինձ նաւապետն, այժ-
մէն իսկ յառաջումէ օրես մտեալ ի կուր տեսչին՝ զիղծս անձ-
կայրեաց սրտիս կատարելի . բայց նա հակառակ էկաց ջուռոյս ի
պատճառս հեռաւորութեան ցամաքին եւ այետանջ ծովուն որ ի
խորս, րեպէտ եւ անհողմութիւն է ի ժամուս :

Այն ինչ վերձանութիւն բարտեգին աւարտեր, ազգատոհմն
ողջոյն ուրախութեամբ մեծաւ խնդացեալ գոչեցին նրճուանօր .
« Վիրգինէ հասեալ կայ . » տեսարք եւ ծառայք գիրկս արկեալ
համբութեցին ընդ միմեանս, եւ ասէ Լարուր տիկին ցՊօղ .
« Որդեակ իմ, երբ եւ ծանօղրացւոյն մերում զգայուստն Վիր-
գինեալ : » եւ անդէն ջան յուցեալ Դոմինիկեալ ի մարխէ՝
յուղի անկան ընդ Պօղայ գալ առ իս :

Էր ժամ իբր տասներորդ երեկոյին, եւ ես այն ինչ դեռ եւս
ի մայր գճրագն իմ դարձուցեալ յանկողին մտանելի, եւ անա
յոյս յանտառին հարաւ յաջս իմ ընդ խաղխամս հիւղին իմոյ :
Փոյր ընդ փոյր յուայ եւ զճայն Պօղայ զի կոչեր զիս : Ընդոստ
առ ժամայն յարեալ վաղվաղակի, եւ ջեւ զհանդերձս իմ ար-
կեալ էր զանձամբ՝ մինչ նա այլ յայլմէ եղեալ եւ ամենեւին
շնչասպառ՝ վագեաց փարեցաւ զպարանոցաւս եւ ասէ . « Արի
զնասցուր, եհնս Վիրգինէ . ճն խրի զնասցուր ի նաւահան-
գիստն . ի յուսանայ այգուն արասցէ նաւն զմուտ իւր անդր : »

Անդէն առ ժամայն անկաք մեր յուղի : եւ մինչդեռ անցա-
նեաք ընդ մայրիս երկայնանիստն լերին, եւ հասեալ իսկ էար
ի ճանապարհն որ տանի ի Կիտրոնեացն ի նաւահանգիստ
անդր, եւ անա ոտնաձայն մարդոյ որ զնէտ իմ գայցէ՝ հարաւ
յունկն իմ . եւ էր հնդիկ որ որ մեծարայլ յառաջեր : եւ իբրեւ
էհաս առ մեզ, հարցի ցնա երէ ուստի գաս կամ յով ընթանաս

այդպիսի ճեպով : Ասե . « Ի թաղէ անտի կղզւոյս որ Ոսկեփոշին յորջորջի գամ ես , առաքեալ ի նաւահանգիստ անդր ազդ առնել քաղաքապետին զի նաւ եկաւոր ի Գաղղիոյ ' խարխիս արկեալ է առ Ամպարի կղզեաւն , եւ հրետս արձակեալ զօգնութիւն խնդրէ , զի խռովեալ յոյժ է ծովն : » Եւ զայս ասացեալ առնն ' ճեպ զճեպի յառաջ զճանապարհն վարեաց :

Յայնժամ ասեմ ես ցՊօղ . « Հնապա , յՈսկեփոշւոյ ' թաղն Երբիցուք ընդ առաջ Վիրգիլեայ , զի Երիւք խրատախօք եւեթ հեռի է այն ի տեղւոջես : Եւ դեմ եղեալ զնայաք ընդ հիւսիսակողմն կղզւոյս : Եւ գիշերն տօթագին էր եւ մղձկուտ : Լուսին ելեալ բարձրացեալ կայր , եւ բակք Երեք մեծամեծք եւ սեւորակք շուրջ կային զնովաւ . իսկ զերեսօքն Երկնից խաւար աղջամըղջին եւ քստմնելի պատեալ կայր : Ընդ աղօտ նշոյս ստեպ ստեպ ընթանալոյ փայլատականց նշմարէին շարք շարք Երկայնաձիգք ստուարակարկատ , նսեմաստուեր եւ վայրահակ ամպոց , որք արշաւասոյր ընթացիւք դիմեալ ի ծովակողմն կուսե , թեպետ եւ բնաւ իսկ ջշնջեր հողմն ի ցամաքի , կուտեալ դիզանէին բարդ ի բարդ զմիջավայրիւք ուրեմն կղզւոյդ : Զճանապարհայն եւ բոմբիւնս որոտմանց բուեցաւ մեզ լսել . այլ յակճիւս ականջեալ հասու եղաք զի թնդիւն հրետից էր որ անդրէն ի շուրջանակի արձագանգաց յանձն իւր բեկաներ : Եւ ի յուր սաստկաշառաջ թնդման հեռաձիգ հրետիցն , եւ ի տեսիլ ամպրոպայոյզն Երկնից սարսուռ ընդ ոսկերս իմ ընթացաւ , եւ ոչ եւս Երկմտէի զի նշանակք էին իրքն նաւու սաստկապէս վտանգելոյ : Բայց կիսոյ ժամու այն ինչ ի վերայ անցեալ , ոչ եւս այլ յուրաք ինչ թնդիւն . եւ այն յուրթիւն անաւորագոյն եւս բուեցաւ ինձ քան զողբաճայնն բոմբիւնս առաջինս :

Փութայաք ճեպեաք յառաջ ընթանալ անխօս եւ անշշուանջ , եւ զմտաց մերոց տագնապ ոչ իշխեաք ի վեր հանել իրերաց : Զհասարակ գիշերաւ ընդ թիրտն եւ ընդ ապաժոյժ մտեալ ' ժամանեցաք ի ծովեզրն յՈսկեփոշւոյ թաղին : Անդ անագին շառաջմամբ կոծեալ խորտակէին այլքն մեծամեծք , եւ ձիւնաթոյր փրփրով եւ կայծակամբք ' հրոյ ծածկէին զխուրսն եւ զխա-

րակս : Եւ թեպէտ խաւար աղջամղջին կայեալ էր զամենայն, սակայն աղօտ աղօտ փոսփորական լուսովն նշմարեաք զմակոյկս ձկնորսաց ձգեալս հանեալս յաւազին վերայ մինչէ ի հեռաստան :

Ոչ յոյժ ի բացեալ ի տեղւոջէ անտի տեսար ի մուտս անտառին հրատ արկեալ, եւ շուրջ զնովաւ ակումբ առեալ զկղզեցիս : Անդր եւ մեր մատուցեալ ոգի առնույ, ասացար փոքր մի՛ ակն կայեալ առաւօտուն լինելոյ : Եւ մինչդեռ առ հրատին նստեար, մի ոմն ի կղզեցեաց անտի պատմեաց մեզ եւ ասէ, երէ յետ միջօրեին տեսի ի խորս ծովուն նաւ մի որ ի կղզի այսր մղեալ գայր ի յորճանաց. զիշերն ի վերայ հասեալ կայաւ



զայն յաջացս, եւ յերկրորդ ժամու զկնի մտիցն արեւու լուայ զքնդիւն հրետից՝ նշանակ հայցուածոյ օգնականութեան. բայց այնպէս այլեկոծեր, ասէ, ծովն անհնարին ծփանօք, զի ոչ մարբացաւ որ բնաւ նաւակ ի դուրս հանել եւ ի թիկունս հասանել նաւուն : Իսկ եւ իսկ թուեցաւ ինձ տեսանել զյամբարս նաւուն լուցեալս. եւ խիբայի թէ գուցէ կարի իմն մօտ մատուցեալ նաւուն ի ծովափն՝ անցանիցէ ընդ մեջ ցամաքին եւ Ամպար կղզեկի, համարելով զայն թէ իցէ Անկիւն դիտակին՝ զորով բերեալ անցանեն նաւրն մտեալք ի Փոր-Լուի. երէ արդարեւ այս այսպէս իցէ, ասէր, բանգի հաւաստեաւ ասել ոչ ունիմ, ի մեծի վտանգի կայ նաւն այն :

Անդռնատ էւ այլ որ ի կողգեցեաց բան ի մեջ առեալ ասէ ցմեզ .
« Իմ բագոնմ անգամ անցեալ է ընդ ջրանցիկն որ զկողգեակն
Ամպար ի ծովեզերէն անջրպետէ , էւ ջափեալ իսկ զխորութիւն
նորա . քաջայարմար յոյժ է վայրն ի կայս էւ ի խարխսխ , էւ
նաւն յակաստանի կայ անդէն իբրէւ յանրոյթ նաւահանգստի :
Եթէ գոյիւ ջափ զկեանս իմ դնէի էս անդանօր , սակայն իբրէւ ի
ցամաքի այնպէս յանդորր ի բուն ննջէի : » Գարձեալ էւ երրորդ
ունն բարբառեցաւ էւ ասէ . « Եւ բնաւ իցէ հնար նաւուն ի ջրան-
ցիկ անդր մտանել , ուր մակոյկք անգամ հագիւ հագիւ եր-
բէւէկէն : Այլ էս տեսանելով տեսի զնաւն խարխսխ արկեալ
անդր քան զկողգեակն Ամպարի . էւ եթէ հողմն յառաւօտու
շնչիցէ , մարբասցի անշուշտ մէկնել զնալ ի համատարածն կոյս
էւ կամ ի նաւահանգիստն մտանել : » Եւ այլք ի կողգեցեացն
յայլ ինչ կարծիս մտաբերէին : Եւ մինչդեռ նորա այնպէս ի վեր
էկեալ պայքարէին ընդ միմեանս ըստ սովորութեան պարա-
պորդ բնակչաց կողմանցս , Պօղ էւ էս յուռ էւեր կայար : Անդէն
յամեալ մնացար ցայգանալ առաւօտուն . սակայն այնպէս աղ-
ջամղջին էր տակաւին երկին՝ զի անմարք էր նկատեալ նշմարել
ինչ ի ծովու , որ էւ մառախլապատ էր ի ժամուն : Բայց միայն ի
խորս անդ ծովուն տեսանեաք ամպ սեւաթոյր , զորմէ առացին
թէ Ամպարի կողգեակն իցէ , քառորդաւ միով խրասախի ի բացէ
ի ծովափանցն : Ի խաւարաբորբ յայնմ առուր ոչ այլ ինչ էր նըշ-
մարել , բայց զսպառուած ծովեզերն յորում կայար մէք , էւ
զոմանս ի բարձրաբերձ պարէխից յերանց որ ի ներքնակող-
մանս էն կղզւոյս , որք էւ երբէք երբէք ի վեր երեւէին ի միջոյ
անտի ամպոցն շուրջ յածելոց զնորօր :

Ջեօրներորդ ժամու առաւօտուն դոփիւնք թմբկաց հնչեցին
յականջս մեր յանտառաց անտի . էւ անա քաղաքապետն Լա-
Պուրտոնէ գայր հասանէր երիվարան , էւ ընդ նմա գունդ մի
հրացանակիր զօրաց հանդերձ բազմութեամբ բնակչաց էւ
հնդկաց : Կարգեաց կացոյց զգօրականն անդէն առ ափամբ
ծովուն , էւ հրամայեաց նոցա միահամուռ ի միասին զհրա-
ցանսն արձակել : Եւ ընդ արձակել հրացանիցն նշմարեալ տե-
սար յոյս աղօտ յերեսս ծովուն , էւ նոյնհետայն զհրետի յուար

զքնդիւն : Անդէն առար ի միտ զի ոչ յոյժ բացական է նաւն առ ի մենջ, եւ առ հասարակ ամենեքին ընթացաք ի վայրն՝ ուստի բոմբիւնն էդէն լսելի . եւ նկատեալ տեսար ընդ մեջ միգին եւ մատախողոյ գտաշտ եւ գկայմս նաւոն մեծի : Եւ այնչափ մօտ հասեալ ի նաւն կայաք, զի թեպէտ եւ անեղագոջ մունչէին այլք, սակայն եւ այնպէս լսեաք զսոփնչս նաւապետին որ զնաւաստին ի գործ վարէր, եւ նորա զաղաղակ բարձեալ զոչէցին Երիցս, ԿԵՅՅԷ ԱՐՔԱՅ . քանզի այս իսկ է բարբառն զոր արձակէն Փաղղիացիք ի յետին վիշտս վտանգի, որպէս եւ ի բերկրապատար ինչ հրճուանս . իբր զի յաղէտս անդ վտանգաց զարբայն իւրեանց յօգնութիւն կարդայցեն, եւ կամ զի հաւատարիմ առնել կամին նմա զի կազմ եւ պատրաստ կան մեռանել վասն նորա :

Յորմէ հետէ ետես Սէն-Փերան զի շատ իսկ մօտ էաք առ ի մեռն օգնականութեան կարկառելոյ նմա, յերիս յերիս վայրկեանս հրետաճիգ լինէր անդույ : Պ. Լա-Պուրտոնէ հրամայեաց հրատս յուցանել ի տեղիս տեղիս ի ծովեզերին, եւ արձակեալ առ բնակիչս մերձակայ վայրացն ետ բերել պարենս եւ տախտակս եւ պարանս, եւ կարասս դատարկեալս : Եւ անդէն ետ ընդ ետ խուռն բազմութեամբ էկեալ հասին բնակիչք Ռսկեփոշուոյ, Փլաք բաղի եւ Ռամբար գետոյ, հանդերձ գերեօրն որ բարձեալ բերէին պաշար եւ սարիս նաւոն : Եւ մատուցեալ մի ոմն ի բնակչաց անտի առ քաղաքապետն, ասէ . « Լուր ինձ իշխանդ . զցայգն ողջոյն լսելի էդէն ի յերին անդ զոչմունք աղօտաճայնք : Տերեք ծառոց անտառին շրշեալ տատանին, թեպէտ եւ հողմն ուստէք ջշնչիցէ . բռնունք ծովու ի ցամաք այսր դիմեալ անկանին . այս ամենայն հաւաստի գուշակք են ամպրոպայոյզ մրրկի մեծի : » Ետ պատասխանի քաղաքապետն եւ ասէ . « Քաջ է, բարեկամքդ . անհա եւ մէք կազմ եւ պատրաստ կամք ի նոյն . անշուշտ եւ նաւն ինքնին : »

Եւ արդարեւ իսկ ամենայն ինչ գուշակ մրրկին լինէր : Ամպր որ ի վերնակէտս անդ Երկնից նշմարէին՝ սեւարորմիս եւ անաւորս ունէին զմիջակսն, եւ պղնձագոյն զսպառուածս իւրեանց . եւ թեպէտ խաւարակուռ օդքն էին, սակայն ազգի

ազգի բուռներ ծովայինը երամովին ի կողի անդր բեաձեալ
գային խնդրէլ ապաստան :

Զինն ժամաւ առաւօտուն լսելի եղեն ի ծովակողմն կուսե
ճայնը սոսկայիք՝ իբրու այն թէ սահանք հեղեղաց բազմաց հան-
դերձ որոտընդոստ շանրիւք բաւալգլոր ի վախից լերանցն



ի վայր խաղային : Ամենեքին առ հասարակ ճայն բարձեալ
գոչեցին. « Ահա ամբնութ ամբնութ . » եւ անդէն առ ժամայն
մրրիկ սաստկաշունչ հայածական առեալ տարաւ գմառախտուղն
մաձեալ գԱմպարի կողեկան եւ գջրանցիւ նորա : Յայնժամ
ի վեր երեւեցաւ եւ նաևն Սեն-Փերան, հանդերձ մարդախիտն
յարկաւ . առագաստակայրն եւ կայմը խոնարհեալք անկեալք
գտախտակամաժիւն, դրօշն վայրահակ . բառեակ մայուխք

ի խելացն, եւ միւս այլ ճոպան ի յետուստ ձգեայք՝ ի վեր զնա կառուցանել ձգնեին : Եւ կայր Սեն-ժերան խարխալ արկեայ ընդ մեջ Ամպարի կղզւոյն եւ ցամարի՝ յայսկոյս շարից խքիցն որ զկղզեաւս Քաղղիոյ, եւ ընդ վայր այնպիսի անցեայ ընդ որ ոչ էրբէք անցեայ էր նաւ յառաջ քան զնա : Զառաջսն տուեայ կայր լեռնակուտակ կոհակաց որ ի խորոց անտի ծովուն ի ներքս խուժեին . եւ իբրեւ ի ջրանցիկ անդր բունն զօրութեամբ մտանեին այիքն, նաւառաջքն մղօն առեայ ի վեր ամբառնային, եւ գոգն ողջոյն ընդ օդս լինէր տեսանելի . սակայն նոյն ժամայն եւ խելացն ջրասուզեայ մինչեւ ի ծնօտսն՝ ծածկեր յաջաց տեսողաց իբրեւ ի սպառ ծովամոյն :

Այսպէս հողմն եւ ծով միանգամայն զնաւն ի ցամար մղեայ վանեին, եւ ոչ էր նմա յետս ընդ կրուկն դառնալ ուստի եկեայն էր, եւ ոչ զմայութիսն հատանելով խրել ի ծովեզերին, յորմէ անջատ ունեին զնա ծանծաղուտքն խքիւք խճողեայք : Մեն մի ի կոհակաց յափունսն բախեայ եւ խորտակեայ՝ գրոհ տայր մոնչելով մինչեւ ցխորս խորշիցն, եւ խիճեւ կոպիճ արձակեր ի հեռաստան լմինչեւ ցոտնաջափս յիսուն . եւ սպա վերջոտնեայ եւ զմեծ մասն յատակի ծովեզերն հոլանեայ՝ բաւալգոր առեայ տաներ զմանրախիճսն խոպոտ եւ ահեղ շառաջմամբ : Ծովն հողմուռոյց բարձրացեայ գամ քան զգամ լեռնանայր, եւ ջրանցիկն ողջոյն որ ընդ մեջ կայ կղզւոյս եւ կղզեկին Ամպարի, զնմանութիւն իմն բերեր փրփրադեզ մեծատարած պաստառի՝ փեռեկեայ եւ պարպատեայ սեւատեսիլ եւ խորանդունդ կոհակօք : Այն փրփուրք շեղաշեղջ կուտակեայ դիզանեին ցվեցոտնեան բարձրութիւն ի խորս խորշիցն, եւ հողմն սաստկակոծ բերեայ զնորօք՝ առեայ տաներ զնոսին զափափայիւք ծովափանցն մինչեւ կիսով խրասախաւ անդր քան զցամար . եւ ի տեսիլ ճիւնաթոյր զնդակացն որ անթիւք էին ի բազմութենէ, եւ շեշտակի վարեայ ընթանային մինչեւ ի ստորոտս լերանց, էր արդեօք համարել էրէ ճիւնաբերք ի ծովէ ի վեր էլանեին : Ծիրք երկնից առաջի առնեին համօրէն զամենայն նշանակս երկարատեւ մրրկի, եւ ծով եւ երկին խառնամառն էրեւեին միամոյլ : Ամպոց գոպարք նորանորք հատեայք անդու յերեսաց երկնից՝ հանգոյն երա-

գասյացն բռնոց սրանային անցանէին դեպ վերոյ գագաթանց մերոց, եւ այք դարձեալ կառուցեալ եւ կանդաղեալ կային մնային գորէն ստուարակարկատ ապառած յերանց : Ոչ եւս էր տեսանել մասն ինչ կապուտակ ի հաստատութեան երկնից . եւ յոյս եւեթ յրթագոյն եւ դայնկագոյն տեսանելի գործեր գերկիր եւ գծով եւ գերեսս երկնից :

Ի յարածութի ճօճանս անդ նաւուն երէրականի, երկիւղն յորմէ զահի հարեալ խիբային՝ էկն եհաս ի վերայ : Պարանք առաջիցն խզեցան . եւ քանզի մի եւեթ կառան մնայր ի հաստատութիւն, գրկաջափս վարսուն անդր քան գծովափն մղեալ



ընկեցաւ նաւն յապառածս անդ : Յայնժամ ամենէրին առ հասարակ գաղաղակ բարձար . եւ Պօղ այն ինչ ընթանայր ծովամուխ լինել, փութացեալ բռնն հարի զնմանէ եւ ասեմ . « Զի գործես, որդեակ, մեռանել կամիցիս : » եւ նա գոչեաց եւ ասէ . « Թող զնամ օգնել նմա, ապա քե ոչ՝ մեռանիմ : » եւ քանզի առ անհնարին յուսահատութեանն ուշագնաց լինէր, զի մի անձնամատն լիցի ի կորուստ՝ Դոմինիկոս եւ ես պնդեցար ի գօտի նորին չուան երկայնամիգ՝ գորոյ գծայրէն վակժոյժ լեալ պինդ ունեար : Յայնժամ յառաջ ընթացաւ Պօղ հանդեպ ՍենՓերանին՝ եր զի ի յող զնայով, եւ եր զի ի խութս քայլելով :

Դեպ լինէր երբէք երբէք ակն ունէլ նմա ի նաւ. անդր վերտնե-
լոյ. քանզի ծովն յաղամողեալ ծփանա անդ իւրում այնպէս
ի ծանձաղ գնաւն բողոյր, զի մարք էր հետի իսկ շուրջ գալ
զնովաւ. այլ անդէն առ ժամայն յետս նահանջեալ մեծաւ մո-
լեզնութեամբ՝ ծածկեր գնաւն յեռնահանգետ կոհակօք, որով է.
յօղս վերամբառնային առաջք ողնափայտին, էւ զհիբացեալն
Պօղ պուղեալ սաստկութեամբ՝ անդր քան զծովափն զընկէնոյր՝
արիւնաբարբախ գարունսն գործելով, զլանջսն կոշկոճելով, էւ



զանճն ողջոյն ջրահեղճիկ գոգցես առնելով : Իբրեւ սակաւիկ
մի ուշաբերէր պատանին, անդրէն յտն կայր, էւ փութով
պնդութեան դիմեր վերատին դեպ ուղիղ ի նաւն՝ զոր տակաւ
փեռեկեր ծովն անհնարին լկանօք : Յայնժամ էւ նաւաստեացն
յուսահատեալ ի փրկութենէ՝ ծովընկեց զանճինս առնելն խուռն
բազմութեամբ վակժոյժ լինելով առ հասարակ զառագաստա-
կայացն, գտախտակաց, զհաւուցն վանդակաց, զսեղանոց էւ
զտակառաց :

Յայնմ պահու երեւեցաւ էւ տեսիլ աղիոդորմ՝ յաւերժա-
կան մորմորանաց արժանի. օրիորդ մանկահասակ ի պաղ-
պաջունս խելաց Սեն-Փերանի էլեալ, էւ զբազուկս իւր տա-
րածանէր առ այն որ զոգի ի բռին կայեալ գուն գործեր հա-
սանէլ ի նա : Եւ նա ինքն էր Վիրգիլնէ : Յանվէհեր զնացիցն

Պօղայ ծանուցեալ էր նորա գսիրելին : Եւ մեր ի տեսիլ նա-
գելուոյ օրիորդին մատնելոյ ի բստմնելին այն վիշտս վտանգի՝
աղէխորով աղեկտուր լինեաք : Իսկ ինքն Վիրգիլն ազնուական
իմն էւ աներկիւղ կերպարանօք նշանացի խօսէր ընդ մեզ
ձեռօքն իբրեւ ողջոյն տալով մեզ անդարձ հրաժեշտի : Նաւագրն
համօրէն ի ծով բօբափեցին զանձինս, էւ մի ոմն միայն կայր
մնայր արձանացեալ ի վերայ նաւուն՝ մերկ ի հանդերձից էւ
կարշնէղ էւ աճառապինդ իբրեւ նոր զոմն Հերակղես : Սա
մերձ մատուցեալ պատկառանօք առ Վիրգիլն, որպէս տե-
սարն, խոնարհէր անկանէր յոտս նորա, էւ հնարէր էւս ի բաց
զհանդերձս նորա առնուլ . այլ Վիրգիլն մերժեաց զնա մեծաւ
վսեմութեամբ, էւ զաջս իւր ի բաց դարձոյց ի նմանէ :



Անդէն լուար մեր զի ճիշ բարձեալ տեսողացն գոջէին անդուլ էւ
ասէին. « Փրկե՛ն զղա, փրկե՛ա զղա . մի՛ բողոսր զղա : » Եւ անա
կոհակ լեռնահանգէտ սոսկավիրիսար վազեալ էմուտ ընդ կըղ

գեակն Ամպարի եւ ընդ ծովեզրն , եւ մոնչելով ընթացեալ ի նաւանդր յառաջեր , եւ արջնաթոյր կողիւքն եւ փրփրադեզ կատարօր սպառնայր նմա կորուստ անճողոպրելի : Յայն տեսիլ սոսկայի՛ սրացաւ ոստեաւ ի ծով անդր նաւագնն միայնակ . եւ Վիրգիւնեայ տեսեալ ակներեւ զանհրաժեշտն մահ , զմի ձեռն զհանդերձիւքն կայաւ , եւ զմիւսն զսրտիւն . եւ ի վեր ամբարձեալ զուարթագին զաջկունս իւր՝ հրեշտակ որ թուեցաւ որ ընդ երկինս թեւապարեալ գնայցէ :

Ո՛վ օր ջարադետ . աւանդ , ամենայն ինչ կորեաւ անդնդասոյզ : Քաջ ի բաց անդր բան զցամաք տարեալ ընկեցին կոհակք զյոյովս ի հանդիսատեսիցն որ հուսայ առ Վիրգիւնե ձեպէին մերձեանայ , որպէս եւ նաւագնն որ ի լող ընթացեալ՝ ապրեցուցանել զնա նկրտեր : եւ սա ինքն մագապուր գերծեալ ի ստոյգ մահուանէ՛ ծունր եղ յաւագին եւ ասէ . « Ո՛վ Տէր , դու զիմ զկեանս փրկեցեր , այլ ես մտադիւր դնեի զսա ի վերայ օրիորդին պատուականի որ չկայաւ յանձին մերկանայ իբրեւ զիս : »



Դոմինիկոս եւ ես ի բաց բարշեալ կորզեցար յայեաց անտի զչոռառականն Պօղ՝ կիսանազագ թայացեալ , եւ արիւն գունդագունդ ընդ բերանն եւ ընդ ականջսն հոսեր : Զնա բաղաբապետն ի խնամս վիրաբուծից արար ապաստան , եւ մեր ի խոյզ եւ ի խնդիր էլար ընդ ծովեզրն տեսանել թէ բերիցէ արկցէ արդեօր ծովն ի դուրս զմարմին Վիրգիւնեայ . այլ զի

յեղակարծում պահու, որպէս յամպրոպայոյզսն սովոր է պատանել, հողմոյն բռնութիւն յայլ կողմն շրջեցաւ, ասեաք ցմիմեանս անհնարին տրտմութեամբ զի եւ ոչ զբաղմանն պարտիս մարքասցոք ուրեմն հատուցանել չարաբաստիկ օրիորդին : Եւ հեռացեալ ի բաց գնացար ի տեղւոջէ անտի յուսահատք. եւ յայնմ նաւաբեկութեան յորում արք բազումք լեալ էին ծովակոնք, ամենեցուն միտք ընդ Վիրգիլեայ կորուստն շուարեին. եւ ոմանք եւս ի տեսիլ բազմադէտն վախճանի առաքինոյ օրիորդին՝ ընդ վերնախնամ Տեսչութեանն անգամ գոյութիւն գոգցես երկմտեին. քանզի են են արդարեւ ադէտր յաշխարհի այնպէս անագինք եւ յանպարտս կրեալք, զի եւ զառն իմաստնոյ գիտեն սասանեցուցանել զյոյս անվկանդ :

Իսկ զՊօղ որ տակաւ ուշաբերեալ կազդուրէր՝ տարեալ եւ եղեալ էին ի միում ուրէք ի մերձակայ տանց, մինչեւ մարքասցին յիւրն հատուցանել բնակարան : Եւ ես յետս անդրէն դարձեալ գնացի ընդ Դոմինիկեայ, զի պատրաստ արարից գմայրն Վիրգիլեայ եւ զբարեկամ նորին ի լսել զգոյժ չարադէտ արկածին : Այն ինչ մխեալ էր մեր ի բերան անդր ծործորոյ Լատանէնեացն գետոյ, ասացին մեզ հնդիկք ոմանք զի նշխարս բազումս զնառուն խորտակելոյ ընկենոյր ծովն ի ծոց անդր ի հանդիպոյն : Փութացար իջար անդր, եւ յառաջ բան զամենայն ինչ հարաւ յաջս իմ դիակն Վիրգիլեայ. եւ կիսով չափ մարմնոյն ընդառագեալ կայր ի նոյն դիրս՝ յորում եւ տեսարն զնա ի պահու անդ սուգանելոյն : Տիպք կերպարանացն ոչ յոյժ խարարեալք էին : Կափուցեալ էին ականողիքն, այլ գութարքութիւն դեռ. եւս ի ճակատին փողփողէր. միայն մահուանն լրբագոյն մանուշակք խառն էրեւեին զայտիցն նորա ամօրագեղն վարդիւք :

Մի ի դաստակացն զհանդերձիւքն արկեալ կայր, եւ միւսն որ զսրտիւն՝ ուժգին մածեալ էր եւ բրտացեալ : Բազում ճգամք բացի զայն հագիւ եւ ի բաց հանի գտփիկն զոր ունէր, եւ ապշութիւն անհնարին կայաւ. զիս յորժամ նկատեալ տեսի զի կենդանագիր Պօղայ էր այն, որում եւ բան տուեալ էր ջլբանել զայն էրբէք մինչեւ ցվախճան : Ընդ այն յետին նշանակ հաստատու-

թեան և սիրոյ օրիորդին եղկելոյ լացի դառնապէս : Իսկ Դոմինիկոս զյանջսն բախտայ ծեծեր, և ցաւագին գոջմամբ ձայնին



զայերս հնչեցուցանէր : Բարձեայ տարաք գղիակն Վիրգինեայ ի խրճիք ուրեմն ձկնորսի, և ապսպարեցաք զնա ի պահ զգուշութեան կանանց մայապարից, որ և խնամ կալան լուանայ զնա :

Մինչդեռ նորա զտխրականն զայն սպասս հարկանէին, մեր դողդոջ ընթացիւք յուղի անկեայ՝ ի բնակարան անդր էլաք, և տեսաք զի Լաբուր տիկին և Մարգարիտ յաղօքս կային՝ ակն ունելով զրուցաց նաւուն : Լաբուր տիկին անդէն ընդ տեսանելն զիս՝ ձայն բարձեայ ասէ. « Ո՞ւր իցե դուստրն իմ, ո՞ւր սիրելին իմ դատրիկ, ճ՛վ որդեակ : » Եւ իբրեւ ետես զանբարբառ լուրբիւնն իմ և զարտասուս, ոչ ևս ինչ երկմտեաց դըն արկածսն, և անդէն հեղձամղձուկ լեայ փղձկեր, և ի ցաւս անհնարինս համակեր. և ոչ այլ ինչ կարացեայ յօղել բարբառ՝ հառաջանս և հեկեկանս արձակեր : Իսկ Մարգարիտ կական բարձեայ գոջեր. « Ո՞ւր իցե որդեակն իմ, զի և զի ոչ տեսանեմ գորդեակն իմ. » և անկաւ բալացեայ : Դիմեցաք առ

նա. Եւ իբրեւ անձին զգաց փոքր մի, հաւատարիմ արարի նմա զի կենդանի է Պօղ, Եւ զի քաղաքապետն տայ խնամ տանել նմա : Եւ այն ինչ նորա միտքն յինքն Էկեալ էին, փութացաւ զսիրունին իւր յանձանձել, որ ստեպ ստեպ նուաղեալ անկաներ Եւ կայր մնայր անբարբառ. :

Զգիշերն ի բուն ի դժոխըմբէր վիշտս այսպիսիս անցոյց Լաբուր տիկին. Եւ Ես գերկարութիւն երաշխեպիցն նկատեալ խելամուտ լինէի զի չիք Եւ չիք ինչ ցաւ յաշխարհի որ ընդ մայրէ, նւոյն մորմոքանաց գայցէ ի կշիռ. : Յորժամ ուշաբէրէր նա : զաչսն ընդ երկինս ձգեալ պշնոյր անբքիքս Եւ կսկծագինս Սիրունին իւր Եւ մէք զձեռն նորա ի մերումս կայեալ ճմլեաք, խանդակաք յորջորջանօք ճայնեաք առ նա, այլ ի գուր ամենեւին. քանզի իմանայր իսկ ոչ նա զհաւաստիսն զայնոսիկ նախնւոյն մերոյ մտերմութեան, Եւ ի հեղձամղձուկ լանջացն ոչ այլ ինչ լինէր լսելի՛ բայց դառնահառուաչ հեծութիւնք :



Ի վաղիս անդր ընդ առաւօտն բարձեալ բերին դեսպակաւ զՊօղ : Ուշաբէրեալ իսկ էր պատանւոյն, այլ բան ինչ յօրէլ ոչ զօրէր : Սակայն տեսաւորութիւն նորին ընդ մօրն Եւ ընդ Լա-

քուր տիկնոջ՝ յորմէ խիբայի եւ գառաջինն՝ սփոփական եւս գտաւ նոցա քան զամենայն հոգս խնամոց իմոց. քանզի ճանճանջ իմն մխիթարութեան ծագեաց ի դեմս կերպարանաց մարցն հիբացելոց : Երկորեան եւս մատուցեալ նստան նմին առջնքեր, եւ գիրկս արկեալ համբուրեցին զնա . եւ արտասուք նոցին որ մինչեւ ցայնժամ առ ցաւոցն սաստկութեան արգելեալ իմն էին, անդէն աղբերացան : Իսկ եւ իսկ եւ զիւրսն արտասուս ի նոցայն խառնեաց Պօղ . եւ այնպէս սփոփեցաւ բնութիւն յանձինս ջուտականացն երեցուն . ապա բմբրութիւն յարատեակ յաջորդեաց դառնակսկիծն մորմորանաց նոցա, եւ արկ զնորօք նինջ ծանրաբթուն՝ որ արդարեւ իսկ մահահանգոյն իմն էր :

Պ. Լա-Պուրտոնէ ազդ ինձ արար ի ծածուկ զի ըստ իւրում հրամանին ի քաղաք անդր բերեալ էր դիակն Վիրգինեայ, եւ անտի հանդերձեալ են տանել յեկեղեցի Կիտրոնեաց : Աճա-



պարեալ իջի եւ ի Փոր-Լուի, եւ տեսի անդէն զբնակիչս համօրէն ամենայն քաղից խուռն էկեալս անդր ի յուղարկաւորութիւն, իբրու այն թէ զցանկալին քան զամենայն ինչ կորուսեալ էր կողմս այս : Որ ի նաւահանգստի անդ էին նաւք՝ վայրահակ

զառագաստակալսն ունէին, և զղրօշսն խոնարհեալս առ ի սուգ, և պահ ընդ պահ հրետարնակ լինէին : Դմբաճիգ զօրականք յառաջընթաց յուղարկաւորութեանն լինէին՝ վայրահակ զհրացանսն ունելով, բմբուկք նոցին արջնաթոյրն ծածկեալք նուարտանօր՝ դոփիւն տխուր և եր հանէին . և եր տեսանել վիատութիւն և մորմոք յոյժ ի դէմս անդ արիագունդ մարդկանն, որոց յոյով անգամ յաջս եղեալ էր զմահ անխոռով կերպարանօր ի մարդախոշոշ պատերագմունս : Ուրեակ օրիորդք յազնուատոհմից անտի կղզւոյն սպիտակս զգեցեալ և ոսոս արմաւենեաց ի ձեռսն ունելով՝ բարձեալ տանէին զծաղկասփիւռն մարմին առաքիւնոյն իւրեանց հասակակցի : Զհետ նոցա ընթանալը մատաղերամ մանկտւոյ դաս՝ երգս առեալ ի բերան . և զկնի նոցա զնային առագանի կղզւոյն համօրէն և սպայակոյտն ողջոյն, և ապա բաղաբապետն ինքնին, և զհետ նորա ամբոխ բազմութեան ժողովրդեանն :



Զայս ամենայն այս օրինակ կարգեալ և կազմեալ էր առասիկ տեսչութիւն կղզւոյն ի պատիւ առաքիւնոյն Վիրգիլեալ : Բայց իբրև ժամանեալ էհաս մարմին նորա յոսոս լերինդ ուստի յերեւան գային հիւղքն երանաւետեալք կենդանութեամբն նորա,

Եւ յայնժամ անյուսուրեամբ լցեալք մահուամբն նորա, բնա-
խակ ամենայն հանդէսն եղերական վեր ի վայր եղեալ վրդովե-
ցաւ. յուեցին երգքն եւ օրհնութիւնք, եւ ոչ այլ ինչ լինէր լսելի
անդանօր՝ բայց ձայնք հառաչանաց եւ հեկեկանաց : Յայնժամ
ընթացեալ հասանէին երամբ երամբ օրիորդաց ի բնակարանաց
անտի հպաւորաց, եւ մերձեցուցանէին ի դագաղս Վիրգիւնեայ
վարշամակս, օրհնարանս եւ պսակս ծաղկահիւսս՝ զբարե-
խօսութիւն նորին իբրեւ զսրբոյ մաղբելով անձանց : Մարքն
հայցէին ի Տեառնէ՝ հանգոյն Վիրգիւնեայ պարգեւել իւրեանց
դատրիկ, եւ պատանիք մտերիմս հանգոյն նմին անյեղիս.
աղքատք բարեկամս գորովագութս իբրեւ զնա, եւ ստրուկք՝
տիրուհիս բաղցրաբարոյս որպէս եր նա :

Իբրեւ եկն Եհաս մարմին Վիրգիւնեայ ի դիրս հանգստեան
ի բաղմանն տեղի, խափշիկ կանանին Մատակասբարայ եւ
Քափրաց Մոզամպիք աշխարհին եղին զնովաւ տառադանս
տառադանս պատարունս պտղովք, եւ զմերձակայ ծառոցն
պաստառս կախեցին ըստ սովորութեան երկրին : Հնդիկք
Պենկալայ եւ ծովեզերացն Մալապարայ վանդակս բերին լցեալս
բօջնովք, զորս եւ յագատութիւն արձակեցին առ դիակամբն
նորա : Այսպէս անա սիրեցելոյ անձին կորուստ ի գորով խան-
դադատե զագինս ամենայն, եւ այսքան է գօրութիւն չարա-
բաստիկն առաքինութեան, զի շուրջ զշիրմաւ իւրով ի մի վայր
ածեալ բոյորե զկրօնս համօրեն :

Հարկ եղեւ պան զգուշութեան կարգել զգերեզմանաւն, եւ
ի բաց առնել անտի զոմանս ի դատերաց աղքատաց տեղւոյս՝
որք բունն գօրութեամբ գուն գործէին զանձինս ի ներքս հոսել,
եւ ասէին. « Զիք մեզ այսուհետեւ մխիթարութեան ինչ ի կեն-
ցադոսմս ակն ունել, եւ լաւ է մեզ մեռանել ընդ միայնուան
մերոյ բարերարի : »

Եւ բաղեցին զՎիրգիւնէ առ եկեղեցեաւն Կիտրոնեաց յա-
րեւմտից կուսէ, առ ոտս շամբից հնդիկ եղեզանց, ուր եւ սո-
վորն եր ի գնալ իւրում յունկնդրութիւն սրբոյ պատարագի
ընդ մօրն եւ Մարգարտի՝ առնուլ հանգիստ, առընթեր նստելով
Պօղայ՝ զոր եղբայր իւր յայնժամ առ ձայնէր :

Գարն արարեալ ի տխրագգեաց հանդիսէ անտի, եկն եմուտ
այսր Պ. Լա-Պուրտոնէ՝ ընդ իւր ունելով զբազմութիւն իւրոցն
պաշտօնեից. զամենայն ջան ի գործ կարկ օգնական լինել
Լաբուրի տիկնոջ եւ բարեկամի նորա : Հակիրճ՝ այլ զայրագին
բանիւք խօսեցաւ զապառուս մօրաբեռեւն. եւ առ Պօղ մատու-
ցեալ բանս մխիթարութեան բազումս խօսեցաւ, որովք համարէր
սփոփել զնա. առե. « Վկայե ինձ Աստուած զի ցանկալի էր ինձ
զքո եւ զքոյոյ ազգատոհմիդ տեսանել զբարեբաստութիւն :
Ո՛ր բարեկամ, հարկ է քեզ ի Գաղղիա գնալ. եւ ես հոգ յանձին
կալայց ի պաշտօն ինչ պետութեան մուծանել զքեզ : Ի մեկնելն
քո աստի՛ յիմ վերայ եղիցին խնամք յանձանձանաց մօր քո, զոր
իբրեւ զիմ մայր այնպէս հոգացայց : » եւ զոյգ ընդ բանիցն
աջ կարկառեաց առ նա. բայց Պօղ ի բաց գիւրն ամփոփեաց,
եւ յետս զգլուխն դարձոյց ջտեսանել զնա :

Իսկ ես ի բնակարանի անդ ջարաբաստիկ սիրունեացն ցան-
կորդէի սատարել նոցա եւ Պօղայ յոր ինչ ձեռնհասն էի : Իբրեւ
եօրնեակք երէք անցին ի վերայ, կազդուրեցաւ Պօղ ի շրջել .



այլ եւ ըստ կազդուրել մարմնոյն թախիծքն իւր անեալ յաւելու-
ին : Անկարեկիբ էր ամենայնի. աչք ւր կիկոցեայր, եւ առ
ամենայն հարցմունս որ առ նա լինէին՝ անխօս կայր եւ ան-

բարբառ. : Տիկինն Լարուր որ ի դրունս մահու դեգերեր ' ասեր
ցնա բազում անգամ . « Որդեակ իմ , բանիցս անգամ եւ տեսից
գրեզ ' գՎիրգիւնիայն իմ բուեցայց տեսանել : » Ի լուր անուանն
Վիրգիւնեայ գղողանի հարեայ ի բաց խուսեր ի նմանե , ոչ ինչ
միտ դնելով աղերսանաց մօրն զի առ սիրունին իւր գնայցե :
Ի պարտեզ անդր երբայր նստեր մենացեայ առ բնով քորենայն
Վիրգիւնեայ ' յաղբերակն նորին գաջս իւր յառեայ անբարբառի :
Վիրաբոյժ բաղարապետին որ դարմանեայ էր խնամով մեծաւ
գնա եւ գտիկնայսն գերկոսին , սասաց մեզ էթե առ ի փարատելոյ
ի նմանե զսեան գայն բախիժ տրտմութեան ' պարտ է քոյլ
տայ նմին գործել որ ինչ հաճոյ իցե նմա , եւ այսու եւեր մար-
բասջիբ գանբարբառ լուրբիւն նորին լուծանել :

Եղի ես ի մտի առնել ըստ բանից նորա : Իբրեւ այն ինչ
փոքր մի ոգի առեայ կազդուրեցաւ Պօղ , անդէն հեռացեայ
մեկնեցաւ ի բնակարանէն : Եւ բանգի ես ոչ գատջ էի բնաւ
ի հետոց նորա , պատուիրեցի եւ Դոմինիկեայ հետեւել մեզ հան-
դերձ պաշարով պարենից : Իջանելով իջաներ պատանին ընդ



լեառնս ընդ այս , եւ բերկրութիւն եւ կորով վերածնանել ի նմա
բուէին : Կայառ զառաջինն զճանապարհն Կիտրոնեաց . եւ
իբրեւ մօտ եղեւ յեկեղեցի անդր ի ծառազարդն ճեմելիս հնդիկ
եղեգանց , դեմ եղ ի վայրն որ այն ինչ երեւեր բրբրեայ . անդ

ծունր եղեալ է. գաջսն ընդ երկինս ամբարձեալ՝ ժամս ձիգս
էկաց յաղօթս : Այս գործ նորա զգաստանայոյ ուշոյ մտացն
ինձ բուեցաւ. աւետաւոր . քանզի է. նշանակն այն քաջայոյս
վստահութեան յէական գերաբուն յայտ առնէր զի տակաւ անձին
զգաստ յինէր պատանեակն : Դոմինիկոս է. ես հանգոյն նմին
ի գունձս եկեալ աղօթակից եղար նմա . մինչէ. ապա ոչ ինչ
զոգցես ուշ արարեալ մեզ, յարեաւ յաղօթիցն, է. էլեալ գնաց
ընդ հիւսիսակողմն կողբոյս : Ե. քանզի գիտակ իսկ էի զի ոչ
միայն անգիտանայր նա զվայր բաղմանն Վիրգիլեայ, այլ է.
քե բնաւ հանեալ իսկ իցէ մարմին նորին ի ծովէ չէր հմուտ,
հարցի ցնա էրէ զի է զի առ. ոտս հնդիկ եղեգանցն աղօթեցեր առ
Աստուած. է. սակ ցիս. « Բանիցս անգամ անդր ի միասին
գնայար : »

Յառաջ զընթացսն վարեալ՝ ժամանեաց ի մուտս անտառին,
է. եհաս ի վերայ մեր գիշեր : Անդ յորդորեցի գնա առնուլ ինչ
կերակուր որպէս է. ես առնուի. է. ապա ննջեցար ի դայարւոջն
ընդ միով ուրէր ի ծառոց անտի : Ի վաղիս անդր ինձ այնպէս
բուեր էրէ յետս ընդ կրունկն ախորժեցէ դարձ առնել. է. նկա-



տեալ հայեցաւ իսկ գամ մի ընդ երեսս դաշտին յեկեղեցի
Կիտրոնեաց է. յերկայնաձիգ ձեմէյիս հնդիկ շամբիցն, է.
խարտեր իմն անդր երբայոյ աղագաւ. սակայն անդէն յանկար-
ծակի յանտառն յեալ միջամուխ դիմեաց դարձեալ ընդ հիւ-

սիսի : Խելամուտ եղէ ես խորհրդոց կամաց նորա, եւ ջա-
նահնար լինէի շրջել զնա ի մտացն, այլ ընդ վայր : Հասեալ
ժամանեցար զմիջառուրբ յՈսկեփոշին բաղ : Անդուստ շտապ
տագնապաւ եջ առ. ափն ծովուն հանդեպ տեղւոյն յորում խոր-
տակեալ սուգաւն Սեն-Փերան : Եւ իբրեւ ետես գԱմպարի կղզին
եւ զանցս նորա որ զօրէն հայելոյ միապաղաղ կայր, գոջեաց
եւ ասէ. « Վիրգինէ, նվ սիրեցեալդ իմ Վիրգինէ. » եւ անդէն
անկաւ բայացեալ :



Դոմինիկոս եւ ես բարձեալ տարաք զնա ի ներքս յանտառն,
եւ հագիւ մարբացար անձին զգաստ զնա առնել : Եւ իբրեւ
ուշաբերեաց՝ կամէր անդրէն ի ծովափն կոյս դառնալ. բայց մեր
աղերս արկար առ. նա մի եւս նորոգել զիւր եւ զմեր ցաւս

անագորոյն յիշատակօր, եւ ընդ այլ կողմն գերեսս հաստատեաց
երբայ : եւ զի յերկարեմ. այսպէս անա գառուքս ուր բափ
առեալ շրջեցաւ ընդ ամենայն վայրս յորս դեգերեալ էր ընդ
իւրում սննդակցին : Անց գնաց ընդ ուղին ընդ որ երբեալ
էր Վիրգինէ հայցել ներումն աղախնոյն Սեառ.-Գետոյ . ետես
եւ գեգերս գետակին եռաստեանց ուր զկայ առեալ էր Վիր-
գինէ՝ ոչ եւս գօրելով ընթանալ, որպէս եւ զվայր անտառին
յորում աղամողեալն էր նորա : Համօրէն ամենայն տեղիք որ
յուշ ածէին նմա գանձկութիւնս, զխաղս, զճաշիկսն, զբարեգոր-
ծութիւնս երիցս սիրելոյն իւրոյ, առուակն երկայնանիստ
լէրին, տնակն իմ, քարավազն մօտակաց, սեխարմաւենին
տնկեալ ի նմանէ, մարմանդն յորում սիրէր նա վազվազել,
կիցք անտառին յորս ախորժեք էրգս գեղգեղել, առ հասարակ
զգերարտօսրն յաջաց նորին կարեցուցանէին, եւ գանգիւնք
վայրացն որ յայնչափ նուագս զհրճուողական ճայնս ցնծութեան
երկոցունցն միանգամայն հնչեցուցեալ էին, ոչ եւս այլ ինչ
կրկնէին անդրէն բարբառ., բայց գայս միայն. « Վիրգինէ, ճվ
սիրեցեալդ իմ Վիրգինէ : »

Այնու վայրագասուն եւ բափառական կենօրն սորեցին աչք
նորա, գոյն երեսացն հատաւ, եւ մարմինն նորա ծիւրեալ
ձնգեցաւ : Զգաձռւմն մերոցս աղետից սովոր է կրկնապատիկ
առաւելույ բերկրականացն մերոց կրից յիշատակօր, եւ անեալ
բազմանան ցաւք յանմարդի ամայութեան. գայս զիտելով իմ՝
խորհուրդ յանձին կալայ ի բաց հեռացուցանել զհեզն իմ բա-
րեկամիկ ի վայրաց անտի որ յուշ առնէին նմա զկորուստն զոր
արար, եւ ածել տանել զնա ի տեղի ուրէք կղզւոյն յորում միտք
նորա ի բազում ինչ իրս զբաղնուցուն : Սմին իրի առեալ տա-
րայ զնա ի բնակաշէն բարձունս Ռիլիեմս բաղին ուր ոչ էր
նորա երբէք գնացեալ : Յայնմ վայրի շարժմունք մեծամեծք եւ
բազմագանք յոյժ յինէին ի պատճառս մշակութեան եւ տուր-
եւառիկ փոփոխմանց : Անդ ատաղձագործաց բազմութիւնք
գերանս հարթէին ի փայտից, եւ այլք սղոցեալ տախտակս յօրի-
նէին. կառք ոչ սակաւք երբեւեկս զճանապարհան առնէին,
եզինք եւ ճիւղն յընդարձակաձառայ արօտան պառակ պառակ

արածէին, եւ արտօրայն ողջոյն գարդարեալ էր բնակութեամբ : Առ գետնոյն բարձրութեան մարթեր մշակել ի տեղւոջ անդ զբազմադիմի ազգս բուսոցն եւրոպայ :

Աստ եւ անդ տեսանել էր ի դաշտին հունձս ցորենոյ, մարմանդս էլակի ի ծառամեջս մայրեացն, եւ ցանկս վարդենեաց երկուստէր ճանապարհին : Օղոցն գովութիւն ձգտումն ջղաց տալով՝ սպիտակացն կենդանութեան մեծապէս ձեռնտու լինէր : Եւ ի բարձանց անտի որ ի միջակի կղզւոյն ամբառնային՝ ի մեծամեծաց շուրջ բոլորեալ պուրակաց, ոչ էր գականել զծովն, եւ ոչ զՓոր-Լուի, եւ ոչ գեկեղեցին Կիտրոնեաց, եւ ոչ մի ինչ որ յուշ Պօղայ ածիցէ զՎիրգիլնէ : Այլ եւ լերինքն իսկ որ ընդ Փոր-Լուի կոյս երկայնեալ տարածանէն բազուկս յոգնադիմիս, ի կուսէ դաշտացն Ուիլիեմսի հրուանդան եւէր երկայնատարած ուղղագիծ եւ ուղղաձիգ առնէն առաջի, յորմէ սարացեալ ի վեր ամբառնան բրգունք բազումք պարելսաց յամպս ծրարեայք :



Եւ անա ի դաշտավայրսն յայնոսիկ առեալ ածի եւ զՊօղ : Յար ի շարժման ունէի եւ զնա. զցայգ եւ զցերեկ յարեռու եւ յանձրեի, կամաւորապէս խորհրդով մոլորեցուցեալ զնա ի մայրիս եւ յանդս եւ ի ծմակս, որպէս զի հնարեցայց զմիտսն

գքօսեցուցանել մարմնոյն խոնջութեամբ, եւ յայլ ինչ յեղաշրջել զխորհուրդս մտացն վայրացն անգիտութեամբ յորս բափ առեալ շրջեալ : Սակայն գիտե սիրելւոյն ոգի՝ ամենայն ուրեք գտանել զհետս խորոյ սիրեցելոյն : Ոչ տիւ եւ ոչ գիշեր, ոչ վայրք անմարդաձայնք, եւ ոչ շոփնդն շինից եւ բնակութեանց, նա եւ ոչ ինքն ժամանակն որ այնչափ յիշատակս յափշտակեալ տանի ի կորուստ, ոչ զօրեն ի բաց պարութի զնա անտի : Այսպէս եւ ասեղն հպեալ ի խանդումանդ՝ որչափ եւ վրդովեալ տատանիցի, սակայն իսկ եւ իսկ ընդ հանդարտելն՝ ի բեւեռն կոյս յորմէ ձգեալն է՝ առնե գդարձ : Իբրեւ հարցանելի ցՊօղ յաղամող զնացս մեր ի դաշտս Ռիլիեմսի, « Յն՝ զնայցեմք մեր այժմիկ, » զերեսն ընդ հիւսիսի դարձուցեալ ասեր. « Ահաւանիկ են յերինք մեր. անդր արասցուք դարձ : »

Յայնժամ ի միտ առ ի զի գուր եւ ընդունայն էին ամենայն հնարք իմ ի սփոփել զնա, եւ թէ ընդ կիրս ցաւոցն իսկ մնայր ինձ մաքառել՝ բովանդակ զկորով մտացս եւ բանից ի գործ արկանելով : Ետու նմին պատասխանի եւ ասեմ. « Եւ կարի իսկ քաջ. աւանիկ յերինքն յորս բոյդ բնակեր սիրուն Վիրգինե. ահաւաղիկ է եւ դիմացդ կենդանագիր գոր նմայն տուեալ էիր, եւ գոր յոգւոցն պարզել ի սրտին վերայ ունեք, այնր սրտի որոյ եւ յետին բաբախմունք վասն քո եղեն : » Եւ հանեալ ցուցի նմա զկենդանագիրն փոքրիկ գոր նա ինքն տուեալ էր Վիրգինեալ առ աղբերան քոքենեաց : Ի տեսիլ նորին՝ խնդութիւն մահագեկոյց փայլատակեաց յաջս նորա : Կրուցեալ ձեռօքն բունն էհար զայնմանե կարողին, եւ ի շրքունսն տարաւ : Յայնժամ գելաւ սիրտ նորա, եւ յարիւնուռչտ ականողիսն ոտնակառեալ կացին արտասուք եւ ոչ զօրէին հոսել :

Ասեմ ցնա. « Լուր ինձ, որդեակ, յուր ինձ որ բարեկամս եմ քո, եւ Վիրգինեալ ես էի բարեկամ, եւ յակնկալիս անդ յուսիցն ձերոց բազում անգամ փոյթ յանձին կալայ սրտապնդել զձեզ ընդդէմ անակնկալ արկածից կենցաղոյս : Զի այսպէս դառնահառաջ աշխարես. միքե գրոյլն աղետս, կամ թէ զՎիրգինեայ արդեօք :

« Զբոյլին աղետս : Այո, արդարեւ, մեծամեծք են : Կորուսեր

դու գսիրելին յօրիորդս, որ կարողն էր գերապանձ լինել ամուսին :
Նա զանձին իւրոյ զշահս օգտի հանեալ էր քեզ ի նուէր, եւ
մեծափարքամ ճոխութեան զքեզ արարեալ նախամեծար, զքեզ
միայն իւրումն առաքինութեան համարելով տրիտուր : Բայց
զի գիտիցես էրէ յորմէ ունեիր դու ակն անխառն բարեբա-
տութեան, նոյն չղառնայր յոյովագունից լինել քեզ աղետից
աղբիւր : Անինչ էր նա եւ անժառանգ. եւ յայսմ հետէ մեռացդ
վաստակօք հասանէր քեզ զկեանս մեր պաճարել : Գառնայր



զայր նա փափկասուն հրահանգօրն զրգեալ էւ զգուեալ, եւ
խրովքն աղետիւք եւս բան գեւս արխացեալ. առաջի կայր քեզ
զհաշել մաշել նորա տեսանել հանապագ, փոխանակ զի զոգի
ի բռին կայեալ ճգնելոց էր լինել քեզ վաստակակից : Ի ծնանել
նորա քեզ որդիս՝ յաւելեալ բազմանային վիշտք մեր էրկոցունդ,
զի դժուարին լինէր ծերատաճել զճնողս մեր եւ միանգամայն
զազգատոհմդ նորածին :

« Ասիցես արդեօք ցիս. « Քաղաքապետն մեռնկալու լինէր
մեզ : Եւ զի գիտիցես էրէ ի գաղբականի յորում յար ի փոփոխ-

ման կան տեսուչք՝ ցանգ Լա-Պուրտոնէք ձեզ պատահեցեն :
Եւ քե չգայցեն այսր իշխանք վատշուերք Եւ վատախորհուրդք ,
Եւ քե առ ի դոյզն ինչ օճան նպաստից ի նոցանէ շորթելոյ չհար-
կեր ամուսին քո բժնել զնորօք : Ապաքեն էք յանկարծ տկա-
րացեալ գրէր նա , դու եղկելի լինէիր . Եւ էք անդրդուելի կայր
մնայր ի զգաստութեանն , դու եւս ի կարօտութեան մնայիր : Եւ
երանի էր քեզ էք ի պատճառս գեղոյ նորին Եւ առաքինու-
թեան ոչ Եւ նորին իսկ հայածէին գրեզ յորոց ակն ունէիր օգնա-
կանութեան :

« Ասիցես դարձեալ . սակայն Եւ յանընչութեան անդ անկապ-
տելի մնայր յինէն բարեբաստութիւնն որով պաշտպան կայի
հատորոյ սրտիս , որ սովորն է Եւ ըստ չափու մեծութեան տկա-
րութեանն պնդագոյնս յարել ի մեզ . մխիթարէի զնա իմովս
անձկութեամբ , խրախ առնէի զնա իմովս տրտմութեամբ , Եւ
վշտօք իրերաց յաւելոյր ի մեզ փոխադարձն սեր առ միմեանս :
Արդարեւ իսկ առաքինութեան Եւ սիրոյ բաժինք են վայելքդ
այդորիկ դառն բերկրանաց : Բայց նա ոչ Եւս է . Եւ մնան քեզ
որ յետ քո սիրելիք էին նմա քան զամենայն՝ նորա մայրն Եւ
քոյդ , գորս ցարք քո անմխիթարք իջուսցեն ի գերեզման : Բա-
րեբաստութիւն քեզ գրեա զօրավիզն նոցա լինել . զսոյն Եւ Վիր-
գիներայ եղեալ էր ի մտի :

Որդեակ իմ , բարեբաստութիւն առաքինութեան բարերարու-
թիւնն է . Եւ չիք այլ յերկրի բարեբաստութիւն ստոյգ Եւ մե-
ծագոյն քան զնա : Խորհուրդք Եւ ակնկալութիւնք բերկրանաց ,
հանգստեան , յութեան , փափկութեան Եւ փառաց ոչ են տը-
ւեալ մարդոյ տկարի , պանդխտի Եւ անցաւորի : Տես , ճրպես
ոտնփոխ մի էւեր ի մեծութիւն անդր յանդնոց յանդունդս խար-
դաւանեաց զմեզ : Դու հակառակեցար այնմ , քաջ է . այլ ո՞վ որ
ոչ կարծեր զի Վիրգիներայ ուղեւորութեանն էր յերջանկութիւն
էին քեզ Եւ նմա : Հրաւերք բազմագանձ Եւ հինաւորք ազգակցի ,
խորհուրդք քաղաքապետի իմաստնոյ , խնդամտութիւնք գաղ-
թականաց համօրեն , յորդորք Եւ պատուեր առն քահանայի
պատճառք եղեն աղետիցն Վիրգիներայ : Այսպես անա ի կորուստ
անձանց անապարեմք մեր՝ պատրեալք ի խոհականութենէ ան-

գամ մերոցն վարչաց : Լաւ էր ապաքեն ոչ ինչ ընծայել նոցին հաւատս, եւ ոչ բնաւ ունկն մատուցանել ձայնի եւ յուսից խաբուսիկ աշխարհիս . եւ սակայն չիք որ ի բազմութենէ որերոյն որք ընդ քիրտն գան ի դաշտավայրս յայտոսիկ, եւ որ ի խնդիր ճոխութեան ի Հնդիկս գնան տարադէմ, եւ կամ որք անդէն յարեանց իսկ աշխարհին յերոպա վայելեն յանդորրու ի վաստակս ճգանց սոցին, չիք որ չիք ուրէք ասեմ որում չիցէ պահեալ կորուսանել վաղ կամ անագան զկարի իսկ սիրելին անձին իւրոյ, գմեծութիւն, զճոխութիւն, զկին եւ զորդիս եւ զբարեկամս :

Յոյժվից ի նոցանէ դեպ լիցի ընդ կորստեանն աղետից լծորդել եւ գանձանց անխորհուրդ գնացիցն զյիշատակ : Իսկ դու մտախոհ յանձինդ լեալ՝ ոչ գտցես ինչ որ ստգիւտ խղճին քում բերիցէ : Հաւատարիմ կացեր դու ի խոստմանդ : Ի ծաղկի հասակիդ՝ զառն իմաստնոյ բերեր յանձին զխոհականութիւն, ոչ ինչ խտտորեալ ի բնութեանն ազդմանց : Քոյիներդ եւէք օրինաւոր էին խորհուրդք կամաց, քանզի անարատք էին եւ անխարդախք, եւ անշահասերք . եւ իրաւունք քո նուիրականք իմն ի վերայ Վիրգիլեայ, իրաւունք՝ ընդ որս ոչ երբէք ի կշիռ համեմատութեան գային ամենայն ճոխութիւնք աշխարհի : Կորուսեր դու գնա, այլ ոչ առ քոյոյ ինչ անխոհեմութեանդ, ոչ առ զօշարադութեան եւ ոչ պատիր իմաստութեան . այլ Աստուած ինքնին այլոցն ախտիւք վարեալ՝ բարձ ի քէն զսիրելին անձին քոյ . Աստուած որ նա միայն տուեալ է քեզ զամենայն, որ տեսողն է ամենայն պիտոյիցդ քոց, եւ որ իւրովն իմաստութեամբ ջտայ քեզ տեղի ապաշահանաց եւ անյուսութեան՝ որ արգասիք են ջարեացն նիւթելոց առ ի մենջ :

« Զայս ուրեմն յաղետս անդ վշտացդ քոց մարքիս դու ասել . Յանպարտս կրեմ զայտոսիկ : Եւ զինչ ապա, զՎիրգիլեայ զաղետս, զվախճանն նորին եւ կամ զարդի պայմանն նորին աշխարհիցես : Եւ նա եւս գնոյն հատոյց զպարտիս զոր հարկ է քէ հատուցէ եւ տոհմիկն եւ զեղանին եւ ինքնակալք համօրեն : Կեանք մարդոյ հանդերձ ամենայն առաջադրութեամբք խորհրդոցն էլանէ վերանայ իբրեւ զաշտարակ փոքրիկ որոյ

մահն է գազարն է. ծայր : Ի ծննդեանն իսկ պահու. ի մահ դա-
տապարտեալ էր նա : Երանի նմա զի յառաջ քան զմայր իւր
էլոյժ զկենացն կապանս, էս է. յառաջ քան զքոյղ, յառաջ քան
զքեզ, զի ջմեռաւ. ասեմ յոյով մահունս յառաջ քան զնուսկ
յետինն :

« Մահն, որդեակ, բարի ինչ է շնորհեալ ամենայն մարդկան.
գիշեր է այն բազմահոգ աւուրս որ կոչի կենդանութիւն :
Քնով մահունն է. եթ հանգուցեալ դադարեն՝ ի սպառ. հիւանդու-
թիւնք, է. ցարք, է. տրտմութիւնք, է. արհաւիրք որ յար
ի յուզման ունին զչուսառական կենդանիքս : Ադէ ի բնին առ
զայնոսիկ ի մարդկանէ որ բարեբջանիկքն քան զայս բուխցին.
է. տեսցես զի ծանրագնի յոյժ գնեալ է նոցա զկարծեցեալն զայն
բարեբաստութիւն. զհասարակացն մեծարանս առ տնին ադե-
տիւք. զբնջից յանախութիւն՝ կորստեամբ քաջողջութեան.
զսակաւագիւտն բերկրանս սիրելի լինելոյ՝ անընդհատ նուի-
րանօք. է. բազում այն է զի ի կատարածի անդ կենաց ի շահ
օգտի այլոց բոլորանուէր գոնելոյ՝ ոչ այլ ինչ տեսանէ, բայց
բարեկամս նենգաժեսոս է. արեանառուս արեւիշուշտս :

Բայց Վիրգիլնէ բարեբաստիկ գտաւ մինչէ. ցշունչ վախճանին :
Մինչ առ մեզս էր՝ բարեբաստիկ էր նա բնութեանն ձրիւք. է. ի բա-
ցեալ առ ի մենջ՝ առաքինութեանն տրովք. նա է. յայնմ ահաւոր
պահու. յորում կորստեան նորին էդեար մեք ականատես, բա-
րեբաստիկ էր տակաւին. քանզի զաչսն քէ արձակեր ի գաղթա-
կանս կղզոյս համօրէն զորս յանհնարին համակեր տագնապ
է. ի բախժութիւն, է. քէ ի քեզ ակնարկեր որ անվեհեր արիու-
թեամբ ի բիկունս օգնականութեան նորա դիմագրաւ լինէիր,
բաջ իսկ էտես նա էրէ քանի սիրելի էր մեզ ամենեցուն է. ցան-
կայի անձն իւր : Զօրացաւ նա առ հանդերձեալսն՝ կենացն
իւրոց անմեղութեան յիշատակաւ, է. յայնժամ ընկայաւ.
զմրցանակն զոր առաքինեաց պահէ Աստուած, զարիութիւն՝
քան զվտանգն գերագոյն : Զուարք դիմօք անձնամատոյց էդէ.
մահունն :

« Աստուած յայն սակս արկանէ, որդեակ, զայր առաքինի
յամենայն ի վիշտս կենցաղոյս, զի ցուցցէ էրէ նմա միայնում

անկ է ի դեպն վարել նորօր, եւ բարեբաւաստութիւն եւ փառս գտանել ի նոսին : Յորժամ համբաւատենց կամիցի նա առնել զոր, ի բատր մեծ ամբառնայ, եւ ընդդէմ մահուն ի մրցանս խրախուսէ. յայնժամ արիութիւն քաջութեան նորա յօրինակ այլոցն ընծայի, եւ աղետից նորին յիշատակ յազգաց որ գայոցն են հարկս ընդունի արտասուաց յաւեժարար : Այս է առասիկ անմահական արձան յիշատակի պահեալ նմին յերկրի յորում արագավախճան է ամենայն, յորում է արքայից անգամ բազմաց յիշատակք արագ արագ բաղեալ խորասուզին ի մոռացօնս յախտենից :

« Սակայն Վիրգիլնէ կելով կեայ տակաւին : Տես, որդեակ, ամենայն ինչ կերպարանափոխ լինի յերկրի, այլ կորնչի եւ ոչ ինչ : Չիք ճարտարութիւն մարդկեղէն որ գկարի իսկ զփոքրիկ մասն հիւլեից յոչինչ դարձուցանել մարթասցի. եւ լէբր իցէ հնար կորնչել այնմ որ հանճարեղն գտաւ, եւ կարեկիր սիրելի, եւ առաքինի, եւ աստուածասեր, եթէ տարերքն իսկ որովք զգածեալ էր՝ անկորուստք իցեն : Ո՛հ, եթէ երանելի էր Վիրգիլնէ ընդ մեզ, երանելի էաւ է զարդիս : Է է, որդեակ, Աստուած. եւ այնպէս յայտնաբարբառ քարոզեն զնա համագոյք, զի եւ հաւաստիս գոյութեանն տալ քեզ ոչ է հարկ : Արանց անզգամաց եւեթ գործ է յուրաստ կալ յարդարութենէ անտի որ անագինն է նոցա : Չնա նկատես ի սրտի բում, եւ զգործս մեռաց նորա յանդիման աջաց բոց : Եւ կարծիցես եթէ անվարձ բողոցոս նա զՎիրգիլնէ : Համարիցիս զի նոյն գօրութիւն որ զգեցուցեալ էր զազնուականն զայն ոգի այնպիսեաւ գեղատեսիլ կերպարանաւ՝ որ հրաշակերտ ինչ արարչին քեզ բուեր, ոչ զօրեր ի բաց կորզել զնա ի միջոյ կոհակաց. եւ թէ նա որ զայժմոս երանութիւն մարդկան պատրաստեալ կազմեաց օրինօք որ զանխուլ են առ ի քեն, չիցէ մեռնհաս պատրաստել եւ Վիրգիլնեայ երանութիւն այնպիսի օրինօք՝ որ նոյնպէս անձանօքք առ ի քեն իցեն :

« Եթէ յոչեսն գոյով՝ կարող ինչ էաք մտախոն լինել, միքէ մարթ ինչ էր մեզ զմերն ի միտ առնուլ զեութիւն : Իսկ այժմ մինչդեռ յայսմ խաւարամած եւ խոստափուկ էութեանս

կայցեմք, ատանկ ինչ իցեմք նախատես լինել որոց յետ մահուն պատահելոց իցեն. եւ ընդ ո՞ր արդեօք արտարս էլանիցեմք անտի : Միքե կարծտ իցե Սատուած իբրեւ զմարդ հողագնտիս փոքու առ ի տեսարան զսա գործելոյ իւրում իմաստութեանն եւ բարութեան . եւ միքե յասպարեզս մահո՞նն եւեր կարողացաւ նա զմարդկայինս ծառայել կենդանութիւն : Ի համապարփակ ծովուն չիք կարիլ ջրոյ որ ոչ լի իցե կենդանեօք առ ի մեր պետս . եւ իբր հնար է քե ջլինիցի ինչ վասն մեր ի խոռոներամն կաճառս աստեղաց որ զգլխովքս մերովք բառային :

« Եւ զիմարդ . աստ ուր մերս եմք՝ միայն գուցե անհուն իմաստութիւն եւ աստուածեղեն բարութիւն . եւ ի նշույագարդ գունդսն անքիւս ի բազմութենէ, յանծայր ասպարեզս յուսոյ շուրջ բոլորեալս զնորօք ուր ոչ ամպրոպք յուզին, եւ ոչ զիշերք մրագնեն, թո՞ն եւ բո՞ն միայն իցե եւ ոչնչութիւն յախտենական : Եթէ մեր, որ յանձանց ինչ ոչ ունիմք ամենեւին, յառակնիցիմք սահման դնել զօրութեանն՝ յորմէ առեալ եմք զամենայն, յիրաւի է արդեօք ի կարծիս լինել եթէ յեզերս սահմանաց ինքնակալութեան նորա դեզերիմք մեր աստեն, ուրանօր կեանք ընդ մահու, եւ անմեղութիւն ընդ բռնութեան մարտ եղեալ կռուին :

« Զիք երկբայութիւն զի է ուրեք տեղի յորում զվարճս փոխարինին ընդունի առաքինութիւն : Արդ բարեբաստիկ է Վիրգինէ : Ո՞ն, եթէ յօթարանէ անտի գուարբնոցն մարք ինչ էր նմա զրոյց ի մեջ առնուլ ընդ քեզ, ասեր նա անշուշտ ցքեզ, որպէս եւ ի բանս անդ հրածեշտին . « Ո՞ Պօղ, փորձութիւն է կեանք մարդոյ : Ես հաւատարիմ գտայ օրինաց բնութեան, եւ սիրոյ եւ առաքինութեան : Զծովս հատի անցի հնազանդեալ ծնողաց իմոց . ի բաց մերժեցի զճոխութիւն զի հաւատարիմ կացից ի խոստման իմում . յաւ համարեցայ յարեւե անկանելի քան քե զամօք նախատանաց յանձին ունել : Զընթացս իմ կատարեալ բուեցայ ես երկնից : Զերծայ միանգամ յաղքատութենէ, ի բանսարկութեանց, ի մրրկաց, ի տեսարանաց աղետից այլոց, եւ ոչ եւս խիբամ ի նոցանէ : Եւ ոչ մի ինչ ի չարեաց որ ահափետ առնեն զմարդիկ՝ ոչ լիցին յիս զամագիտ .

Եւ դու ողբանս գիս : Վճիտ եմ ես եւ անայայտակ իբրեւ զմասն
ինչ լուսոյ, եւ դու այդրեն կոչես գիս ի գիշեր կենաց :



« Ո՛վ Պօղ, ն բարեկամդ իմ. յուշ բեզ առուրբն բարեբաստութեան,
յորս այգուն այգուն զմայացեալք ընդ երկնիցն հեշտականու-
թիւնս, եւ վաղայարոյցք ընդ արեգական լինեաք ի կատարս
ժայռիցդ այդոցիկ, եւ ընդ ուղփաճեմ ճառագայթս նորին
ծառայեալ մտանեաք ի խորս մերոցդ մայրեաց : Յայնժամ սխրա-
ցեալ բերկրեաք յանձինս մեր, եւ զպատճառսն անգիտանայար :
Յիղճսն մեր անմեղականս տենչայար ամենեւին իսկ աջս լինել
առ ի վայելումն երփնագարդ երանգոց արշայրջոցն . ամենեւին
իսկ հոտոտելիք՝ յըմբոշխնել զբոյրս անուշից տնկոցն մերոց .
բնաւին լսելիք՝ ի յուր գեղօնից բռնեկացն մերոց . եւ համօրեն
ամենեւին սիրտ՝ առ ի լիով զջափ առնույ բարութեանցդ
այդոցիկ : Եւ անա յաղբիւր այսր ժամանեալ գեղեցկութեան
յորմէ գետահետեալ հոսէ ամենայն որ ինչ հաճոյական գտա-
նիցի յերկրի, հոգիս իմ տեսանէ, ճաշակէ, լսէ, եւ շօշափէ
անընդմեջ հպառորութեամբ զայն ամենայն գոր ցայնժամ ապի-
կար գործարանօք եւեթ զգայր :

« Բնբէ, նրլեզու բաւական իցե նկարագրել զափունս զայստսիկ
վշտապայծառ արեւելից յորում բնակեմս յարագուարճ բեր-
կրանօք : Զոր ինչ միանգամ ամենակալն զօրութիւն եւ անհուն

բարութիւն հաստել կամեցան ի սփոփանս մարդոյ տառապելոյ ,
գոր ինչ միանգամ բարեկամութիւն անքիւ արարածոց երանա-
կցաց զիտե հրճուանս ազգի ազգիս ճարտարել , զայն ամենայն
անխառն եւ անապակ խնդութեամբ ունիմք ահա ի վայելս :
Հապա ժուծեա փորձանաց որով փորձիսդ , որպէս զի յանա-
խեսցես գրոյոյս Վիրգիլեայ զբարեբաստութիւն անպարոյր
տարփանօր , եւ հիմենեաւ որոյ յաւերժ անշեջ կացցեն եւ մնաս-
ցեն ջահր յուսապայծառք : Աստ զցաւս քո ամորեցից եւ .
աստէն զարտասուսդ ջնջեցից : Ո՛վ բարեկամդ իմ , ճ մատա-
դատունկ իմ փեսայ . ամբարձ գոգի քո առ անվախճանն երա-
նութիւն , եւ տոկ կայցիս վաղանցուկ վշտացդ քոց : »

Իմ իսկ գորովեայ եւ փղձկեայ յարտասուս՝ զբաւ բանիցս
արարի : Իսկ Պօղ պշուցեայ ընդ իս անբքիբ՝ գոջեաց . « Ո՛ջ եւս



ե նա , նա ոջ եւս էլ . » եւ գոյգ ընդ ցաւագին բանիցն անկաւ
նուաղեայ : Ապա գուշով եկեայ ասե . « Եւ զի բարի ինչ է մահ ,
եւ զի երջանիկ է Վիրգիլե , եւ եւս կամիմ մեռանել՝ զի միա-
ցայց ընդ Վիրգիլեայ : » Այսպէս ահա ոջ եքե սփոփեցաւ նա

յիմոցս բանից, այլ մանաւանդ յանյուսուրիւն հատաւ ի սպառ :
Իբրեւ գայր որ զգետամոյնն իւր բարեկամ կամիցի ճողոպրել
յընկեմելոյ, եւ նա լողայ ջկամիցի, այնպէս իմն գտայ եւ էս :
Խորասոյգ էր նա յանդունդս ցաւոց : Բնքէ, մանկականի տիոցն
աղետք հանդերձէն կազմէն զմարդ մուտ ի կէանս գործել .
Պօղայ ոչ էր բնաւ առեալ զփորձ այնայիսեաց :

Առեալ ածի զնա վերստին յիւրն բնակարան, եւ անդէն գտի
զմայր նորա եւ զլարուր տիկին ծնգեալս եւ ծիւրեալս ջար բան
զառաջինն, եւ առաւել բան զամենեսեան-վշտահար էր Մար-
գարիտ : Բարբ էռանդունք ընդ որս սահեալ անցանէն վիշտք
քէքէք, ջատակէն մեծամեծացն ժուժկալել բախժանաց :

Ասէ ցիս Մարգարիտ . « Ո՛վ դրացիդ իմ պատուական . բուեր
ինձ տեսանել ի տեսլեան գիշերի զՎիրգինէ սպիտակագգեստ զի



ճեմ առեալ շրջեր ի պուրակս եւ ի բուրաստանս գուարճալիս .
եւ ասէ ցիս . « Ես յերանաւետ վայելեմ արդ հանգստեան » : Եւ
սպա մատուցեալ առ Պօղ զեղածիծաղ դիմօր՝ յափշտակեաց
տարաւ զնա ընդ իւր : Եւ մինչդեռ վակժոյժ գորդեկաւս լեալ
կորզել զնա նկրտէի, այնպէս իմն զգացի՞ յանձին եւ էս, զի

մեկնեալ յերկրէ՝ զհետ որդւոյս դիմէի անպատում բերկրանօր : Յայնժամ տենչացայողջոյն հրաժեշտի առ սիրուհին իմ տալ . եւ ահա տեսի զի եւ նա ընդ Մարիամու եւ ընդ Դոմինիկեայ գայր զմեր կնի : Բայց զարմանք մեծասքանչ այն են , զի եւ Լաբուրի տիկնոջ նմանօրինակ էրագեալ է էրագ ի գիշերիս : »

Պատասխանի էտու եւ ասեմ ցնա . « Հաւատամ ես , ո՛ր բարեկամ , զի ոչ ինչ ոչ գործի յաշխարհի առանց բոյլտուութեան կամացն Աստուծոյ . եւ է էրբէք զի էրագք ճշմարտութեան են գուշակ : »

Պատմեաց ինձ եւ Լաբուր տիկին հանգունատիպ ինչ էրագ զոր ի նմին յերագեալ էր գիշերի : Իմ ոչ էր էրբէք տեսեալ ի տիկնայսն յայնոսիկ նշմարանս ինչ նանրահաւատ կրօնից . նորին աղագաւ եւ յապուշ հարայ ընդ էրագոց նոցին համաձայնութիւն , եւ միանգամայն ոչ էւս էրկմտեցի ընդ մօտայուտ կատարումն նոցա : Առ համօրէն ամենայն ազինս էրկրի գտանին այս կարծիք՝ էրէ է էրբէք զի տեսեամբ գիշերոյ յանդիման լինի մեզ ճշմարտութիւն : Աւագագոյնք յորերոյ վաղընջուցն ժամանակաց այսմ հաւատացին , յորոց սակի են Աղէքսանդր , Կեսար , Սկիպիոնեանքն եւ Կատոնեանք էրկոբին եւ Բրուտոս , արք ոչ ինչ տկարամիտք : Աստուածաշունչ տառք հնոցն եւ նորոց կտակարանաց բազմապատիկ ընծայեն մեզ օրինակս էրագոց , որք կատարելով կատարեցան : Ես իսկ յանձին փորձոյ ուսեալ գիտեմ զի կանխագէկոյց ազդեցութիւնք են էրագքն , որովք ազդ մեզ առնէ զլինելոցսն եակ ինչ խնամակալ անձանց մերոց : Եւ չիք հնար դիմադարձ կամ պաշտպան կալ պատճառաբանութեամբք իրաց որ զմարդկայնովս ի բաց վազիցեն բանիս :

Սակայն էրէ բանն մարդկային պատկեր է բանին Աստուծոյ , աւանիկ ձեռնհաս է մարդ գաղտնածածուկ հնարիւք հասուցանել զխորհուրդս կամաց իւրոց մինչեւ ի ծագս աշխարհի . եւ հիմ ապա իմաստութիւնն այն որ գտիեզերս վարէ՝ ոչ նոյնպիսիս ինչ ի գործ արկանիցէ հնարս : Բարեկամ զբարեկամ մխիթարէ նամակաւ որ ընդ յոգնաբիւ պետութիւնս անցանէ , շրջան առնու ընդ մեջ ոխերիմ ազգաց եւ ժողովրդոց , եւ աւե-

տաբեր է. յուսադիր գտանի առն միում միայնոյ . ընդէր ապա
ամենիշխան խնամողն անմեղութեան ոչ գորիցէ գաղտնաշաւիղ
հնարիւք ի բիկունս օգնականութեան հասանել առարինւոյն,
որ զիւրն ի նա խարսխեալ իցէ գոյս : Միքէ կարօտիցի նա
արտաբնովք ինչ նշանօք ի կատարումն իւրոցն կամաց, նա որ
ներբնով իմն ազդամբք ներգործէ անդու յամենայն արարածս
իւր :

Եւ առ ինչ իցէ յերկուանայ ընդ երազոց ստուգութիւն : Ի՞նչ
իւրք ընդհատ յերազոյ իցէ կեանք մարդոյ որ պատարունն է
վաղանցուկ է. սնուտի խորհրդովք :

Կալցի գայս որպէս է. ախորժէ որ, սակայն փոյթ ընդ փոյթ
կատարումն էառ. երազ իմոցն բարեկամաց : Յետ երկուց ամսոց



զարմանուհւոյն ի վերայ անցանելոյ մահուն Վիրգիլեայ ,
գրաւեցաւ էւ Պօղ ի կենաց՝ մշտամոռունչ գանուն նորին յօղե-
լով : Յետ ուրից անուրց զկնի որդէկին, էւ Մարգարիտ զիւրն
օրհաս ծամանեալ էտես, այնու խնդութեամբ՝ գորոյ առարի-

նութեան միայնոյ է առնուլ զջափ : Գորովայիր է խանդակար
էտ նա ողջոյնս հրաժեշտի առ Լարուր տիկին , է առ . « Մեկ-
նիմ զնամ էս ի բէն յուսով անուշակ է յաւերժական միութեան :
Քան զամենայն պարգեւս բարեաց մեծագոյն է մահ , է յոյժ
ցանկայի : Եթէ պատիժ պատուհասի իցէն մարդկայինս կեանք ,
հարկ է կատարածին փափաքել . է եթէ փորձութիւն , հարկ
է կարճատելոյն իղձ լինել : »

Պետութիւնն խնամ կայաւ Գոմինիկեայ է Մարիամու որ ոչ
էսս ձեռնհասք էին ի սպասանարկութիւն , որք է ոչ յոյժ յեր-
կարակեաց քան զտիրուհիսն իւրեանց եղեն : Իսկ է եղկելի
Հաստարիմն հաշեայ է մաշեայ՝ տեսուն իւրում զոգցես եղէ
մահակից :

ԶԼարուր տիկին առեայ ի տուն իմ ածի , է անկարծելեաւ



իմն վսեմախոն ոգով ժուծկայեայ համբերեր նա այսրանեաց
դառնադէտ վտանգաց . որ է ցշունջ վախճանին Պօղայ է Մար-
գարտի մխիթարեայ էր զնոսա որպէս եթէ զնոցա աղետիցն
էւեր մնայր նմա կրել զերաշխեսպս : Եւ իբրէ ոչ էսս այլ տե-

սաներ զնոսին, իբրեւ զսիրակցորդ դրացեաց խօսեր ընդ իս զնոցանէ : Սակայն եւ նա զհետ սիրելեացն զամիս մի եւեր ետես զարեւ : Իսկ վասն մօրաբեռն, փոխանակ զայնքանեաց աղետիցն վնաս զնովաւ արկանելոյ՝ աղերսէր զԱստուած թողութիւն շնորհել նմա, եւ խաղաղել զանհնարին յոյզս մտացն ամբոխման յոր անկեալ դներ, որպէս պատմեցաւ մեզ, յօրէ յօրմէ յետս ի բաց առաքեաց զՎիրգիւնէ այնպիսեաւ անողորմ զնացիւք :

Եւ ոչ յամեաց մօրաբոյրն այն անձոռնի զխստասրտութեանն իւրոյ յուծանել զվրեժ : Քանզի ի նաւուց բազմաց հասելոց հետ զհետէ յուեալ գիտացի զի խուճապք անդոհականք զկեանս եւ զմահ զուգապէս դժոխըմբեր գործելն նմա : Էր զի զանձն իւր մեղապարտ ճանաչէր վաղամեռիկ վախճանի նագերոյ թոռին բեռ իւրոյ, եւ մահու մօր նորա՝ որ արագ արագ ի նոյն սակս պատահեաց. եւ էր զի ծափ զծափի հարեալ անձնագով լինէր՝ զի յետս ի բաց մերժեաց յինքենէ զերկոսին զչուստականսն, որ աղարտեցին ասէր զփառս տան իմոյ նուաստախոհն իւրեանց յօժարութեամբք : Մերթ եւս ի զայրոյթ սրտմտութեան բորբոքեալ ի տեսիլ յոգնախումբ եղկելեաց որովք լին է Փարիզ քաղաք, զաղաղակ բարձեալ գոչեր. « Եւ ընդէր ջառաքիցին դատարկապորտրդ այդոքիկ զնալ կորնչել յաշխարհս զաղքականացն մերոց : » Եւ զնովիմբ ածեալ ասէր՝ էրէ իմաստք մարդասիրութեան, առաքիւնութեան եւ կրօնից դաւանեալք յամենայն ազգաց եւ յազանց՝ գիւտք իմն են հնարից իշխանացն իւրեանց քաղաքագիտութեան : Եւ ապա յանկարծուստ ի ներհականն խարդաւանեալ մոլորութիւն, ի սնոտիապատիր զարհուրանս անձնատուր լինէր, եւ անհնարին արհաւրօք լցեալ տազնապէր :

Ողորմութիւնս զուարբառատս առեալ տաներ առ մեծափարբամ միանձունս՝ որ խրատիջք նորա էին, եւ հայցեր ի նոցանէ ցածուցանել զբարկութիւնն Աստուծոյ ընչիցն իւրոց պատարագօք, իբրու այն թէ ինչքն զլացեալք առ ի նմանէ տառապելոց՝ մարքիցին հաճոյ լինել հօրն հասարակաց : Բազում այն էր զի ի ցնորս անդ մտացն նկատեալ տեսանէր զառա-

ջեաւ դաշտս հրաբորբոքս, եւ լերինս հրացայտս, յորս ճիւղադ խոժոռադեմք բափ առեալ շրջէին՝ յանուանէ զնա կարդալով մեծաձայն : Խոնարհեր անկաներ առ ոտս խրատչացն իւրոց, եւ ինքնին իւրում անձին տանջանս եւ կտտանս խոշտանգանաց հնարէր ձարտարէր . քանզի էրկինք, արդարադատն էրկինք, կրօնս իմն զարհուրականս առարէն առ անագորոյնս ի մարդկանէ :

Այսպէս անցոյց նա զամս յոյովս՝ մերք անաստուած եւ մերք սնապաշտ զնացիւք՝ միօրինակ տազնապեալ յերեսաց մահու եւ կենաց : Այլ որ վախճան արար ջարադէտ կենդանութեանն այն իսկ եղէ, յոյր սակս առ ոտն հարեալ էր նորա զագդմունս բնութեան : Ետես բաղձագին զի մեծագանձն այն ճոխութիւն անցանելոց էր զհետ իւր առ ազգակիցս զոր ատեալը անձն իւր վասն որոյ եւ գուն գործեաց զլաւագոյնն օտարացուցանել ի նոցանէ մասն . այլ նոցա զմտաց նորին զցնորս ի ճահ առեալ՝ արկին զնա յարգելանս իբրեւ զխելաշուքոք որ, եւ զինչսն եղին յակաստանի : Այսպէս անա ինչքն իսկ իւր ի կորուստ զնա յուղարկեցին . եւ զոր օրինակ խստացուցեալ էր նոցա զսիրտ ստացչին իւրեանց, նոյնպէս այլանդակեցին եւ զփափաքողաց նոցին զսիրտ : Վճարեցաւ ուր ուրեմն եւ նա ի կենաց . եւ որ ջար քան զամենայն ադէտս է, ի շունչ վախճանին փոքր մի անձին զգաստ յեալ կարող եղէ խելամուտ լինել էրէ մերկ կողոպուտ եւ արհամարհ է յաջս նոցին իսկ արանց որոց կարծեօքն համարէր զընթացս վարուց իւրոց տնօրինել :

Առ էրի Վիրգիլեալ առ ոտս նոցին եղեգանց զետեղեցին եւ զբարեկամն նորա զՊօղ, եւ շուրջ զնոքօք զորդեգորով մարս նոցին, եւ զսպասաւորսն հաւատարիմս : Զկանգնեցան մահարձանք կճեալք զխոնարհ դամբարանօք նոցա, եւ ոչ դրոշմեցան արձանագիրք առարհնութեանց նոցա, այլ յիշատակ նոցին անջինջ կանդաղեցաւ ի սիրտս բարերարելոցն ի նոցանէ : Ստուերք նոցա ոչ կարօտանան շքոյ փառաց՝ յորմէ խոյս էտուն ի կենդանութեան իւրեանց . եւ էրէ տակաւին օրէն իցէ նոցա կենցաղականացս հաղորդ լինել իրաց, անշուշտ ցանկալի է նոցա ընդ աղբատին յարկաւ դեգերել հիւղի՝ ուր վաս-

տակասերն բնակիցէ առարինութիւն, սփոփանս աղբատու-
րեան մատուցանել' որ զիւրմէ բաղդէն տրտնջիցէ, տաժել
ի դեռաբուսիկ տարփաւորս զբոց մշտաբորբոր, զբնատուրն
բարեաց ախորժս, զսէր վաստակոց, և զերկիւղ յերեսաց մե-
ծափարքամն ճոխութեան :

Չայն բարբառոյ ժողովրդեան որ լուռ ևւեր կայ զշիրմօր
կանգնելովք ի շուք փառաց արբայից, վայրաց վայրաց կղզւոյս
ես յորջորջանս անուանց որք անմահացուսցեն զՎիրգիներ :
Առ Ամպարի կղզեկանն ի միջի անդ խարակաց է տեսանել
տեղի որ ԱՆՅԲ ՍԷՆ-ՓԷՐՍՆԻ կոչեցեալ է յանուն նաւուն որ
բարձեալ բերեր զնա ի կողմանցն Եւրոպայ, և որ ծովակոծ
կորեաւ անդանօր : Սպառուած էրկայնամիգ կոհակիդ զոր



էրիւք ի բացեալ նշմարես աստի փարսախօք, և կիսով չափ
ժածկեալ կայ ի ջուրցն մկանանց, և զորով անմարք եղես Սեն-
Փերանի պատել անցանել յառաջ քան զյառնել մրրկին, և
ի նաւահանգիստ անդր մտանել անկանել, յորջորջեալ ճայնի
ՏԱՐԱԲԱՂԴԻԿ ՀՐՈՒԱՆԳԱՆ. և անա հանդեպ մեր ի ծայր հով-
տիդ այդորիկ ԾՈՅ ՇԻՐՄԻՆ, յորում աւազախիւր գտաւ Վիրգիներ.
Իբրու այն բէ ծովդ ինքնին բերեալ մատուցաներ առ ազգա-
տոհմն զմարմին նորա, զի ամօրագեղ զգաստութեան նորին

գլետինն հարցեն սպաս ինոյն ափունս՝ գոր պատուեալ էր
իւրովն անմեղութեամբ :

Ո՛վ պատանեակք սիրայօղք, նվ մարք ջարաբաստիկք,
ն ազգատոհմ սիրասուն. այդ մայրիք որ հովանի զձեօք առ-
նեին, այդ աղբիւրք որք վասն ձեր բղխեալ ընթանային, այդ
բլուրք յորս ոգի առեալ հանգչէիք, անա ողբան տակաւին զձերդ
կորուստ : Չիք ուրուք զհետ ձեր համարձակեալ արօրել զա-
մայացեալս զայս էրկիր, կամ կանգնել վերստին զխոնարհ
հիւղս ձեր խաթարեալս : Այծիք ձեր վայրենացեալք, ծառա-
տունկք ձեր ոստաբանց բշտեալք, բռնունք ձեր վախուցեալք,
է. բազէից էւէք լսելի սօխչք է. կռիւնչք, որք ոյորտացեալ
սառառնին զբարձամբք ապառաժիցս հովտաձէից : Իսկ էս,
յորմէ հետե ոչ էս տեսանեմ զձեզ, եղեալ էմ աւասիկ իբրեւ
զբարեկամ որոյ ոչ էս այլ գուցեն բարեկամք, իբրեւ զհայր
որդեկորոյս, իբրեւ զուղեւոր բափառական յերկրի յորում էս
մնացի միայնիկ :

Եւ զայս ասելով ի բաց զնաց առ յինէն ձերունին այն պա-
տուական՝ ուղիս իջուցանելով արտասուաց . է. իմս արտասուք
բազում անգամ հոսեցին ի յուր յոգնաբշուառ, պատմութեանս
այսորիկ :



ՄԱՆՅԹՈՒԹԻՒՆՔ

1. Կիտրոնի, ծառ., որոյ կիտրոնն պտուղ քաջածանօթ է արեւելեայց . տճ. աղան գալունու աղանը. գղ. citronnier : — Ազգ կիտրոնեաց է եւ անուանեալն ի Գաղղիացոց pamplemousse, որոյ վասն եւ զսա ի բարգմանութեան աստ կիտրոնի կոչեցաք :

2. Լատանենի, ազգ արմաւենոյ, բնիկ ի Մատակասքարայ եւ ի կղզեաց Սոնտի : Զբունն ունի գլանաձեւ, ուղղաբերձ եւ բարձրադիտակ, եւ սաղարբս իբր քսան ի կատարն պսակաձեւ հոփանաւորեալ : Ի տերեւաց սորա կողովս կազմեն Հնդիկք եւ գլխարկս : Գղ. latanier.

3. Աետով, դուստր Թեստիկոսի, կին Տինդարայ արքային Սպարտացոց : Արամազդայ ի կարապ կերպարանեալ հափափեաց զնա, եւ յետ ինն ամսոց ած Աետով ձուս երկուս, յորոց ի միոյն ել Պողիկեստիս եւ Հեղինէ, եւ ի միւսմէն Կաստոր եւ Կլիտեմնեստրա : Առաջինքն երկօքին համարեցան որդիք Արամազդայ, եւ այլքն Տինդարայ որդիք : Սոցա նմանեցուցանէ Պեռնարտէն զՊօղ եւ զՎիրգինէ :

4. Նիորէ, դուստր Տանտադոսի եւ քոյր Պեղոպայ : Ամուսնացեալ ընդ Ամփիոնի Թերացոց արքայի, ծնաւ որդիս չորեքտասան. եւ Լատոնայ անարգեալ ի նմանէ, նետահար զծնունդս Նիորայ սպան ընդ ձեռն որդւոյ իւրոյ Ապողոնի : Յոյովք ի նախնի ճարտարաց գանդրիս նոցին զբօշեցին ի կիճ, եւ գայն ակնարկէ Պեռնարտէն :

5. Պատամենին ծառ. է բրգաձեւ, բարձրարուն, գեղատեսիլ, ոստքն տերեւախիտք, ծաղիկքն հասկաձեւք, ոչ յոյժ գեղեցիկք, բայց պտուղն քաղցրաճաշակ, եւ նուշք կորզոցն որ զկաղնոյ ունին գհամ՝ ի փոճեկս ամփոփեալ են ձուաձեւս : Գղ. badamier.

— Մանկենին ծառ. հնդիկ, սփռեալ տարածեալ է տակաւ ընդ հասարակածիւ : Ընդ բազմասաղարբ կատարովն ոստս ունի խոշորս եւ ծամածուռս. տերեւքն զառաջինն ծիրանեգոյն գոյով՝ ապա դալարագեղ կանաչանան : Ծաղիկքն սպիտակարոյրք են եւ նիզակաձեւք գեղանիք : Պտուղն մանկ կամ մանգ քաղցրահամ է եւ դիւրահալ : Գղ. manguiet, mangue.

— Ակնակատի ծառ. է գեղատեսիլ, կոնաձեւ, սաղարբս ունի բանձունս եւ նսեմս, եւ կատար լայն տերեւախիտ : Ողկուզաձեւ են ծաղկունքն եւ կանաչագոյնք. պտուղն ակնակատ տանձակերպ է, ողորկամարմին, կանաչ կամ մանիշակագոյն, եւ ունի գհամ կաղնախառն կոզոյ, ոչ ախորժական որոց չիցենն սովոր :

Անեփ ուտի ակնակատ՝ հատեալ ի շերտս շերտս, եւ համեմեալ պղպեղիւ, կոճապղպեղիւ, ձերիւ եւ քնցախով, եւ առ գաղթականսն պաշտի ի սեղան ընդ պախ մսոյ : Մարբի հանդերձել զայն շաքարաւ եւ լեմոնիւ :

Մեծ է կորիզն, եւ ընդ մեջ հատեալ՝ արձակէ հոյզ մանիշակագոյն որ անանց արատէ զկտաւիս : Գղ. avocatier կամ agnecat.

— Կուաւենին ծառ. նման է տանձենոյ, վասն որոյ կոչի եւ տանձենի



Հնդկաց, եւ բերե պտուղ երկայն եւ ձուածեւ կուտ ձայնեալ : Գղ. goyavier, goyave.

— Հացածառ կամ ձագենի, ծառ գեղատեսիլ եւ բաւոստ, ամբառնայ քառասուն ոտն ի բարձրութիւն, եւ բերե պտուղ մեծ քան գսելս : Գղ. jacqs, jacquier.

— Վարդաճամբի, բնիկ ի Հնդկաց, մշտափրփր եւ մշտապտուղ, գեղազարդե զպարտեզս Կղզւոյն Գաղղիոյ : Ընդ կանաչագեղ սաղարբիքն փրփին ծաղկունք լայնք եւ ձիւնաբոյրք : Զուածեւ ե պտուղն եւ վարդահամ, ոյր վասն եւ ծառն կոչի վարդաճամբի. զովարար ունի բնութիւն, եւ ուտի անեփ իբրեւ գսելս կամ եփեալ շաքարաւ : Գղ. jam-rose, jambosier.

6. Գրախտածաղիկ կամ Սիրամարգածաղիկ, այսպէս անուանեալ սակս յոյժ գեղեցկութեանն, տասնոտնեան ունի բարձրութիւն, եւ փրփե ծաղիկ ծիրանեփայլ :

7. Տատամաքի, ծառ գեղեցիկ բարձրարուն, բերե գնմանութիւն կաղամախի. զարդ մեծ ե ծովափանց գեղադէշ դիտակաւն եւ կանաչագեղ սաղարբիք. ողկուգածեւս ունի գծաղկունսն եւ քաղոցրաբոյրս. պտուղքն մանունք, բոլորչիք, լրբագոյնք, բայց անպիտանք ի կերակուր :

Փայտն տատամաքեաց կարծրակուռ ե, ծանրակիր եւ անփուտ, եւ վարի ի կայմս նաւաց : Գղ. tatamaque.

8. Կուսածաղիկն փրփե յաճախ ծաղիկ գեղակապոյտ. մեք այսպէս անուանեցաք qpervenche բառ գաղղիացի, զի յոլով ուրեք նշանակ կուսութեան ե ծաղիկդ : Սովոր էին երբեմն Բեղզիացիք (Պելճիացիք) կուսածաղիկս սփռել զոտիք նորահարսանց, եւ յԵտրուրիա (Թոսքանա) նոքիմք պսակէին զգլուխս կուսանաց մեռելոց : Պարկեշտասուն իբրեւ զկուսան լեռնարնակ, տիպար ե տնասեր կնոջ որ զամենայն գսեր իւր եւ զյոյս յամուսինն հաստատեալ՝ նովիմք սփռի, եւ որդեկացն կրթութեամբ բերկրի :

9. Բենգալ կամ պենկալ, ազգ բուսոց մանունց ընդակերից, ի Բենգալս կամ Պենկալս նահանգե աշխարհին Հնդկաց ի մեր կողմանս եկեալ : Գղ. bengali.

10. Ծիրանաւոր, ազգ բուսոյ որ բերե ծաղկունս՝ ե զի կապոյտ եւ ե զի կարմիր : Գղ. cardinale.

11. Մանգ. Տ. Ծանօթ. 5 :

12. Բախնբակ, ազգ ձկան. տճ. քէֆալ. գղ. cabot, gobie, muge.

15. Ծովախառնիճ, ազգ փոքրիկ խեցեմորթի. տճ. թէքէ. գղ. langouste.

14. Քոքենի, ազգ արմաւենուոյ, վերանայ ցվարսուն ոտնաչափ ի բարձրութիւն եւ բոսանի զարեւադարձիք. փայտ ունի կարծր յոյժ, եւ յատաղձս վարի :

15. Մանկենի. Տ. Ծանօթ. 5.

16. Փառնայք, դիք շինականք, ի դաշտս եւ ի մայրիս բնակեալք :


17. Պենկալ. Տ. Ծանօթ. 9 :

ՎՐԻՊԱԿԻՔ ՏՊԱԳՐԻՆ

Էջք	ՎՐԻՊԱԿԻՔ	ՈՒՂԻՂԻՔ
17	կարմրալառք	կարմրալարք
24	ցգեալ	ձգեալ
30	ցգեաց	ձգեաց
38	մարմանդի	մարմանդի
«	աղամաղզենեօք	աղամաթզենեօք
55	տրձագանգք	արձագանգք
62	ձոնձեալ	ճոնջեալ
96	ղիւրին	ղիւրեն
117	նչաւակ	նշաւակ







ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0313410

2
501

